

# Բարձր

— Ես սիրում եմ ինձ, ինչ որ ես եմ, ինչ  
ժամանակներում մարդը շատ է քայտնվում, ինչ  
Ուրիշ բան են մտածում, ուրիշ բան խոսում են,  
ինչն էլ հարկավոր է...

Մեծ քիմիայի ժամանակաշրջան է մի քանի մարդ  
կարող են աղբի վերածել կամ աղբը դարձնել զարդ  
(Էդ. Բեյ)

— Երբ որևէ փոքր, սովորական, անհայտ  
գաղափարը կամ գեղարվեստը, կերպարը, կամ  
մտաբանությունը կարող է մտնել մեզ մեջ...  
... և մեզ փոխել...

Այն էլ որ հոգաբարձի միջոցառումների ժամանակ  
հարկավոր է արդարացի... ո՛վ մտնում է հարկի խոսք  
պահանջների մեջ մտնում է մեզ մեջ... Երանք մեզ սիրելի  
... և մեզ հարկավոր է ինչ-որ բանով հարկադրել  
... և մեզ փոխել... (Էդ. Բեյ)

## ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1.-ն. ԶԱՐԽՈՒՏՆԱՆ	Կորսուած դրախտը
8.-Յ. ՊԷՐՊԷՐՆԱՆ	Աշնանային կերպարանափոխումներ
9.-Հ. ՄԱԳԱՐՆԱՆ	Հեթում արքայ
28.-* * *	Գիրքերէն, բերթերէն եւ թղթածրարներէն առաջ
29.-Մ. ԷԼ-ՐԱՍԱՖԻ	Որբին մայրը
32.-Ի. ԱԼ-ԽԱԼԻԼ	Ալ-Հուտս
44.-Յ. ԼԱՏՈՅՆԱՆ	Բանաստեղծութիւններ
47.-* * *	Ճանապարհ եւ հշմարտութիւն
48.-ԱՐԱՄ ԵՊԱ. ՔԷՇԻՇՆԱՆ	Թարգմանչաց ոգիով
51.-* * *	Մեծ սուտը, սուտին գործակալները եւ զոհերը...
53.-* * *	Վերծանման փորձեր՝ Գուրգէն Մահարիի «Շաղկած փլախորեր» վիպակին մէջ
120.-* * *	Անհետացած դէմքեր
140.-* * *	Լայս տեսան

# Բազմ

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Լ.Գ. ՏԱՐԻ 7-8-9 ՅՈՒԼ.-ՕԳՈՍՏ.-ՍԵՊՏ. 1995 ՊԵՅՐՈՒԹ

### Ն. ՉԱՐՆՈՒՏԵԱՆ

## ԿՈՐՄՈՒՄԾ ԴՐԱԽՏԸ

Տաճարը կը գտնուէր հովիտին աջ կողմը, թեթեւ բարձունքի մը վրայ: Ընդ վարը, բարձունքին կողէն աղբիւրի մը ջուրը միօրինակ աղմուկով մը կը հոսէր գուռի մը մէջ եւ անկէ յորդելով կը կազմէր վտակ մը, որ, սողոսկելով խոտերուն մէջէն, կը միանար հովիտը արգասաւորող գետակին:

Ուղեւորը, որ յոգնած կ'երեւէր, մօտեցաւ աղբիւրին, եւ ձեռքերը լուալէ ետք գուռին մէջ, ափերը իրարու միացնելով՝ ազահօրէն ըմպեց աղբիւրին զուլալ ջուրէն:

Բարձունքը, որուն վրայ կանգնած էր տաճարը, քիչ մը ցից էր: Աղբիւրին ճիշդ քովէն՝ մարդու ձեռքով կոփուած աստիճաններ կը տանէին տաճարի մուտքին: Ուղեւորը երկիւղածութեամբ բարձրացաւ այդ խորտուրբորտ աստիճանները եւ գտնուեցաւ դպրոցի մը բակին մեծութեամբ բարձրաւանդակի մը վրայ, որ ծածկուած էր սալաքարերով:

Տաճարը կը գտնուէր ճիշդ դէմը՝ լքուած ու անբակ: Մուտքի աստիճաններուն մարմարը ջարդուիշուր եղած էր եւ գաւիթին տա-

Ահա անձնական տվյալները իրարու վրա ինկած էին մեռած զինուորականներու պես:

Ահա անձնական տվյալները իրարու վրա ինկած էին մեռած զինուորականներու պես: Ահա անձնական տվյալները իրարու վրա ինկած էին մեռած զինուորականներու պես: Ահա անձնական տվյալները իրարու վրա ինկած էին մեռած զինուորականներու պես:

Ուղեւորը ձեռքը դրա փլած սիւներէն մէկուն վրայ եւ զայն տարաւ շրջներուն, ու վերջին նայուածք մը նետելէ ետք ոչնչացած սրբավայրին վրայ, գլուխը կախ՝ իջաւ աստիճանները եւ շարունակեց ճամբան:

Հովիտին վերջաւորութեան, բլուրներէն անդին, երեցան գիւղի մը տունները: Մանուկներ ուրախ ճիչեր արձակելով կը վազէին փողոցներու մէջ: Փոքրիկ հրապարակին վրայ կը բարձրանար գիւղին հասնատ եկեղեցին, որկէ խունկի անուշափոս քուլաներուն հետ կը սըլիւնըէին շարականի մը քաղցրահնչիւն արեւաանքները: Եկեղեցիին առջեւ, կիներ հարիսա կ'նստէին խոշոր կաթսաներու մէջ, իսկ այդ մարդիկ, ծանր կողովներ շակած, կ'անհետանային դիմացի պուրակի ծանրուն մէջ:

Ուղեւորը հետեւեցաւ անոնց:

Արահետը թեթեւօրէն մագլցելով, կորսուեցաւ ծառաստանի մը մէջ: Գետինը կանաչ էր, եւ հոտաւտ բոյսեր մթնոլորտը կ'օծէին անասպեղական բոյրերով, իսկ վայրի ծաղիկներ կ'երանգաւորէին դալար մարգագետինը: Ծառերուն սաղարթները այնքան խիտ էին, որ արեւին ճառագայթները չէին փորձեր իսկ թափանցել այդ բնական ամպիւր վանին:

Դարասոր կաղնիի մը արմատին քովէն կը ծորէր անասպակ աղբիւր մը, որուն ջուրը, հաւաքուելէ ետք փոքրիկ գուռի մը մէջ, կը սողակէր մարգագետնին վրայ եւ, դարաւանդէն վար նետուելով՝ կը ջրվիժէր խոշոր աւազանի մը մէջ, ուր գիւղին աղջիկները լոգանք կ'առնէին:

Ծառաստանի խորերէն կը լսուէին կանչեր եւ ծիծաղներ: Տեղտեղ, չոր ճիւղերէ պատրաստուած խարոյկներու վրայ, կիներ միւ կը խորովէին:

Ուղեւորը պահ մը տխրեցաւ եւ որովհետեւ կու գար հետաւոր անցեալէն, յիշեց այն հին օրերը, երբ իր ցեղախումբն ալ, տարուան որոշ օրերուն, ուխտի կ'երթար մօտակայ անտառները, լեռները եւ աղբիւրները՝ զոհաբերելու հոն սպրոդ արեւուշներուն, պարիկներուն եւ դիցուհիներուն եւ կը կազմակերպէր խրախճանքներ եւ տօնահանդէսներ: Նոյն շարժումներն էին, նոյն խանդավառութիւնը, նոյն անկեղծութիւնը:

Ծառի մը տակ նշմարեց ծալապատիկ նստած խումբ մը ծերունիներ, որոնք իրարու կենաց կը խմէին: Անոնցմէ մէկը ոտքի ելաւ եւ իրեն բաժակ մը գինի հրամցուց:



20554-243 143-2006  
digitised by A.R.A.R.©

Անձանօթը առաւ բաժակը, մաղթանքներ ըրաւ ու զայն պարպեց:

—Այս կողմերէն կ'անցնէի, երբ լսեցի ուրախութեան ձայներ: Ծեղեցի ճամբաս եւ գտնուեցայ գիւղի մը հրապարակին վրայ: Եկեղեցիին դուռը բաց էր: Արարողութիւնը վերջացած ըլլալու էր: Քահանան դուրս ելաւ եւ գոցեց դուռը: Կիներ կերակուր կ'եփէին խոշոր կաթսաներու մէջ: Քահանան օրհնեց կաթսաները, յետոյ ուղղուեցաւ այս կողմը, եւ այլ հետեւեցայ իրեն: Ի՞նչ է ձեր գիւղին անունը եւ ինչո՞ւ այս խրախճանքը:

—Այսօր շատ բախտատու եմք,— ըսաւ ծերունին,— երեւակայեցէ՛ք, որ շատ հազուադէպօրէն նոյն օրուան, այսինքն՝ Օգոստոս 15ին կը զուգահիսին երկու մեծ տօներ — Աստուածամօր վերափոխումը եւ հայոց Նոր տարին՝ Նաւասարդը: Առտու կանոխ եկեղեցի գացինք, Սուրբ պատարագ տեսանք: Քահանան յառող օրհնեց: Հիմա կարգը եկած է Նաւասարդին: Մեր հայրերը Նաւասարդը կը տօնէին բնութեան մէջ եւ զոհաբերութիւն ընելէ ետք Անահիտ դիցամօր, օրուան մնացած մասը կ'անցընէին այս ծառերուն տակ՝ ուտելով, խմելով ու պարելով:

—Ի՞նչ է ձեր գիւղին անունը:

—Գառնի: Իսկ այդ փլատակ շէնքը Անահիտ դիցամօր տաճարն է:

Սրինգին, սագին, դափին եւ թմբուկին ձայները հիմա ներդաշնակօրէն կը յօրհնէին կշռութաւոր եղանակ մը: Ուղեւորը քալեց այդ կողմը:

Բացատի մը մէջ, աղջիկներ շարքի կեցած՝ կը հետեւէին եղանակին: Անոնք պահ մը անհետացան ծառերու ետեւը, մինչ ծառի մը տակ նստած նուագածունները աւելի ոգեւորուելով կը թնդացնէին իրենց գործիքները: Գիւղին երիտասարդները, կանգնած անոնց դէմը, կը ծափէին շէշտելու համար թմբուկին կշռոյթը:

Թեթեւ դադարէ մը ետք, թմբուկը թնդաց երեք անգամ, ու ծառերուն մէջէն երիտասարդուհիները յայտնուեցան իրենց գոյնզգոյն շրջագգեստներով եւ հսկայ արեւածաղիկի մը պէս, իրարու ձեռքէն բռնած, սկսան դառնալ բացատին մէջ՝ անտեսանելի կեդրոնի մը շուրջ:

Անոնց սեւ մազերուն մէջ անցուած էին վայրի ծաղիկներ եւ կապուած էին թափանցիկ շղարշներ, որոնք տարաշխարհիկ թռչուններու թետերուն պէս կը ծփային գեփիտի թետերուն վրայ:

Եւ ուղեւորը մոռցաւ ներկան:

Երաժշտութիւնը սկսաւ տկարանալ՝ գիշերուան առջեւ նահանջող վերջալոյսին պէս, բայց լուծիւնը երկար շտեմեց: Սրինգը աւելի մեծ ոգեւորութեամբ վերսկսաւ իր ողբերգը: Ան կ'ոգեկոչէր ամբողջ ցեղի մը ոգին: Չայնանիշերը կը սաւառնէին գեփիտի մը մեղմութեամբ դաշտավայրերուն, լիճերուն եւ դանդաղահոս գետերուն վրա-

յէն, յետոյ մէկ անգամէն թոյնք կ'առնէին եւ կը մագլցէին երկնամերձ լեռներուն կողմ ի վեր, երբեմն կը դառնային արագ ու կայտառ՝ խուսափելու համար ձորերու մէջ վխտացող կարիճներէն եւ օձերէն:

Ու բոլոր ներկաները նոյն երկիրածութեամբ կը հետնէին մեղեդիին ելեւէջներուն, եւ ամբողջ աշխարհ մը կը ծնէր իրենց ներսիդին եւ կը յիշէին իրենց թագաւորներուն, թագուհիներուն, սպարապետներուն, սուրբերուն եւ հերոսներուն անունները:

Սրինգը պահ մը կանգ առաւ, յետոյ զգալի կշռոյթով քարձրացոց իր գլի ձայնը, մինչ սազը կը փորձէր ներդաշնակուիլ եղանակին՝ պատրաստելով դափին ոգեւորութիւնը եւ թմբուկին խանդավառութիւնը:

Երածշտութեան կշռոյթը արագացած էր: Աղջիկները գրաւեցին իրենց տեղերը, շղարշները հջեցուցին իրենց մագերուն վրայ եւ սպասեցին, որ պարագլուխը շարժէ թաշկինակը: Այն ատեն, սրինգին ելեւէջներուն հետնելով՝ անոնք սկսան երգել հին մեղեդի մը, որ ցորենի հասկերը շոյող զեփիտին մեղմութիւնը ունէր:

Երբ երգը վերջացաւ, աղջիկներէն մէկը բաժնուեցաւ խումբէն ու մօտենալով ուղեւորին.

—Եկո՛ւր,— ըսաւ,— մեզի հետ պարէ:

Ու բռնելով անոր ձեռքէն, տարաւ շարքին մէջ: Պարագլուխը շարժեց թաշկինակը, եւ պարսխումը սկսաւ շարժիլ դանդաղօրէն՝ մանեակի մը պէս, որ կազմուած է գոյնզգոյն թանկագին քարերով: Մարմինները, մղուած անտեսանելի ուժով մը, ներդաշնակ շարժումներով կ'արտայայտէին այն բոլոր զգացումները, որոնք կը յուզեն մարդուն հոգին: Ու բնութիւնը, ուշադիր մօր մը պէս, կը ցնծար իր զանակներուն երջանկութեամբ:

Հսկայ կաղնիին շուրջ, պարսխումը կը թաւալէր երկիրածութեամբ, ինչպէս ինը մոլորակները կը դառնան արեւին շուրջ:

Թմբուկը, դափը, սազը եւ սրինգը տկարացան հեռացող թռչուններու պէս ու շուրջպարը դանդաղօրէն անշարժացաւ, ու ծառաստանին մէջէն լսուեցան ձայները մայրերու, որոնք կը կանչէին իրենց զանակները ճաշի.

—Աստղի՛կ, Արփի՛, Մարի՛, Հոփսիսիմէ՛, Ծուշա՛ն, Ատա՛, Յասմի՛կ...:

Եւ աղջիկները, ուրախ ճիչեր արձակելով՝ վազեցին դէպի կանչող ձայները:

Ծաշէն ետք, երգերը եւ պարերը շարունակուեցան, երիտասարդները ուժի խաղեր ըրին մարգագետնին վրայ, իսկ տարիքոտները բոլորուեցան գիւղապետին շուրջ, ունկնդրելու համար թափառական աշուղի մը շէրերը: Ան կ'երգէր հերոսներու խիզախումները, անկարելի սիրող տառապանքները, օրերու խելայել վազքը...

—Որքա՛ն կ'ուզէի ապրիլ պապիսի տեղ մը, ուր կը տիրէ համերաշխութիւն եւ ուրախութիւն: Ծամբուս վրայ տեսայ հսկայ թաղաքներ

եւ մարդաշատ երկիրներ, ուր կը տիրէր միայն ընչաքաղցութիւն եւ անպաշտօն,— ըսաւ ուղեւորը,— Քիմա կը փնտռեմ երկրաւոր դրախտը:

— Իմաստունները կ'ըսեն, որ երկրաւոր դրախտը կը գտնուէր Արարատ լեռան ստորոտը:

— Եւ տեսայ Արարատը, երբ մանուկ էի, Քիմա ճամբայ ելած եմ Քասնեղու համար անոր:

— Հաւանաբար օր մը հասնիս Արարատին, բայց եղեմ այլեւս գոյութիւն չունի,— ըսաւ ծեր քահանան,— եղեմը փոխադրուած է մարդոց հոգիներուն մէջ. հոն է, որ պէտք է փնտռել երանութիւնը:

— Հիմա որ ձեր կենցաղը եւ ազնուութիւնը տեսայ, կրնամ ըսել, որ աշխարհի վրայ կրնան գոյութիւն ունենալ շատ մը եղեմներ, որոնցմէ մէկը այս վայրն է:

— Այս շրջանի բոլոր գիւղացիները կ'սպորին մեզի պէս: Հովիտները ոչխար կ'արածեն, մշակները հող կը հերկեն, աշուղները կ'երգեն ու մանուկները գրեւ-կարդայ կը սորվին: Բոլորը զիրար կը ճանչնան, կը յարգեն ու կը սիրեն: Գիշեր եւ ցերեկ մեր դուռները բաց կը մնան: Մէկուն զաւակը կ'երթայ միւսին տունը եւ հոն կը մնայ օրեր: Մէկուն ունեցածը բոլորին կը պատկանի եւ իւրաքանչիւր երիտասարդ կ'աւսանանայ իր սիրած աղջկան հետ:

Արեւը սկսած էր մօտենալ հորիզոնին, երբ գիւղին կողմէն լսուեցաւ կոչնակին ձայնը: Մեծ ու պզտիկ խաչակնքելէ ետք, ոտքի ելան եւ ուղղուեցան դէպի գիւղ: Ուղեւորը կը հետեւէր անոնց: Քաղեց ծառերուն մէջէն եւ գտնուեցաւ լայն ճամբու մը վրայ, որուն ծայրը, թեթեւ բարձրութեան մը վրայ, կանգնած էր Ապիտակ տաճարը:

Գլխաւոր շէնքը շրջապատուած էր բարձր նոճիներով եւ ցած պատով մը, որուն վրայ կը մագլցէին դամասկավարդեր: Բուն շէնքը քառակուսի էր: Մարմարէ եօթը լայն աստիճաններ զայն կը տանէին նախագահիթը, որ սինազարդ պատշգամ մըն էր:

Ուղեւորը կանգ առած էր շրջանակի դարպասին առջեւ, երբ երամ մը աղանձներ, որոնք կու գային գիւղին կողմէն, մտան տաճարին մուրդ դուռէն ներս ու, շատ չանցած՝ անկէ լսուեցաւ քաղցր մեղեդի մը, որուն բառերը անլի հին էին, քան այս անտառները:

Երբ ուղեւորը բաւական մօտեցաւ տաճարին, կրցաւ զանազանել երգին բառերը, բայց ոչ ամբողջութեամբ:

Երգեցողութիւնը դադրեցաւ ու լսուեցաւ դափերու արծաթեայ թրթռացումը, որոնց միացաւ բամբիռներու կշռութաւոր շխրտոցը եւ սրբինգի մը զիւ ողբը:

Ու տաճարի մուտքին յայտնուեցաւ գեղեցիկ կին մը, որ Անահիտ դիցամօր քրմութիւն էր: Ան գլխուն վրայ կը կրէր ոսկիէ թագ մը, եւ ազնի կերպասէ պարեգօտ մը կ'իջնէր մինչեւ ոտքերը: Ան քանի մը

քաղ յատաչացա գաւիթին վրայ եւ ձեռքերը տարածեց հորիզոնական: Նուագածուններ, կարմիր քղամիդ հագած պարմանուհիներ կանգնեցան իր ետեւը, ու քրմուհին սկսաւ իր նուիրական պարը:

Ան երկու թեւերը երկինք կարկառեց, մինչ նուագածունը կը յօրինէին դանդաղ կշտոյթով եղանակ մը, որ կը յիշեցնէր ցորեանի դաշտին ալիքաորումը զեփիւտի թռիչքին տակ: Մարմինը թեթեւ թեթում մը ունեցաւ, տատանեցաւ աջ ու ձախ ու սարսուսց մերկ ոտնամաններէն մինչեւ գլխուն ծայրը, օձի մը պէս, որ կը պատրաստուի փաթթուելու արու օձի մը: Յետոյ՝ ինչպէս ստուեր մը, որ կը սահի ջուրներուն վրայ, դիմաւորեց հորիզոնին շորս կէտերը, որոնց վրայ կը հանգչի երկնականարը, որ աստուածներու բնակարանն է:

Չորրորդ շարժումին, գտնուեցաւ տաճարի մուտքին առջեւ, որուն ճիշդ դէմը կանգնած էր Մայր դիցուհիին մարմարեայ արձանը: Քրմուհին ափերը երեք անգամ իրարու բախեց ու կանչեց անուններ.

—Աշխէ՛ն, Արփի՛նէ՛, Արշալո՛յս, Ալի՛ծ, Աստղի՛կ, Գեղծի՛ն, Զարուհի՛, Զեփի՛տ, Լայի՛կ, Ծովա՛կ, Հուրի՛կ, Միրթօ՛, Մայա՛, Յասմի՛կ, Նայիրի՛, Շողե՛ր, Սօսի՛, Սալբի՛...

Երբ իրարու ետեւէ, երկու շարքի վրայ, յայտնուեցան ճերմակ պարեգօտ հագած քսան պարմանուհիները, որոնք տեղ առին քրմուհիին երկու կողմերը: Բոլորն ալ կը կրէին կանաչ սահնույճներ եւ իրենց երկար մազերը զարդարուած էին դամասկավարդէ պսակներով:

Քրմուհին նշան մը ըրաւ, եւ երաժշտութիւնը վերսկսաւ իր կըշտութեամբ եղանակը եւ աղջիկները շարժեցան: Նախ՝ երկու շարքերը իրարմէ հեռացան, լետոյ՝ կազմեցին կէս շրջանակներ, որոնց կեդրոնը կանգնած էր քրմուհին: Իրարմէ զանազանուելու համար աջ կողմինները կը կրէին կարմիր, իսկ ձախ կողմինները՝ կապոյտ գօտի:

Երբ երաժշտութեան կշտոյթը արագացաւ, երկու շարքերը միացան կապոյտ եւ կարմիր գօտիի ընդմիջումով, եւ աղջիկներ, ձեռք ձեռքի տալով՝ կազմեցին շրջանակ մը, որ սկսաւ դառնալ կեդրոնի մը շուրջ, ինչպէս աստղերը երկնականարին վրայ:

Եւ ամայի բնութեան մէջ յսուեցաւ հին ու խորհրդաւոր երգ մը, որ կը հետեւէր երաժշտութեան ելեւէջներուն եւ կը պատմէր Հայկ Նահապետին քաջագործութիւնները եւ Վահագն վիշապաքաղին մեծամարտը խաւարի ուժերուն դէմ... եւ հայ թագուհիներու մղձաւանջը.

Ծիր-Կաթինի անդունդով եզերուած շրջանակին վրայ,  
Կը ճեմեն սեւեր հագած եօթը թագուհիներ,  
Հայաստան եօթը քաղաքներուն եօթը թագուհիները  
Կը ճեմեն անդունդով եզերուած շրջանակին վրայ,

Երկինքի ճամբաներուն վրայ, կը ճեմեն այրի թագուհիներ  
Շրջապատուած իրենց եղերամայր նաժիշտներով:



Անոնք կը քալեն բիրեղեայ հրապարակներու վրայ,  
Բայց ո՛չ մէկ իշխան կը խաչաձեւէ իրենց ճամբան:

Փուշէ պսակ կրող Հայաստանի լուսածին թագութիւնները  
կը քաղեն Ծիր-Կաթինի պողոտաներուն վրայ՝  
Երջապատուած իրենց սեւազգեստ նաժիշտներով,  
Բայց կապարէ ամպ մը կը խափանէ Բեռային աստղը:

Եօթը շղթայուած թագութիւններ կը սպասեն Ծիր-Կաթինի վրայ:  
Վարը՝ ովկիանոսը կ'ոռնայ, կը մոլեզնի, կը լեռնանայ,  
Եօթը թագութիւնները յանկարծ կը խնդան ու կ'երգեն,  
Երբ Մասիսի գագաթէն կը յայտնուի անտաքեր կոունկը:

Վերջապայը սկսաւ իր գորշ վարագոյրը տարածել բնութեան  
վրայ, անուրջի վերածելով տաճարը եւ անոր գաւիթին վրայ պարող  
քրմութիւն եւ քսան մատղաշ պարմանութիւնները:

Անդին՝ գիւղին կողմէ եկեղեցիին զանգակը կը շարունակէր դօ-  
ղանջել: Տաճարը անհետացած էր իջնող խաարին մակընթացող  
անցեալին մէջ, բայց փլատակներուն առջեւ կանգնած ուղեւորը կը  
շարունակէր լսել այս նոյն վայրին մէջ քսան դար առաջ երգուած եր-  
գը...

ՓԱՍՏԵՆԱ, 30 Օգոստոս 1992

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

# ԱԾՆԱՆԱՅԻՆ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒՈՒՄՆԵՐԸ

Սաւառնակը կը թռչէր,  
արեւին մէջ՝ կը լողար:

Սաւառնակին հետ ձուլուած՝  
մենք խորացանք աշնան մէջ:  
Բլուրներուն, դաշտերուն,  
անտառներուն ծաւալուն՝  
հրաքույտի պէս ժայթքած  
կ'իջնէր աշունը անասն...  
Բոսոր ծառնը բորբոքած՝  
կ'այրէին լուռ, անհրդեհ:  
Պղնձագոյն ու խանձուած տերեւներ  
կը հոսէին լաւալի պէս անարգել...  
Կախարդած էր աշունը՝  
դիտանքով սեւ, կործանիչ  
եւ կը տանէր մեզ իր հետ  
հմայքով խոր, վարակիչ...

Ընդհատ վար ու անդին  
կը ջրվիժէր իր ոսկին:  
Օ՛, մութ ոսկին աշունի.  
ոսկիին պէս հանքերու՝  
արծած քրտինք ու արին:  
Խոստովանքն էր գուցէ  
ոճիրներուն մեր դաժան՝  
այստեղ պեղուած, լայտնուած:

Գուցէ վայրն էր հատուցման:  
Զրվեժին տակ աշունի  
կը լողայինք մտացիր՝  
մեր այսերէն հայածուած:

Եղանակները նախկին՝  
դարձած օշինդր ու օշնայ,  
մեզ ձգեցին առանձին  
յուշերուն դէմ անխնայ...  
Մենք խորացանք աշնա՞ն մէջ,  
թէ մեր ներքին տարածքին...  
Սաւառնակը շուք կը ձգէր շարժական-  
բազէ մըն էր գիշատիչ,  
որ անցեալէս կը ճշդէր,  
ճշգրտութեամբ մը դաժան,  
թիրախը իր տատանող.  
կը սլանար, վար կ'իջնէր,  
կը բզկտէր զոհը իր,  
կը ձգէր զայն կարեւր...

Հրդեհներուն մէջ աշնան  
կը ճեղճերինք մենք անձայն:  
Թոյն քնէրը մեր ներքին՝  
կը վերածուէին անձկալից  
գահավիժման սարսափի:  
Պոռթկումին դէմ աշունի  
սիշտ կը մնանք անպաշտպան...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

# ՀԵԹՈՒՄ ԱՐՔԱՅ

(Թատերգութիւն Երկու Արարով)

(Դերասաններն են դերասանուհիներ կը քայեն: Ոմանք իրենց հագած տարազները կը շտկեն, ուրիշներ՝ մազերնին: Մէկը իր ձայնը կը փորձէ, ուրիշ մը արտասանութիւն մը կ'ըսէ: Քանի մը հոգի յանպատրաստից իրարու դէմ կը խօսակցին):

ՄԱՐԿՈՍ (կը մտնէ: Ծափով բոլորին ուշադրութիւնը կը գրաւէ).— Պատրաստ էք փորձի սկսելու:

ԲՈՂՈՐԸ.— Այո՛, այո՛:

ՄԱՐԿՈՍ.— Մտի՛կ ըրէ՛ք: Դուք աշխարհի ամէնէ՛ն երջանիկ դերասաններն էք: Գիտէ՛ք արդեօք քանի՛-քանի՛ դերասաններ աւօթի-ծարաւ անկողին կը մտնեն ամէն գիշեր: Ահաւասիկ էս՝ հանճարս, կարողացայ ո՛չ միայն ձեզ կերակրել, այլեւ՝ արքունի բերդին արժանի ընել: Ամէն օր խորոված կ'ուտէք, գինի կը խմէք: Թագաւորական կեանք կ'ապրիք:

ՄԵԿԸ.— Դերասան Մարկոս, որքա՛ն պիտի տեւէ այս դրախտը:

ՄԱՐԿՈՍ.— Միրելի՛ս, դուն չմ'ս յած Պղատոն ինչ ըսեր է:

ՄԵԿԸ.— Ի՞նչ ըսած է:

ՄԱՐԿՈՍ.— Պղատոն ըսած է. «Երբ դրախտի մէջ ես, անկէ դուրս ելլելու մասին մի՛ մտածեր». հասկցա՛ր, միայն վայելէ: Հիմա մտի՛կ ըրէ՛ք: Կիրակի օր, Հեթում արքայի ողջերթի հանդէսն է: Շատ մեծ պատրաստութիւն տեսնուած է: Մեր կրթուած եւ բանիմաց արքան ինքը անձամբ ընտրած է այդ խրախճանքին մասնակցող արուեստի բոլոր խումբերը, ինչպէս նաեւ մեզ: Հիմա, խնդրեմ, անցնինք մեր թատերական փորձին (կը սկսին ոնգային եղանակ եւ ձեռքով ցուցմունք կու տայ):

ՀԵԹՈՒՄ (կը մտնէ):

ՄԱՐԿՈՍ (կը նկատէ Հեթումի մուտքը եւ գլխով իր յարգանքը կը մատուցէ ու կը շարունակէ իր եղանակը).— Խո՛ւմբ, պատրաստ:

ԽՈՒՄԲ (Դասակարգուած են եւ կը հետեւին Մարկոսի ցուցմունքներուն):

ԲՈՒՈՐԸ (Կ'երգեն ու կը շարժին: Եղանակ՝ երիզ թիւ 2):

*Խոփը հողը խրեցինք,  
Սերժը սիրով ցանեցինք,  
Փարնան ջուրով օրհնեցինք,  
Տուներ հացով լեցուցինք:*

*Տարինք հացը Արարին,  
Նշխարն տուաւ մշակին,  
Եւ օրհնութիւն մեր հողին,  
Եւ բարութիւն մեր սրտին:*

*Հարս ալ բերինք թագւորին,  
Մեր տունն ու տեղ արքային՝  
Թող մեր գլխուն միշտ մնայ,  
Կանաչ արեւ մեր արքայ:*

ԽՈՒՄԱԸ (Խումբը տեղադրուած է):

ՄԱՐԿՈՍ.— Փորձենք երկրորդը: (Եղանակ՝ երիզ թիւ 3):

*Եզան վրայ բեռը դրին, բեռը դրին ու տարան:  
Ո՛չ ոք հարցուց այդ խեղճ եզան, բեռը ծանր է որքան:  
Ու գնած եզը բեռը չալկած: Եւ իր կայանը դեռ չհասած,  
Ծանրութեան տակ մնաց, իր բեռան տակ մնաց:*

*Դարեր անցան, մարդիկ մոռցան, մարդիկ մոռցան եզան,  
Հիմա ո՛ւր որ եզ մը տեսնեն, վրան բեռ կը բարձնեն:*

ԽՈՒՄԱԸ.— Պատրաստ երրորդին: (Եղանակ՝ երիզ թիւ 4):

*Եկէք երգենք ու պարենք,  
Մեր հերոսներն մենք գովենք,  
Ճակատները միշտ պայծառ,  
Հպարտութեամբ պսակենք:*

*Վարդեր բերենք դաշտերէն,  
Երթի ճամբան զարդարենք,  
Մինչեւ դառնան յաղթական  
Իրենց ստուերն հայրական:*

ՄԱՐԿՈՍ (Հետումին).— Տէ՛ր արքայ, ինչպէ՞ս կը տեսնես բեմադրու-  
թիւնը:

ՀԵԹՈՒՄ.— Այս բոլորը ո՞վ գրած է:

ՄԱՐԿՈՍ (խոնարհաբար).— Մառադ, տէ՛ր իմ: (Դերասաններուն)

*Քիչ մը դադար առնենք յետոյ կը շարունակենք:*

ԽՈՒՄԱԸ (Դուրս):

ՀԵԹՈՒՄ.— Ե՛րբ պատրաստեցիր այս թատերակը:

ՄԱՐԿՈՍ.— Այստե՛ղ, ձեր բերդին մէջ, ձեր ճո՛րս հիւրասիրութեան  
ներքեւ:

ՀԵԹՈՒՄ.— Իսկ ինչի՞ վրայ հիմնուած է նիւթը:  
 ՄԱՐԿՈՍ.— Ձեր ժողովուրդի յատկութիւններուն վրայ:  
 ՀԵԹՈՒՄ.— Եւ ի՞նչ են այդ յատկութիւնները:  
 ՄԱՐԿՈՍ.— Շատ հերոսապաշտ ժողովուրդ էք, տէ՛ր իմ:  
 ՀԵԹՈՒՄ.— Ձեր ժողովուրդն ալ այդպէս չէ՞:  
 ՄԱՐԿՈՍ.— Գիտէ՞ք, տէ՛ր իմ, Սոփոկլէսը կ'ըսէ. «Մարդը հերոսին  
 մէջ կը մեռնի»: Ժողովուրդ մը պէտք չէ իր հերոսները  
 այնքան մեծցնէ, որ անոնց շուքին տակ պզտիկնայ ու ու-  
 չընչանայ: Յարգէ՛ն, բայց չպաշտէ՛ն:  
 ՀԵԹՈՒՄ.— Դարաւոր ժողովուրդի մը իմաստութիւնը կը բանաձեւես:  
 ՄԱՐԿՈՍ.— Դարաւոր եւ փորձութիւններէ անցած ժողովուրդի մը,  
 տէ՛ր իմ: Դուք ալ կարդացուոր մարդ էք:  
 ՀԵԹՈՒՄ.— Այո՛, ձեր ժողովուրդի մեծ միտքերուն քիչ մը ծանօթ  
 եմ, սակայն ոչ այնքան՝ որ կարողանամ քեզի պէս անոնց  
 խօսքերը անգիր յիշել:  
 ՄԱՐԿՈՍ.— Ամէն մարդ արհեստ մը ունի: Իմինս՝ փիլիսոփաներու  
 մտքերը պահպանելն ու տարածելն է: Ձերը...  
 ՀԵԹՈՒՄ.— Այո՛, Մարկոս, ի՞նչ է իմ արհեստը:  
 ՄԱՐԿՈՍ.— Տէ՛ր իմ, ձերը շատ բարդ է... մէկ ժամուայ մէջ չ'ըս-  
 ւիր...  
 ՀԵԹՈՒՄ.— Լա՛ւ, երկար ճամբայ պիտի կտրենք միասին, մինչեւ  
 հեռաւոր կասպից ծովուն ափերը: Կը խօսինք:  
 ՄԱՐԿՈՍ (ուրախ).— Ուրեմն, տէ՛ր իմ, զի՞ս ալ հետդ կը տանիս:  
 ՀԵԹՈՒՄ.— Այո՛: Միայն թէ ինծի մէկ բան պէտք է սորվեցնես:  
 ՀԵԹՈՒՄ.— Տէ՛ր իմ, ես ո՞վ եմ, որ հայոց արքային բա՛ն պիտի  
 սորվեցնեմ:  
 ՀԵԹՈՒՄ.— Արհեստդ:  
 ՄԱՐԿՈՍ.— Ի՞նչ կ'ըսէք, տէ՛ր իմ, դերասանութիւն կուզէք սորվիլ:  
 ՀԵԹՈՒՄ.— Ո՛չ: Կուզեմ կերպարանափոխուիլ: Անճանաչելի դառնա-  
 լու աստիճան փոխուիլ:  
 ՄԱՐԿՈՍ.— Ա՛յդ է ձեր ուզածը: Ես ձեզ այնպէ՛ս մը կերպարանա-  
 փոխեմ, որ ձեզ տեսողը կարծէ, թէ դերասան Մարկոսն  
 էք:  
 ՀԵԹՈՒՄ.— Բայց դերասանական տաղանդ չունիմ:  
 ՄԱՐԿՈՍ.— Շատ համեստ էք, տէ՛ր իմ: Մեծագոյն դերասանները  
 քաղաքագէտներն են: Բայց...  
 ՀԵԹՈՒՄ.— Բայց ի՞նչ:  
 ՄԱՐԿՈՍ.— Ներողութիւն, կրնա՞մ անկեղծ բան մը ըսել:  
 ՀԵԹՈՒՄ.— Խօսէ՛: Շնորհակալ եմ քաջութեանդ համար:  
 ՄԱՐԿՈՍ.— Քաղաքագէտի մը համար, դուք քիչ մը ձախող դերա-  
 սան էք:  
 ՀԵԹՈՒՄ.— Շնորհակալ եմ անկեղծութեանդ համար: Կը սորվիմ:

ԱՏԱՐ (կը մտնէ: Նկատելով շեթումն ու Մարկոսը).— Հազար ներողութիւն, ես կը կարծէի, որ դերասանները հոս փորձ պիտի ընեն:

ՄԱՐԿՈՍ.— Փորձը վերջացաւ:

ԱՏԱՐ.— Հապա դերասանները ո՛ւր գացին:

ՄԱՐԿՈՍ.— Գացին հանգստանալու:

ԱՏԱՐ.— Տէ՛ր իմ, շատ առանձին կը զգամ այստեղ:

ՀԵԹՈՒՄ.— Ինչո՛ւ այդպէս կը զգաս:

ԱՏԱՐ.— Ամէն մարդ զբաղում մը ունի. միայն ե՛ս եմ, որ բան մը չեմ ըներ:

ՀԵԹՈՒՄ.— Ի՞նչ կ'ուզես ընել:

ԱՏԱՐ.— Այստեղ բան մը չկայ, որ ես գողնամ: Կը ձանձրանամ: Տէ՛ր արքայ, արդեօք թշնամի իշխաններ չունի՞ս:

ՀԵԹՈՒՄ.— Ի հարկէ ունիմ, ինչո՛ւ կը հարցնես:

ԱՏԱՐ.— Հո՛ս հրաւիրէ զիրենք, որ ես ունեցածներն գողնամ...

ՀԵԹՈՒՄ.— Եւ աղքատներո՛ւն բաժնես...

ԱՏԱՐ.— Ինչո՛ւ, այս բերդին մէջ աղքատ մարդ կա՞յ: Աղքատները մեր գիւղն են: Տէ՛ր իմ, անկեղծ հարցում մը կրնա՞մ տալ քեզի:

ՀԵԹՈՒՄ.— Այս ի՛նչ բախտաւոր օր է, երկու անկեղծ հարցում մէկ օրուան մէջ: Հարցո՛ւր:

ԱՏԱՐ.— Տէ՛ր իմ, գիտես որ ես աւազակ եմ, ինչո՛ւ կ'ուզես զիս հետդ տանիլ:

ՀԵԹՈՒՄ.— Հո՛ն՝ ուր կ'երթանք, անոնց լեզուն ես չեմ հասկնար, քեզի պէտք ունիմ:

ԱՏԱՐ (միամիտ).— Ես կիսկատար հայերէն միայն գիտեմ: Անոնց լեզուն ե՛ս ալ չեմ հասկնար:

ՀԵԹՈՒՄ.— Կը հասկնա՞ս, կը հասկնա՞ս:

ԱՏԱՐ (կ'անդրադարձնալ).— Օ՛հ, այո՛, անչո՛ւշտ կը հասկնամ... եւ ինչպէ՛ս:

ՄՄԲԱՏ (կը մտնէ).— Ողջո՛յն արքային:

ՀԵԹՈՒՄ (Մարկոսին եւ Ատարին).— Կրնաք մեկնիլ:

ՄՄԲԱՏ.— Հեթո՛ւմ, այս ընթացքդ զիս կը մտահոգէ: Ի՛նչ դերասաններով եւ աւազակներով չըջապատած ես քեզ:

ՀԵԹՈՒՄ.— Սուրբատէսը ըսած է. «Ժողովուրդին հասկնալու համար, ժողովուրդին գիմէ՛ս. Միթէ չէ՞ր գիտեր»:

ՄՄԲԱՏ.— Ո՛չ, չէ՛ք գիտեր: Ո՞վ յիշեցուց քեզի այդ խօսքը:

ՀԵԹՈՒՄ.— Դերասան Մարկոսը:

ՄՄԲԱՏ.— Այս մարդիկը հետդ մինչեւ Քարա Քորո՛ւմ, թաթարներու բանակատեղի՛ն պիտի տանիս:

ՀԵԹՈՒՄ.— Կարծեմ ատիկա յստակ է:

ՄՄԲԱՏ.— Ես զացած եմ այդ ճամբան եւ գիտեմ, թէ որքան վըրտանդաւոր է:

ՀԵԹՈՒՄ.— Ճիշդ ատոր համար այսպիսի մարդիկ կը տանիմ հետս, որոնք պիտի օգնեն ինձի:

ՍՄԲԱՍ.— Ի՞նչ կրնան ընել դերասանն ու գողը:

ՀԵԹՈՒՄ.— Մէկը զիս պիտի կերպարանափոխէ, որ չճանչցուիմ, միւսըն ալ պիտի ճանչնայ գողն ու աւազակը, որ պիտի գան մեզ կողոպտելու:

ՍՄԲԱՍ.— Ճամբուն ծանօթ մը պիտի չունենամ:

ՀԵԹՈՒՄ.— Անչուշտ ունիմ, Տէր Բարսեղը Ան բոլոր ճամբաներուն ծանօթ է՝ հայկական զիւղերու եւ վանքերու վրայով պիտի տանի:

ՍՄԲԱՍ.— Ի՞մ գացած ճամբով պիտի երթաս:

ՀԵԹՈՒՄ.— Ո՛ր: Այդ ճամբուն վրայ հիմա թշնամիներ դարան մտած են արդէն: Նոր ճամբով մը կ'երթամ եւ տարբեր ճամբայով ալ կը դառնամ:

ՍՄԲԱՍ.— Լա՛ւ ծրագրում է այդ:

ՀԵԹՈՒՄ.— Ճամբորդութեան համար ամէն ինչ կարգի՞ն է:

ՍՄԲԱՍ.— Այո՛, ի՞մ ամէնէն կտրիճ զինուորները պատրաստ են:

ՀԵԹՈՒՄ.— Բայց ես կուտի պիտի չերթամ:

ՍՄԲԱՍ.— Գիտե՛մ: Ես թոյլ չեմ տար, որ կուտիլ չգիտցող մարդոց հետ ճամբորդէ հայոց արքան: Սպարապետ եմ եւ պաշտօնս արքայիս կեանքը ապահով ձեռքերու մէջ դնել է: Ես հայոց արքան ողջ-առողջ գահին վրայ կ'ուզեմ տեսնել:

ՀԵԹՈՒՄ.— Սիրելի սպարապետ, ես ռազմագէտ չեմ, բայց ամէն պատերազմ տարբեր տեսակի զէնքի կը կարօտի: Գու ռազմի զինեալներուն հետ, ես մտքի զինեալներ կ'ուզեմ, անոնք որ մարդուն ներաշխարհը կը ճանչնան: Կուտելէ առաջ, պէտք է թշնամիդ ճանչնաս եւ ապա զէնքդ գործածես: Քօսքը երբեմն աւելի ազդու է, քան ամէնէն ծանր զէնքը:

ՍՄԲԱՍ.— Հեթո՛ւմ, կրբեմն չեմ հասկնար քեզ:

ՀԵԹՈՒՄ.— Մարդիկ կը փոխուին ըստ կացութեան եւ պահանջին: Այս օրերուն, աւելի լաւ է չհասկցուիմ: Աւելի լաւ է ի՞մ մէջ դառնան մտքերը ու գործը միայն երեւան գայ:

ՍՄԲԱՍ.— Բայց ես գոնէ պէտք է գիտնամ մտքերդ:

ՀԵԹՈՒՄ (վեր նայելով եւ ցած ձայնով).— Կը լսե՛ն:

ՍՄԲԱՍ (Հեթոնսին նայած կողմը կը նայի զարմացկոտ, ինքն ալ ցած).— Ո՛վ:

ՀԵԹՈՒՄ.— Շատե՛ր... Մանօթ եւ անծանօթ, նոյնիսկ գոյութիւն չունեցող հակներ: Երթա՛նք... Երթա՛նք... Այս պատերազմը շահելու համար՝ նախ շատ լաւ պէտք է ծրագրես, ապա՛ հարուածես:

ՍՄԲԱՍ եւ ՀԵԹՈՒՄ (Դուրս):

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ (Վրան մը: Գիշեր է)

ԱՏԱՐ եւ ՄԱՐԿՈՍ (Կը մտնեն: Հագած են մուգ գոյն երկար կապան):

ԱՏԱՐ (կը յառաջանայ, շրջան կ'ընէ).— Մէյ մըն ալ ես նայիմ: Տարօրինակ զգացում մը ունիմ: Կարծես ինձմէ զատ ուրիշ մարդ կայ այստեղ:

ՄԱՐԿՈՍ.— Բարեկամ, էս ալ հոս եմ:

ԱՏԱՐ.— Դուն մարդ չես, դուն դերասան ես: Ուրիշ բան մըն է:

ՄԱՐԿՈՍ.— Ի՞նչ է:

ԱՏԱՐ.— Տարօրինակ հոտ մըն է: Օտարականի՛ հոտ է:

ՄԱՐԿՈՍ.— Ես կը կարծէի, որ դուն միայն ոսկիի ու արծաթի հոտ կ'առնես:

ԱՏԱՐ.— Դերասան Մարկոս, ես այսպիսի պահու կատակ չեմ սիրեր: Քեզի կ'ըսեմ, որ մեզի հետեւող կայ:

ՄԱՐԿՈՍ.— Ձինուորները ամէն տեղ քննեցին եւ ըսին, որ այստեղ ապահով է, կրնանք գիշերել:

ԱՏԱՐ (իր շրջանը դադարեցնելով).— Չեմ սիրեր այս կացութիւնը: Ինչ որ է, անհետացաւ հոտը:

ՄԱՐԿՈՍ.— Կենդանի՞ չըլլայ:

ԱՏԱՐ.— Մարդո՛ւ հոտ էր ասիկա: (Դէպի դուրս): Եկէ՛ք, ապահով է:

ՀԵԹՈՒՄ (Կը մտնէ: Հագած է նոյն տեսակի կապան):

ՍՈՒՐԷՆ (կը մտնէ).— Տէ՛ր իմ, մենք դուրսը կը հսկենք:

ՀԵԹՈՒՄ.— Շա՛տ լաւ:

ԱՏԱՐ (Սուրէնին).— Շատ հեռու չերթաք:

ՍՈՒՐԷՆ.— Տէ՛ր իմ, ինչո՞րեմ, յայտնէ այս մարդուն, որ մենք, մեր հրամանը միայն արքայէն կ'առնենք: (Դուրս):

ԱՏԱՐ (դէպի դուրս).— Պահակ, ես հրաման չեմ տար, հրաման կը գործադրեմ: Մտի՛կ ըրէ փորձառու մարդու: (Մարկոսին)՝ Դերասան Մարկոս, ես մտահոգ եմ: Արքային կապան մը հազցնելով կը կարծես արքան անճանաչելի՞ եղաւ:

ՄԱՐԿՈՍ.— Այո՛, անճանաչելի է:

ԱՏԱՐ.— Ո՛չ: Ամէն մարդ կը ճանչնայ, թէ մեր մէջ ո՛վ է թագաւորը, ո՛վ է շինականը եւ ո՛վ է կղերը: Մենք թէեւ միատեսակ հագած չենք, բայց տակաւին նո՛յն անձերն ենք: Արքան՝ արքայ է: Տէ՛ր Բարսեղը կղեր է: Դուն՝ դերասան ես: Ես ալ՝ աւագակ: Դուն Աթէնքի նշանաւոր դերասան ես: Երկիրդ ձգած՝ եկեր ես մեզ գուարճացնելու: Տաղանդդ ի գործ դիր եւ մեզ ալ փոխէ, որ չճանչնան: Բան մը ըրէ՛ վերջապէս:

ՄԱՐԿՈՍ.— Լա՛ւ, քեզ թագաւոր կ'ընեմ:



- ԱՏԱՐ.— Ես արժանի չեմ այդ գիրքին։
- ՄԱՐԿՈՍ.— Գիտե՞ս Պղատոնը ինչ կ'ըսէ։
- ԱՏԱՐ.— Վա՛ճ անցիր այդ Պղատոն-մղատոնէն։
- ՀԵԹՈՒՄ.— Մարկո՛ս, ըսէ՛ նայիմ Պղատոն ինչ կ'ըսէ։
- ՄԱՐԿՈՍ.— Պղատոն կ'ըսէ. «Զգեստը չէ, որ մարդուն արժէք կուտայ, այլ մարդն է, որ զգեստը կ'արժեւորէ»։
- ԱՏԱՐ.— Ատ Պղատոնը ո՛վ է, որ այդպէս կ'ըսէ։ Մեր գիւղի տէր-հայրն ալ նոյնը կ'ըսէ։
- ՄԱՐԿՈՍ.— Տեսա՞ր, ձեր ազգն ալ փիլիսոփաներ ունի։
- ԱՏԱՐ.— Ունի՛, հապա չունի՞։ (Հնթումիւն)՝ Փիլիսոփան ի՛նչ է։
- ՀԵԹՈՒՄ.— Ա՛ն՝ որ խորիմաստ խօսք կ'ըսէ։
- ԱՏԱՐ (Մարկոսին)։— Ինձի՛ նայէ, մեր ազգը շա՛տ խելացի մարդիկ ունի։ Դուն ինձի մի՛ նայիր։
- ՀԵԹՈՒՄ.— Դո՛ւն ալ խելացի ես։
- ԱՏԱՐ.— Այո՛, խելացի եմ, բայց գող եմ, տէ՛ր իմ։ Լա՛ւ, Մարկոս, ի՛նչ պիտի ընես Արքայի ապահովութեան համար։
- ՄԱՐԿՈՍ.— Նայեցէ՛ք, առաջին հերթին, իրարու հետ խօսած ժամանակ, այլևս տիտղոս եւ կամ մակղիբ չենք գործածեր։
- ԱՏԱՐ.— Ատ եղա՛ւ։
- ՄԱՐԿՈՍ.— Այո՛։ Մենք իրար հասարակ անունով պիտի կանչենք։ Ես՝ Մարկոս, դուն՝ Ատար, աս՝ Հեթում... ո՛չ, իր իսկական անունով չենք կանչեր, յետոյ օտէ մէկը պիտի իմանայ, թէ թագաւորը ո՛վ է։ (Հնթումիւն)՝ Զեզ կ'անուանենք... Մարգար։
- ԱՏԱՐ (լրջացած)։— Վարկեան մը լուսթիւն։ Նորէն այդ տարօրինակ հոտը կ'առնեմ։ Աստուած է վկայ, որ մեզ հետապնդող կայ (Կը սկսի հիտուրտալ շրջակայքը)։ Փախա՛ւ, նորէն փախցուցի։ Տէ՛ր իմ, ներողութիւն։ Մարգա՛ր, ես այս ուղեւորութեան մասնակցեցայ, որ քիչ մը հարստանամ։ Խորհեցայ քանի մը հարուստ կը գտնեմ, ասկէ քանի մը ոսկի, անկէ քանի մը ոսկի... կեանքս կ'ապահովեմ։ Եկուր տես ի՛նչ եղաւ։ Զիս դերասանի մը եւ հոգեւորականի մը հետ դրիք։ Դերասանը անօթի, հոգեւորականը ազօթքով կ'ապրի, ես որմէ՞ գողնամ։
- ՀԵԹՈՒՄ.— Ինձմէ՛ գողցիր։ Այդտեղ երեք հսկայական սնուկ նըւէր կը տանիմ Մանկու խանին, բա՛ն մը գողցիր։
- ԱՏԱՐ.— Ինչո՞ւ, ես այդքան ստո՞ր եմ, որ ազգիս դրամը գողնամ։
- ՀԵԹՈՒՄ.— Լա՛ւ, այն ատեն ես քեզի կը վճարեմ։
- ԱՏԱՐ.— Զեղաւ, Մարգա՛ր։ Ես արժանապատուութիւն ունիմ, ձրի դրամ չեմ ուզեր։ Ես դրամս ճակտիս քրտինքով կ'ուզեմ շահիլ, գողութեամբ։ Այսօր լսեցի, որ այս քաղաքի... Ինչպէ՞ս էր անունը այս քաղաքին։
- ՀԵԹՈՒՄ.— Քարա Քորում։

ԱՏԱՐ.— Ի՞նչ ալ տարօրինակ անուն է այս: Ի՞նչ որ է: Այստեղ շատ հարուստներ կան եղեր:

ՀԵԹՈՒՄ.— Ատա՛ր, լաւ կ'ըլլայ, որ մաքուր անունով հասնինք եւ այդպէս ալ վերադառնանք:

ԱՏԱՐ.— Առա՛նց ասոնք կողոպտելու:

ՀԵԹՈՒՄ.— Այո՛, առանց կողոպտելու: Մենք եկած ենք լուրջ հարցով, Ատա՛ր: Եկած ենք խաղաղութեան դաշինք կնքելու մեր ժողովուրդին համար: Ամէն ճիգ պիտի ընենք, որ այդ դաշինքը կնքուի առանց արգելքի: Գիտե՛ս ինչ կը մտածեմ:

ԱՏԱՐ.— Ի՞նչ:

ՀԵԹՈՒՄ.— Քեզ պիտի ներկայացնեմ որպէս Իշխանաց Խորհուրդի պատասխանատուն:

ՄԱՐԿՈՍ (Կը խնդայ):

ԱՏԱՐ.— Ինչո՞ւ կը խնդաս: Ես իշխան չե՛մ կրնար ըլլալ:

ՀԵԹՈՒՄ.— Ո՛չ միայն իշխան, այլեւ՝ պատասխանատու...

ԱՏԱՐ.— Տէր իմ, Մարգար, այս ի՞նչ պատիւ է... Ես գող Ատարը՝ իշխան...

ՀԵԹՈՒՄ.— Եթէ տարբեր ժամանակ ծնած ըլլայիր, թերեւս իշխան կ'ըլլայիր, ես՝ աւազակ...

ԱՏԱՐ.— Կատակ է ասիկա, չէ՞...

ՀԵԹՈՒՄ.— Ո՛չ, լուրջ եմ: Միշտ քոյս պիտի ըլլաս: Ուշադիր պիտի հսկես մեր շուրջը եղողներուն վրայ եւ լա՛ւ մտիկ ընես խօսակցութիւնները:

ԱՏԱՐ.— Աս մէկը ինծի՛ ձգեցէք...: Ներողութիւն, ես ուժեղ հոտառութիւն ունիմ: Մարդը իր հազուստէն կը ճանչնամ: (Մարկոսին)՝ Աս ալ նշանաւոր փիլիսոփայ Ատարը ըսած է: Քո՛վդ արձանագրէ՛: Քանի որ իշխան պիտի ըլլամ, ելի՛ր, ելի՛ր եւ ինծի սորվեցուր իշխանի պէս քայլել եւ իշխանի պէս խօսիլ...

ՄԱՐԿՈՍ.— Ո՛ւշ է:

ԱՏԱՐ.— Կեանքիս մէջ առաջին անգամ իշխան պիտի ըլլամ եւ այս մարդը կ'ըսէ, թէ ուշ է: Ելի՛ր, ելի՛ր ինծի սորվեցուր: Աչքս բացած եմ առանց հօր: Քոյր ու եղբայրներս պահողը ես եղայ: Գրեւ-կարգալ չեմ գիտեր, ուսում չեմ առած: Մարկո՛ս, ուսուցանէ ինծի: Դուն յունաց երկրի բարձրը ուսումնասիրած մարդ ես: Զիս իշխան դարձուր:

ՄԱՐԿՈՍ.— Լաւ, եկո՛ւր: Նախ մէյ մը կեցի՛ր տեսնեմ:

ԱՏԱՐ (Կը կենայ):

ՄԱՐԿՈՍ.— Չեղա՛ւ: Եթէ այդպէս կենաս, ամէն մարդ պիտի գիտնայ, որ աւազակ ես:

ԱՏԱՐ.— Հապա ինչպե՞ս կենամ:

ՄԱՐԿՈՍ (Իշխանական խորխոս կնքուածք մը ցոյց կու տայ):

ԱՏԱՐ (կը փորձէ կապկել: Չի հաւնիր իր ըրածը).— Աժէն արհեստ իր հիմը ունի: Կ'երեւի իշխան ծնած ըլլալու է մարդ արարածը, որ իշխանի պէս ալ կենայ: (Ինքզինքը համոզելու ճիգով)՝ Կարծես կամաց-կամաց իշխան պիտի ըլլամ: Կարծեմ իրաւունք ունիս, այսօր ուշ է: Վաղը, երբ արշաւը բացւի, կը սկսինք:

ՄԱՐԿՈՍ.— Շատ լաւ գաղափար է:

ԱՏԱՐ.— Վարկեան մը, այդքան շուտ չես ազատիւր ձեռքէս:

ՄԱՐԿՈՍ.— Ինչո՞ւ, ալ ուրիշ ի՞նչ կ'ուզես:

ԱՏԱՐ.— Մենք փոխն ի փոխ պահակութիւն պէտք է ընենք այս գիշեր, մինչեւ լուսաբաց:

ՄԱՐԿՈՍ.— Մեր չորս կողմը արդէն պահակներ կան:

ԱՏԱՐ.— Անոնց պահակութիւնը չի՞ բաւեր: Դուն ու ես պիտի պահակ ըլլանք:

ՄԱՐԿՈՍ.— Ինչո՞ւ այս առանձնաշնորհումը:

ԱՏԱՐ.— Մեր արհեստին բերումով երկուքս ալ տեսնելու շատ զօրաւոր կարողութիւն ունինք:

ՄԱՐԿՈՍ.— Գողն ու դերասանը հաւասարուեցան:

ԱՏԱՐ.— Ինչպէս կ'ուզես, այդպէս ալ մեկնարանէ: Մենք պէտք է պահակութիւն ընենք: Այդ խեղճ հոգեւորականը միայն աղօթել գիտէ:

ՄԱՐԿՈՍ.— Լա՛ւ, համաձայն եմ: Դո՛ւն հսկէ, ես կը քնանամ:

ԱՏԱՐ.— Այդ ճարտարութիւնը բեմին պահէ: Դուն դերասան մարդ ես, վարժուած ես ու ջանալուն: Ե՛ս պէտք է շուտ քնանամ: Գիշեր բարի: Ես հոն (դուրսը ցոյց տալով)՝ կը պառկիմ, եթէ ինձի պէտք ունեցաք, ձայն տուէք: (Դէպի դուրս):

ՀԵԹՈՒՄ.— Հոգ մի ըներ, պահակները արթուն են:

ԱՏԱՐ.— Եթէ պահակները արթուն եղած ըլլային, ես աւագակ չէի ըլլար: (Դուրս):

ՄԱՐԿՈՍ.— Մարդ ըսածդ ասանկ պէտք է ըլլայ, ուզածը առնէ ու երթայ:

ԱՏԱՐ (ներս գալով).— Լսեցի՛ ինչ ըսիր իմ մասին:

ՄԱՐԿՈՍ.— Հիացմո՛ւնքս միայն յայտնեցի:

ԱՏԱՐ.— Ձիս ապուշ մի՛ կարծեր, ես հիացմունքի եւ անարգանքի տարբերութիւնը գիտեմ:

ՄԱՐԿՈՍ (ոտքի կը կենայ եւ խոնարհուով).— Հազա՛ր ներողութիւն, որ անարգեցի քեզ: Կը խոնարհիմ՝ նուրը հասկացողութեանդ եւ մանաւանդ անպերազանցելի կարողութեանդ վրայ:

ԱՏԱՐ.— Ահա, հիմա՛ եղայ: (Դուրս):

ՄԱՐԿՈՍ.— Մարդ ըսածդ ասանկ պէտք է ըլլայ, ո՛չ միայն իր ուզածը առնէ, այլեւ իր ուզելիքն ալ գիտնայ:

ՀԵԹՈՒՄ.— Այդ միտքը ո՞վ բաւ. Պղատո՞ն, թէ Սոկրատէսը:

1000-2001



ՄԱՐԿՈՍ.— Համեստութիւնը մէկդի դնելով ըսեմ, որ այս մէկ խօսքը ես ըսի Սկսած եմ յաճախ մոռնալ, թէ որը իմ միտքն է եւ որը՝ ուրիշին: Ես այս խեղճ աւագակին կ'արգահատէի: Բայց աւագակ մըն ալ ես եմ, որ ուրիշին մտքերը կ'իւրացնեմ որպէս իմ անձնականը:

ՀԵԹՈՒՄ.— Ամէն մարդ քիչ մը գող է, Մարկո՛ս: Փոքր աւագակները նիւթը կը գողնան, ուրիշներ՝ միտքեր, իսկ շատ մեծերը՝ հող ու հայրենիք: Յաւային այն է, որ շատ յաճախ քեզ կողոպտողէն պիտի խնդրես, որ քու սեփական ինչքը քեզի վերադարձնէ: Աւելի ահռելին՝ բարձր գին պիտի վճարես, որպէսզի ա՛յդ կատարէ:

ՄԱՐԿՈՍ.— Ատոր համար մինչեւ հեռաւոր կասպից ծովի ափերը կ'երթաս: Ունեցածդ ե՛տ առնելու:

ՀԵԹՈՒՄ.— Ձկորսնցնելու, Մարկո՛ս, ունեցածս չկորսնցնելու: Այս բոլւս մը հայրենիքը մէկ վայրկեանի մէջ կ'անհետանայ, եթէ մեր զօրաւոր թշնամիին գոհացում չտանք:

ՄԱՐԿՈՍ.— Բայց ի՞նչ պիտի տաս, որ գոհանայ:

ՀԵԹՈՒՄ.— Վստահութիւն:

ՄԱՐԿՈՍ.— Բայց ան այդ վստահութեան պէտք չունի:

ՀԵԹՈՒՄ.— Ունի՛, այդ վստահութեան պէտք ունի մանաւանդ եթէ գիտնայ, որ այդ վստահութիւնը ես կրնամ իր ոխերիմ թշնամիին ծախել: Ազգերու մեծ կրկէսին մէջ, ամէնէն խուճեմ մարդը ան է, որ գիտէ որու եւ երբ ծափահարէ: Մեզի պէս փոքր ժողովուրդ մը, պոռայ, ծափահարէ, եթէ հարկ է՝ իրարու դէմ քաջալերէ, բայց երբեք, երբեք, կրկէս չիջնէ: (Պահմը): Անորո՛չ է ամէն ինչ: Ինչպէ՛ս պիտի ընդունի մեզ Մանկու խանը: Պիտի կարենա՞մ համոզել զինք: Պիտի կարողանա՞մ մեր երկրի խաղաղութիւնը ապահովել: Մ՛հ, ինչպէս կ'ուզէի ապագան տեսնել, ոչնչութեան ձայնը լսել: Ա՛ն՝ որ անվերջ դաւեր կը նիւթէ:

ՄԱՐԿՈՍ.— Յոգնած ես, տէ՛ր իմ, այսօր շատ երկար քալեցիք:

ՀԵԹՈՒՄ.— Իրաւո՛ւնք ունիս: Պիտի փորձեմ հանգչիլ... եթէ կարենամ, (Կը պատկի):

ՄԱՐԿՈՍ (Թաղը կ'առնէ ու կը սկսի մեղմ ոնգային եղանակ մը):

(Երիզ թիւ 5):

Հոգիները յոգնած են արդէն,

Երազները բեկուած են արդէն:

Առաւօտները, առաւօտները՝

Առաւօտները երբ պիտ' գան:

Հին օրերուս կարօտ եմ հիմա,

Անհոգ վագրի կարօտ եմ հիմա՝

*Առաւօտները, առաւօտները,  
Առաւօտները ուշացան...*

(Կը նայի Հեթումին, որ արդէն քնացած է: Ինքն ալ գլուխը կը դնէ գետին ու կը քնանայ):

ԱՏԱՐ (Դանդաղօրէն կը մտնէ, չորս կողմը կը նայի: Կը ծածկէ Հեթումը, Մարկոսը եւ դորս կ'ելլէ):

(Լոյսերը դանդաղօրէն կը մարին):

### ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ (Վրան մը)

ՄԱՐԿՈՍ (սնտուկի մը նստած՝ մագաղաթի մը վրայ կը գրէ: Երբեմն իր գրածը բարձրաձայն կը կարդայ):— Այո՛, երբ դուք կարողացաք ձեր շրջակայ երկիրները նուաճել, դուք արդէն պատմութեան մէջ անցաք:

ԱՏԱՐ (Կը մտնէ եւ առանց տեսանելի ըլլալու՝ կը հետեւի Մարկոսին):  
ՄԱՐԿՈՍ (նզնոյրուած եւ ոտքի կենցած):— Բայց ես Ձեր հմտութիւնը եւ լեզուական ունակութիւնը չունիմ:

ԱՏԱՐ.— Իրա՞ւ:

ՄԱՐԿՈՍ.— Դուն հո՞ս ես: Ե՛րբ եկար: Որքա՞ն ատեն է, որ...

ԱՏԱՐ.— Դերասանութի՛ւնդ կը դիտեմ: Այս խօսքերը, որ կը գրես, նո՛յն խօսքերն են, որ արքան եւ Մանկու խանը փոխանակեցին իրենց վերջին հանդիպման ընթացքին: Ի՞նչ է, թատրո՞ն կը գրես:

ՄԱՐԿՈՍ.— Այո՛:

ԱՏԱՐ.— Ինչո՞ւ համար:

ՄԱՐԿՈՍ.— Որ տանիմ Աթէնք ներկայացնեմ եւ ցոյց տամ, թէ, դուք ինչպիսի՛ խոհեմ արքայ մը ունիք:

ԱՏԱՐ.— Եթէ այս թատրոնը կը գրես, ինձի՛ հարցուր, ես բոլոր խօսակցութիւնները գոց գիտեմ:

ՄԱՐԿՈՍ.— Ինչպէ՞ս թէ:

ԱՏԱՐ.— Հապա, չէ՞ որ արքան ըսաւ, որ շատ ուշագիւր հետեւիմ բոլոր խօսակցութիւններուն: Ես ալ (ցուցական) որպէս իշխանաց խորհուրդի պատասխանատու, բոլոր խօսակցութիւնները գոց ըրի, որ երթամ մեր գիւղը եւ պատմեմ: Ձե՛ս հաւատար ըսածիս:

ՄԱՐԿՈՍ (տատամտումով).— Ի՞նչ ըսեմ:

ԱՍԱՐ.— Լաւ, եկո՛ւր ես արքան ըլլամ եւ դուն ալ Մանկու խանը:  
ՄԱՐԿՈՍ.— Թատրո՞ն խաղանք:

ԱՍԱՐ.— Ի՞նչ կ'ուզես կոչէ: Վայրկեան մը: Մանկու խանը հո՛ս նստած էր: Արքան հո՛ս կեցած էր: Մանկու խանի գեղեցիկ կիներ հո՛ս կեցած էր: Նկատեցի՞ր ի՛նչ գեղեցիկ աչքեր ունէր:

ՄԱՐԿՈՍ.— Արիտո՞՞նք ըսած է. «Արուեստը գեղեցիկ է, իսկ գեղեցիկը արուեստի մէջ է»:

ԱՍԱՐ.— Դուն ինծի ան ըսէ, ինչպէ՞ս այսպէս ամէն առիթի գեղեցիկ խօսք կը գտնես:

ՄԱՐԿՈՍ.— Տաղա՛նդ է: Այդքան մըն ալ բնութիւնը ինծի շնորհ ըրած է:

ԱՍԱՐ.— Լաւ, եկո՛ւր, Հեթումի եւ Մանկու խանի հանդիպման թատրոնը խաղանք: Դուն եղի՛ր Մանկու խան:

ՄԱՐԿՈՍ (Զեւեր մը ընելով կ'երթայ կը նստի):

ԱՍԱՐ.— Վայրկեան մը, Մանկու խանը այսպէս չքայեց:

ՄԱՐԿՈՍ.— Եթէ Մանկու խանը դերասան ըլլար, այսպէ՛ս պիտի քայէր: (Կը նստի եւ թագաւորական ոճով կը խօսի) Եւ դո՛ւն, հայոց արքայ, քու համբաւը շատոնց լսած էինք:

ԱՍԱՐ (զարմացած կը նայի).— Ո՞ւր է հայոց արքան:

ՄԱՐԿՈՍ.— Դո՛ւն ես, չէ՞ որ դեր կը խաղանք:

ԱՍԱՐ.— Հասկցա՛յր (Զեւեր մը կ'առնէ): Ես ալ, Ձե՛րդ մեծամտութիւն...

ՄԱՐԿՈՍ.— Արքան այսպէս չըսա՛ւ: Ըսաւ. «Ձերդ մեծութիւն, ոչ թէ՛ մեծամտութիւն»:

ԱՍԱՐ.— Ի՞նչ է տարբերութիւնը:

ՄԱՐԿՈՍ.— Առաջինը դուն ես, երկրորդը՝ ես:

ՀԵԹՈՒՄ (Աճնկատ կը մտնէ):

ՄԱՐԿՈՍ.— Ըսէ՛ ինդրեմ, հայոց արքայ, ինչո՞ւ երկար ու դժուար ճանապարհ կտրեցիր ինծի հանդիպելու համար:

ԱՍԱՐ.— Յարգանք մատուցելը դժուարութիւն չի ճանչնար, Մանկո՛ւ խան:

ՄԱՐԿՈՍ.— Տարօրինակ է, որ փոքր ազգի մը ղեկավարը այսքան հմտութիւն ունի բառերու հետ:

ԱՍԱՐ.— Յարգելի Մանկու խան, թէեւ փոքր է իմ ազգը, բայց դարերու փորձառութիւն ունի: Շա՛տ է ստուապած: Տառապանքը հմտութիւն կը սերմանէ:

ՄԱՐԿՈՍ.— Եւ սքանչելի հմտութիւն: Ըսէ՛ նայիմ, Հեթո՛ւմ արքայ, թշնամիներդ ինչպէ՛ս կը դիմագրաւես:

ԱՍԱՐ.— Ձեր բարեկամութեամբ, Մանկու խան:

ՄԱՐԿՈՍ.— Եթէ իմ ազգէս ըլլայիր, քեզի իշխան կը նշանակէի, Հեթում արքայ:

ԱՏԱՐ.— Պատիւ է ձեր նշանակումով իշխան ըլլալ, բայց ներեցէք ըսեմ, որ ուժերս ազգիս յատկացնելով, ձեզի աւելի օժանդակած կ'ըլլամ:

ՄԱՐԿՈՍ.— Տարօրինակ միտք է այդ, Հեթում արքայ, բացատրէ՛:

ԱՏԱՐ.— Յարգելի Մանկու խան, դուք արդէն շատ կարող իշխաններ ունիք: Ես ոչինչ պիտի աւելցնէի:

ՄԱՐԿՈՍ.— Սքանչելի՛, Աստուած է վկայ սքանչելի:

ԱՏԱՐ.— Ո՛վ, ե՛ս, թէ արքան...

ՄԱՐԿՈՍ.— Խաղէն դուրս մի ելլեր: Հեթում արքայ, Դուք զիս այնքան սպաւորեցիք, որ իմ ամէնէն գեղեցիկ հարձը նըւէր պիտի տամ ձեզի...

ՀԵԹՈՒՄ.— Ո՛չ...

ԱՏԱՐ (կընկատէ Հեթումը).— Ներողութի՛ւն, տէ՛ր իմ:

ՀԵԹՈՒՄ.— Շատ լա՛ւ սերտեր էք: Եթէ պիտի խաղաք, այդ հարձի պատմութիւնը զանց առէք:

ԱՏԱՐ.— Լա՛ւ: (Մարկոսին)՝ Այդ մասին բան մը չգրես: Տէ՛ր իմ, հիմա որ եկաք, Մարկոսը ինձի այլեւս պէտք չունի: Դուք ձեր դերը խաղցէք: (Դէպի դուրս): Ես արդէն դերասան ալ չեմ: Երթամ, երթամ գործերս կարգի դնեմ: Այդ ժողովուրդը իրա՛ւ հաւատաց, որ ես իշխանաց խորհուրդի պատասխանատուն եմ եւ այնքան նուէրներ տուին, որ ես սպշած եմ: Ես ինչպէ՛ս մեր գիւղացիներուն հասկցնեմ, որ ես չեմ գողցած: Տէ՛ր իմ, դժուար կացութեան առջեւ դի՛ք զիս: Ի դէպ, շատ շնորհակալ եմ, որ այդպէս ուշադիր ամէն ինչի հետեւեցար: Ճի՛շդ իսկական իշխան մըն էիր:

ԱՏԱՐ.— Մեր դերասան Մարկոսին կը պարտիմ: Ձիս ալ դերասան դարձուց: (Կը մօտենայ Մարկոսին, ձեռքը կը սեղմէ): Շնորհակալ եմ: Ինչպէ՛ս էր այդ խօսքը... հա, հա. «Մեծութիւնը մարդուն մէջն է եւ մարդը՝ մեծութեան»: Ո՛վ ըսած է այս խօսքը:

ՄԱՐԿՈՍ.— Պղատոն:

ԱՏԱՐ.— Բաւական խելօք բաներ ըսած է այս ձեր Պղատոնը: Ես երթամ նուէրներս կարգի դնեմ: (Կը կենցալ կը հոտորըտայ ուժը): Այդ խայտառակ հոտը նորէն կ'առնեմ...: Բայց արդէն հեռացած ենք իրենց սահմաններէն, հիմա կրնամ աւելի հանգիստ ըլլալ: (Դուրս):

ՄԱՐԿՈՍ.— Շատ ազնիւ մարդ է:

ՀԵԹՈՒՄ.— Այո՛, ազնիւ մարդ է: Մարդիկ երբեմն ստիպուած են իրենց փափաքին հակառակ կեանք մը վարել: Ինչպէս օրինակ ես:

ՄԱՐԿՈՍ.— Ինչպէ՛ս թէ դուք, տէ՛ր իմ:

ՀԵԹՈՒՄ.— Այս թագաւորութիւնը ինձի յանձնուեցաւ՝ առանց իմ

փափաքին: Ես կ'ուզէի ազատ ըլլալ: Մտահոգուիլ միմիայն իմ ընտանիքով: Հիմա ես ընտանիք չունիմ:

ՄԱՐԿՈՍ.— Ազգը ձեր ընտանիքն է:

ՀԵԹՈՒՄ.— Ճիշդ: Եւ ասիկա գիտե՛ս ի՞նչ պարտաւորութեան առջեւ կը դնէ զիս: Երկու ամիս է, որ քեզ կը ճանչնամ, կը վայելեմ ներկայացումներդ, երգերդ, փիլիսոփաներու միտքերէ մէջընթացներդ: Մարկոս, գուցէ անհաւատալի թըւի, բայց կը նախանձիմ քեզի:

ՄԱՐԿՈՍ.— Տէ՛ր իմ, ասիկա մե՛ծ պատիւ է ինծի համար: Բայց անօթի-ծարաւ դերասան մըն եմ, ի՞նչ ունիմ, որ ինծի նախանձիք:

ՀԵԹՈՒՄ.— Դուն ազատութիւն ունիս: Դուն ուրիշներու կեանքը կը ներկայացնես: Ստիպուած չես ինքզինքդ ներկայացնելու: Մինչդեռ ես...

ՄԱՐԿՈՍ.— Տէ՛ր իմ, բեմին վրայ ուրիշները ներկայացնելը հաճոյք է, բայց երբ կեանքի մէջ ուրիշը կը ներկայացնես, հաճելի չէ:

ՀԵԹՈՒՄ.— Բայց կեանքի մասին կը խօսիմ: Ես կ'ուզեմ այսպէս պահ մը գոնէ Հեթումը ըլլալ: Ըլլալ, օրինակի համար, Մարկոս:

ՄԱՐԿՈՍ (մտահոգ).— Տէ՛ր իմ, իրականութեան մէջ, ես այն չեմ ինչ որ դուն կը կարծես որ եմ:

ՀԵԹՈՒՄ.— Դերասան չե՛ս:

ՄԱՐԿՈՍ.— Դերասան եմ...: Բայց քու ճանչցած Մարկոսը չեմ:

ՀԵԹՈՒՄ.— Ի՞նչ ըսել կ'ուզես:

ՄԱՐԿՈՍ (տաւաճառով).— Տէ՛ր իմ, ես դերասան եմ, բայց յոյն չեմ, հայ եմ: Տարիներով դերասանութիւն ըրի, բայց ոեւէ մէկը կարեւորութիւն չտուաւ: Օր մըն ալ գլուխս առի գացի յունաց երկիրը: Քանի մը բառ յունարէն սորվեցայ եւ ետ եկայ որպէս յոյն դերասան: Երբ հայ էի, արժէք չունէի: Օտարացայ եւ արժէք ունեցայ: Հազար ներողութիւն, տէ՛ր իմ, եթէ ձեզ խաբեցի: Զկարծէ՛ք, որ օգտագործեցի ձեզ: Իսկ այն նուէրները, որ ստացայ, կը վերադարձնեմ:

ՀԵԹՈՒՄ (Լուռ է):

ՄԱՐԿՈՍ.— Կը կրկնեմ, տէ՛ր իմ, նուէրները, որ Քարա Քորում ստացայ, կը վերադարձնեմ:

ՀԵԹՈՒՄ.— Այդ նուէրները պահէ: Ասիկա արուեստիդ համար ստացար: Բայց Մարկոս, հարցում մը:

ՄԱՐԿՈՍ.— Արդեօք օտարականի դերս լաւ չխաղացի՞:

ՀԵԹՈՒՄ.— Ո՛չ, շատ լաւ օտարական խաղացիր: Բայց այս տողերը, Պղատոնի, Սոկրատէսի, Արիստոֆանի այդ մտքերը ո՞ր



գրքին մէջ գրուած են: Իմ կարգացած գիրքերէն այդպիսի տողեր չեմ յիշեր:

ՄԱՐԿՈՍ (հագալով).— Որովհետեւ այդ տողերը ձեր կարգացած գիրքերուն մէջ չկան: Ատոնք բոլորն ալ թատերագիր բարեկամիս միտքերն են:

ՀԵԹՈՒՄ.— Ձրան՝ս, փիլիսոփայ բարեկամ ունիս: Մարկո՛ս, յատկապէս այդ միտքը սիրեցի, որ կ'ըսէր. «Ձգեստը չէ՛, որ մարդուն արժէք կու տայ, այլ մարդն է, որ զգեստը կ'արժեւորէ»: Ինչքան ճիշդ:

ԱՇՐԱՏ ԵՒ ԵՐԿՈՒՍ ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐ (Գլխու ևն ծածկոցներով եւ զինւած Ատարըներս կը հրեն: Ատարի ձեռքերը կապուած են, դէմքը՝ արխնոտած):

ԱՇՐԱՏ.— Ձեզմէ ո՞ր մէկն է այսպէս կողուած հայոց արքան:

ՀԵԹՈՒՄ.— Ե՛ս եմ:

ՄԱՐԿՈՍ (Հեթումին).— Լուէ՛, անպատկա՛ռ: Մի՞թէ կը կարծես հայոց արքան պիտի վախնա՛յ այս աւազակներէն:

ԱՇՐԱՏ (Մարկոսին).— Աւազակ չե՛նք: Եկած ենք մեր վրէժը լուծելու: Դուն Ղայասատոհի ընտանիքը յանձնեցիր մեր թշնամիին եւ մեր պատիւը արատաւորեցիր: Մեր վստահութիւնը ոտնակոխ ըրիր: Հիմա եկած ենք անոնց արդար արիւնը պահանջելու:

ՀԵԹՈՒՄ.— Բայց...

ՄԱՐԿՈՍ.— Քեզի կ'ըսեմ լուէ՛: Ե՛ս եմ պատասխանատուն: (Դէպի դուրս): Պահա՛կ...

ԱՇՐԱՏ.— Դո՛ւն ես պատասխանատուն, ահա՛ մեր վրէժը: (Կը յարձակի եւ կը դաշունահարէ Մարկոսը): Գնա հիմա՛ թագաւորէ: (Դուրս կը փախչին):

ՄԱՐԿՈՍ (Կ'իյնայ):

ՀԵԹՈՒՄ ԵՒ ԱՏԱՐ (Կը մօտենան ինկած Մարկոսին):

ՊԱՀԱԿ (Ներս վազելով).— Տէ՛ր իմ, ի՛նչ պատահեցաւ:

ՀԵԹՈՒՄ.— Պահա՛կ, հասիր, թշնամիներ կան դուրսը:

ՊԱՀԱԿ (Դուրս կը վազէ):

ՀԵԹՈՒՄ.— Մարկո՛ս, ի՛նչ ըրիր: (Կը մօտենայ եւ ինկած Մարկոսին գլուխը իր գիրկը կ'առնէ):

ՄԱՐԿՈՍ (շնչահատ).— Տէ՛ր իմ:

ՀԵԹՈՒՄ.— Մարկոս, մի՛ խօսիր:

ՄԱՐԿՈՍ.— Բեմին վրայ որպէս զերասան, շա՛տ մեռած եմ... ատոնք զժուար մահեր էին... իսկ այս մէկը շատ խաղաղ է...

ՀԵԹՈՒՄ.— Մարկոս, չե՛մ մեռնիր:

ՄԱՐԿՈՍ.— Տէ՛ր իմ, վերջին խնդրանք մը... Անո՛ւնս Մարկոս չէ՛, Անու՛նս Մակա՛ր է: Եթէ՛ զիս պիտի թաղեն, թող աւազանի անունովս թաղեն... Մակա՛ր...

ՀԵԹՈՒՄ.— Չեա մեռնիր, Մակա՛ր...  
 ՄԱՐԿՈՍ.— Այո, Մակա՛ր...  
 ՀԵԹՈՒՄ (Մարկոսի գլուխը կը գրկէ):  
 ԱՏԱՐ (Գլուխը կախ):

(Լոյսը դանդաղօրէն կը մարի)

**ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ**

ԱՄԲՈՍ (Աղմուկով ներս կը խուծեն չորս կողմերէն: Մտփեր եւ հոտանքեր կը լսուին):

Ա.— Եթէ այսպէս պիտի թագաւորէ, թող վար իջնէ գահէն:  
 Բ.— Երկիրը սկսած է յանձնել թշնամիներուն:

Գ.— Այսպիսի թագաւոր չենք ուզեր:  
 ՌՈՒԲԷՆ (Մտփերու մէջ, գահաստրակի վրայ կը բարձրանայ):  
 ԱՄԲՈՍ (բարձրաձայն եւ միաձայն).— Ռո՛ւ-բէ՛ն, Ռո՛ւ-բէ՛ն:

Ա.— Ռուբէն իշխան, մենք ձեզի պէտ թագաւոր կ'ուզենք:  
 Բ.— Դուք էք արժանի այս գահին, եւ ոչ թէ այդ ծերուկը:

ԱՄԲՈՍ.— Այո՛, այո՛, թող հրաժարի Հեթումը:  
 Ա.— Անկցի՛ Հեթումը:

ԱՄԲՈՍ.— Անկցի՛ Հեթումը, անկցի՛ Հեթումը, անկցի՛ Հեթումը:  
 Բ.— Կեցցէ՛ Ռուբէն իշխանը:

Գ (Բ.ը սրբագրելով).— Կեցցէ՛ Ռուբէն թագաւորը:  
 ՌՈՒԲԷՆ.— Սիրելի ժողովուրդ, իրաւունք ունիք, իրաւունք ունիք զժողովուրդ: Այս ծերուկ թագաւորը կորսնցուցած է իր դատողութիւնը եւ հիմա մեր երկիրը կտոր-կտոր կը բաժնէ թշնամիներուն:

Ա.— Վա՛ր առնենք այդ ծերուկը:  
 Բ.— Դատի կանչենք Հեթումը:

Գ.— Քիսատենք այդ ցնդածը:  
 ՌՈՒԲԷՆ.— Հեթումը հաշիւ պէտք է տայ ձեզի, իմ սիրելի ժողովուրդ:

Ա.— Թող հիմա՛ տայ այդ հաշիւը:  
 Բ.— Այո՛, այսօր:

ԱՄԲՈՍ.— Այսօ՛ր, այսօ՛ր,  
 ԱՄԲԱՏ (Մերացած է: Կը մտնէ իր զինակիցներով):

ԱՄԲՈՍ.— Անկցի՛ Հեթում արքան, անկցի՛ Հեթում արքան:  
 ԱՄԲԱՏ (բարձրաձայն եւ խրոխտ).— Ռուբէ՛ն իշխան, հայոց սպարապետի անունով կը համայնմ, որ լուեցնես այս ամբոխը:

Ա (հնգնակաւ).— Ձեր ժամերը սահմանուած են, սպարապետ:

- ՄՄԲԱՍ.— Լու՛է՛, անպատկա՛ռ, ապա թէ՛ ոչ՛ զլիատել կու տամ քեզ։
- ՌՈՒԲԵՆ.— Մժբա՛տ, ես կը կարծէի, որ քու պարտականութիւնը այս ժողովուրդը պաշտպանելն է, եւ ոչ թէ՛ սպաննելը։
- ՄՄԲԱՍ.— Ճիշդ կը կարծես, Ռուբէ՛ն իշխան, բայց սխալ կը դատես։ Այո՛, արքայի եւ իմ պարտականութիւնը այս ժողովուրդը պաշտպանել եղած է եւ ճիշդ այդ ըրինք վերջին 43 տարիներու ընթացքին։ Իսկ դուն գիտես, թէ՛ քու պարտականութիւնը ի՛նչ է։
- ՌՈՒԲԵՆ.— Իմ պարտականութիւնը ժողովուրդին շահերը պաշտպանելն է։
- ՄՄԲԱՍ.— Մուտեր տարածելով եւ կիրքե՛ր հրահրելով։
- ՌՈՒԲԵՆ.— Ո՛չ, ճշմարտութիւնը յայտնաբերելով։
- ՄՄԲԱՍ.— Եւ ի՛նչ է այդ ճշմարտութիւնը։
- ՌՈՒԲԵՆ.— Ճշմարտութիւնը այն է, որ Հեթում մեր երկրին հողերը կտոր-կտոր թշնամիին կու տայ։
- ՄՄԲԱՍ.— Իսկ բացատրեցի՛ր այս ժողովուրդին, թէ՛ Հեթում արքան ինչու հող տուած է թշնամիին։
- ՌՈՒԲԵՆ.— Մեր հողը թշնամիին յանձնել արդարացուցիչ որեւէ պատճառ չի կրնար ունենալ։
- ՄՄԲԱՍ.— Նոյնիսկ եթէ՛ անոր փոխարէն այս երկրի գահաժառանգը պիտի ազատուի։
- ՌՈՒԲԵՆ (Լուռ է)։
- ՄՄԲԱՍ.— Սիրելի՛ ժողովուրդ, արդարօրէն դատեցէ՛ք։ Դուք շատ լաւ գիտէք, որ գահաժառանգ Լեւոն իշխանը վերջին պատերազմի ընթացքին գերի ինկաւ թշնամիին ձեռքը։ Ո՛րն է կարեւորը, հողաչե՛րտը, թէ՛ մեր երկրին ապագայ թագաւորը։ Հեթում արքան հողաչերտ տուաւ եւ ապահովեց մեր ապագան։
- Ա.— Ճիշդ կ'ըսէ Մժբատ սպարապետը։
- Բ.— Մեր գահաժառանգը աւելի կարեւոր է։
- ՄՄԲԱՍ.— Քառասուններէք տարի խաղաղ կեանք վայելեցիք, ձեր հողերը մշակեցիք։ Այդ բոլորը կը պարտիք Հեթում արքային։
- Գ.— Արդար են ձեր խօսքերը, Մժբատ սպարապետ։
- ՄՄԲԱՍ.— Արդար եղէ՛ք նաեւ դուք։ Հեթում արքան իր անկարելին բրաւ, որ ձեզի համար խաղաղ կեանք մը ապահովէ։
- Դ.— Եւ ապահովեց։
- ՄՄԲԱՍ.— Տուէ՛ք արքային արժանի գնահատանքը։
- Ա.— Կեցցէ՛ Հեթում արքան։
- ՌՈՒԲԵՆ (զանաւորակէն վար կ'իջնէ եւ կը հեռանայ)։— Այս ժողովուրդին մարդ չի կրնար վստահիլ։ Օր մը հետո՛ են, օր մը դէմո՛ են։ (Դուրս)։
- ՀԵԹՈՒՄ եւ ԼԵՒՈՆ (Կը մտնեն։ Հեթում ձերացած է)։
- Ա.— Արքան, Հեթում արքան։

Բ.— Կեցցէ՛ Հեթում արքան:

ԱՄԲՈՒՄ.— Կեցցէ՛ Հեթում արքան, կեցցէ՛ Հեթում արքան:

ՀԵԹՈՒՄ (ձեռքի շարժումով կը լռեցնէ ամբոյսը).— Ժողովուրդ, շնորհակալ եմ ձեր զգացումներուն համար:

Գ.— Մենք շնորհակալ ենք, տէ՛ր արքայ:

ՀԵԹՈՒՄ.— Քառասուններեք տարի երկրին ղեկը ինձի տուիք: Երբ թագաւոր ձեռնադրուեցայ, տղեկ մըն էի, ահա պատանի մը: Ղեկավարութեան մասին զաղափա՛ր իսկ չունէի: Յետոյ տորվեցայ, որ ղեկավար նշանակուիլը եւ ղեկավար դառնալը երկու տարբեր բաներ են: Ամբողջ կեանքս փորձեցի լաւ ղեկավար մը ըլլալ: Յաջողեցայ, թէ՛ ոչ, չեմ գիտեր:

Ա.— Յաջողեցա՞ք, Հեթո՛ւմ արքայ:

ԱՄԲՈՒՄ.— Այո՛, այո՛, յաջողեցաք:

ՀԵԹՈՒՄ.— Այդ՛ դարերը պիտի որոշեն: Ըսի ձեզի, որ քառասուններեք տարի ղեկավարեցի ժամանակները փոխուած են եւ նոր մտեցումներ կը պահանջեն, նոր աւելն, նոր քաղաքականութիւն եւ նոր շունչ: Կը տեսնեմ զաւակս՝ Լեւոն իշխան, մեր երկրի գահին պատրաստ է:

ԼԵՒՈՒՆ.— Տէ՛ր իմ, այս երկիրը մէկ թագաւոր ունի, ան ալ օրինաւոր ձեւով գահ բարձրացած Հեթում արքան է:

ՀԵԹՈՒՄ.— Արքաներն ալ պէտք է գիտակցին, որ գահը յաւերժական չէ: Այսօր այդ գահը քեզի կը փոխանցեմ, զաւակս:

ԼԵՒՈՒՆ.— Հա՛յր:

ՀԵԹՈՒՄ.— Կը լսեմ, արքայորդի:

ԼԵՒՈՒՆ.— Գահէն աւելի ես կ'ուզեմ ինձի փոխանցես կեանքդ իմատաւորող հիմնական արժէքները:

ՀԵԹՈՒՄ.— Երկու բան, Լեւոն իշխան: Նախ՝ խիղճը: Լսէ՛ խղճիդ ձայնը, որդիս: Գտիր մէկը, որ քեզի միշտ յիշեցնէ այդ: Ես երջանիկ էի, մայրդ էր խիղճս:

ԼԵՒՈՒՆ.— Իսկ երկրորդը:

ՀԵԹՈՒՄ.— Ժողովուրդը: Ժողովուրդին բնազդը: Եթէ հեռանաս ժողովուրդի բնազդէն, հեռացած կ'ըլլաս ղեկավարի հիմնական արժանիքէն: Ժողովուրդն է, որ քեզ ղեկավար պիտի դարձնէ, եթէ լսես իր պահանջները եւ գոյատեւելու տենչը: Եւ գիտցի՛ր նաեւ, որ ամէն ինչ պիտի զոհես՝ ապահովելու համար ժողովուրդիդ Փիպիթական գոյութիւնը, Մօտեցի՛ր, զաւակս:

ԼԵՒՈՒՆ (Կը մօտենայ և ծուկի կու գայ հօրը առջև):

ՀԵԹՈՒՄ.— Այսօրուրէն ես կը հրաժարիմ արքայական գահէն: Պիտի հեռանամ աշխարհական կեանքէ: Վանք պիտի մտնեմ՝ բոլոր կամայ եւ ակամայ մեղքերուս թողութիւն խնդրելու համար: Կաթողիկոսը արդէն համաձայնած է, որ զիս եպիսկոպոս ձեռնադրէ:

ԼԵՒՈՆ.— Մէջդ կեղրոնացած եւ կեանքս ձեւաւորած երրորդութիւնը կը տեսնեմ: Հայր, արքայ Հեթում եւ եպիսկոպոս Հեթում:

ՀԵԹՈՒՄ.— Երրորդութիւնը արպէս է, զաւակս: Հայր Հեթում, արքայ Հեթում եւ եպիսկոպոս Մակար:

ԼԵՒՈՆ.— Մակար:

ՀԵԹՈՒՄ.— Այո՛, նո՛ր մարդ եւ նո՛ր անուն: (Կը հանէ թագը եւ կը զետեղէ Լեւոնի գլխուն)։— Պահէ՛ թագը եւ գուրդուրա՛ անոր վրայ: (Կը հանէ նաեւ իր արքայական ծիրանին եւ Լեւոնի ուսնորուն կը նետէ): Գիտցի՛ր նաեւ, որդի՛ս, որ՝ «Զգեստը չէ՛, որ մարդը թագաւոր կը դարձնէ, այլ մա՛րդն է, որ զգեստին արքայական արժէք կու տայ»:

ԼԵՒՈՆ.— Կը լսեմ, տէ՛ր արքայ:

ՀԵԹՈՒՄ (դանդաղօրէն դէպի բեմին խորքը կը լստաջանայ, կը դատնայ եւ Լեւոնին)։— Փահը քեզի՛: Պատմութեան դատումը՝ ինձի: (Դուրս):

ԼԵՒՈՆ (Ոտքի կ'ելլէ, ժողովուրդին կը նայի):

Ա.— Կեցցէ՛ Լեւոն արքան:

ԱՄԲՈՆ.— Կեցցէ՛ Լեւոն արքան:

ԼԵՒՈՆ (դէպի բեմի լստաջամասը կու գայ, կը կենայ ու խորխոր)։— Ա՛յս է երկիրս: Ա՛յս է ժողովուրդս: Ես չեմ թողուր, որ իմ երկիրս քարուքանդ ըլլայ եւ իմ ժողովուրդը ոչնչանայ:

(Ընկերները կը լսուին եւ լոյսերը դանդաղօրէն կը մարին):

(Ծար. 2 եւ վերջ)

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ

## ԳԻՐՔԵՐԷՆ, ԹԵՐԹԵՐԷՆ ԵՒ ԹՂԹԱԾՐԱՐԷՆ ԱՌԱՋ...

Մեծ Եղեռնի ահաւոր իրականութեան անմիջական ազդեցութեան տակ, արար անուանի բանաստեղծ Մա՛րուֆ էլ-Ռասաֆի (1875-1945) երբ հայ ժողովուրդի զողզոթան կ'ողբար «Որբիմ մայրը» անուն իր եղերերգով, մտքէն հասանարար նոյնիսկ չէր անցներ, որ իրմէ շուրջ յիսնամեակ մը ետք, սուրիացի արձակագիրներ քասներորդ գարու առաջին ցեղասպանութեան պիտի նուիրեն ծաւալուն ստեղծագործութիւններ: Մա՛րուֆ էլ-Ռասաֆի թերեւս չէր իսկ պատկերացներ, որ արաբ գրաքննադատներուն ուշադրութենէն հետագային պիտի վրիպէր իր վերոնշեալ բանաստեղծութիւնը՝ իրրեւ հայկական ողբերգութիւնը շօշափած գեղարուեստական առաջին անդրադարձ, եւ մարդիկ այդ փառապասկը պիտի նուիրէին իր մահէն աւելի քան տասնամեակ մը ետք գրական աշխարհ մուտք գործած սուրիացի պատմաւածագիր ու վիպագիր սոքթի Ապտէլ Մաբալ էլ-Ունէյիի՝ «Որբիմ մայրը» եղերերգէն յիսուն եւ աւելի տարիներ ետք հրատարակած անոր «Հայր Ձեռքի ոսկիները» պատմաւածաշար-վէպը նկատի առած:

Այս առումով նաեւ Մա՛րուֆ էլ-Ռասաֆի դժբախտ բանաստեղծ մը դուրս եկաւ: Մեծ Եղեռնի իրողութեան հետ անուղղակիօրէն առնչուող սոքթի Ապտէլ Մաբալ էլ-Ունէյի վերոնշեալ գործը յաճախ յիշատակեցաւ իրրեւ հայկական կարօտախտի առաջին արտայայտութիւն՝ արաբական գրականութեան մէջ, իսկ յաջորդ սերունդներու ներկայացուցիչներ Ապտէլ Ռահման Մուսիֆի «Արի Բաղաբները» եռագրութիւնն ու Իպրահիմ ալ-Մալիի «Ալ-Նուսա» վէպը՝ հայկական զողզոթային հանգամանօրէն անդրադարձող առաջին ծաւալուն ստեղծումները:

Փաստն այն է, որ Մա՛րուֆ էլ-Ռասաֆիի «Որբիմ մայրը» եղերերգէն աւելի քան վաթսուն տարիներ ետք, Տէր-Զօր, Բազա, Գամիլի, Հալէպ, Պապ եւ Հայաստանութեան կեղերներն ու տարագիր հայտ խըլեակներուն ապաստանարան դարձած այլ աւաններու մէջ իրենց աչքերը լոյսին բացած շուրջ երկու տասնեակ սուրիացի երիտասարդ արձակագիրներ յատուկ ուշադրութեան արժանացուցին հայկական դառն փորձառութիւնը եւ զայն շօշափեցին կարճ թէ ծաւալուն ստեղծագործութիւններու էջերուն:

Մեծ Եղեռնի 80ամեակին մասին ամբողջական գաղափար մը փոխանցելէ առաջ, նպատակալարմար նկատեցինք մեր պատրաստած թղթածրարը բանալ երկու նմոյշով՝ Հայկական Յեղասպանութեան նուիրուած առաջին բանաստեղծութեամբ եւ առաջին արձակ գործով, այն խոր համոզումով, որ՝ «Հայկական Յեղասպանութիւնը շրջամի բնակչութեան եմօպիտակցութեան մէջ տեղ գտած է՝ գիրբերու եւ քերթերու մէջ գոյութիւն ունենալէ առաջ», ինչպէս ամենայն իրաւութեամբ կը հաստատէ «Ալ-Նուսա»ի բազմաշերտ վիպագիրը՝ Իպրահիմ ալ-Մալի:

Մ. ԷԼ-ՐԱՍԱՖԻ

**ՈՐԲԻՆ ՄԱՅՐԸ**

(ՀԱՏՈՒԱԾ)

Խաւարամած լուռ գիշերուան մը մէջ,  
 լսելուս պէս ձայն մը ողբագին՝  
 Կարծես սրտիս մէջ մխուած ըլլալին ժանիքները  
 առիծի մը վայրագին:  
 Հասնելուն պէս ականջիս՝ ձայն այդ ողբայի  
 Կ'այլեկոծի կուրծքիս տակ, սիրտս կը փոթորկի,  
 Նման սրտին ոճրագործի:

Դադրելուն պէս գիշերուան այդ լաց ու կոծը,  
 Կը դադրի նաև սրտիս զարկը,  
 մահ կարծելով պատահածը,  
 Լոռութեան մէջ այդ համատարած,  
 Հագիւ լսելի էր մրմունջը շրթներուն,  
 իմաստը անծանօթ բառերուն.  
 Սակայն լուսատուները երկնակամարին վրայ  
 դողդողալով պապղացած աստեղ,  
 Կ'ունկնդրեն մրմունջը այդ լալագին,  
 Անոնց դողդողումները սրտի բարախումներ են,  
 Փողփողումները արտասուքներ են վշտակցութեան:

Վրան հսկող, մորմոք սրտով մայր մը դժբախտ,  
 Տամուկ աչքերով, տխուր դէմքով, պիրկ գրկելով զաւակը,  
 Երկնցաւ մութին մէջ, քնատ, լուսահատ,  
 Յոգնած, երևումն գլուխով, արտասուքով յորդառատ:

Որոշ կը նշմարեմ հոծիւնին մէջ իր  
 Բոնութեան դէմ ոխի, բողոքի մը ձայնը,  
 Մոխիրի տակ անթեղուած վրէժի մը կրակը:

Վաղ առաւօտ այցելած պահուս իրեն,  
 Խմցուց համակ գիշեր՝ լեցուած  
 դառն արցունքի բաժակէն.  
 Ակնարկով մը նշմարեցի այտերուն վրայ  
 արտասուքի գիծերը,  
 Ուռած, կարմրած էին կոպերը, դեղնած՝ այտերը:

Կսկիծն ու թախիծը հիծած էին մարմինը,  
 Հագի կը տեսնուէր այքերուն սպիտակը.  
 Հողին վրայ ընկողմանած, շուրջը երեխայ մը,  
 Ռոքացած, տխուր նայուածքով կը հիանար սպառած մօրը:  
 Թէ էի հինգ տարեկան էր, անչափահաս,  
 Մատղաշ մտքով դէպքերուն վերահաս,  
 Լայով, «քաղցած եմ» ըսաւ, մայրը լաց կերակրեց,  
 Լացն ալ դառնաղի երեխան մերժեց:

Աղէխարշ է տրտակեղէք՝ այրի մօրը կողքին նստած,  
 Քաղցած որբի մը լացը լսել.  
 Կայնեցայ, երկուքին միասին նայեցայ.  
 Որո՞ն նայիլ, որո՞ն գթալ, շուտեցայ:  
 Կեցայ Մարիամին մօտ վշտակոծ,  
 արցունքը աչքերուն.

Հարցումներ կ'ուղղեմ, կը սպասեմ պատասխանի:

Հարցուցի իր եւ իր մարդու մասին,  
 Ըսաւ հեծկտալով, լալագին.  
 «Ո՞վ լաց, դո՞ն պատասխանէ հարցումին»:

Դադրեցաւ արտասուքը հեզնախառն, դառն քծծաղով,  
 Թախիծէն բխող քոռն արհամարհանքով,  
 Սակայն այտին ոսկորներուն մէջ ցամքած շիթերը  
 Կը սպասէին հալելով հեղեղի վերածուիլ:

Չեմ հանդիպած նախապէս աչքի մը,  
 Որ արտասուքը հոսած պահուն կոպերէն,  
 Ժպտի ցուրէր ծագին նայուածքին մէջէն.  
 Մարտոտով տեսնելով անընկալ կացութիւնը,  
 «Գթա՛, Տէ՛ր, արդեօք խե՛նք է», ըսի:

Խանդաղատանքով փաղաքշեցի որբը  
 Եւ ան աչքերովը նշան ըրաւ ելլել մօրը,  
 Որ կանգնելով հակեցաւ աներակ մարմնով,  
 Ողջագուրեց, շնչեց որդին փխրուն սրտով:

Առջելը կայնած, աչքերս իրեն սեւեռած մէկ պահուն,  
 Դառնալով մօրը, հարց տուաւ պարմանին ապշած.  
 «Ի՞նչ մնաց հայրս, կը դառնա՞յ երեկոյեան,  
 Ուտելիքներով, խաղալիքներով բեռնատրուած»:

Հոգույն խորերէն ծայթթելով՝ բոցավառ  
 Ալիքները աչքին անկիւններէն դուրս խուժեցին,  
 Դառն արցունքի հեղեղի մը վերածուելով  
 Ըսաւ մայրը որդույն դժբախտ, լալագին.



«Հայրդ աշխարհէն չոտղներուն կարաւանով,  
Մահուան եղեռնաբոյր արիւնոտ թաթին մէջ,  
Հայ զանգուածներուն հետ դէպի ոչնչացում կը քալէ,  
Թորքին տուած ջախջախիչ հարուածով:

«Չարիքներու դէմ ընդվզման մը պարագային,  
Կրօնքի, հաւատքի փոռ հարցեր արծարծեցին.  
Կոտորած, աներ եւ հրդեհ ծագեցաւ,  
Հայը արեան մէջ խեղդամահ եղաւ:

«Դուն եթէ չըլլայիր, զատակս, կը նախընտրէի մահը,  
Թօթափելու համար աչքս նուաստ կեանքի լուծը.  
Դուն ես գրկողը զիս այդ բախտէն.  
Շըք չկայ Մարիամին համար, բացի մահէն»:

**Մա'արուֆ Էլ-Բասաֆիի պատասխանը Մարիամին.**

Ներէ՛, Մարիամ, յիշածներովդ կը նետահարես,  
Վրիժառու է պահանջները արգիլող արարիչ Աստուածը.  
Ուշադիր վճռէ՛, որ'ն՝ որ ճշմարտութիւնը հասկցած ես:

Գործուած նախճիրներուն ոչ մէկը կրօնքի հիմ ունի,  
Կատարուածները արդիւնք են վայրագութեան.  
Լեցուեցան ոճիրներով երկինք եւ երկիր՝ լանուս կրօնի,  
Իսկ կրօնը անոնց մէջ բաժին չունի:

Շարժեցան գիշերային խաւարին մէջ կորորէն,  
Անձանօթ ճամբաներէն քայեցին աննշանացոյց.  
Մոլորեցան կրօնքի ցոյց տուած ուղիղ ճամբայէն,  
Ո՛րչ, կանուխ, մարդասպանութեան վճիռը ճակատին,  
Սէ՛՛ երեսով պիտի նետուին անդունդը սանդարամետին:

Ըսածներուս իբր հետեւանք դժգոհանք նշմարեցի,  
Լոեցի, ա՛յ չգրուեցի, մատնուեցայ շուարումի.  
Գետին նետուելով ներողութիւն հայցեցի,  
Առանց ոճրագործ մը կամ սիրահար մը ըլլալու:

Մնացի լալահատաչ, կարմրած աչքերով,  
Մինչեւ հոսեցաւ հեղուկը կարծիր այտերէս վար.  
Լացի, չգիտցայ լալուս որո՛ն համար ըլլալէ,  
Ոճրապարտներէն իմ զայրանալու՞ն,  
թէ Մարիամին տառապանքին համար:

(Թրգմ.՝ Տոքթ. Գ. Ասքարճեան)

ՄԱՐԻՄԻ ԷԼ-ԲԱՍԱՖԻ

Ի. ԱԼ-ՆԱԿԻԼ

# ԱԼ-ՆԱԿԻՍՍ

Այժմ կը սկսիս քու նոր-հին ուղեորությունդ, Սագօ՛:

Ցաւատանց կը հառաչես «Աճի՛, Տիգրա՛ն» եւ կանչիդ կը պատասխանեն միայն անապատներուն լուսիւնը, փուշերը, փշոտ մացառներն ու բլուրները: Ցաւ մը այլ ցաւ մը յառաջ կը մղէ եւ վերջ մը ուրիշ վերջ մը կ'ամոքէ: Ո՛վ կը մեղմացնէ այս վերջերը, Սագօ՛. արդեօք ո՛վ ծարաւ սիրտը կը յագեցնէ պուտ մը ջուրով... ո՛վ:

Վանէն, Ջէյթունէն, Պիթիսէն, Սեքաստիայէն, Խարբերդէն, Ուրֆայէն, Մարաշէն, Ռուտսթոյէն, Պերէնիկէն, Էսկիշէհիրէն կը սկսի հայու թախիծը, հայու կորուստը, հայու մահը ու հայու արիւնդ, որ նոյնիսկ հողէն աւելի աժան դարձաւ:

Այն տուներէն, որոնք *ժանտարմանք*ը իրենց մոյկերով կոխկրտսեցին եւ դատարկեցին ուրախութեան խնդուքներէն, մտերմութեան եւ երջանկութեան լոյսէն եւ լքեցին կողոպուտին ու հրդեհին, արնաշաղախ ցեխին ու ցիցերուն, սուիճներուն ու բռնաբարուած պատիւներուն, ոջիլին, որ ծնունդ առաւ արդարութենէն ու անհրաւութենէն եւ թիֆուսի ջերմին, որ իր մանգաղով հայկական ցանքին հասկերը հնձեց:

Այն ժանտարմանքներուն, որոնք, իրենց գլուխները բարձր բըռնած՝ կը բացազանչեն արդա՛ր Աթաթիւրքին եւ Երիտասարդ Թուրքիոյ անունով, թիրքմէնուհի փոքրիկն Օսնալին, որ իր հայ ընկերուհիին՝ Վարդուկին մասին կը հարցնէ եւ անբաւկներէն ու կրակէն գաւտ ոչինչ կը գտնէ:

Եւ կը շօշափես հայու դէմքդ ու հայու գլուխդ:

Ամբողջ Արարատը բաւարար չէ ծարաւ սիրտդ զովացնելու եւ քեզի վերադարձնելու սփոփող խաղաղութեան կարկաչը: Բաւարար չեն բոլոր փշապսակները այն գլուխներուն, որոնք մարդասպանը անապատներու եւ քաղաքներու մէջ իրենց մարմիններէն անջատեց ու բարձրացուց ցիցերու վրայ: Նոյնիսկ Հայաստանի բոլոր ծաղիկները

\* ԱԼ-Նուսս. ըստ հեղինակի բնութագրումի՛ն՝ կը նշանակէ շոգեկառք կամ բռնատար սեծ մեքենայ.

բաւարար չեն այն հասարական գերեզմաններուն, որոնք ստեղծուեցան Ռաս Իլ-Այնի, Մարկատայի, Ասպխայի, Թէլ Ապպուտի, Հազմէի, Պիր Տաննայի ու Թէլ Ապիատի մէջ եւ Եփրատի ու Պալիսի ափերուն:

Արդեօք որո՞ւ տուին մանուկ Մոսոյին խաղալիքները, անուշիկ Արշալոյսին հագուստները, փոքրիկ Սեդրակին սենեակը եւ պարմանո՞թի Մարալին հարսանեկան նուէրները:

Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ այս բոլորը:

Ծօշափէ՛ բանալիդ, տանդ բանալին եւ բանալին խանութիդ, գոր կարծես ձգեցիր՝ Կիրակի օրուան աղօթքդ ընելու եւ վերադառնալու համար, շօշափէ դո՛ւն՝ ո՛վ տարագրեալ ու կորուսեալ, որ Անին ու Տիգրանը կ'որոնեն Պալիս գետի երկայնքին, ա՛յսպէս՝ ափ մը հալած աղի պէս:

Սագօ՛, այժմ կը սկսիս ողբալ:

Սագօ՛, Անին ու Տիգրանը կ'ողբաս եւ աչքերդ ու զօրատը սիրտդ կը բաւեն ու կը տոկան: Հապա ի՞նչ պիտի ըլլաս, եթէ ուզես ամբողջ Հայաստանը ողբալ. աշխարհի բոլոր ծովերը պիտի չբաւեն քեզի եւ ոչ ալ յօշոտուած դիակներն ու բոսիկ ոտքերը:

Ինչո՞ւ այս բոլորը, Աստուա՛ծ:

Դու՞ն մե՛ր կողքին ես, թէ մարդասպաններուն: Արտերը, անպատները, քաղաքներն ու գետափները նեխեցան հայոց միտերէն, եւ ի՞նչ ածան էր այդ միտը, ինչո՞ւ արդեօք, եւ ճօ՛ժօ՛ժ: Կը սկսիս հիմա, Սագօ՛...

Երակներուդ մէջ լացն ու կոծը կը բարձրանան, կը կարօտնաս տանդ բոլորը, Անիին խնդուքը եւ աղմուկը չարանճի Տիգրանին:

Ինչե՛ր ըրին օրերը լիպուսնի նմանող դէմքին եւ մեղրագոյն աչքերուն: Ի՞նչ պատահեցաւ աղաւնիի գոյգ ձագերուն:

Տարիներէ ի վեր էջդ կը քշես գիւղէ գիւղ, պետեւիներու մագէ հիւսուած մէկ վրանէն միւսը եւ պետեւի աղջնակներու ականջներուն հայերէնով կը փսփսաս.

—Անին կը ճանչնա՞ք...

Կը խնդան, ու տխուր՝ կը հեռանաս անապատի ամալքներուն:

—Ուո՛ւո՛ւո՛ւ... ո՞ր եմ փրկարարները:

Աւազամբրիկ մը բարձրացաւ, յետոյ ջախջախուցաւ ջուրի մակերեսին վրայ: Կրեալ մը գլուխը պատեանէն դուրս երկարեց եւ

## ԻՊՐԱՇԻՍ ԷԼ-ԽԱՆԻԼ



Ծնած է 1944ին, Սուրիոյ Բազա քաղաքը: Նախնական եւ երկրորդական ուսումը ծննդավայրին մէջ ստանալէ ետէ, 1971ին յաջողութեամբ կ'աւարտէ Դամասկոսի Պետական Համալսարանի արաբական լեզուի եւ գրականութեան բաժանմունքը:

Ուսանողական տարիներուն պատմութեան ստորագրած Խորհիմ ալ-Խալի երիտասարդ տարիքին կը մտնէ գրական աշխարհի եւ իրարու ետեւէ կը հրատարակէ «Տրոնուս» Սա'տուն էլ-Քալի (պատմութեան), «Պետեհներու թաղը», «Բորենիները», «Ալ-Հուսու» (վէպ), «Շքախումբ՝ համակրանքի եւ կասկածանքի փշրանքներէ» (քանաստեղ-

անտարբերութեամբ դիտեց շուրջի հանդարտ անշարժութիւնը, երբ Աֆուիէ Էլ-Սալէմի երկարածիզ ձայնը տարածուեցաւ հաջոցի մը պէս: Անոր կանչին արձագանգեցին գետի կղզեակին ափերը, գետափի մօտակայ հողաթումբերը, մացառի անտառակն ու բարտինները, որոնց կողքին քարացած էր իր ընկերուհին՝ Մանին: Յանկարծ՝ երկու կացիներ անոնց ձեռքերէն ինկան ցախերուն մէջ եւ աչքերը շարունակեցին սեւեռած մնալ ջուրին:


Օգնութիւն աղերսող ձայնը հասաւ Խտըր Էլ-Աուտին, որ վստահութիւն ներշնչող շրջապատի անդորրութեան, ապահովութեան եւ արօտավայրի ու ջուրի առատութեան վստահած՝ հովիտի մը գոհունակութեամբ բարտիի ճիւղ մը կը տաշէր: Զգայարանները անդրադարձան, լարեց զանոնք, ապա սրեց լսողութիւնը, որպէսզի ճշդէ կնոջական ձայնին աղբիւրը եւ մտատանջ մտածեց. «Անկասկած, հովիտ մը կամ անցորդ մը յարձակեցաւ առանձին մնացած փայտահաւաք կնոջ մը վրայ եւ ան ալ, ըստ սովորութեան, օգնութիւն աղերսեց»:

Պահապան անգութ շունը նստած էր ծոյլ եւ ինքնավստահ: Դաշունը գետեղեց իր պատեանին մէջ: Վերջին ակնարկ մը նետեց իր քանի մը հոյակապ ոչխարներուն վրայ: Եւ շարժեցաւ գետին ուղղութեամբ, դէպի հարաւ: Մատուտակի թուփերուն եւ կաղնիին մէջէն թռչուններ ու թեւաւոր միջատներ փախան եւ ոտքերուն տակ շորցած ճիւղեր կոտորուեցան:

Հետուն նշմարեց երկու կիներ, որոնք սարսափահար արձանացած էին: Զայն տուաւ, որպէսզի փարատէ անոնց վախը: Ո՛չ որ կար կիներուն մօտ: Արդեօք փախա՞ծ էր, այսքան արա՞գ: Ինքզինքին հարց տալով մօտեցաւ դէպքին վայրը, մինչ իր հոգեկան նախկին պայծառութիւնը արդէն պղտորած էր:

ծուփեցնել) և «Փորշ գայլը ճնական ընթերցում արդի գրականության մէջ» (ուսումնասիրութիւն):

Ի. ալ-Խալիլի «Քորենիները» վեպը վերածւած է շարժապատկերի ժապաւենի՝ «Անձրեւի գիծին սիրահարները» խորագրով: Հեղինակին «Ալ-Հուսս» վեպն է, որ հանգամանօրէն կ'անդրադառնայ Մեծ Եղեռնին և տարագրեալ հայ ժողովուրդի ճակատագրին, իսկ «Փորշ գայլը» ուսումնասիրութիւնը կը մերկայացնէ ցեղասպան բուրժիւ գորշ պատկերը՝ համաշխարհային գրականութեան մէջ: Ներկայիս կ'ապրի Բագգա և կը գրադի ուսուցչութեամբ:



إبراهيم خليل  
المجدد  
رواية

— *Խէյր* է, ի՞նչ է պատահեր:

Երկու կիները չշարժեցան, մնացին քարացած, սակայն Աֆիէն համարձակեցաւ և մատնացոյց ըրաւ ջուրը: Տեսնուեցաւ խեղդուած մարդու մը դիակը, որ կը ծփար ջուրի մակերեսին: Խտըր մինչև և ծուկերը իջաւ ջուրին մէջ և դուրս քաշեց դիակը, որ ոտած էր ևս այլանդակուած: Ձուկերը կերած էին անոր քիթն ու ականջները, յօշոտած՝ գրեթէ ամբողջ դէմքը, իսկ հագուստը ամբողջութեամբ պատրտուած էր:

— Այս մարդը օտարական է, — ըսաւ Խտըր՝ ուշի ուշով խեղդամահը գննելով: Անոր հագուստը շրջանի բնակիչներու տարազէն տարբեր էր ևս անկի շատ կը յիշեցնէր մեծ քաղաքներէ եկած պաշտօնեաներու զգեստը: Ապա շարունակեց.

— Հագուստը քաղաքացիի հագուստ է, սակայն ուրկէ՞ եկաւ, մանաւանդ որ երկար ժամանակէ ի վեր ջուրին մէջ կը թուի ըլլալ:

Սովորական էր, որ ամբան եղանակին երբեմն գտնէին նոր հասած պաշտօնեաներու գաւակներէն կամ օտարականներէն մէկուն կամ երկուքին դիակը, որոնք ջուրէն հմայուած կամ տաք օդէն փախուստ տալով գետ կ'իջնէին՝ լողալու համար: Երբեմն ալ անոնք դիպուածով կը գտնէին դաւադրաբար սպաննուած հովիտի մը կամ մշակի մը դիակը: Տարօրինակ բան, այս դիակը ուրկէ՞ եկաւ, ինքզինքին հարց տուաւ Խտըր:

— Ետեւ դարձիր, — ըսաւ Աֆուիէ:

Խտըր անմիջապէս ետեւ դարձաւ և զարմանքով տեսաւ երեխայի մը և կնոջ մը երկու դիակներ, զորս ալիքը դէպի ցամաք կը հրէր:

— Աստուած իմ, գերեզմաններէն ելլելով մտելները գե՞տը լեցւեցան:

Դիակները քաշեց նախկինին մօտ: Երեխային ու կնկան մազերը հասուն ցորենի ոսկի գոյնը ունեին: Անոնք ալ այլանդակուած եւ ուռած էին՝ նախորդին պէս:

—Սատանայէն գատ ո՛չ ոք գիտէ այս դիակներուն գաղտնիքը,— ըսաւ Խտըր ու զննեց դիակները, քայց յատկանշական ոչ մէկ հետք գտաւ անոնց վրայ: Ծուարեցաւ: Ի՞նչ ընէր, ինչպէ՞ս վարուէր այս դիակներուն հետ, ան ալ ինք: Ինք պարզ մարդ մըն էր, որ հագի ուստիկան մը տեսած՝ վախէն տակը կը միզէր: Յանկարծ՝ Շամիէի կողմէն ուրիշ ջրկիր աղջկան մը ճիչը լսեց: Անկասկած, ան ալ դիակ մը տեսաւ, կանխագուշակեց Խտըր, որ այս անախորժ կացութեան դիմաց շուարած էր:

—Տէ՛ր Աստուած, փրկէ՛ զիս սատանայէն եւ այս չարաբաստիկ առատօտէն: Ես ի՞նչ յանցանք գործեցի, առատ կանուխ որո՞ւ դէմքին նայեցայ: Տէ՛ր, ողորմիր եւ պահպանէ՛ զիս:

Այսպէս ըսաւ անձնատուր եղած: Յետոյ, իր շան հաջոցը լսելով՝ ետեւ դարձաւ: Նշմարեց, որ քանի մը մարդիկ կը յառաջանան իր ուղղութեամբ: Հանգստացաւ կրկին, զարմանքն ու վախը փարատեցան եւ վստահ եղաւ, որ այլեւս առանձին չէ:

\*  
\* \*

Ու մարդիկ սկսան սարսափահար գրուցել խորհրդաւոր մենելներու շուրջ:

Աստուծոյ զայրոյթին մասին՝ հանդէպ այն մարդոց, որոնք շեղած էին ուղիղ ճանապարհէն եւ հեռացած՝ կոծնքին պատուիրաններէն եւ հաւատքին ընծաներէն: Սատանան շուցուցած էր զանոնք դրամով եւ սուտ աշխարհի կեղծիքներով: Անոնցմով լեցուած էին տուներն ու փողոցները եւ աղօթատեղիները դատարկուած էին անոնց պատճառով: Ահա թէ ինչու, ամէն օր, Եփրատի ու Պալիսի ջուրերուն վրայ կը բարձրանային մանուկներու, պարմանուհիներու եւ ծերերու դիակներ, որոնց լուրերը կը հասնէին հեռաւոր ու մօտակալ գիւղերէն: Խորհրդաւոր մահուան եղանակ մըն էր:

Միւֆթի Էլ-Հանճարը հրահանգեց այդ դիակներուն վրայ չաղօթել մզկիթին մէջ եւ, այս առընչութեամբ, քաղաքապետին ըսաւ.

—Ո՞վ կ'երաշխատրէ ձեզի, որ անոնք իսլամներ են:

—Լուծո՞ւմը, տէր իմ:

—Լուծո՞ւմը. զանոնք թաղեցէք իրենց յատուկ տեղ մը, երբեք մզկիթ մի՛ մտցնէք եւ ոչ ալ խառնեցէք իսլամներու մենելներուն, որպէսզի չմեղանչէք: Յետոյ, եթէ ապագային մէկը ձեզի հարցնէ անոնց մասին, գէթ կ'իմանաք, թէ ո՛ր թաղուած են:

—Ո՞վ կրնայ հարցնել անոնց մասին...

—Աստուած գիտէ, թերեւս կառավարութիւնը, կամ ալ՝ իրենց հարազատները:

—Ի՞նչ կառավարութիւն եւ ի՞նչ հարազատներ, տէ՛ր...

Միակ անձը, որ չհետաքրքրուեցաւ պատահարով, ոստիկանապետն էր: Նոյն վերաբերումը ցուցաբերեցին նաեւ նոր ժամանած զննչուները, որոնք կայք հաստատած էին պատմական պարիսպին մօտ:

\*  
\* \*

Միապաղաղ կեանքը իր թելերը կը շարունակէր տարածել փոշեթաթաւ քաղաքի դէմքին վրայ. մարդեր, շուներ, պարմանոհիներ, ալիւրի մէջ թաթխուած թխադէմ կիներ, հողէ արահետներ, ցանցատնակներ եւ ճանճերու բզզիւն ամենուրեք, մինչեւ այն օրը, երբ հարաւէն յայտնուեցաւ մունետիկը, որ քաղաքին միապաղաղ անդորրութիւնը խանգարեց իր կանչով:

—Հայե՛րը, հայերը Եփրատի մօտ են...

Մարդիկ ճշգրիտ չհասկցան բառին իմաստը: Ծառ մը հովիւներ, ծերեր ու երեխաներ, որոնք իրենց կեանքի ընթացքին քաղաքէն բնաւ հեռացած չէին, կարծեցին, թէ «հայ» բառը կը նշանակէ նոր ապրանք մը, նոր պաշտօնեաներ, օսմանեան կառավարութեան հնարքներէն մէկը, տուրքի նոր տեսակ մը, կամ ալ՝ նոր պատերազմ մը: Միայն կարգ մը լուսամիտ անձեր, որոնք կը հասկնային այդ բառը, չկրցան բացատրել երեւոյթին նպատակը. հայերը ինչպէ՞ս հասան այս ափերը եւ ի՞նչ կ'ուզեն. անոնք արհեստաւոր ժողովուրդ են, իսկ այս քաղաքը իրենց ծառայութեանց կարիքը չունի: Զետոյ՝ ինչո՞ւ լքեցին իրենց գիւղերը:

—Եփրատը խեղդամահներու գերեզման դարձաւ եւ մենք ձուկի փոխարէն սկսանք դիակներ որսալ. այս ի՞նչ պատուհաս եկաւ մեր գլխուն, գետերը նեխեցան եւ մարդիկ զգուեցան իրենց կեանքէն:

Այսպէս խօսեցաւ պայծառ արեւուն տակ ոսկիով ու լոյսով բըռընկող ջուրը սեւեռափր դիտող ձկնորս մը, եւ ընկերը պատասխանեց անոր.

—Ջարմանալի՛, հարցը այն է, որ պարսա՛ն մետելներ ըլլան եւ ո՛չ ոք հետաքրքրուի անոնցմով. նոյնիսկ պետութիւնը ոչ մէկ գործնական քայլ արաւ այս առընչութեամբ, մինչդէռ, նախապէս, ոստիկանատունը աշխարհը տակնուվրայ կ'ընէր՝ նոյնիսկ պատահական դէպքի մը համար:

Էլ—Պուշրի լեռնէն թաւալող եւ դէպի Տէր-Ջօր սողոսկող օձերը, գայլերն ու բորենիները անլի բարդացուցին խնդիրը: Մշակները, հովիւներն ու գիւղացիները սարսափի մատնուեցան եւ երկինքը ծածկուեցաւ ագռաւներու սեւ ամպով:

—Ասիկա խենթութիւն է, Աստուած վկայ՝ խենթութիւն...— ըսաւ շրջանի բնակիչներէն մէկը, որ իր գտած կնոջ եւ պատանհին դիակին համար գերեզման մը կը փորէր, մինչ քրտինքը կը հոսէր իր մարմինին բոլոր ծակտիկներէն: Ան զգաց, որ իր ոտքերուն տակ գտնուող հողը փխրուն էր ու դաւաճան, իսկ գետը՝ հրէշ մը, որ գիւղերն ու ծառերը իր խորերը կը քաշէր:

—Դիակները մինչեւ Տէր-Ջօր եւ Աշշարա հասան,— ըսաւ ուղևոր մը:

Անդիէն ծերունի մը պատասխանեց.

—Աւելի քան ինիսուն տարեկան եղայ. ականատես դարձայ շատ բաներու, տեսայ քառասուն օր անդադար իջնող ձիւնը, որ իր սպիտակ պատանքին տակ կը թաղէր տուններն ու գիւղերը եւ անասունները կը սպաններ, տեսայ մարախը, որ կը ծածկէր երկինքն ու երկիրը, տեսայ երաշուղ, որ հողին վրայ ո՛չ կանաչ արմատ եւ ոչ ալ թուփի հետք կը ձգէր, տեսայ մարդիկը, որոնք կ'իյնային անօթութեան, դեղնախտէ եւ թոքախտէ, բայց երբեք չլսեցի, որ Եփրատէն, ա՛յսպէս, դիակներ դուրս կու գան: Ասիկա մարդկային արարք մը չի կրնար ըլլալ: Տրամաբանակա՞ն է, որ այս բոլոր դիակները հրոսակախումբերու կողմէ սպաննուած եւ ջուրը նետուած ըլլան:

Սկիզբը, ոստիկանատունն ու քաղաքապետութիւնը քննութիւններ բացին եւ զբաղեցան մեռելները թաղելու հարցով: Դիակներէն ոմանք բռնութեանց ենթարկուած էին. անոնց վրայ կային դաշտյնի հարուածներ, կամ՝ փամփուշտի հետքեր: Սակայն անոնց թիւը ա՛յնքան բազմացաւ, որ ստիպուած՝ երկուքն ալ դադրեցան հարցը հետապնդել:

Իրենց շէն գիւղերն ու քաղաքները լքած՝ արդեօք ինչո՞ւ հոս եկած էին:

Գետափի երկայնքին՝ ծերեր, երեխաներ ու պարմանուհիներ միմար գիծ մը կազմած էին: Գետէն ջուր կը խմէին, իրենց յոգնած դէմքերն ու ձեռքերը կը լուային: Անդին՝ բարտիի շուքին տակ, անոնց պահակները կը հանգստանային. անգութ պահակներ՝ որոնց զգեստներէն արեան, ոճիրի եւ անասնական բնագոյի հոտեր կու գային: Անոնք զայրոյթով կը դիտէին դադարին պարգեւած ուրախութիւնը իրենց զոհերուն:

—Հայերը Պալիսի մօտ են:

Քաղաքը դղրդաց, գետեզերքի գիւղերը եռացին եւ մարդիկ չհասկցան, թէ այս բաները ինչո՞ւ տեղի կ'ունենային: Պահակներու կեցուածքին մէջ շատեր քաջալերանք տեսան՝ ոտնձգութիւններ կատարելու, յարձակումներ ու բռնաբարումներ գործելու եւ մինչեւ իսկ սպանութիւններ կատարելու. նոյնիսկ գտնուեցաւ պահակ մը, որ տարածակնեց, թէ հայերու փորներուն մէջ ոսկիներ ու գոհարներ կան, որպէսզի այսպէսով հրապուրէր ազաճներն ու աւազակները:



Հին պարիսպին Ռիսիսային կողմը, անոնք հաւաքուեցան փոսի մը մէջ, որ հետագային կոչուեցաւ իրենց անունով: Այն ատեն միայն մարդիկ հասկցան այդ խորհրդաւոր դիակներուն գաղտնիքը, եւ մանուկներուն ու կիներուն լացերը եթէ չըլլային՝ շրջանի բնակիչները պիտի կարծէին, թէ անոնք տարբեր մոլորակէ մը եկած արարածներ են:

Շրջան ընող հարցումները փարատելու նպատակով՝ ուտիկանապետը ըսաւ.

—Այս մարդիկը կառավարութեան դաւաճանեցին: Ա՛յս է պատիժը բոլոր անոնց, որոնք կը դաւաճանեն կառավարութեան, ի՛նչ է, կառավարութիւնը ի՞նչ կարծեցին...

Գաղթականները իրենց առաջին գիշերը անցուցին խաւարին մէջ: Իրենց շատ մօտ գտնուող մարդկային մարմիններու հոտը, լոյսերը, ճամբաները, շուներն ու տունները խաղաղեցուցին գաղթականներուն խռոված հոգիները, եւ պահակները զիրենք ձգեցին արանձին ու գացին ուտիկանատուն՝ խնճոյքի:

\*  
\* \*

**Առաւօտուն Արոն արթնցաւ:**

Աչքերը ծարիրեց արեգակին լոյսով, մօտակա քաղաքի տեսարաններով, թռչուններուն ու անասուններուն երանգներով եւ հովիւներուն տեսքով: Մեռելներու պէս գետիկը փրփած գաղթականներուն տեսքը ցնցեց զինք եւ երբ ոչ մէկ պահակ գտաւ, հասկցաւ, որ սպասուած կրնայ երկար տեւել, մինչեւ որ ժամանեն նոր խմբակներ եւ կատարուին կարգ մը մաքրագործումներ, ինչպէս որ նախապէս կատարուած էին Հազմիէի, Ռաս Իւլ-Այնի եւ Թէլ Ապիատի մէջ, ուր գաղթականներու խումբեր ամբողջութեան բնաջնջուեցան թուրք ուտիկաններու եւ անոնց դաշնակից աւազակներու ձեռքով: Իսկ այն երեխաներն ու աղջիկները, որոնք փրկուեցան Հիճազի Օերիֆ Հիւսէյնի թելադրանքով՝ հովիւներն ու պետեիները ապաստան տուին անոնց:

Արոն ձեռքերը շարժեց եւ նկատեց, որ տակաւին ողջ է: Քիչիկ մը ուրախացաւ եւ ոտքի ելաւ: Ո՛չ ոք հարցոց իրեն՝ «Ո՞ր կ'երթաս»: Ինչպէ՞ս կրնար ըլլալ, որ այս քանի մը տասնեակ անձերը ըլլային մնացորդները աւելի քան երկու հազար հոգիներու, որոնք իրենց բնակարաններէն ու գիւղերէն տեղահանուելով՝ աքսորուեցան, անցան քարքարոտ լեռներէ ու ձորերէ եւ, պահակներուն առջեւէն քշուելով՝ խմբակ առ խմբակ հասան հոս: Իւրաքանչիւր խմբակ կը տարուբերէր երեք հարիւրէն հինգ հարիւր անձի միջեւ, ու երբ խրմբակ մը կը հալէր, անոր մնացորդները կը միախառնէին կեդրոնացման ուրիշ վայրերու մէջ հալած խմբակներու մնացորդներուն:

Արոն գլուխը շարժեց, յետոյ՝ ուղղութեամբ քաղաք: Գրպանին մէջ ոչինչ ունէր, բացի բանալիներէն իր տան ու խանութին, որոնցմէ թերահաւատութեամբ բաժնուեցաւ: Կարծես թէ Կիրակի օրուան ծամու պատարագին կ'երթար ու շուտով պիտի դառնար: Գրպանին մէջ նաեւ քանի մը դահեկան կար, որովհետեւ ինք ատաւ դրամ կրելու սովորութիւն չունէր:

\*  
\* \*

Առաստուոն ճամբաները լեցուեցան հայ գաղթականներով:

Դռներուն յենած մարդկային խլեակներուն լողնատանջ աչքերէն ու շրթուքներէն հագիւ-հագ կը լսուէին «հաց», «կերակուր» եւ վերջ չգտնող նման աղաչանքներ ու պաղատանքներ: Օտարական խլեակները դիտելու համար իրենց տուներէն դուրս ելած քաղաքի կիներն ու մանուկները առաջին անգամ ըլլալով զարմանքով հաստատեցին, որ իրենցմէ աւելի թշուառ ու ողորմելի մարդիկ կան:

Կարելի՞ է, որ այս խեղճերը գլուխ բարձրացնէին Պոլսոյ մէջ իշխող սուլթանին դէմ: Շատեր զարմանքով հարց տուին եւ ճշգրիտ պատասխան մը, կամ տրամաբանական լուծում մը չկրցան գտնել, իսկ շատեր ալ նոյնիսկ խուսափեցան անոնց հետ զրուցել՝ վախճալով ոստիկաններէն ու ոստիկանատուներէն: Ծուկան՝ փողոցները խրճողութեան գաղթականներով, որոնք հոս ու հոն խմբուած՝ դատարկ ստամոքսները լեցնելիք որեւէ բան կը փնտրէին, իսկ ծերերը, փոսին մէջ, կը սպասէին անհամբեր եւ գետնի խտտերը կը ծամծմէին:

Արոն երկնցաւ գետափի ուսին, սեւեռաքիբ դիտեց աւազը, ջուրը, ծառերը, նաւերը, հեռուի լեռնաշղթան — Ո՞վ Տէր, ինչ որ հօգոր է, անհասանելի է — եւ Հալէպի ճամբով եկող գաղթականները, որոնք կ'ողկուզուէին հանդիպակաց ափին: Արոն հասաւ այն հաստատ համոզումին, որ ինք եւս կը գտնուի կեդրոնացման հաւաքավայրի մը մէջ եւ իր յիշողութեան պատատուէն անցան ձորերը, բարձունքները, մանուկները, որոնք անօթի ու ծարս՝ կէսօրուան կիզիչ տաքէն իրենց թարմ վիզերը կը խոնարհէին, ապա, իրենց աչքերը փակելով՝ անձնատուր կ'ըլլային մահուան, ջրադուրմի մը ծաղիկին պէս: Յետոյ յիշեց այն աղջիկները, որոնց կուսութիւնը բռնաբարեցին պահակները, աւազակները եւ խելագարները, յիշեց այն մաքրագործումները, որոնք կատարուեցան գետերու ափերուն եւ անապատներու ամալութեանց մէջ. յիշեց այն գլուխները, որոնք քաղաքներու մուտքերուն բարձրացուեցան սուիներու վրայ, յիշեց, յիշեց նաեւ տակաւ առ տակաւ հեռացող հայկական գիւղերուն լոյսերը, եւ հեռադրութեան զգացումէն ծերացաւ սիրտն ու ողջ մարմինը: Ապա՝ արեւու կիզիչ ճառագայթներուն տակ սկսան բարձրանալ շուներու հաշոցներն ու գայլերու ոռնոցները, անասատի փշամացառներն ու

սարսափազդու անօթութիւնը, բայց ասոնք, բոլորն ալ, անչի մտերիմ թուեցան իրեն, քան ժանտարմաներուն դէմքերը: Արոն յիշեց, որ մինչեւ իսկ կղկղանք եւ դիակ կերան, տեսան թիւանդութիւն ու ոչիլ եւ ապրեցան բարբարոս պահակին ստիճին սարսափը:

— Բարե՛ւ:

Չայնը հնչեց հայերէն եւ սիրտը թոռլըրաց: Երբ հայեացքը վեր բարձրացուց, տեսաւ երկարահասակ ուրուական մը, որ կը ծռէր եւ իր կողքին կը նստէր: Պատասխանեց.

— Բարեւ, — պատասխանեց Արոն:

Լոռութիւն մը տիրեց, որ փշապակի նման տարածուեցաւ երկուքին վրայ, լոռութիւն մը, գոր միայն կը խանգարէին ջուրին փսփուքը, բնութեան հանդիսատար շքերթը, կրեաներուն շարժումը եւ ձուկերը: Ցետոյ՝ երկուքով սկսան երկար գրոյց մը, գոր Արոն մինչեւ այսօր խանդաղատանքով կը յիշէ, երբ ամէն անգամ Սազոն տեսնէ: Այն օրը անոնք համաձայնեցան փախչիլ հեռաւոր գիւղեր, հետո՛ւ ուստիկանատան, պահակներու եւ աւազակներու աչքերէն, այնպէս՝ ինչպէս ըրած էին շատեր ճանապարհի ընթացքին, եւ պահակներն ալ թողատու գտնուած էին, որովհետեւ կը գտնուէին Թուրքիոյ սահմաններէն դուրս:

Գաղթականներու ալիքները յաջորդեցին իրարու:

Եկան նորերը՝ արեւմուտքէն ու արեւելքէն, ուստիկաններու կողմէ քշուած, կամ հիւսիսէն՝ Թուրքիոյ խորերէն հասնող շոգեկառքերուն մէջ կուտակուած. շոգեկառքերը կու գային կէս գիշերին, արեւածագին, կէսօրին, կու գային մունչելով, բարձրագոյն աղմուկով. անոնցմէ կը յորդէին մարդկային ժարմիներու հոտ, վախ եւ մանուկներու լաց ու ողբ: Ապա կը յայտնուէին ուժաթափ ու շուարած մարդիկ, բռնաբարուած ու յոգնատանջ կիներ, որոնք կորսնցուցած էին ամուսին, երբայր ու հայր. սարսափահար կիներ, որոնք Պիր Տանայի կաշարանի պատերուն կ'պած՝ վշտաբեկ աչքերով կը դիտէին անցորդները, փոշոտ անապատին մերկութիւնը եւ սպասողներուն անաբեկ դէմքերը, որոնք խոժոռ էին եւ այնքա՛ն նման մարդկային լըքւած միսին հոտը առնող բորենիներու դէմքին. այն անտէր միսին, որուն լքուիլը արտօնուած էր նորի՛ն վեհափառութիւն սուլթանի իշխանութեան եւ անոր արդա՛ր կտաւաբարութեան կողմէ, որ խելագարներուն եւ աւազակներուն ձեռքերը ազատ թողուց, որպէսզի իրենց դաշոյնները խրեն փորներու մէջ եւ զարդեղէն, ոսկի ու դրամ փնտռեն: Նորածեւ սպանդներու դահիճներ, — շոգեկառքե՛ր, թէ շարժական սպանդանոցներ՝ պաղաթի վաճառականին համար ի՛նչ տարբերութիւն կ'ընէր:

Ահաւասիկ զէնքի ողորմութեան յանձնուած, խորհրդատար եւ անյայտ ակամայ ճամբորդութեան մղուած կիներ, որոնք շոգեկառքերէն կ'իջնէին Պիր Տանայի մէջ, ուր Մուսա Էլ-Շաֆրաթը անհամբեր իրենց կը սպասէր, փոշեթաթախ գայի մը պէս, նաւթի ճրագը ձեռ-

քին եւ ամբողջ կեանքի ընթացքին իրեն ընկերացած մոլուցքով: Կը սպասէր եւ փորձառոյի նայուածքով դէմքերը կը զննէր: Սպիտակամորթ ու նազանի աղջիկը իր նախընտրած որսն էր: Սպիտակամորթերուն հանդէպ իր ունեցած բարոյոյթը իր հասուն մարդու գիտակցութիւնը կորսնցնել կու տար: Կը մօտենար, անոնց կ'ուղղէր անծանօթ խօսքեր, լետոյ՝ առանձին-առանձին զանոնք կ'առաջնորդէր հորին մօտիկը գտնուող իր խրճիթը: Ծոգեկառքերու յաճախակի ժամանման հետ՝ անցորդները սկսան խորհրդատր ձայներ լսել հորէն: Մուսային ձեռքերը արիւն եւ մարդկային աղիքներ կը հոտէին, իսկ աչքերը կը շարունակէին սեւտուած մնալ երկաթուղիին՝ սպասելով նորանոր զոհերու:

Նորեր եկան:

Հիները մեկնեցան կամ փախուստ տուին դէպի հեռաւոր գիւղեր, ուր *աշխրէթները* պաշտպանեցին զիրենք, տուին գործ ու ապաստան, նոր անուններ ու նոր կրօնք, բազուկները, այտերն ու դէմքերը դաշեցին, իսկ գաղտագողի ձեռքեր ճամբաներուն վրայ ուտելիք եւ ըմպելիք դրին գաղթականներուն եւ աներեւութացան՝ վախճանով կատարութեան պատիժէն: Արշալոյսին, քաղաքի սպանդանոցին մէջ, տեղացիք տեսան հայ պատաներ ու ծերունիներ, որոնք իրենց ձեռքերու կաւէ ամաններուն մէջ անասուններու արիւն կը լեցրնէին եւ կը շտապէին իրենց մանուկներուն մօտ: Յետոյ՝ կիները կ'եփէին արիւնը, մինչեւ որ թանձրանար եւ իբրեւ ճաշ կը մատուցէին գաղթականներուն: Անոնք օրէ օր կ'իյնային անշնչացած, օրըստօրէ աւելի մեծ թիւերով, այնքան մը, որ իրենց գերեզմանը շատ աւելի ընդարձակ դարձաւ, քան տեղացիներունը, որոնք այլեւս չմտահոգւեցան, թէ անոնց մեռելները ո՛ր պիտի թաղեն: Տակասին, տեղացիք անոնց անուցին փոխարէն սկսան գործածել նոր անուանարկումներ. «Հայց գերեզմանատուն»ի կողքին ծնունդ առաւ «Հայոց փոսը», իսկ սեխի եղանակին, զոր տեղացիները կը ցանէին գետեզրին եւ «էլ-քալէաթ» կը կոչէին, ականատես եղան արտասովոր երեւոյթի մը: Նման բերք մը անոնք նախապէս ո՛չ տեսած էին եւ ոչ ալ լսած նըման եղանակի մը մասին: Այդ տարի՝ սեխը իր մեծութեամբ գիրկ մը կը լեցնէր ու մեղրի պէս քաղցրութիւն կը ծորէր: Այդ տարի՝ հողը անքա՛ն յորդեցաւ, երբ կշտացաւ հայու միսէն, որ այլեւս կարիքը չմնաց իբրեւ պարարտացուցիչ գործածուող ոչխարներու աղբին: Բերիչի իւրաքանչիւր հարուածի հետ կը յայտնուէր գանկ մը, ազդրի կամ սրունքի ոսկոր մը, որ մշակները կը զարմացնէր:

Ամէն առաւօտ պահակները կը հանդիպէին գաղթականներուն: Պահակներ, տեղահանութեան պատասխանատուներ եւ պաշտօնեաներ անդադար կը դիմաորէին նոր հասնող խումբ մը եւ ճամբու կը դնէին այլ խումբեր, իսկ իրիկնամուտին ցուցակներու վրայ ճշդուած անուններ կանչելով՝ վերոյիջեալ անձերուն մէկ առ մէկ կը յայտարար-

րէին, թէ Պոլսոյ կառավարութիւնը ներում շնորհած է իրենց: Անոնք կը խեղդուէին ուրախութեան արցունքներէն եւ հլու-հնազանդ գառ-ներու պէս կը հետեւէին պահակներուն՝ իրենց քաղաքները վերադառ-նալու համար: Ամիսներ ետք միայն քողազերծուեցաւ աղտոտ խաղը, երբ տեղացի մը, որ բլուրէ մը աւազ կը լեցնէր իր կաղքին մէջ, մեծ զարմանքով տեսաւ, թէ աւազին հետ դուրս կու գային մարդկային զանկեր, ոսկորներ եւ հագուստներ: Խորքին մէջ, այդ բլուրը ուրիշ բան չէր, եթէ ոչ «հաւաքական գերեզման»ը այն դժբախտներուն, որոնց պահակները ներում աւետած էին եւ քշած այս ամալի վայրը, ուր եւ գործադրուած էր անոնց բնաջնջումը: Այս բացալատումէն ետք, քաղաքը տաշտի պէս եռաց եւ գործադուլ յայտարարեց՝ պահանջելով, որ մնացեալ հայերը հոն մնան եւ տեղահանութեան չեն-թարկուին: Փորձը յաջողեցաւ, եւ որովհետեւ անոնք Թուրքիոյ սահ-մաններէն դուրս կը գտնուէին, կարելի չէր, հետեւաբար՝ հարցը լուծուած նկատուեցաւ: Այս իրադարձութեան արդիւնքը այն եղաւ, որ իրարու ետեւէ քաղաք հասնող այիքները կանգ առին, կեդրոնացման հաւաքավայրերը ջնջուեցան եւ տեղահանութեան ուղին առաջ-նորդուեցաւ դէպի Սապիսա եւ Մարկաստէ, ուր եւ գործադրուեցան ամէնէն ահաւոր կոտորածներն ու հաշուէլարդարները:

Սազոն ու Արոն վերադարձան գիւղերէն: Կոտորածներուն լու-րերը զիրենք կը հետապնդէին էլ-Համրադէն մինչեւ էլ-Ջարգուրի եւ Պանտըրիսան, ուր մշակ մը, որ հորին յատակը կ'ուզէր մաքրել՝ զայն վերստին գործածելու նպատակով, անկէ դուրս հանեց անկի քան ինքսուն հայերու դիակներ, որոնցմէ շատերու փորերուն մէջ տակաւին կային փոքրիկ սաղմերու կմախքներ: Դիակները հոն նե-տած էր կայարանին պահակը, երբ կը դիմաորէր շոգեկառքերով նոր ժամանող գաղթականները:

Արոն նախ ջրկիր եղաւ, յետոյ դարձաւ գինեկաճառ: Սազոն շարունակեց իր գործը, մինչեւ որ ամուսնացաւ Ազնիին հետ: Իսկ Ահմէտ էլ-Ֆայեասը ծանօթացաւ Ֆլորային: Է՛հ, օրե՛ր, այնպիսի՛ օրեր, որոնք արիւնէ եւ կրակէ բանուած պատուտ մըն են եւ ան-ջնջելի նախնական դաջուածք մը...

Բազգա-Սուրիս  
Չմեռ, 12/10/1984

ԻՊՐԱՀԻՄ ԱԼ-ԽԱԼԻԼ  
(Հայացուց Միհրան Մինասեան)

## Յ. ԼԱՏՈՑԵԱՆ

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԵՐԹԱՍ ԲԱՐԻ

Կը սկսի այսպէս  
 Կեանքը յտակ  
 Կեանքը միօրինակ  
 Կը թալենք մերթ կը կենանք  
 Կը յուզուինք շատ յաճախ  
 Ու կը շարունակենք  
 Կեանքին դժբախտ եղանակներում  
 Կը հանդիպինք կեղծ անցած  
 ըլլաներու  
 Ու դժուար արշալոյսին  
 Կը սկսինք նոփրել  
 Նոփրով ուրիշ անգամ  
 Կը վազենք եւ կը տեսնենք  
 Դեռ շատ ետ ենք շարունակ  
 Կը սողանք եւ շատ անգամ  
 Արծիւներու թեւեր կ'առնենք  
 Սակայն այս բոլորը քառսային  
 Ոչ շատ համոզիչ  
 Կը փնտռենք պատճառները  
 Մակերեսայնութիւնը տեղ մը  
 Նիւթապաշտութիւնը ուրիշ տեղ  
 Եւ կը ստիպուինք միսիթարել  
 Միսիթարով նոյն ժամանակ  
 Տեղատեղի ակնարկով  
 Այլառու կ'ըլլանք  
 Կը նստանանք տեղ մը  
 Փափկանկատ շտա անգամ  
 Սակայն միշտ իտէլալազաշտ...

1995

Արագ է ժամանակը  
 Կը վստահինք ժամացոյցին  
 Կը քալէ թըք թըք թըք  
 Ու կը կենայ ուզած առենը  
 Կը շարունակէ մեր կամքով  
 Ժամացոյցին հետ մենք ալ  
 Կը վազվզենք հեւ ի հեւ  
 Վազը կ'ըլլայ յոգնեցուցիչ  
 Տեքը կ'ըլլայ վտանգաւոր  
 Արկածախնդիր ըլլալու չափ  
 Կը փրկուինք Ալիքէն  
 Կը հասնինք Կղզի  
 Ու կը կասկածինք  
 Ինքնամեկուսացումէ  
 Դարձեալ կը նետուինք ծով  
 Օրացոյցէ կը կորուինք  
 Ժամացոյցէ կ'ազատագրուինք  
 Ու անժամանակ  
 Ու Անտրաքթի մը  
 Յանկարծ կ'արթնանք  
 Տուած կը զգանք  
 Որ արդէն սկսած կեանքը  
 Վերջացած է  
 Տոն եւ դուն եւ տախտակէ տունը  
 Կարմիր հողը  
 Եւ թոշած ծաղիկները  
 Քիչ մը խունկ  
 Քիչ մը մոմ եւ ծաղիկ  
 Նոր էջ  
 Նոր օր  
 Երթաւ քարի

\* \* \*

Այսօր այսպէս  
 Կը բաժնուի՞նք թերեա  
 վերջնական  
 Կը բաժնուի՞նք  
 Տուն,  
 Մենեակ,  
 Անկողին,  
 Պատեր...  
 Կը բաժնուի՞նք  
 Չին  
 Այսպէս կեանք մը  
 Մէր մը եւ յոյս մը  
 Կը դարձնենք  
 Էջ մը  
 Կը դարձնենք  
 Հանգրուան մը  
 Ու անորոշութիւնը  
 Իր վերջավէտին  
 Կը նուիրուի՞նք  
 Օդանաւին  
 Կը հասնինք  
 Երկինք  
 Յիշատակ ես ալ  
 Մոնթրէալ  
 Յիշատակ  
 Դուն ջաղաք  
 Յիշատակ ընկերներ  
 Նոր ծնած  
 Ժպտերես  
 Նարեկներ...  
 Կը մնանք  
 Այսպէս  
 Կը խաղանք օդին մէջ  
 Ու կանաչ-կանաչ  
 Կը պատուեն  
 Ջիղեր, միսեր...  
 Կը յիշենք այսպէս  
 Մինչեւ որ զգանք  
 Բոլորս միատեղ  
 Որ չենք կրնար  
 Անկարող ենք

Ըլլարու հին,  
 Ոչ ալ նոր  
 Այլ մշտանորոգ  
 Փնտռուցի սերունդ  
 Մէկը միային  
 Մէկ տեղէն միա տեղը  
 Գացող անվերջ  
 Երազներ ունեցող  
 Փափաքներ իրականացնող  
 Չգտում մը...  
 Դուն ալ, ես ալ  
 Այս մանուկն ալ  
 Իր մանկութեամբ  
 Փնտռուցի մէջ է  
 Ըստուհակական  
 Դիմագիծ  
 Հոգեկիրճ  
 Նուագ  
 Ֆիլմ  
 Թէ Pink Floyd  
 Պատերը փլած  
 Մէլը մեծցած  
 Սակայն դեռ  
 Յստակ  
 Դիմագիծ չստացած

**ՆՈՒԱԶԱԳՈՅՆԸ**

Նուագագոյնը  
 Երբեմն առաւելագոյնն է  
 Խորքին մէջ  
 Կը ցանկայ  
 Յաճախ կիրքով  
 Անհամբեր ուրիշ անգամ  
 Կը յաջրօրէ  
 Ուրիշ նուագագոյն մը  
 Աւելի հեշտ  
 Կամ դժուար  
 Ու կը ձգտի  
 Կը փափաքի

Մինչև այդ նուազագոյնը  
Ու յետոյ  
Նոր մէկ նուազագոյն մը  
Որ խորքին մէջ  
Առաւելագոյնն է...

## ՉԱՅՆԸ

Գիտէ՞ք ինչ  
Չայնը  
Այո ձայնը  
Ունի նաեւ յիշատակ  
Չայնը  
Այո մեղմ  
Վեռումն խոտոյ  
Գրեթէ չիասկզոտոյ  
Երգի մը նման  
Այո շատ ծանօթ  
Այոքան անուշ  
Մանաւանդ երբ քունը գտփոյ է  
Եւ կ'ուզես  
Երազ բեմադրել  
Կը ձայնողիս  
Տափակութիւն...  
Սակայն հեռուէն  
Լսուող ձայնը  
Վոզիլոյ թենք կու տայ  
Զգացումներդ կը գրգռէ  
Միշտ անհասկնալի  
Երգը  
Վիմա անուշ կը թոփ  
Վեռուն  
Այո միջավայրէն  
Նոյն այդ ձայնը  
Կը կրծէ  
Վոզիլոյ  
Եռագած յիշատակներու  
Միրով...

1995

## ԱՆՁՆԱՄՈԱՆՈՒԹԻՒՆ

Օր մը  
Նման միա օրերուն  
Երբ կ'արթննայ վանդակին մէջ  
Դարձեալ կը սպասէ որ մաքրով  
Նոր ձաշ նոր ջուր քիչ մը պտտոյ  
Արեւին տակ ապա շուքի  
Առաւօտեան աղմուկին մէջ  
Իրիկուան լռութեան տակ  
Կը սահի ու կը կաթի.  
Օր մը...  
Օր մը...  
Օր մը...  
Եւ յանկարծ  
Անձնասպան եղած  
Թոշուն մը...

1995

\* \* \*

Զաղաքին մէջ  
Այս իրիկուն  
Երբ կը քայլենք ուշացած  
Կը զգանք կեանքը միատեղ  
Կը սպառի հեւ ի հեւ

Զաղաքին մէջ  
Այս իրիկուն  
Երբ լոյսերն են պառկած  
Կը զգանք վաղը անհամբեր  
Կը սահի հեւ ի հեւ

Զաղաքին մէջ  
Այս իրիկուն  
Երբ պառկած են  
Զոյգ եւ մինակ  
Կը զգանք հաւը կեանքին  
Կը տառապի հեւ ի հեւ

ՅԱԿՈՒ ԼԱՏՈՅԵԱՆ





**ԾԱՆԱՊԱՐՀ ԵՒ ԾՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ**

Մեծի Տանն Կիլիկիոյ պատմութեան մէջ մեր ժողովուրդը հանդիսատես եղաւ աննախընթաց երեսօթի մը, — առանց սուգի քող իջնելու՝ կաթողիկոս մը մեկնեցաւ Աթուէն, ու առանց սուգի քող բարձրանալու՝ կաթողիկոս մը բարձրացաւ Աթոռ:

«Բագին»ի նախորդ համարով նախամեծար Աթոռին գահակալութեան կանչուած Փարեգին Բ. կաթողիկոսին լուռ երթաս բարով մը ըսուեցաւ այս էջերուն եւ սրտի նոյն խնդութեամբ բարի գալուստ կ'ըսուի ահաւասիկ նուիրապետական միւս աթոռին ծառայութեան կանչուած Արամ Ա. կաթողիկոսն:

Ուրախութիւն է այս առիթով կարենալ ըսել, որ իրենց ժամանակը բարեկարգութիւններով ու շինարարական ձեռնարկներով, լեցուցած ազգանուէր ու օգտապաշտ կաթողիկոսներու ու պատրիարքներու շարքին, վերջին երեք քառորդ դարուն մեր ժողովուրդը ունեցաւ մտաւորական բուռն նախասիրութիւններով ու գործքով փայլող կաթողիկոսներ ու պատրիարքներ, Խրիմեան մը, Վազգէն Ա. մը, Բարգէն մը, երկու Յղիշ, երկու Թորգոմ, երեք Փարեգին: Ու հատորներ՝ իրենց հեղինակութեամբ, մատենադարաններ՝ իրենց անուններով, դպրեմանքներ՝ իրենց նախաձեռնութիւններով, մշակութային Փոնտեր՝ իրենց հովանաւորութեամբ, հայ գիրքի ցուցահանդէս՝ իրենց հմայքներով:

Ուրուանկարեցինք ու ուրուազրեցինք մօտիկ ժամակներու մտաւորական գործիչներն ու գործերը աւելցնելու համար, որ այս եղած է մեր եկեղեցւոյ իշխանաց իշխաններուն՝ Սահակներուն, Ներսէսներուն, Կոմիտասներուն, Անանեաններուն եւ լուսապայծառ միւս ղէմքերուն ճանապարհը եւ ճշմարտութիւնը:

Այս եղած է նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս Արամ Ա.ի ապրումներուն կիզակէտը՝ իր ստորագրած էջերուն, արտասանած խօսքերուն թէ լուսեան մէջ իրագործած մշակութային ձեռնարկներուն վկայութեամբ: Եւ արդէն տարբեր չէր կրնար ըլլալ չի կրնար ըլլալ վարժը անձնաւորութեան մը, որուն շրթներէն անպակաս եղած են ու անպակաս կը մնան Մաշտոցներու, Նարեկացիներու, Շնորհալիներու եւ մեր լեզուին ու ոգիին մէջ սրբացած երախտաշատ միւս վաստակաւորներուն անունները...: «Թարգմանչաց ոգիով»ը գրութեան խորագիրը չէ, ճշմարտութիւն է ու ճանապարհ, — բարի երթ...

## ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՈԳԻՈՎ

**Գ** եղեցիկ պուգադիպութեամբ մը ամէն տարի հայ դպրոցը իր դուռները կը վերաբանայ հայ աշակերտներուն Թարգմանչաց տօնով: Ան հոյլ մը խոնարհ մարդոց «որք պօծրանս հոգւոյն սրբոյ արբին» (Շարական) եւ մեր կեանքն Անհունին ճաճանչներովը վարդարեցին, մեր ճամբան Երկնայինին յոյսովը լուսաւորեցին, որոնք Աստուածառայ Ա. Բ. Գ.ով վաստուած թարգմանեցին, վաստուած հայացուցին ու հայն անմահացուցին:

Ա. Բ. Գ. ...

Անցեալէն եկող, բայց անցեալ չճանչցող Աստուածահո՞ւնչ տառեր, որոնց մէջն է խոացած ողջ պատմութիւնն հայոց՝ իր փառքով ու աւերով, իր վերքով ու երգով:

Ա. Բ. Գ. ...

Հացեկացի վանականին հոգիէն ժայթքած ու դարերը նուաճած ոգեղինացեա՛լ տառեր, որոնց մէջն է պարիսկուած հայութիւնն համայն՝ իր հոգեմտաւոր լինելութեամբ, իր անցեալով ու ներկայով ու մա՛նասնդ իր լուսաշող ապագայով:

Ջնջեցէք տառերն այս սուրբ հայոց պատմութեան էջերէն. հանեցէք վանոնք հայ մանուկներու շրթներէն. ու չկայ հայոց պատմութիւն, չկայ հայութիւն: «Մաշտոց անուն» սուրբի տառապանքի արցունքով թրծուած ու տեսիլքով պայծառացած տառերն այս սրբապան, դարձան հրաշագործ այն ուժը, որով հայութիւնը մնաց ամո՛ւր, մնաց աննուա՛ճ դարերու փոթորիկներուն դիմաց՝ պահելով ազգերու ընտանիքին մէջ իր ցեղային ու մշակութային առանձնախտուկ ինքնութիւնը:

\*  
\* \*

Այսօր, ինչպէս անցեալին, հայ դպրոցն է դարբնոցը Մեսրոպաշունչ Ա. Բ. Գ.ին ու անով կեանք առած ու առնող մեր արժէքներուն ու խոհայներուն, յոյսերուն ու յոյսերուն: Հայ դըպրոցն է թափօր լեռը մեր կեանքին, ուր կ'երեւան մեր պատմութեան Մովսէսներն ու Եղիաները, կը խօսին հայ աշակերտներ-



րուն ու անոնց կը ներարկեն հայօրէն ապրելու ու հայօրէն պայքարելու սրբապան ոգին:

Արդ, հայ դպրոցը ուսում ու գիտութիւն ջամբող հաստատութիւն մը ըլլալէ առաջ ու վեր՝ հայու գոյութեան ու գոյատեւման խարխախն է, ուր հայ պատանին կեանքի մահացուցիչ «բորեանէն ու բուքէն հոն կը մնայ միշտ ապատ» (Մ. Իշխան):

Հետեւաբար, պէտք է պահել հայ դպրոցը մեր աչքի լոյսին պէս որպէս կատոյց, որպէս ոգի, որպէս առաքելութիւն: Իւրաքանչիւր հայ մարդ, ան ըլլայ տնօրէն, ուսուցիչ, ծնողք, հոգաբարձու կամ աշակերտ՝ իր հոգիէն, սիրտէն ու միտքէն պէտք է բան մը դնէ հայ դպրոցին մէջ, որպէսզի անոր յարկին տակ Ա. Բ. Գ. ը միշտ հնչէ ուժեղ ու կենսունակ, որպէսզի վարդանները, Շնորհալիները, Խրիմեանները, Կոմիտասները, Վարուժաններն ու Սեւակները հոն կեանք առնեն ու կեանք տան մեր պատկերներուն աշխարհի մահացուցիչ հովերուն դիմաց:

Հայ դպրոցը միշտ չունեցաւ փառքի օրեր: Ան տեսաւ տառապանք, հայածանք ու աներ՝ քալելով իր ժողովուրդին կեանքի ճամբէն: Եղան, մարդիկ, որոնք ուզեցին փակել դուռներն հայ դպրոցին, ու չորցնել Ա. Բ. Գ. ը հայու շրթներուն վրայ: Մարդիկ դէռ կրնան կատարել նման փորձեր: Բայց մենք վճռած ենք ամէն գնով ու ամէն տեղ միշտ բաց պահել Մեսրոպեան տաճարները լոյսի ու լոյսի: Միշտ բոքր պահել հնոցներն հայ մշակոյթի, ուր «կապարն ոսկի էւ նիւթն ոգի դառնան»:

ԱՐԱՄ ԱՐՔ. ՔԵՇԻՇԵԱՆ

---

**ՄԵԾ ՍՈՒՏԸ,**

---

**ՍՈՒՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ**

---

**ԵՒ ԶՈՀԵՐԸ...**

---

*«Բազին»*ի սկսած վերծանումներու շարքին մէջ անկարելի է անտես առնել Գուրգէն Մահարիի *«Մաղկած փշալարեր»* վիպակը, որ վերջին ճառորդ դարուն մեր ամենէն անկի կարդացուած գիրքերէն մէկը եղաւ։

Ստալինեան մոսայլ երեսնամեակին մէջէն անցած կամ անոր մօտէն հետեւած ընթերցողները անշուշտ դիրքաւ քափանցեցին հոն կիրարկուած ակնարկութեանց պէտքերուն, իսկ նոյն ժամանակէն կամ անոր մասին կուտակուած գրականութենէն հետո՛ւ մնացած անձերը չենք կարծեր, որ ի վիճակի եղան մեկնելու էջերուն մեծ մասին վրայ պահուած խորհրդաւորութիւնները...

Սոյն աշխատանքը կը կատարուի այս վերջիններուն ու յատկապէս Սփիւռքի մէջ հասակ առած նոր սերունդներուն համար, որոնք, հասկընալի պատճառներով, հազիւ թէ հետաւոր գաղափարներ կրցան ունենալ նկարագրուած իրադարձութեանց շարժառիթներուն ու հետեւանքներուն մասին։

Գրական գործի մը գործողութեան վայրը կամ գործող անձերուն ինքնութեան վաւերականութիւնը ճանչնալու միտումները հրամայական պայմաններ չեն հարկաւ, գրական գործ մը ստեղծագործութիւն է ամէնէն առաջ, կրնայ երեւակայութեան կամ երկինքի մէջ տեղի ունեցած ըլլալ անոր գործողութիւնը, ու հերոսները կրնան ըլլալ երկնային էակներ, բայց Մահարիի խնդրոյ առարկայ վիպակը ունի ինքնակենսագրական հէնք մը, եւ որովհետեւ այդ համգամանքը սերտ առընչութիւն ունի հայոց պատմութեան մէկ ողբերգական պահուն հետ, անոր ընդգրկած միջավայրին առարկայական պատկերը, ինչպէս նաեւ նախատիպարներուն աւագանի ինքնութիւնը իրենց յետին մանրամասնութիւններով կը հետաւորէրքեն հայ մարդը։

*«Մաղկած փշալարեր»*ը երկու միջավայր ունի եւ ունի հերոսներու երկու շարք։

Միջավայրերէն մէկը հեռու-հեռաւոր հիւսիսի ցրտաշունչ բնւոն է, ու հերոսները՝ հոն նետուած թիպարտները։

Իսկ միջավայրերեն երկրորդը՝ Հայաստանը, գլխաւորաբար Հայաստանի մայրաքաղաքը, անլի միշդը՝ մայրաքաղաքի պորտին վրայ «խորանիստ» ու վերասլաց «Խորհրդաւոր շէնքը», ու հերոսները՝ յանկարծօրէն անոր խորխորատներուն մէջ թխմուած այն օրերու Հայաստանի մը-տաւորական, քաղաքական, կուսակցական ու գիմուտրական կարկառուն դէմքերը...

Վիպակին սխաբիական բաժիններուն վայրերը դժուար է մեզի պատկերացնել, ինչպէս եւ՝ դժուար է Յշդել բեւեռային սառոյցներուն մէջ քաշէշուելու կամ հոգեվարելու բունադատուած բազմազգի կիսամեռնելներուն ինքնութիւնը: Մարդկօրէն սրտատուչ ըլլալով համդերձ անոնց յիշողութիւններն ու տաժանավայրային ելեւէջներուն դրուագումները, վերձանման այս փորձին մէջ մեզ անլի հետաքրքրողը սահմակեցուցիչ թը-ւականի մը Լուսաւորչի աստղին տակ տեղի ունեցած դէպքերն են ու այդ դէպքերուն կեդրոնը գործած դաժանները եւ, մա՛նաւանդ՝ այդ արմածա-րաւներուն սամձաբեկ կամայականութեանց ենթարկուած գոհերը:

Ընդամենը քսան տարիներուն ընթացքին, ինչպէս ընդգծուած է յա-ճախ, երկու սպանդի ենթարկուեցաւ հայ ժողովուրդի մտքի ու բազկի ընտրանին, գործողութիւններու այն տարբերութեամբ միայն, որ մինչ թուրքը թրքական ծածկամտութեամբ գործադրեց իր եսթաղանը, համայ-նավարութիւնը, ընդհակառակն, քարձրադադակ սարքեց արեւելահայ ներ-կայացուցիչներուն գողգոթան, եւ ի՛նչ գիւրութեամբ: Մուրեհի ու մանգա-դի տակ մարդիկ մէկ օրէն միւսը ներկայացուեցան իրենց ըմբռնումնե-րուն, համոզումներուն, հաւատարմութիւններուն, սերերուն ու գոհարե-րութիւններուն բոլորովի՛ն ներհակ բեւեռներու վրայ,՝ ներկուսակցական պայքարներու մէջ Ստալինին հակառակորդ Տրոցկիի հետ որեւէ կայ չու-նեցող կուսակցականը տրոցկիստ յորջորջուեցաւ մէկէն, ինտերնացիոնա-լիստը՝ մացիոնայիստ, երդուեալ կոմունիստը՝ թա՛մուած դաշմակ, իր ա-րիւնը հայրենիքին չսակարկած անձը՝ հայրենիքի դաւաճան, սեփական ժողովուրդին արեան յետին բջիջներով կապուած մարդը՝ ժողովրդի թըշ-նամի, համայնավարութեան յողթանակին հաւատքով փարած անձը՝ լըր-տես, իրեն վստահուած պաշտօնին բոլորամուտը ծառայողը՝ կարիերիստ,՝ նոր մարդ ստեղծելու արիւնտ մոլուցքին ի յագուրդ՝ դեռ ուրիշ մը ճձմութեան ստաժաւոր վարպետ հոչակուեցաւ, միւսը՝ դաշմակցական վիժուածք, երրորդը երկերեսանի սրիկայ, չորրորդը՝ տրոցկիստական տակամբ, հինգերորդը... եւ այլն, այնպէս որ, այն օրերուն ոչ ոք կրցաւ հասկնալ, թէ «ինչ է անցնում ու չի դառնում» իրենց շուրջ:

Մեծ սուտին, որ համայնավարութիւնն էր, ու մեծ սուտին գործա-կայները, որ ներքնապէս ձեւագեղծուած խառնուածքներն էին, միլիոնա-ւոր մարդիկ գոհ դարձան, եւ Մահարիի «Մաղկած փշալարեր»ը այդ սուտին, սուտի գործակալներուն ու սուտին սուրբով ինկած գոհերուն վարքագրութիւնն է, որուն անլի մօտէն ծանօթանալու պարտքը պարտքն է շահագրգիռ ամէն հայու...

## ՎԵՐԾԱՆՄԱՆ ՓՈՐՁԵՐ

**ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻԻ  
«ԾԱՂԿԱԾ ՓՇԱԼԱՐԵՐ»  
ՎԻՊԱԿԻՆ ՄԷՋ**



### ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԻՉ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

*Իմ ծննդավայր գետերի կարօտը եւ Հրազդանից էի առնում, Վանի կարօտը՝ Երեւանից, եւ այդ էլ նրանց շատ թուաց: Ինձ զրկեցին դրանից էլ, մի գիշերում ոճրագործ դարձրին եւ արգելափակեցին հինգյարկանի տուֆակերտ շէնքի նկուղային յարկի ու անարեւ ու նեղ խցերից մէկում, որի պատերը հաստ էին, այնքան հաստ, որքան իմ սիրտն էր բարակ: Սարսափելին այն էր, որ բռնութեան այդ տունը կառուցուած էր այն գրօսայգու դէմ, որը կոչւում էր ազատութեան երգչի՝ Միքայէլ Նալբանդեանի անունով, ուր եւ պիտի բարձրանար նրա յուշարձանը...*

(«Ծաղկած փշալարեր», էջ 21):

✍

Այդ «սարսափելի»ին, «բռնութեան այդ տան» վայրին զարմացման և այն շեշտերով անդրադարձած են նաև ուրիշներ, ի շարքս որոնց՝ Վահրամ Ալլազան:

«Առատեան ժամը Քինգ անց կեսն էր: Այդ շէնքի ներքնայարկում էր գտնուում ներքին գործերի ժողկոմատի, այսպէս կոչուած «Ներքին բանտը»: Ինչ անսխրոնիզմ... Ազատութեան երգիչ Միքայէլ Նալբանդեանի փողոցի վրայ էր կառուցուած բանտը» («Գարուն», 1989, թիւ 1, էջ 41):



**Էնկավեղէի  
«խորհրդատու  
շէնք»ի  
վերնայարկերը**

Ճ

Աւերող չղար թերևս վերջավորել էր որդի արձանագրութիւն մը, որ գրի առնուած է դատնութեան նոյն շէշտով տտորագրութիւն՝ Ա. Ստիստու նիւ

«Գնունի փողոցի Էնկավեղէի եռայարկ շէնքը փոքր էր գալիս «սոցիալիստական» Խորհրդային Հայաստանի արագ վերելք»ի Ռամար: Նա չէր կարող պարտկել Հայաստանի բազմաթիւ մտատրականները: Միշտ դրա Ռամար էլ Արամայիս Երզնկեանն ու իր ընկերները նախանդեան փողոցի վրայ, որպէս ծայր ազգային պայծառ յեղափոխական նախանդեանի յիշատակին, Էնկավեղէի մի նոր Ռակայ շէնք շինեցին ու թ յարկարածից եւ երկու գետնայարկերով («Հայրենիք» ամսագիր, 1955, Օգոստոս, էջ 45):

**«ԱՅՍ ԱՅՆ ԾԱՆԱՊԱՐՀԸ ՉԷ»...**

Պարզից էլ պարզ էր, որ Մարիինսկի քաղաքի ճամբարային գլխաւոր կէտից մինչեւ այստեղ ձգուող մօտ երկու հարիւր կիլոմետր ճանապարհը կտրել էին նրանք ոտքով, ինչպէս մենք ժամանակին, եւ չէր կարող պատահել, որ ճանապարհին նրանք զոհեր տուած չլինէին, ինչպէս մենք ժամանակին: Քայլել էին նրանք վարժեցուած գինուած պահակների եւ վարժեցուած շների ու հրացանների կոթերի ուղեկցութեամբ եւ միջամտութեամբ, որովհետեւ պահակների համար նոյնքան ծանծրայի ու յոգնեցուցիչ է եղել հրակողութիւնը, իսկ ճանապարհը՝ անվերջանալի Չէ, այս ախ ճանապարհը չէ, որի մասին բանաստեղծն ասել է՝ «Այս ճանապարհը անվերջ լինէր...»:

էջ 28





Հատուածին վերջին տողին մէջ բանաստեղծին ու բանաստեղծութեան եղած ակնարկութիւնը ուղիղ գծով կը վերաբերի Գորգէն Բորեանի եւ ստորեւ արտագրուող անոր սա ոտանաւորին.



**ԱՅՍ ԾԱՆԱԳԱՐԸ ԱՆՎԵՐՁ ԼԻՆԵՐ**

Այս ճանապարհը անվե՛րջ լինէր,  
Ինչպէս ճամբան այն Յարդազողի...  
Չլինէր ցերեկ, լինէր գիշեր  
Եւ անցնէինք մենք գաղտագողի:

Անցնէինք մէկտեղ... Եւ իրարու,  
Ինչպէս աստղերը՝ երկնում հեռու,  
Ծշնջայինք մենք սիրոյ խօսքեր...  
Այս ճանապարհը անվե՛րջ լինէր:

Չըջափէինք մենք ուղին անցած,  
Եւ չճայէինք երբեք մենք ետ,  
Չըմարցնէինք՝ որքա՞ն մնաց...  
Այս ճանապարհը անվե՛րջ լինէր:

Եւ այդ ճամբի պէս յար երջանիկ  
Սիրոյ խորհուրդը լինէր անմեռ,  
Լինէր յաւերժ ու... Մենք քալէինք,  
Եւ ճանապարհը անվե՛րջ լինէր...

**ԳՈՐԳԷՆ ԲՈՐԵԱՆ**  
Բանաստեղծ, թատերագիր, թարգմանիչ: Ծնած է 20 Յունիս 1915ին, Ծուշի: Մեռած է 16 Ապրիլ 1971ին, Երեւան:

1940                      ԳՈՐԳԷՆ ԲՈՐԵԱՆ

**«ՄԻ ՈՒՐԻՇ ՀՈՂԱԾՆԻ Է ԱՇԽԱՐՀ ԳՈՐԾՈՒՂԵՆ»...**

*Ես հիմա հաւատում եմ, աւելի քան հաւատում, որ ազատն աստուածն է սկզբում շունչ փչել իր կաւէ շինուածքին եւ նրան կենդանութիւն պարգեւել, ստեղծել է մարդուն եւ այդ մարդն օրօրոցից մինչեւ կախաղան բանն ու գործը թողած՝ «Ազատութիւն» է գոչել ու տենչացել: Նոյն այդ աստուածը, երեւի, մի ուրիշ հողածնի է աշխարհ գործուղել արտակարգ լիազօրութիւններով, որ ոչ թէ բոպիկ ոտներով, այլ ծանր, երկաթէ սապոզներով ուքի տակ առնի միլիոններին, տրորի ու հունցի, կաւ դարձնի, որ նը-*

րանք «ազատութիւն» բառն անգամ մոռանան, եւ յետոյ այդ կապից նոր մարդ պատրաստի ի՞ր շնչով, ի՞ր կերպարանքով, նոր դրախտի խոստումով, որ այդ մարդը լինի վախկոտ ու դաժան, անողնաշար, փառամոլ ու դաժան, որ հսկողութեան տակ առնի անգամ մարդկային սէրը: Որ մարդիկ պատժուեն սիրելու համար, իսկ դաժանութեան համար պարզեւատրուեն, որ նրա արձանները կանգնեն բոլոր կայարաններում, հրապարակներում, քաղաքներում եւ աւաններում, որ նրա նկարը կախուի բոլոր տների պատերից, որ նրա անունով կոչուեն քաղաքներ ու գործարաններ, հարիւր հազարաւոր փողոցներ եւ հազարաւոր հրապարակներ: Որ բոլոր գրիչները գրեն նրա մասին, բանաստեղծները նրան գովերգեն, նկարիչները նրան նկարեն, երգիչները նրան երգեն, գիտնականները նրա անունով գործեն, գինուորականները նրա ցուցմունքով կռուեն, ողջ երկիրն ովսաննա երգի, ու նա անյագուրդ խմի փառքի աղջուրն ու չյագենայ, մոլեգնի...

էջ 36-37




Ինչո՞ւ այսպէս եղաւ, այս ի՞նչ զարմանալի պատմութիւն է... Արդար կարգերի երկրում այսքան կայանաւոր... սա մի մեծ բամբասանք է, մի մեծ զրպարտութիւն: Անմեղ, անշառ ու պէտքական, շատ պէտքական մարդկանցով են լցրել բանտերն ու լազերները: Ո՞ւմ է հարկաւոր, ինչո՞ւ է այս մեծ անարդարութիւնը: Երեւի կայ մէկը, որին ձեռնտու չեն ազնիւ, շիտակ, համարձակ մարդիկ եւ նրա հրամանով այդպիսիներին ոչնչացնում են:

էջ 92

Գուրգէն Մահարիի «Մաղկեւծ փշալարեր»-ը գրուած է ստալինեան մթնոլորտի վերյիշումին ու վերապրումի մթնոլորտին մէջ, բայց հազիւ քանի մը անգամ ակնարկութիւն եղած է Ստալինին, որ կը ճանչցուի իր «երկաթէ տապոգներով», արձաններով եւ արուեստագէտներուն, գիտնականներուն եւ միւսներուն իրեն շողայած այսպէս շափի ովսաննաներով ու, մա՛նաւանդ՝ «ազնիւ, շիտակ, համարձակ մարդիկ» ոչնչացնելու մոլեգնութեամբ արձակած իր արիւտտո հրահանգներով:

Ստալինի ոչնչացուցած «ազնիւ, շիտակ, համարձակ մարդիկ»-ը միլիոններու կը հասնին թէ՛ եւ, բայց վերջնականապէս ստուգուած չէ անոնց մարդաստարբէր լսել կ'ուզենք՝ տարրեր են այդ հարցին անդրադարձող մտաւորականներուն ներկայացուցած հաշուեցուցակ-

<p>Սովետական պետական ու կուսակցական գործիչ: Ծնած է 1879ին, Վրաստան: 1922էն սկսեալ համայնափար կուսակցութեան ընդհանուր քարտուղար: Լենինի մահէն ետք կուսակցական ու կառավարական բոլոր պաշտօնները վարեց աճաւոր ու անբողջ երեսուն տարի դարձաւ կարմիր կայսրութեան միահեծան տէրը: Մեռաւ 5 Մարտ 1953ին, Մոսկուա:</p>	
<p>ԺՈՂՔՆ ՍՏԱՆԻՆ</p>	

ները որոնց քանի մը հատը կ'արժէ թուել ինչ, Մահարիի ակնարկած («ոչնչացնում են») գործողութեան խորքը տւելի պարզ դարձնելու համար:

**40 ՄԻՒԻՈՆ...**

«Մենք չարութեան կայսրութիւն ենք ոչ միայն ուրիշների համար, մենք, առաջին հերթին, մեզ համար չարիքի կայսրութիւն ենք, ինքնակերուներ, որովհետեւ խաղաղ ժամանակ 40 միլիոն մարդ ենք կործանել (թիւր վերցնում են «Արգումենտիի ֆակտի»-ից, մինչդեռ ամենախտոր հայրենական պատերազմում զոհուել է 20 միլիոն մարդ» («Խորհրդային Հաստատան», 12 Յունուար 1990):

ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹԵԱՆ

**50 ՄԻՒԻՈՆ...**

«Վերջին տարիներին որոշ ջանքեր են արուել Ստալինից մինչեւ Բրեժնեւի օրերը բռնութիւնների ենթարկուած մարդկանց թիւը ճշտելու համար: Ոչ լրի տուեալներով այն հասնում է 50 միլիոնի («Գարուն» ամսագիր, 1990, թիւ 7, էջ 42):

ԲԱԳՐԱՏ ՈՒՈՒԲԱՐԵԱՆ

**66 ՄԻՒԻՈՆ...**

«Մենք այն սերունդն ենք, որը վերապրել է 66 միլիոն (չհաշուած պատերազմի զոհերը) մեր հայրենակիցների կործանումը: Մենք այդպիսի ողբերգական ժամանակաշրջան ենք ապրել միայն Խորհրդային ժամանա-

կաշրջանում, որ դրանց նկարագրության համար չեն բառակազմակերպում հարապատասխան ծեփապիտեր ու Տանթեներ» («Խորհրդային Հայաստան», 2 Մայիս 1990):

ԶՕՐԻ ԲԱՎԱՅԵԱՆ

**88,7 ՄԻԼԻՈՆ...**

«Ինչպէ՛ս կարող է իրեն նորացած համարել մի կուսակցություն, որի խղճին ընկած է 88,7 միլիոն մարդու գազանային սպանությունը» («Ճուլերը դեռ այնտեղ են», Երեւան, 1990, էջ 148):

ՊԵՐՇ ԶԷՅԹՈՒՆՑԵԱՆ



Հայրենի չորս մտաւորականներու ն յիշատակած չորս թիւերու ն փոքրագոյնը 40 միլիոն է:

40 միլիոն մարդ:

Իննսու ն տոկոսով՝ «ազնիւ, շիտակ, համարձակ մարդիկ»:

Ահարկու է պարզապէս

Յոխորտանքով գրուած է ու կսկծանքով կարդացուած մէ ն մի հայու կողմէ, թէ՛

«Ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի դեկավարութեամբ եւ անմիջական օգնութեամբ Հայաստանի բոլշեւիկները ջախջախեցին հայ ժողովրդի ամենաոխերիմ թշնամիներին՝ նողկալի դաշնակցական, տրոցկիստական-բուխարինական, բուրժուական-նացիոնալիստական դասաճանցներին» («Խորհրդային Հայաստան», 21 Մարտ 1938):

Այս գործողութիւնը ու անոր տիրահոշակ գործակատարները ծանօթ են, բայց ի՛նչ էր արդեօք ջախջախուածներու ն մէջ մեր համրանքը

Հայրենի յօդուածագիրներէ ն Մ. Մ Ելքոնեան առանց վարանումի կը գրէ.

«Ստալինը Խանջեանին առաջարկել էր ոչնչացնել հայ մտաւորականութեանը: Հինգ հազար հոգու, անկախ նրանց ով լինելուց:

«Խանջեանը «առաջնորդի» կամքը չի կատարում: Եւ թերեւս Քեցայր պատճառով էլ շուտով Բերիայի աշխատասենեակում կատարում է վերը նկարագրուած ողբերգութիւնը» («Գրական թերթ», 1989, թիւ 12):

Ընտանքը առատապէլ կը թուի, բայց Ստալինին կատարած ո՞ր իրականութիւնը առատապէլ չի թուիլը

Կրնայ, հետեւաբար, 40, կամ 50, կամ 60, կամ 88,7 միլիոն մարդ ոչնչացուցած հիդրան նման պահանջ մը դրած ըլլալ ենթադրութեան մը դեկավարիւն:

Չրանք, թէ այդ օրերու ն այդքան մտաւորական չուներ Հայաստանը, ունէ՛ր, էթէ հաշուէնք մտքի ասպարէզին մէջ աշխատող լոյրը

տարրերը՝ արուեստագէտ, գիտնական, դատախարակ, քաղաքական դէմք ու կուսակցական գործիչ, որոնցմէ կը տարսափէր նոր մտրդ ստեղծելու յաւակնութեամբ հիները հնձելու ելած անդաբուրդ մարդակերք

Կը հաւկցուի տակաւին, որ միայն Մոսկուացէն չէր, որ ոչնչացման պլաններ կը ներկայացուէր Տայաստանին եւ պահանջուածները միայն մտաւորականներու գրուիւնները չէին, այլ Թիֆլիսն ալ ունէր նման հարուածային ծրագիրներ, թիւով աւելի մեծ, բայց որակով աւելի համեստ: Լուրր «Մաղկած փշալարեր»էն, Տանօ Ամատունի օրով գործող Գեպէուի նախկին գործակալին խոստովանութեամբ.

«Նրա ասելով՝ Թիֆլիսից տրուած է «Մարդամթերման կայուն պլան», պէտք է «նստեցնել» մօտ 40.000 մարդ: Դրանցից մի մասը կը մահանայ, մի մասը կը գնդակահարուի, իսկ մեծ մասին կը քշեն Ռուսիա, համակենտրոնացման ճամբարները (կոնցենտրացիոն լագերներ) ծանր աշխատանքի» (էջ 107):

Թէ՛ Մտալինեան-մոսկովեան առաջարկը եւ թէ բերիական-թիֆլիսեան պլանը կրնան ճիշդ լլլալ, բայց պլաններու ն ճշդութենէն առաջ ու ճշդութեան հետ հարցումը կը շարունակէ նեղել հայ մարդուն միտքը

– Ի՞նչ էր արդեօք հնձուած հայերու իրական թիւը

Այս մասին գրուած են հարիւրաւոր նշմարներ: Ուշադրութեան յանձնենք առաջիններէն մէկը, միաժամանակ ռուսերէն ու հայերէն թերթերու ն մօտէն հետեւած ու առարկայական տուեալներու հիմամբ «Հայրենիք» ամսագրի «ամսական տեսութիւն»ը կազմող Արշամ Խոնդկարեանի (Ա. Աթան) հաստատումը.

«Խորհրդային եւ ոչ մէկ հանրապետութեան մէջ գրագէտների ու գրականութեան դէմ սկսած հպաժանքներն այն ծաւալն ու խստութիւնը շունցան, ինչ որ Հայաստանում: Այսօր արդէն կարող ենք ասել, որ հրապարակից քշուել են այն բոլոր գրողները, որոնք գրական ասպարէզ էին իջել Հայաստանի խորհրդայնացման հետ միաժամանակ եւ հետագայ տարիներում գրական համբաւ էին ձեռք բերել, իբրեւ արդեսարական, Խորհրդային եւայլն անուններով գրողներ: Նրանց բուն ճակատագիրը մեզ յայտնի չէ, բայց եթէ անգամ ճիշտ չեն այն լուրերը, թէ նրանց մեծ մասը ոչնչացուած է ֆիզիքապէս, ակներեւ է սակայն այն փաստը, որ նրանք բոլորը անէացել են իբրեւ գրական մշակներ: Կրկնում ենք, այսքան մեծ թուով գրագէտներ ասպարէզից չեն քշուած ո՛չ Ռուսաստանում, ո՛չ Վերաստանում, ո՛չ Ադրբեջանում եւ ոչ էլ Խորհրդային Միութեան ուրիշ երկրում» (1938, Նոյեմբեր, էջ 151):

Դաշնակցական կամ համակիր գրիչներու կողմէ արձանագրուած ու դաշնակցական թերթերու ն մէջ երեւցած նման հաստատումները բաւական ժամանակ վերապահութեամբ դիտուեցան որոշ հաստատածներու կողմէ, առնուազն մինչեւ համեմատական ազատութիւն անունով կնքուած խրուչէւեան ձիւնհայր ու ձիւնհայրէն

հարիր անգամ առեկի նշանակալի գորքաշովեան հրատարակայնութիւնը երբ «փակ գորոցները» բացուեցան ու բացուեցան փակ լեզուները եւ մարդիկ համարձակութիւն ունեցան արգիլուած ճշմարտութիւններ ըսելի լուր ամենեցուն:

«Ի՞նչ էր արդեօք հնձուած միլիոններուն մէջ հայոց թիւը» հարցումին ահաւասիկ բանի մը արձագանգներ՝ այս անգամ հայրենի աշխարհէն.

✍

Զարմանալի մի հետեւողականութեամբ գործունէութեան այս եղանակը բնորոշ է եղել Հայաստանի կեանքի համար վերջին 20-25 տարում: 37 թիւ: Մեր հանրապետութիւնում աշխատել ենք հնձել բոլորից շատ ու բոլորից խորը («Գարուն» ամսագիր, 1994, թիւ 10, էջ 22):

ՄԻՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

✍

Այսօր պարզ է ու տեսանելի, որ Խորհրդային Միութեան ոչ մի ժողովուրդ չունեցաւ այնքան ծանր կորուստներ, որքան հայ ժողովուրդը: Ոչ մի գրականութիւն չկորցրեց Եղիշէ Չարենցի եւ Ակսել Բակունցի նման մեծութիւններ, էլ չենք խօսում Զապէլ Եսայեանի եւ Վահան Թորոպեանցի մասին («Նայիրի», 7րդ տարի, 1969, թիւ 9):

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

✍

Ի հարկէ, թուր ազգերից էլ արտրականներ կային, բայց, կրկնում եմ, ամենաախար, ամենաանարդկային տառապանքների ենթարկուեց հայ ժողովուրդը («Գրական թերթ», 1988, թիւ 49):

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ

### «ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԼԱԼԿԱՆ ԱԾՆԱՆ ՔԱՄՈՒՆՄԱՆ»...

*Թրժարանի վառարանը չի երգում բրուտանոցի վառարանի նման քո ուզած երգը, ոչ, նա այնպիսի ժայներ է հանում, որ դու մոռանում ես քո գիտցած եւ մանաւանդ չգիտցած երգերը:*

Գրագէտ, հրատարակագիր, խմբագիր և ազգային գործիչ Մեան է 1866ին, Ստրնայու գաւառի Իգախիմաւ գիղը: Տեղւոյն ծնական դպրոցը աւարտելէ ետք հետեւած է «Գէորգեան» ճեմարանի և Լոզանի ու Սորպոնի համալսարաններու դասընթացներուն: Վարած է խմբագրական, ռուսոյնական, ազգային և քաղաքական զանազան պաշտօններ: 10 Օգոստոս 1920ին կը ասորագրէ Սուրբ դաշնագիրը: 1934ին կարտաճանհար կ'ըլլայ: Կը մեռնի 1948ին, Փարիզ:



Ա. Ա. Ա. Բ. Բ. Բ. Բ.

*Նա մերթ վայում է, մերթ կաղկանձում, անզուսպ և խելադար պահանջում, սպառնում, հայհոյում ու մանաւանդ վայում, վայում Ահարոնեանի լախան աշնան քամու նման, ծինելոյզում: -Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ-վո՛ւ-մ՛ւ-մ՛ւ-...*

էջ 41

է

Աւետիս Ահարոնեան իր պատմութիւններու շարքին ունի «Եւ դրսում աշունն էր լախս» անուն 8 էջոց պատմութիւն մը, ի մասին երկու բանտարկեալներու, և տառապանքի անոնց պատմութեան ընթացքին յաճախ «աշունը լախս էր դրսում», բայց առանց ծխնէրուզցին «Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ-վո՛ւ-մ՛ւ-մ՛ւ-»-ի Ահարոնեան նման բացազանչութիւն մը օգտագործած է բանտային այլ պայմաններու մէջ «Լեռնականը» պատմութիւններուն, բանի մը անգամ՝ «Նո՛ւ-ո՛ւ-հո՛ւ-»:

**«ՄԱՐԳԻԿ ԱՅՆ 2ԵՆ, ԻՆՉ ԵՐԵՒՈՒՄ ԵՆ»...**

*-Տարածելու կարիք չկայ,- շարունակեց նա,- Պետրովի հայրը նոյնպէս բռնուած և ջշուած է կոլիմա... Մի գարմանայ:*  
*-Այդ սարսափելի չուվաշի հայրը...*  
*Աչոտ դային ժպտաց:*  
*-Մարդիկ այն չեն, ինչ երեւում են,- ասաց նա,- մեր ժամանակներում մարդը շատ է բարդացել իր էութեամբ... Ուրիշ բան են մտածում, ուրիշ բան խօսում, հակառակ իրենց էութեան՝ դործում... Մարդու մէջ դրել են ինչ-որ չար զսպանակներ, լարում*

*են իրենց ուզած ձևով ու բաց թողնում: Ու մարդիկ չար են՝  
Հակառակ իրենց կամքի, իրենց խմորի...*

Էջ 43

Ոչ թե մարդիկ ի բնե աղպա էին, այլ ինչպես Աշոտ դայիի բերնով կ'ըստի՞նք անորոշ ենթակալաներուն («մարդու մեջ դրել էն») ակնարկելով ըսել կ'ուզուի՝ մարդատեսաց ու մարդասպանի խառնըւածք ու նեցող մարդակեր փոքրամասնութիւն մը ձեռք առած էր իջխանութեան դեկը եւ շարագործներու ընդունակ հատընտիր հրէշներու միջոցով հազարներ, ու բիւրեր, ու միլիոններ խրած էր ահաբեկչական մթնոլորտի մը մէջ ու ըսել կու տար այնպիսի՝ խօսքեր, ընել կու տար այնպիսի՝ արարքներ, առնել կու տար այնպիսի՝ քայլեր, որոնք ըմբռնելի չեն, չեն եղած, չեն կրնար ըլլալ քաղաքակրթութեան ներկայ հանգրուանին հաւած մարդ էակին համար: Այդ պատճառով է, որ իր մեկուսարանին հասած շարաշուք տարած այնութիւններուն ի յուր՝ Մահարի կ'աղաղակէ լուելայն, թե՛ «Փակեցէք ձեր աչքերը ու ականջները, մարդիկ, միջնադարը վերադարձել է» (էջ 105-106), իսկ «Մ աղկած փշալարեր» վիպակի հերոսներէն ուրիշ մը, նախկին ուսուցիչ Արիսիպովը աւելի հեռու է կ'երթայ, ու զուգահեռ մը գծելով իրենց եւ Եզիպտոսի ճորտերուն միջեւ կը հարցնէ. — «Եզիպտոսական ճորտերի մասին զաղափար ունէ՞ք» (էջ 149):

Միջնադարուն վերադարձը յղացած ու միջնադարեան դաժանութիւններ կիրարկող մարդոց գոյութեան փաստին անդրադարձնալով իր հերոսներէն քայլ մը աւելի առաջ անցնելով, Մահարի կը գտնէ, որ գործունէութեան ազատ դաշտ գտած լլպալու անոնց պատճառը եղաւ արդարութեան հիւանդութիւն: Ահա թէ ինչպէս.

«Երբ Ռիանդ է արդարութիւնը, մարդիկ խեղճանում են, մանրանում, դառնում երկերեսանի, չար, եսամոլ, ստորաքարշ: Նրանք քծնում են, լզում իրենց ոտնակոխող սապոզները, ասում են խօսքեր, որոնք իրենցը չեն, կատարում են գործեր, որոնց Ռետ համաձայն չեն, բայց կատարում են, որովհետեւ արդարութիւնը Ռիանդ է, չի կարող նրանց կարգի բերել» (էջ 93):

«Երկերեսանի չար, եսամոլ ստորաքարշ» արարածներ բուժանած եւ մարդոցմէ անմարդկային կեցուածքներ պահանջող մթնոլորտին հետեւանք երոյթները անհամար են: Նոյն պատճառով փրթթեցաւ նաև քծնելու երեւոյթը, ու ծաղկեցաւ «իրենց ոտնակոխող սապոզները» լզելու փութկոտութիւնը, որ դրսևորուեցաւ նոյնիսկ ծանօթ դէմքերու մօտ, երբ դեռ բռնութեան ալիքը ծայրայեղ չափերու չէր հասած, առանց քննչական նուաստութեանց եկթարկուելու իր



մահկանացու և կնքած Շիրվանկաղչէն, յայտնի քաղաքներէն անցած ու «անյայտ անդամբան կորած» Սիմոն Յակոբեանը, ուրիշնէ՛ր։

Արձակագիր ու թատերագիր Մնած է 7 Ապրիլ 1858ին, Եամախի Հատորով հրատարակուած է շուրջ հարիւր անգամ: Մեռած է 7 Օգոստոս 1935ին, Կիւլովոզկի մէջ ու թաղուած Երեւան:



\*\*\*  
Մարդիկ չաճախ ինձ հարցնում են, ինչո՞ւ էք սնում, ի՞նչ էք անում, որ չէք ծերանում: Նրանք չեն հասկանում, ինչու ես չեմ ծերանում: Ես չեմ ծերանում հրա համար, որ ապրում եմ Խորհրդային իշխանութեան ժամանակ, եւ էլի կ'ապրեմ, որովհետեւ ուզում եմ վերջին ուժերս, նոյնիսկ ոչ վերջին, այլ նախավերջին ուժերս տալ Խորհրդային երկրին («Գրական թերթ», 1974, թիւ 34):

ԱԼԵՃԱՆԳԻ ՇՐՎԱՆԶԱՂՇ



Գրականագէտ, խմբագիր ու փրոֆեսոր: Մնած է 1880ին, Կիրովպալատ: Յաջորդաբար՝ Վիեննայի եւ Պեռլինի մէջ խմբագրած է «Արնգ» գիտա-գրական հանդէսը: Մեռած է 1942ին, Միպերիոյ անյայտ մէկ անկիւնը:

\*\*\*  
Ես Եւրոպայի շատ քաղաքներում եմ եղել, տեսել եմ շատ հոշակաւոր մարդկանց ու գիտնականների: Իսկ Գեկտեմբեր 30ին ես տեսալ աշխարհի ամենամեծ մարդուն: Ես 55 տարեկան եմ: Բայց մեծ Ստալինին հանդիպելուց յետոյ զգում եմ, որ մի 20 տարով երիտասարդացայ («Խորհրդային Հայաստան», 1936, թիւ 3):

Պրոֆ. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Սիմոն Յակոբեանի բնադրութեան մասին յաւելումական գաղափար մը տալու համար, աւերոյղ չ'ըլլար թերեւս կարդալ նաեւ ստալինականութեան բուն «զարթօնքէն» առաջ դրսեւորած իր յարմարողականութիւնը, որուն մասին եղած տեղեկութիւնը Գ. Մարտիկեանի ստորագրութեամբ Երեւանէն յրում է Փարիզի «Դժբօշակ» ինք

«Հայ կենտրոնականի այս տարուայ նիստերից մէկում վիճարանութեան է դրում այն հարցը, թէ Հայաստանի համալսարանում դասախօսութիւնները հայերէնով պիտի լինեն, թէ ռուսերէնով: Եւ այստեղ էլ դարձի եկածներից մէկը, տխրահոշակ Սիմ. Յակոբեանը նորընծայի մոլեռանդութեամբ պաշտպանում է այն միտքը, որ թէնց այս տարուանից մի շարք աւարկաներ դասախօսուեն ռուսերէնով» (1927, թիւ 1):

Թունը նոյն անբնական մթնոլորտին ծնուող անբնական երկու-երեք «ցայտնութիւններ» էւս:

Տայ մարդը գրականութենէն զիտէր, որ ստալինեան համակարգին մէջ, ի շարս հոգեկան այլ հարստահարութիւններու, եղած են բազում դէպքեր, երբ մուրճ ու մանգաղի սպառնալիքներու ն տակ որդին հրաժարած է բանտարկուած հօրմէն, կինը՝ արտորում ամուսիննէն, եղբայրը՝ գնդակահարուած եղբօրմէն, եւ այլն, ծնուող տարով այնպիսի՝ արարածներու, որոնք հազիւ երեւակայելի են մարդկային հասկացողութիւններէն դուրս գտնուող հրէշներու միջազայերու ն մէջ:

Որպէսզի բաւածը օդին մէջ նետուած խօսք չ'մնայ, արտազրեւեր փորձատրութիւններէն մէկը, իր հերթին ստալինեան ճամբարներու մէջ ամբողջ 17 տարի տառապած Մկրտիչ Արմէնի մէկ պատմութեամբքին սա տողերը, փորս, ուրիշներու հետ «Պատուիրելիին յանձնել ձեզ»

«Եւ յանկարծ դիմացից երեսցել էր մի երիտասարդ, համարեա՝ պատանի՝ հրացանը ուսից կախ: Նա եկել էր աշխարհից՝ աշխատելու համար ճամբարներում որպէս պահակ: Նրան տուել էին փամփուշտներով լի հրացան, բայց տուել էին նաեւ անելի սարսափելի զէնք՝ ատելութիւն դէպի մարդիկ, թերահաւատութիւն դէպի բոլորն ու ամէն ինչը, կասկածամբտութիւն դէպի հարազատ ծնողներն անգամ:

«Դեռ փսլըրտ պատանի, նա գալիս էր ոչ թէ դատարկ ու թեթեւ, այլ իր ուտերի վրայ ունենալով մատուցած ծառայութիւնների մի պատկանելի բեռ: Նա թնջական մարմինների ձեռքն էր յանձնել իր հարազատ եղբօրը, հրաժարուել իր հարազատ թօրից, քել էր իր հարազատ մօրը՝ միայն այն պատճառով, որ նա պղքան տարի իր կողքին հանդուրծել էր այդպիսի ամուսնուն» (1964, Երեւան, էջ 225-226):

Ձգէնը սակայն գրականութիւնը եւ, մարդոց մէջ դրում ինչոր «չար գապանակներու ն» մղումով տեղի ունեցած մահարիական նշմարը լաւ բմբռնելու համար՝ կարդանք յուշագրական մէկ-երկու հատուած, մէկը՝ բանաստեղծ Գէորգ Էմինի, միւսը՝ թատերագէտ Ռուբէն Զարեանի ստորագրութիւններով—

«Ամէնից սարսափելին այն էր, — կը գրէ Գէորգ Էմիլ, — չնայած այդ ամէնի մեծագոյն յանցագործ Ստալինի երկերեսանի՝ «որդին պատասխանատու չէ Ռօր Ռամար» կարգախօսին, այս ամէնը վերաբերում էր նաեւ... Բանտարկուածի կնոջ, ծնողներին, Ռարագատ երեխաներին ու ազգականներին, որոնք այդ տարիներին պարտաւոր էին պաշտօնապէս Ռամարուել իրենց բանտարկուած Ռարագատներին...»

«Քանի՞-քանի՞» երիտասարդներ եւ նոյնիսկ պատանիներ՝ ուսանողներ, աշակերտներ եւ երիտասարդ ժամագէտներ եւ ստիպողաբար, գրաւոր կամ բանաւոր Ռամարուել իրենց բանտարկուած Ռօրից կամ Մօրից, երբօրից ու քրոջից, մօտիկ ընկերօջից ու բարեկամ ազգականից, դատաւարուել նրանց որպէս «ժողովրդի թշնամի» եւ երդուել, որ նրանց հետ կապ ու նամակագրութիւն չունեն, որպէսզի փրկուեն բանտի կամ աքսորի վտանգից կամ Ռնարատութիւն ունենան շարունակել իրենց ուսումն ու աշխատանքը...» («Գարուն», 1989, թիւ 8, էջ 83):

Աւելի որոշակի է հետևեալը եւ՝ սուեղի՝ քստմունքի՝ Ռուբէն Զարեանի պատմածը —

«Համալսարանի ասպիրանտ լինելով, գնացել էի պարապմունքի: Պարզուեց, որ ոչ մի պարապմունք չկայ: Մեծ դահլիճում ուսանողական ժողով է: Քննում էին մի քանի ուսանողի Ռարց: Ժողովը բուռն էր, ինչպէս 1937ի թղոր ժողովները՝ կրքերով յի, կատաղի, յարձակողական, մարդուն ստորացնող ու ոչնչացնող մեղադրանքներով: Երբ մտալ դահլիճ, ժողովն սկսուած էր: Տեղադրուեցի ծանօթ ուսանողի կողքին:

«Ամպիոնի մօտ կանգնած էր մի տղայ, որի Ռօրն ու մօրը ձեռքաւանջել էին, եւ ինքը հիմա մեղայ էր գալիս: Ի՛նչ միայն չէր ասում իրեն աշխարհ բերած ծնողների մասին: Մեղադրում էր իրեն, որ չի ճանաչել ծնողներին, որեւէմ ինքը զգօն չի եղել, հետեւապէս արծանի է խստագոյն պատժի: Հօրն ու մօրը անուանեց քաղաքական տակաւն: Եւ ասաց, թէ պաշտօնապէս յայտարարում է ի լուր թղոր ներկաների, որ ինքը այլեւս իր ծնողների գաւակը չէ, որ ինքը Ռամարուելով իր ծնողներից, Ռամարուելով է նաեւ Ռօրական ազգանունը կրելուց, որ ինքը հէնց պսօրուանից Պօղոսեան չէ այլեւս, իսկ թէ ինչ, դրա մասին կը մտածի յետոյ:

«Քստմունքի էր լսել» («Մայրամուտից առաջ», Երեւան, 1990, էջ 88-89):

Իբրեւ մարդ խորապէս ու անբուժելիօրէն պիտի խցուէ ինք այս պատկերներու ն դիմաց, այս բարքերը ստեղծած հրէջին, անոր ահէն հաւատարմական ստեաններ սարքած սարսափահարներու ն թէ իրենց հայրն ու մայրը «քաղաքական տակաւն» անուանելով անոնցմէ հրաժարած անուղնայար խղականերու ն յայտարարութեանց ի լուր, եթէ կարմիր կայսրութեան բոլոր հպատակները ապրած ըլլային նոյն վարքով ու մարդկային բարձր արժանիքներ յայտնաբերած փոքրաթիւ արջիկներ ու տղաք ցցած չըլլային իրենց հասակը արդէն ամբոխային մակարդակներու իջեցուած մեծամասնութեան մէջ:

Ասորդանք նախ Ռուբէն Զարեանի գրութեան շարունակութենէն պարբերութիւն մը, ի մասին բանտարկուած հօրմէն ու մօրմէն հրաժարելու պաշտօնական առաջարկ ստացած աղջկան մը մերժողական վեհապալած յայտարարութեան։

«Ի՞նչ ուզում էք արեք: Ձեր խղճի գործն է դա: Բայց ես էլ իմ խղճն ունեմ: Հետացրէք ինձ կոմերիտիութեան շարքերից: Հանէք Քամալարանից: Իմ ապրած տնից շարտէք դուրս, փողոց: Փողոցի կին դարձրէք մի անմեղ աղջկայ: Եւ դարձեալ կ'սանեմ, որ Քայրս անմեղ է, ու ես նորաճից հրաժարուողը չեմ: Աւելի շուտ կեանքիցս կը հրաժարեմ, բայց չեմ հրաժարուի հօրիցս: Ի՞նչ էք ուզում ինձանից, ի՞նչ... (Նոյն տեղը, էջ 91):

Ու եթէ Ռուբէն Զարեանի նկարագրած ազնուարիւն ու սանտրուէին անուն մը չունի, անուն մը ունի եւ յայտնի մակախոսու մը է միւնի նկարագրած ուսանողը Մարտիկ Ավդաբեկեան, նոյնպէս ազնուարիւն ու արի, այսպէս.

«Թէեւ լինում էին նաեւ դէպքեր (ճիշտ է՝ հազարի՞ց մէկ), երբ նորանք ազնուութիւն ու քաջութիւն էին ունենում ընդդիմանալ իրենց հարազատից մեղադրելու կամ նրան որանալու այդ ստո՞ր եւ անբարոյակամ հրապարակային ծեսերին, ինչպէս այդ արեց, օրինակ, պոլիտեխնիկական ինստիտուտի մեր ուսանող-դասընկեր Մարտիկ Ավդաբեկեան՝ այն տարիներին բանտարկուած եւ «ժողովրդի թշնամի» համարուող յայտնի մարքսիստ եւ Մարքսի «Կապիտալ»ի թարգմանիչ Թադեոս Ավդաբեկեանի տղան, որը ժողովում նոյնիսկ յանդգնութիւն էր ունեցել յայտարարել, թէ «սրիկան ո՛չ թէ իմ հայրն է, այլ նրա՛նք, ույքեր ստիպում են ինձ իմ հարազատ հօրն որանա՛լ» (նոյն տեղը, էջ 63):

Մարտիկ Ավդաբեկեանի բանտարկուած հօրը Մարքսի «Տափիթալ»ի թարգմանիչ Թադեոս Ավդաբեկեանին վերջին անգամ ընթերցողը կը հանդիպի քիչ անդին (էջ...), իսկ թէ ինչ եղաւ հօրմէն չհրաժարող կորովի որդւոյն ճակատագիրը վարքագիրը կը լռէ այդ մասին...

#### «ՄԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԱՍԱԾԻ ՆՄԱՆ»...

*Բրուտանոց իմ, բրուտանոց, ինչո՞ւ եմ կարտում քե՛զ, ոտով-գլխով, փոր-փսորով կորած այն մի բանաստեղծի ասածի նման՝ «այնքան կրակ, այնքան կարօտ» մնաց քո փոշում ու դեռ արցունքներ թափուած ու կուլ տուած, ու դեռ դժխեմ ու պաղ, միապաղաղ օրերի ընթացքը ժանդոտ ջրհորդաններից բանտի բակը հասող դեղին անձրեւաջրի սիրտ կեղեքող երգի նման, ու խոնար պատերի միջին անցքերում բոյն դրած կարիճների նման քեզ հետե-*

Լող, սակայն անտես ահը... քաղց ու նուաստացում, ցուրտ ու ինքնուրացում, քո սեփական հօր ծանր սապոզների տակ տրոր-  
լած...—է, ինչո՞ւ կարօտում եմ քեզ:

Էջ 47

Ջ

Գուրգէն Մահարիի բանաստեղծական վաստակին բիշշատ ծանօթ ընթերցողները անմիջապէս ճշդ եցին հարկաւ, որ «ոտով-  
գլխով փոր-փաղով կորած» բանաստեղծը ինքն է, Մահարին, եւ փո-  
շիներու մէջ մնացած «այնքան կրակ, այնքան կարօտ»ը փող երի-  
տասարդութեան Երեւանին ձօնած իր «Երկու գագեղ»ներէն առա-  
ջինը սկսող բառերն են, ու ամբողջութիւնը կը հաշուէ ութ տող—

Այնքան կարօտ, այնքան կրակ պիտի թողնեմ քո փոշում,  
Ու արնավատ այնքան երակ պիտի թողնեմ քո փոշում:

Թափառումներ հազարափոխ ու կարօտներ անորոշ,  
Այնքան երգ ու այնքան դրօշ պիտի թողնեմ քո փոշում...

Այնքան պայծառ առաստներ ու կէսօրներ արեւոտ,  
Իրիկնային այնքան կարօտ պիտի թողնեմ քո փոշում:

Այնքան կրակ, այնքան կարօտ, այնքան բոցեր դրօշի,  
Ու անունս, որպէս փոշի պիտի թողնեմ քո փոշում...

Այս ապրումները քնարերգած քանամենի Մահարին Երեւ-  
անի փոշիներու ն ձգելիք դեռ ուրիշ շատ բաներ ու նէր հարկաւ, պիտի  
ու նենար անպայման, կը զգար, գիտէ՞ր, բայց երբեք մտքէն չէր կրնար  
անցընել, որ իր հատուն երիտասարդութեան կրակներն ու կարօտ-  
ները, եռուն երակներն ու ծփացող դրօշները պիտի ձգէ Միպերիոյ  
ձիւնամրրիկներուն կամ հեռո՞ւ-հեռաւոր բրուտանոցներու բոցե-  
րու ն: Ու եթէ Երեւանի փոշիներուն սահմանուած կարօտներն ու  
կրակները քաղցրագին յուզումներ կ'առթեն, ձիւնամրրիկներուն  
զբհուած կրակները կը յուզեն անմարեի ողբերգութիւն մը  
Անցնիկք

«ՓՐԿԱՐԱՐ ՄԻ ԶԵՌՔ»...

Եւ ինչպէ՞ս այրող կարօտով տենչում եմ լինել գէթ մի  
անգամ վարազայ լերան պարզ ու խորունկ հայեացքի տակ փրո-  
լած աստուածաշնչական, հնամենի այն քաղաքում, նստել մեր հին

տան աւերակներին եւ ազատութիւն տալ արցունքներէս, ճիշտ այդպէս, ճիշտ այդպէս կ'ուզենայի՝ տեսնել քեզ, բրուտանոց: Դու հիմա չկաս, ինչպէս չկան հազարաւոր այն ճամբարները, հոգեւոր ու մարմնաւոր այն սպանդանոցները: Փրկարար մի ձեռք սրբեց մեր երկրի երեսից այդ ամօթը:

էջ 48

✍

«Մաղկած փշալարեր»ը գրուած է 1985ին, երբ 280 միլիոն բրնաշուքեան փայ իր շուրք ձգած էր Ստալինի նախկին համհարզներէն Նիկիտա խրուշչեւ, յետ ստալինեան ամառին տարիներու և գրոյն ց ցած համայնավար այն իշխանաւորը, որուն ձեռքը «փրկարար» կ'որակուի Մահարիի կողմէ, եւ ըստ իրեն դարձեալ՝ «ան սրբեց մեր երկրի երեսից» հոգեւոր ու մարմնաւոր սպանդանոցներ սարքած ըլլալու ստալինեան ամօթը:

Միպերիոյ տասը եւ ապա հինգ տարիներու ցուրտը ճաշակած մարդու մը կոյտին մէջ անտրամաբանական չէ համեմատական ազատութիւն մը շնորհած ու ձիւ նհալեան պատրանքներ ստեղծած խրուշչեւը «փրկարար ձեռք» յորջորջել, ատեն մը այդ պատրանքը համընդհանուր եղաւ նոյնիսկ, բաց պիտի չմտնանք, որ նոյն խրուշչեւն էր, որ հոգին հանեց «Ոչ միայն հացի» ի վէպին հեղինակ Տուտենցեւի ու հոգի չձգեց Պօրիս Փաթթերնարին, նոյն վերաբերու մենքով հոգեցնելով Խորհրդային արուեստագէտները Պիտի չմտնանք նոյնպէս, որ նոյն ձեռքով կատարուած էր Ուքրանիոյ մտաւորականներուն և սպանդը եւ նոյն իշխանաւորին հրահանգներով ու փրկա-



Սովետ պետական եւ կուսակցական գործիչ: Ծնած է 1894ին, Կալիանովսկի վարած է պատասխանատու քաղմաթիւ պաշտօններ 1953 Սեպտեմբերին եղած է Համամիութեանական առաջին քարտուղար, միաժամանակ միւստրներու նախագահ՝ 1958-64 Սեպտեմբերին գումարուած լիազումարը զինք կ'ազատէ իր բոլոր պաշտօններէն: Ծնած է 1971ին, Մոսկուա:

✉ ՆՆԿԻՏԱ ԽՐՈՒՇՉԵՎ

կան նոյն օրերու ն տեղի ունեցաւ Պուտափեշտի 200 հազար ազա-  
տատենչներու հրատայրային առաքուր ոչնչացումը

Այդ մասին խօսած են, կրնան խօսիլ ու միշտ պիտի խօսին ու-  
րիշներ, մեզի կը մնայ պարզապէս յիշեցնել որ «փրկարար ձեռք»ին  
օրով գրուած «Մաղկած փշալարեր»ը փշալարն էր էին միայն «Առվե-  
տական ազատ աշխարհ Հայաստան»ի մէջ, մնացին փուշն էր իշխա-  
նութիւններու արջին, եւ կրցան ծաղկիլ «փրկարար ձեռք»ին ձեռքէն  
ամէն բան խլուելէն շատ ետք միայն, այն ալ իր ամօթէն սրբուած երկ-  
րէն հեռո՞ւ տեղ մը, Սփիւոքի մէջ, առաջին հերթին «Նալիբի» շարա-  
թաթերթին էջերուն... իր «ամօթէն սրբուած» երկրին մէջ լոյսին ար-  
ժանանաթով գրատոււմէն 23 տարի ետք միայն, հրատարակայնու-  
թեան օրօք, 1988ին:

Իբր թէ «փրկարար ձեռքին» օրօք չկային հազարաւոր այն  
ճամբարները, հոգեւոր ու մարմնաւոր այն սպանդանոցները իբր թէ  
չկային, իբր թէ այդ «չկային»ներու ն օրով ու թուրումին ազատ պայ-  
մաններու մէջ գրեց իր գիրքերը Մահարի, ու փրկուելէն ետք ու ազատ  
պայմաններու մէջ ու թուրումին ազատ կամքով դրսեւորեց իր աշնա-  
նային սէրը, անդամազրուեցաւ... համայնապար կուսակցութեան:

Տեսանք շարժափթիւր, հետագային զգացած կորանքը նաեւ, ա-  
հա թէ ինչպէս իր խոստովանութեամբ—

«Անտոնինա, ես ուղղակի գծուեցի այդ կուսակցութեան ձեռքը: Ին-  
չիս էր պէտք: Անդամավճար տալո՞ւ համար: Կոմկուսն ինչպիսին եղել է,  
այնպիսին էլ մնացել է՝ արնախում, դաժան, ժողովուրդների շահագործիչ:  
Կուսակցութիւնը մարդկանց արիւնը թափել է եւ միլիոնների կործանել:  
Կուսակցութիւնը չեկիտների ձեռքով տանջել է մեզ: Ինչպէ՞ս կարող էի  
իմ դաճիճների հետ նոյն կուսակցութեան մէջ լինել: Ստալինն ու Բերիան  
եւս կուսակցութեան մէջ են: 2է՞ որ կուսակցութիւնն է ծնել այդ մարդա-  
կերներին ու սադիստներին: Ինչ մեծ սխալ գործեցի, եւ դու ետ չպահեցիր  
ի՞նձ: Հիմա այդ սեւ բիծն իմ կեանքից այլեւս չի ջնջուի» (Անտոնինա Մա-  
հարի, «Իմ ողբակներ», 1994, Անթիլիաս, էջ 156):

**«ՉՆՉԻՆ ԲԱՑԱՌՈՒԹԵԱՄԲ»...**

—...Ես աշխատում էի Թիֆլիսի պետական բանկում...  
—Այո՞, հաշուապահուէի...  
—Հաշուապահուէի:  
—Հիանալի,— բացազանչեց կուլաեւը,— հրաշալի է:  
—Հրաշալին վերջացաւ այն օրը, երբ իմ ամուսնուն զնդակա-  
հարեցին, իսկ ինձ... աւելի բաւ կը լինէր, եթէ ես բանուորուէի

լինէի Ձեզին բացառութեամբ՝ ինտելիգենցիան ճամբարներում ոտքի տակ է գնում: Երեւի նկատած կը լինէք:

Էջ 65

Ճ

Գնդակահարուած ամուսին, հայր, որդի, եղբայր ու բարեկամ ունեցող կամ գնդակահարութեան հաւանական սարսափը ատրած, հաշածուած, բանտարկուած բազմաթիւ անձնադրութիւններ տարբեր առաքելգ մը ընտրած չղլալու ցտըր ապրեցան համայնախոր տակաւ ապետութեան օրօք: Նման փորձատուութիւն մը արձանագրած է նոյնպէս Վահրամ Ալազան, Մահարիի լուսժողովումներէն մէկուն, քննադատ Պօղոս Մակինցեանի կապակցութեամբ, հետեւեալ պայմաններում մէջ—

«Մէկ այլ անգամ Ներքին բանտի թիւ 10 խցից մեզ մօտ բերին գիւղական մի ուսուցչի: Նա պատմեց, որ իրենց խցում են եղել նախկին լուսժողով, ճշմարտոր գրականագէտ Պօղոս Մակինցեանը եւ գրող Ակսել Բակունցը: Նա շատ հետաքրքիր դէպքեր պատմեց նրանց կենացից:

«Մի անգամ Պօղոս Մակինցեանը ծալապատիկ նստած իր անկիւնում, բարձրաձայն խորհրդածում էր.

— «Չէի ուզում ո՛չ այս ուսումը, ոչ էլ այս գիտութիւնը, անգրագէտ մի շոպան լինէի մեր լեռներում, բայց ազատ» («Գարուն», 1989, թիւ 3, էջ 33):

Բոլշևիկեան բանտին մէջ ու «արեգնացեալ կացին»ին տակ «անգրագէտ շոպան լինելու» բաղձանքներ յայտնած այս անձնատրութիւնը մէկն էր այն խումբէն, որ Հայաստանի մէջ կարմիր դրօշը



Ջենադատ, թարգմանիչ, հրապարակագիր ու պետական գործիչ: Ծնած է 1884ին, Գողթն գաւառի Ագուլիս գիւղաքաղաքը: Աւարտած է Մոսկուայի «Լազարեան» ճեմարանը եւ Մոսկուայի համալսարանի պատմաբանասիրական ճիւղը: Իրմէ լոյս ընծայում է «Դիմազծիք» անուն հատորը: Գնդակահարուած է 1938ին, Երեւան:

ՊՕՂՈՍ ՄԱԿԻՆՑԵԱՆ



ծածանել տալու համար՝ շրջադարձեց «կատարի պայքար Հայաստանի հանրապետության դէմ»: Լուրը մեծանուն պատմաբան ու բացեալ Լիկու Կարապետեանէն, թողցիկ յօդուածի մը մէջ հետաքրքրական է:—

«...Իրականում դաշնակցականները Հոկտեմբերը մերժել են իբրև գաղափարախօսութիւն, բայց ոչ որպէս պատմական իրողութիւն: Իրան որպէս ապացոյց կարող է ծառայել տակաւին 1918 թ. Ապրիլին բոլշեփիկ Մակիճցեանին Մոսկուա ուղարկելը, Սովետական Ռուսաստանից օգնութիւն հայցելու միսիայով, բայց որը Նոյի ազտաի դեր կատարեց, գնաց եւ այնու լուր չստացուեց. յետոյ իմացուց, որ նա Մոսկուայում աշխատանքի է անցել եւ սկսել է կատարի պայքար Հայաստանի Հանրապետութեան դէմ» (Ա. Վրացեան, «Վեանքի ուղիներով», 1967, էջ 336):

**«ՆՈՐԻՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԱՍԱԾԻ ՊԷՍ»...**

*Նման Հանդիպումների անպատճուածինն այն է, որ աշխատանքի աւարտից յետոյ՝ երբ բրիգադները գուրս են գալիս տարբեր դռներէց եւ առանձին-առանձին շարքի կանգնում, Աստծոյ լոյսի տակ նրանք գիտում են իրար եւ ոչ մի կերպ չեն կարող գուշակել կամ գտնել, թէ ո՞րն էր իրենց՝ նորից բանաստեղծի ասածի պէս՝ «Վերջինը թիրիմացաբար եւ միակը ճակատագրով...»: Այո՛:*

էջ 58



**ՊԱՐՈՑԻ ՍԵՒԱԿ**  
Բանաստեղծ, թարգմանիչ եւ բանասէր: Ծնած է 1924 ին, Չանգախչի: Մեռած է արկածով՝ 17 Տուցիս 1971 ին, Երեւան:

«Բանաստեղծի ասածը» կը գտնուի Պարոյր Սեւակի «Մարդը ափի մէջ» հատորի (1963) էջերուն վրայ եւ կը կազմէ «Գլխապտոյտ» բանաստեղծութեան առաջին երկու տողերը, միաժամանակ հանդիսանալով անոր հինգ հատուածներուն աւարտական կրկներգը.

Դու՛ իմ վերջինը՝ թիրիմացաբար,  
Եւ իմ միակը ճակատագրով... (էջ 24):

## ԱՋ ՈՒ ԶԱՆԹԵՔՈՒՄ...

Դոնրասցի ուսուցիչը, որը քաղաքականապէս կատարելապէս գրազէտ է, բացարձակ է, թէ ինչ է նշանակում աջ ու ձախ թերում, թէ որքան մարդիկ են զոհուել այդ թերումների պատճառով եւ որ միակ փրկութիւնը գլխաւոր գիծն է, որը տանում է անվրէպ դէպի յաղթանակ ու փրկութիւն:

էջ 77

✍

Մահարին է ըստը եւ ըստածը անշուշտ ճիշդ է: Իրապէս, որքան մարդիկ գոհ գացին աջ ու ձախ այդ թերումներուն հետեւանքով մանաւանդ աջ թերումին:

Այդպէս խարանուեցան, այսինքն՝ այդպէս յորջորջուեցան Ստալինի հաւաքական տնտեսութեան դէմ ծառայող դժգոհները, համալեւալար կուսակցութեան համարեալ լոյր մտածող տարրերը, որոնք կ'ուզէին «վերջ տալ գիղում տարուող կործանարար քաղաքակաւանութեան» («Դրօշակ», 1928, թիւ 9, էջ 176):

Այդ տեսակէտը պաշտպանող առաջին դէմքը Տրոցկին էր, որուն կը ձայնակցէին իրն Գվարդիայի անդամներէն Զենուֆիւ, Կամենեւ եւ ուրիշներ: Ստալին իրեն հետ ունենալով նոյն օրերուն նոյնպէս յայտնի դէմքերէն Բուխարինը, Ռիկովի, Տոմսկին եւ քանի մը համբաւուած այլ գործիչներ, կատարի պայքար մը մղեց աջ թերումով պիտակուած վերոյիշեալներուն դէմ ու ոչնչացուց թէ՛ անոնց գաղափարախօսները եւ թէ գաղափարախօսութիւնը:

Տրոցկիի եւ տրոցկիզմի դէմ սկսած դաժանութեան ակիբը շուտով տարածուեցաւ Խորհրդային թուր Ռաւապետութիւններուն մէջ, ընդ որս



Ռուս լեղափոխական, Լենինի գործակից, Կարմիր բանակի Տիմոսեւիչ եւ 1918-1925 թուականներուն կոմիսար Մենսէ 1879իւն:

Ներկուսակցական պայքարներու ընթացքին՝ իրեն հայրենիքի դաւաճան ու ժողովուրդի թշնամի ՅՕական թուականներուն հալածուեցաւ Ստալինի կողմէ եւ Խորհրդային Միութենէն արտաքսուեցաւ 1929իւն:

Ահաբեկուած է 1940իւն, Պրագիւ:

ԼԵՆ ՏՐՈՑԿԻ

և՛ Հայաստանի, որուն այդ օրերու անուանի տարրերը, հարիւրներով ու հազարներով, զոհ գացին, ըսինք արդէն, մա՛նաւանդ աչ թերութի ամբաստանութեամբ:

**Մէկն ալ Մահարին, Լորայայտ փաստաթուղթերուն վերաբերեալք**

**Չեկիտներ Ստեպանովի եւ Մուրդուսիի կողմէ տարբուած հարցաքննութեան մէկ երկխօսու թիւ նշ**

«ՀԱՄԾ.—Ներկայացուած մեղադրանքով ձեզ մեղադր ճանաչու՛մ էք:

«ՄԱՀԱՄԻ.—Ինձ մեղադր ճանաչում եմ նրանում, որ ժամանակին Հայաստանում ներքաշուելով գրողների հակախորհրդային աչ տրոցկիստական նացիոնալիստական կազմակերպութեան մէջ, մի քանի տարիների ընթացքում գաղափարական պայքար եմ տարել գրական ճակատում» («Գրական թերթ», 1990, թիւ 43):

**Ճնշման Լոյն պայմաններուն մէջ, Լոյնանման հարցումի մը Լոյնաւուման պատասխան մը տուած է Լաւե Մահարիէն հազարապատիկ առ Լիի դժբախտ Ակնել Բակոն նշ—**

«ԱԿՍՆԸ ԲԱԿՈՒՆԸ.—Իմ հայեացքներն այն ժամանակ մօտ էին աչքերի դիրքորոշմանը: Մօտադրապէս աչք ձեռով էին վերաբերում կողեկուսացմանը նաեւ մեր խմբի մնացած անդամները» («Հայք», 1 Մայիս 1991, թիւ 17):

**Աջ-տրոցկիստական պիտուկ մը փակցուած է Լոյնուլէս վախան Թոթովնեցի անու նին, Էւստելեզ պայմաններուն մէջ—**

«1937 Նոյեմբեր 2ին եւ Դեկտեմբեր 3ին նրան լրացուցիչ մեղադրանք ներկայացուեցաւ ըստ 63րդ յօդուածի, որպէս «անգլիական հետախուզութեան կողմից հաւաքագրուածի» եւ 58րդ յօդուածի 1ին կէտի որպէս հակայեղափոխական աջ-տրոցկիստական կազմակերպութեան անդամ» («Գրական թերթ», 1990, թիւ 46):

Երևույթին ընդհանրական բնոյթը առ Լիի շօշափելի ընծայելու համար, յիշել պէտք է Լաւե այն ութ դժբախտները որոնք Ամատունիի երոտակախմբին ոչնչացումէն 4 ամիս ետք, 25-28 Դեկտեմբեր 1937ին դատի քաշու եցան «Իբրեւ հակայեղափոխական աջ-տրոցկիստական դաշնակցական փառաբարական կազմակերպութեան անդամներ» եւ դատապարտու եցաւ զ նդակաժարութեան՝ «Վճիտը վերջնական է եւ բեկման ենթակայ չէ» կնիքով:

Ատնցմէ մէկը, բռնութեան տակ ինքզինք իբրեւ այդ անուանելէ եւ իր Եօթը բախտակիցները Լոյն մեղքին տակ առնելէ ետք, դատարանի նախագահի այն հարցումին, թէ «*ուզե՞ր էին Հայաստանի հակայեղափոխական աջ-տրոցկիստական-նացիոնալիստական կազմակերպութեան անդամները*», հին անմեղներն ու դաժիճները իրար խառնելով՝ կը սբտասխանէ,— «Տէր-Գաբրիէլեանը, Խանջեանը, Ստ. Ակոպովը, Գուլոյեանը, Ամատունին եւ ուրիշները» («Նորհրդային Հայաստան», 24 Դեկտեմբեր 1937):

Յտուկանշական է այդ փիլիսոփայութեան մէջ Մաշտոցի հերոսին ու նեցած ընտրութիւնը, թէ՛ «միակ փրկութիւնը գլխաւոր գիծն է, որը տանում է անվրէպ դէպի բողոքական ու փրկութիւն»:

Բռնութեան երկրին մէջ կեանքը երբեք այդ ընթացքը չուներ սակայն:

Ամենդէներ մահուան սպառնալիքներու տակ այժ թերու մով ամբաստանող եւ նախօրօք պատրաստուած փաստաթուղթերու ներքեւ անոնց ստորագրութիւնը արարահոփող անձերը որոշապէս որդեգրած էին փրկութեան այդ ճամբան՝ «գլխաւոր գիծը», բայց գլխաւոր գիծը երբեք փրկութիւն չէրու իրենց, եւ ամբաստանուեցան իրենց ձեւակերպած նոյն ամբաստանութիւններով, եւ հնձուեցաւ իրենց գործածած մանգաղներով: Ընդամէնը տար ամիս ետք այդպէս ջնջուեցան հրապարակէն «գլխաւոր գիծ»ի հերոսները՝ Ամատուհին, Մուղլուսին, Ակոպովը, Եղբայր Նիկողոսեանը եւ ասանց ստորագրած «կարմրաշառայը» միւս ենկերիները:

Արարի Նանչեանի յայտրդած համայնապար կու տակցութեան ատաջին բարտու դար Ամօ Ամատուհին եւ տք. պատմութիւնը կ'ըլտէ որ Թիֆլիսիւն կը բերուի փառցական կոմկուսին մաս կազմող «փառցացած» հայ մը: Գրիգոր Արուսիւնով եւ Մտաղիսի օրհնութեամբ ու հրովարտակով կը նշանակուի Տայաստանի համայնապար կու տակցութեան ատաջին բարտու դար:

Արուսիւնով իր կարգին, նոյն ամբաստանութեան տակ բարական մեծ թիւ մը մտաւորականներ հնձելէ ետք, նոյնիսկ տարի մը անց հանգչած չի թուի ըլլալ, ինչպէս ցոյց կու տան 1938 Յուլիսի սկիզբները իր կատարած արաստիագրու յարտարարութիւնները ի մասին փրոֆէսէորներու, եւ յտուկապէս «դաշնակ ֆաշիստ սպայ» Աշխարհբէկ Բալանթարին:

«Դուք բոլորը գիտէք, որ ժողովրդի թշնամիները յատկապէս ձգտում էին անբանալ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում, իրենց քայքայիչ վնասարարական աշխատանքը կատարելու համար: Դասաւանդ-



Հնագէտ ու դասախօս Աշխարհբէկ Բալանթար ծնած է 1884ին, Թումանեանի շրջանի Արդուի գիւղը: Աւարտած է Թիֆլիսի «Ներսիսեան» վարժարանը ու Թիֆլիսի Յրդ արական գիմնազիան: Հետեւած է նոյնպէս Փեթերպուրկի համալսարանի արեւելեան լեզուներու ճիւղին: Մասնակցած է պեղումներու Հեղինակ է շարք մը հնագիտական ուսումնասիրութիւններու իր գործունէութիւնը ընդհատուած է 1937ին: Մեռած է Սիպերիոյ անյայտ մէկ անկիւնը:  
Պ ԱՇԽԱՐՀԲԵԿ ԲԱԼԱՆԹԱՐ

ման ասպարեզում նրանք յատկապէս զգալի վնաս հասցրին Պետական համալսարանին: Ստեղծուել էր «պրոֆեսորների» մի կասուս, ձեզ յայտնի դաշնակ-ֆաշիստ սպայ Աշխարհբեկ Քալանթարի ղեկավարութեամբ, որը հասաքել էր մի խուժը շովինիստների եւ հակախորհրդային աշխատանք էր կատարում պետ-համալսարանում» («Խորհրդային Հայաստան», 5 Յունիս 1938):

Պետական համալսարանին մէջ դաշնակ-ֆաշիստներ որսաբու ելած դրածոն չէ մոռցած իր դժգոհութիւնը յայտնել նոյնպէս գրողներու մտաքորդացին կտպակցութեամբ եւ նոյն տարւոյն Յուլիս 12 կայացած համագումարին յայտարարած, թէ՛

«Ճաշիզմը աջ-տրոցկիստական ու դաշնակցական գործակալների մերկացումից յետոյ, գրողների Միութիւնը մինչեւ այժմ չի արել համապատասխան հետեւողութիւններ եւ չի վերակառուցել իր աշխատանքները»:

Ասիկա պարզապէս կը նշանակէր, թէ Ամատունին եւ միւսները պրանաւորում էին նաեւ իր չէն կտատարած ու ամբաստանութեան չենթարկուողները թող պատրաստ լլլան ընդունելու... «տրեզնացեալ կացինը»:

Լեզուով ու հոգիով «վիացացած» հայուն պէս, ինչպէս կը յիշէ ընթերցողը, ահաբեկիչ յայտարարութիւն մը ըլլած էր նոյնպէս հոգիով ու սացած հայը Անատոս Միկոյեան Տեւէր.

«Հայկական ԽՍՀՄ զարգանում է արագօրէն, նա կը կարողանար էլ աւելի արագ, եթէ նրա զարգացումը չարգելակէին հայ ժողովրդի թշնամիները — դաշնակները, տրոցկիստական-քոլխարհնական վնասարարները, որոնց բունն արդէն հիմնականում ջախջախուած է, բայց թափփուկները որոշ տեղերում դեռ մնացել են եւ նրանց հարկատր է արմատախիւ անել ու անողորմաբար ոչնչացնել, որպէսզի հնարատր լինի անարգել առաջ գրեալ դէպի նորանոր յաղթանակներ» («Խորհրդային Հայաստան», 10 Դեկտեմբեր 1937):

Ընթերցողը դէռ առիթ կ'ուներ նայ հաւոյ իպէզու տտալինեան նոր գործակալ Գրիգոր Արութիւնովին, իսկ հին գործակալ Անատոս Միկոյեանին՝ քանի մը անգամ, մէկը՝ անմիջապէս.

**«ՄԵՑ ԶԻՄԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇԻՉԱՆ»**

*Ոչինչ չկայ կայուն, որովհետեւ չկայ օրէնք ու օրինականութիւն... ուզածդ բոլորէն ինձ էլ կարող են քաղաքական դարձնել եւ տալ տասից մինչեւ քսանհինգ տարի, էլ չեմ ասում, որ կարող են թրեկացնել: Մէկ էլ տեսար ձեզ բաց թողին որպէս անմեղ զոհերի... Մեծ քիմիայի ժամանակաշրջան է, մի օրում մարդուն կարող են աղբի վերածել կամ աղբը դարձնել մարդ...*

էջ 89



Սոփեա պետական եւ կուսակցական գործիչ: Ծնած է 1895ին, Սանահին: Աւարտած է Թիֆլիսի «Ներսիսեան» դպրոցը, ապա հետեւած է Էջմիածնի «Գեորգեան» ճեմարանի դասընթացներուն: Վարած է կուսակցական ու պետական զանազան պաշտօններ: Մեռած է 1978ին, Մոսկուա:

Պ ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՑԵԱՆ

Ճ

Գուրգէն Մահարի իր անձնական փորձառութեամբ ձեռնկերպած է արդեօք «քիմիայի ժամանակաշրջան»ը, թէ ուրիշ փորձառուներէ իմացած է նոյն փոխաճանաչումը: Դժուար է պնդել հարցին մէկ կամ միւս երեսին փութ: Կարելի է տուրքասցէս լսել տակոյն, որ արեւմտեան աշխարհի մէջ անձանօք չէր աղբային նոյն քիմիայիտութիւնը: Անոնցմէ մէկը ծանօթ է նոյնպէս հայ մարդու և, հետեւեալը.

«Խորհրդային Միութեան մէջ ամենանշանատր քիմիկոսը Ստալինն է: Նա կարող է մարդուն վերածել աղբի, ինչպէս վարուեց Տրոցկու վերաբերմամբ, բայց աղբից էլ կարող է մարդ շինել, ինչպէս արու Միկոյեանին («Գրոշակ», 1931, թիւ 12, էջ 318):

#### «ՆՐԱՆՔ ԶԿԱՆ ՀԻՄԱ»...

Բայց ահա իմ ականջին, ուղեղում կամ գուցէ սրտում հնչեց չորս տող՝ ընդամէնը չորս տող: Այդ չորս տողը պատկանում է իմ ուսուցչին՝ ընդամէնը երկու բարեկամներից մէկի դրչին: Նրանք չկան հիմա: Իմ ուսուցիչը մահացաւ դաժան մահով, բանտում, իսկ միւսին գնդակահարեցին Երեւանի մօտ գտնուող Թոխմախան լիճ կոչուած վայրում:

էջ 95



Մեծարուած ու առօրէր, որ բանտին մէջ մահացաւ դաժան մահով Չարենցն է, իսկ Մահարիի ակաւնջին, «նուրբում կամ գուցէ սքրտում» հեղած բառատողը ու նի սա տեսը—

Հորը դու ես տարու,  
Քո սիրտը պէտք է տայ.  
Թէ հոր գտնես կեանքում,  
Գիտցի՛ր, քո հորն է դա:

Կ'ըսուի, թէ կարճ բանաստեղծութեան մը վերջին տողերն են ասոնք ու ամբողջութիւնը որեւէ տեղ չէ տպուած, որովհետեւ բանաստեղծը գիշեր մը գայն այրեց «ուրիշ շատ երգերի եւ գազելների հետ»: Բանաստեղծական շարքեր այրած ըլլալու արձանագրութիւն մը ու նի նաեւ ինք, Եղիշ Չարենց, «Էպիքական լուսարաց» հատորին մէջ, խորագիրը՝ «Այրած երգեր»: Վերջին բառատողը.

Երբ դարերից քո ձայնը այն երեկոյ — հանգիստ  
Ես շոյեցի ճակատս ու վառեցի կրակ,  
Եւ յանձնելով իմ կեանքը հերոսական կամքիդ՝  
Ես այրեցի երգերըս մի երեկոյ գրած—  
.....

1929

Մահարիի երկու («ընդամէնը») բարեկամներէ ն մի տը Ակսել Բակունցն է անտարակոյս եւ ուշադրաւ է Բակունցի գնդակահարութեան պարագան, որ, «Մահկան փշալարեր» վիպակին համաձայն, տեղի ունեցած է «Երեւանի մօտ գտնուող թոխմախան լիճ կոչուած վայրում»:

Անշուշտ, կարելի չէ իր գրական բարեկամներուն կենսագրութեան մասին Մահարիի ունեցած ծանօթութիւնները կամկածի տակ դնել, բայց կան Բակունցի գնդակահարութեան վայրին մասին ու-

Գրագէտ, թարգմանիչ եւ զիտատնետ Մեծ է 13 Յունիս 1899ին, Գորիս 1910ին կ'աւարտէ տեղւոյն ծխական դպրոցը եւ նոյն թուականին կ'ընդունուի «Գեորգեան» ճեմարան 1917-18ին կը մասնակցի Ալաշկերտի, Բլիշայի, Արտառնի կորիւնրուն եւ Սարդարապատի հերոսամարտին 1923ին կ'աւարտէ Խարկովի զիտատնետական ինստիտուտը: Կը վարէ տնտեսական եւ թղթակիցի զանազան պաշտօններ: Գնդակահարուած է 18 Յունիս 1937ին, Երեւան:



ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆԵՑ  
digitised by A.R.A.R.®

րիչ տարբերակներ, որոնց վառ երականութիւնը հաւաստող անձեր չեն պակասիր նոյնիսկ բաւրու նցագէտներու և շարքին: Վարդերէն մէկը՝ նշումով է հետքայլէ Իշխանեանի «Բակու նցի կեանքի վերջին տարին» անու և գրութեան մէջ:

«1977 թ. գրականագէտ Ա. Սողոմոնեանը տողերիս հեղինակին ասաց. «Իսկ գիտես, որ Բակունցին գնդակահարել են Ջանգուի ձորում: Ես դա հաստատ եմ իմացել»: Երկու տարի անց, գրականագէտ Ծաւարշ Մուղնեցեանը մեզ պատմեց հետեւեալը. «Ընկերոջս հետ «Այլ առազաստ» սրճարանում նստած էի: Մեր սեղանին մօտեցաւ մի ոռու տարեց մարդ՝ Երեւանի «Վոմուհիսա» ռուսերէն թերթը ձեռքին: Հարցրեց.

— «Կարելի՞ է նստել:

— «Ի՞նչ հարկէ:

«Քիչ անց բացեց թերթը եւ ցոյց տուեց Բակունցի նկարը՝ յորելանական յօդուածով: Ու պատմեց.

«— Ես Դնեարմաթիւնակից եմ, 1937 թուին ծառայում էի այստեղ՝ Երեւանում, ներքին գործերի գործերում: Ամառուայ մի գիշեր մեզ ասացին, որ պէտք է կազմակերպուին տամենք գնդակահարութեան՝ գրող: Այսօր առաւօտ այս թերթն առայ եւ, տեսնելով այս նկարը, իսկոյն ճանաչեցի, որ այս մարդուն ենք տարել: Նրան իջեցրինք Ջանգու գետի ձորը: Այնտեղ բար տուեցինք, որ փոս փորի: Նա բաճկոնը կախեց ծառի ճիւղից եւ սկսեց փորել: Երբ մեր ասած չափով փոսը փորուած էր, մենք նրան յայտնեցինք, որ գնդակահարելու ենք ու հարցրինք՝ «Ո՞րն է ձեր վերջին ցանկութիւնը»: Նա ասաց. «Մի ծխախոտ տուէք»: Մախորկան փաթաթեցինք լրագրի թերթիկի մէջ, տուեցինք իրեն: Ակսեց ծխել: Երբ գլանակը վերջանում էր, գետնից երկու ծոցով վերցրեց եւ ծխախոտի մնացորդը դրանցով պահած շարունակեց ծխել: Երեւի ուզում էր կեանքը մի քանի վայրկեանով էլ երկարացնել: Երբ վերջացաւ ծխախոտը, առաջարկեցինք աչքերին շոր կապել: Հրաժարուեց: Այդպէս էլ նրան գնդակահարեցինք եւ թաղեցինք իր փորած փոսում: Այսօր ես, երբ թերթում տեսայ նրա նկարը եւ կարողացի յօդուածը, իջայ նոյն ձորը: Փորձեցի փնտռել այն տեղը, բայց ապարդիւն՝ ձորը շատ է փոխաւած» («Գական թերթ», 1988, թիւ 44):

Ըստ Գուրգէն Մահարիի, ուրեմն, Բակու նցը գնդակահարուած է «Թոխմախան լիճ կողում վայրում», որ կը գտնուի Երեւանի մօտ, ու ըստ ոռու գործակալին՝ Ջանգուի ձորը, որ կը գտնուի Երեւանի մէջ՝ Երկու վարդերն ալ ճիշդ չեն կրնար ըլլաք: Ո՞րն է սակայն ճիշդը—

#### «ՆՐԱՆՑԻՑ ՄԷՎԸ»...

...Այո, կային ծանօթներ: Նրանցից մէկը յատկապէս ինձ զարմացրեց իր ներկայութեամբ. ով՞ ով, յամենայնդէպս, նա դրսուով պիտի լինէր եւ ոչ ներսուով: Դա մի փելիստփայ էր, որը մի քանի



անգամ երեւաց գրողների տանը, բեմում ու ուղղափառ ճառեր ճամարտակեց մեր դէմ, հանդիսանալով մեր հակառակորդների ձայնափողը:

—Մկ, ե՛կ նստիր... ոչինչ մի հարցնի, իմ ընկերներն ինձ դաւաճանեցին,— ասաց նա ինձ:

Ու ես նստեցի, ոչինչ չհարցրի: Ըստ ոչինչ չհարցրի, որովհետեւ քաջ գիտէի նրա ընկերներին, նրանք գիտէին եւ դաւել, եւ դաւաճանել:

էջ 105



Ի դէմս «մեր» դերանունին պէտք է հասկնայ Զարենցի, Բակունցի, Մահարիի եւ Մկրտիչ Արմէնի գրական խմբակը, որոնք երդուեալ հակառակորդները կը հանդիսանային բանտոտեղծներէն՝ Ազատ Վշտունի եւ Նայիրի Զարեան, եւ տեսարաններէն՝ Գուրգէն Վանանդեցի, Նորայր Դարբասեան եւ Հայկ Գեու լիբեյիսեան՝ յիշելու համար ամէնէն ետեւելու և մարքսիստ-լենինիստ-ստալինիստներէ:

—«Այ տղերք,— կ'ըսէ Զարենց,— մենք տեսարաններ չունենք, նրանք ունեն, լա թէ վատ՝ Վանանդեցի, Դարբասեան. Գեույին էլ նրանցն է» (Վաղարշակ Նորենց, «Յուշեր եւ արձագանգներ», 1989, էջ 105):

Որքան գիտենք, Նորայր Դարբասեանը բանտ չնետուեցաւ, իսկ Վանանդեցին՝ բանաստեղծներ Մահարիի, Նորենցի ու Ալազանի «կամերային» մէջ չէր քսուեր իր մեղքը: Կը մնայ եզրակացնել, որ Մահարիի բանտակից փիլիսոփան Գեույին էր, Հայկ Գեու լիբեյիսեանը, որ «ուղղափառ ճառեր արտասանեց մեր դէմ, հանդիսանալով մեր հակառակորդների ձայնափողը»:

Գեու լիբեյիսեանի ուղղափառ ճառերէն մէկուն մասին գանգատ մը արձանագրած է նոյնպէս Մահարիի աւագ ընկերը, Ակսել Բակունց.

«Երբ երոյթ ունեցաւ Հ. Գեույիքեյիսեանը եւ փորձ արեց ապացուցելու, որ ես եմ «ձախը», ոսպակականը, գիւրդիկիստը, ես միայն ծիծաղեցի, նկատելով, որ ընկերների մի խումբ նպատակ են դրել ինձ մեղադրելու մահացու բոլոր մեղքերի մէջ, վարկաբեկելու համար («Գրական թերթ», 1989, թիւ 27):



Գրականագետ, փրոֆեսոր, հասարակական գործիչ Մնած է Յ Յունուար 1886ին, Օուշի նախակրթութիւնը տեղոյն ռեալական դպրոցին մէջ ստանալէ ետք, կը մեկնի Գերմանիա եւ Ենայի եւ Լայպցիկի համալսարաններուն մէջ կը հետեւի փիլիսոփայութեան եւ գրականութեան դասընթացներուն: Հետեւած է նաև Յիրիխի եւ Հայդելբերգի համալսարաններու փիլիսոփայութեան ճիւղին: Ունի շարք մը ուսումնասիրութիւններ: Մեռած է 29 Սեպտեմբեր 1951ին, Երևան:

☛ ՀԱՅ ԳԵՈՒԼԻՏԻՍՏԵԱՆ

Գուրգէն Մահարիի եւ Ալսեյ Բալուսցի տպաւորութիւններէն ետք, աւելի լաւ ճանչնալու համար ենթական, հարկ է թելելս ուշադրութեան յանձնել նաև Գեուլիքելիտեանի մասին գրած Չարեւցի էպիկրամը:

#### «ՆԱ»

Աւարտել է նա եօթը դասարան,  
Եղել է յետոյ արտասահմանում,  
Գրել է կեանքում մի յօդուած միայն—  
Եւ ընճադատ է նա հիմա մեզանում:  
Չորս լեզուներ եւ քազմաթի գրքեր

Նիրճում են հիմա նրա սեղանին,  
Բայց կարդում է նա «Գրական դիրքեր»  
Ու գովք է ասում նա Ալազանին,—  
Եւ գոհ է հիմա ինքը իրանից,  
Եւ գոհ են մարդիկ հիմա նրանից:

1928

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

Հայկ Գեուլիքելիտեանին բնաւորութեան բացասական գիծերուն մասին ուրիշ վկայութիւններ չեն պակսիր, բայց այսքանը համարենք բաւարար:

Թէ Հայկ Գեուլիքելիտեան դաւ աճաւու եցաւ իր հերթին՝ կասկածէ դուրս է: Նետու եցաւ նաեւ բանտ: Դարդանք:

«1939 թ. Յունիսին Մոսկուա է մեկնել Հայկ Գեուլիքելիտեանի դուստրը, իր հետ տանելով մի խնդրագիր՝ հօրը ազատելու մասին: Աս ընկնում է գլխատր գինորական դատախազի օգնական ոսն Գեուլեցեանի մօտ, որ եղել է շուշեցի» («Գրական թերթ», 1980, թիւ 41):

Մտուզաւելս երբ ազատութիւն շնորհու եցաւ Հայկ Գիլիքելիտեանին, կ'անգիտանանք, բայց գիտենք, որ ապրեցաւ մինչեւ 29 Սեպտեմբեր 1951:

digitised by A.R.A.R.@

**«ՍՍ.ՅԱԹ-ՆՈՎԻ ՔԱՄԱՆՉԻ ՆՄԱՆ»...**

*Բանտարկեալի օրեր, բանտարկեալի օրեր: Երկու տարի եւ ապրեցի թիւ 12 ընդհանուր բանտասենեակում, որին մենք դեռ-ժինգրադ անունով կոչեցինք: Երկու տարուայ ընթացքում Սայաթ-Նովի քամանչի նման շատ բան տեսաւ դեռժինգրադը:*

էջ 105



Նայրանդեանի փտորցի նորակառոյց բանտի խուցերը շատ բան տեսան, անշո՛ղջ, իսկ քիչ բան չտեսաւ ի՛նքը, թիւ 12 «խորանիստ» նկուղի բնակիչ Գուրգէն Մահարի, աւելի՛ շատ, քան Սայաթ-Նովայի քամանչան, ու տխուր պիտի խնդացնող քամանչային հակադրարար պիտի արիւնտղ սրտեր միայն, գնդակահարութեան կամ արտոյրի համար դուրս տարուողներ, բողոքովին յերիւրածոյ պատճառներով ներս բերուող սարսափահարներ, «նման շատ բան տեսաւ դեռժինգրադը»:

**«ՆԱԽԿԻՆ ԲԱՆՏԱՊԵՏՇ»...**

*Դուռն ազմուկով բացուեց եւ ամառնային համազգեստով ներս մտաւ բանտապետն այս անգամ առանց պահակի ուղեկցութեան: Մի քանիսը ոտքի կանգնեցին, իսկ մեծ մասը միայն անհանգըստացաւ: Աւելի մօտիկ նստածները ոտքի թռան, բայց ոչ ըստ բանտային ներքին կանոնադրութեան: Առաջին բանը, որ նկատեցին նրանք, այն էր, որ բանտապետը զօտի չունէր եւ չունէր բանտապետի իր խրոխտ արտայայտութիւնը: Նա անվճռական մի քայլ կատարեց դէպի առաջ, բայց քաշելու տեղ չգտնելով, կանգուն մը նաց՝ դռնից մի քիչ հեռու դրուած թիթեղէ այն մեծ ամանի մօտ, ուր կայանաւորներն իրենց փոքր կարիքն էին հոգում: Առաջինն ուշքի եկաւ լենինականցի նշանաւոր իրաւաբանը: Նա իր խռպոտ բասով հարցրեց.*

*— Էներթը քե՞զ հասաւ:*

*— Այո, — պատասխանեց նախկին բանտապետը, — Գեպէուն ամբողջ կազմով նստեց, աւագ քենիչն ինքնասպանութիւն գործեց: Գեպէուն պետական անվտանգութեան վարչութիւնն էր:*

էջ 106



1937 Սեպտեմբերի կեսերուն, Ստալին Հայաստան անաբեց յանձնախումբ մը, որուն մաս կը կազմէին Անաստաս Միկոյեան, Մալենկով եւ ուղղակի լռնապետին կողմէ դատախարակուած այլ անձինք Հազի տեղ հասած, Ստալինի այդ կամակատարները կը կատարեն ստացուած պատուէրները, ձերբակալել կու տան Աղաւի Խանջեանի սպանութենէն ետք իշխանութեան զրոյս բերուած Ամօ Ամատունին եւ Լաւրենտի Բերիայի հարաստանեան միւս գործակալները Ակոպովը, Մուրդուսին, Սահակ Ասլանովը, Եղապր Նիկողոսեանը եւ միւսները

«Մազկած փշալարեր» գործին մէջ «հիւրընկալուած» այդ խումբին մաս կազմած բանտապետը Սահակ Ասլանովն է, որուն բանտարկութեան ի լուր բանտարկեալ բանաստեղծ Վահրամ Ալազան կը գրէ.

«Այս լսելով՝ հոգիս փառաորոտեց եւ հանգստացաւ: «Վերջապէս մի գազան եւս տապալուեց,— ասացի ուրախացած:

«Նա խցում հպարտացել էր, թէ ինքը անձամբ գնդակահարել է Ներսիկ Ստեփանեանին, Դրաստամատ Տէր-Սիմոնեանին եւ Ակսել Բակունցին» («Գարուն», 1989, թի 3, էջ 33):

Ամօ Ամատունիի վարչախումբին ամէնէն անհոգին ու արիւնարբուն սակայն տխրահոշակ Մուրդուսին էր, որուն վախճանին մասին նոյն շրջանը մանրակրկիտ ու առմնաւորութեան ենթարկող քննադատ Դաւիթ Գասպարեան կը գրէ.

«Նոյն օրը՝ Սեպտեմբեր 14ին ձերբակալուած են Մուրդուսին, Գեորգովը, Նիկողոսեանը, ապա եւ՝ միւսները: Մուրդուսուն «ոչ մի մեղադրանք» չի ներկայացուած եւ նա յատուկ կարգով գնդակահարուած է 1937 թ. Նոյեմբերի 22ին: Մեղադրանք չի ներկայացուած, որովհետեւ նա ամբողջովին մեղքերի կծիկ էր եւ «յատուկ կարգով» գնդակահարելը դա է նշանակում» («Գրական թերթ», 1990, թի 46):



Ե՛ւան է 1893ին, Երևան Եանահօի Նախիջեան քաղաքը: Երկու տարի կը յանախէ հայկական ծխական դպրոցը, ապա՝ քաղաքային ուսումնարան, ուր կը ծանօթանայ ոուսերէն լեզուին Ատեն մը Թոստովի մէջ կը հետեւի հաշտապահութեան: 1917ին կը զինուորագրուի ցարական բանակին, իսկ կարմիրներուն յաղթանակէն ետք կը մտնէ անոնց ծառայութեան մէջ ու կը դառնայ չեկիստ 30ական բուականներուն Հայաստանի մէջ ծառայամտութեան ծայրագոյն չափով մը կը կատարէ Ստալինի եւ Բերիայի արհմտա պատուէրները... Կը գնդակահարուի 1938ին, Երևան:

ՊՍԱ.2ԻԿ ՄՈՒՂԳՈՒՄԻ

Բանտ նետուած նախկին բանտապետին երեսու մով տոնո՞րըւած պաշտկումին հետ կը ստեղծուի նոյնքան զօրաւոր ուրիշ ապրում մը բանտարկեալներուն սրտին, լաւատեսութիւն մը՝ իրենց հաշուոյն, հետեւեալ պարբերութեան ու յաջորդներուն մէջ.

**«ՆԱԽԿԻՆ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԸ»...**

*—Մեռնեմ օրէնքին,— հպատակուեց նախկինը։  
Նրանից մենք շատ բան իմացանք։ Նորեկ կալանաւորներից մենք լսել էինք, որ նախկին լուսժողկոմը եւ նրա խմբակի անդամները ոչնչացուած են առանց դատ ու դատաստանի, նրանց հետ նաեւ «խեղճ նախիրցիներ»։ Նախկինը հաստատեց այս իրողութիւնը։ Նա մասնակցել էր այս «ապերացիային», ինչպէս ինքն էր ասում, այսինքն՝ գործողութեանը Պատմեց նաեւ, որ զնդակահարուելուց առաջ նախկին լուսժողկոմն ամբողջ կոկորդով գողացել է։  
—Մենք դեռ կը գանք... կեցցէ Լենինի կուսակցութիւնը։*

էջ 107



Վերի պատկերին մէջ կան երկու «նախկիններ», որոնցմէ առաջինը պետական անվտանգութեան վարչութեան հաւատարիմ Սահակ Աղաւնովն է, Ամօ Ամատու նիի փարչախումբին մարդատեաց բանտապետը, իսկ նախկին լուսժողկոմը, ամենայն հաւանականութեամբ, 1937 չոկտեմբերին Արսօ Եղիազարեանին յաջորդած Լեւոն Արիսեանն է, աւելի հաւանականը յիշեալ երկուքէն առաջ լուսժողկոմի պաշտօններ վարած հին համայնաւար Պօղոս Մակինցեանը, որ թէ եւ չենք գիտեր ուր ենթարկուեցաւ Սահակ Աղաւնովի կամ ուրիշ դահիճի մը «ապերացիային», բաց տարակոյս՝ դուրս է, թէ կրնար ըսել «Մենք դեռ կը գանք», կամ նոյն վտահոլութեամբ պոռար. «Կեցցէ Լենինի կուսակցութիւնը»։

Յայտնի չէ, թէ ի դէմս «մենք դեռ կը գանք» բառերուն գրագէտ Մահարի լուսժողկոմի համոզմունքով մը կ'ուզէ ընդգծել, թէ ցոյցի հանելաւոր սանձարձակ միամտութիւնը մէկ բան յառակ է տակայն, այն՝ որ մարդիկ, անոնց մէջ նաեւ կարգ մը սրբութիւններ տակնու վրայ ըրած ու արեղեան ուղղադրութիւնը պետական հրովարտակով պարտադրել տուած Պօղոս Մակինցեան, ստեն մը հաւատացին Լենինի կուսակցութեան, նոյնիսկ բանաստեղծները՝ իր հաւատացին, մինչեւ անգամ բանաստեղծներուն ամէնէն տաղանդաւորը հաւատաց, Զարենց, որուն մէկ «մարգարտութեան» առիթով հայրենի յօդուածագիրներէն Ն. Ենգիբարեան կը գրէր.

*«Այլեւս չի իրականացայ նաեւ մեծ Զարենցի տողերը».*

Դեռ կը գայ Իւնչը,  
Որ մտնի Բամաշխարհայից սովնարկում...։

«Մ'չ կը գայ, ո՛չ էլ կը մտնի: Պատմութիւնը տապալում է շատ կուռքեր, սրբագրում սխալներ: Բայց Չարեանցի տողերը պէտք չէ քննել: Ձեռն էլ քննուի: Ձե՞ որ մենք կարդում ենք բանաստեղծութիւնը եւ մարդկայնօրէն յուզում այն բանից, թէ ինչպէս էր «այն ժամանակուայ մարդը» սխալում» («Գործ», 1990 Դեկտեմբեր):

Իրապէ՛ս:

Ինչպէ՛ս էր սխալում:

Ինչպէ՛ս էից սխալում...։

Բայց միայն «ա՛յն ժամանակուայ» մարդն էր սխալում...։

#### «ՈՒՐԵՄՆ»...

—Դու ի՛նչ է, ուզում ես ասել, որ նա տեղեա՛կ է այս բոլոր խայտառակութիւններին,— Հարցրեց նա եւ շարունակեց,— մենք այդ կարծիքին չենք: Մի օր կ'իմանայ նա, թէ ի՛նչ է կատարւում տեղերում եւ այն ժամանակ ցոյց կը տայ, ով է ժողովրդի թշնամին՝ մե՛նք, թէ նրանք, որոնք մեր գլխին խաղացին այս խաղը: Դու ասում ես, որ Գեպէ՛ուի կազմը բռնուած է... ուրիշ կերպ չէր կարող լինել, ուրեմն... Ուրեմն մեզ բաց կը թողնեն...։

—Լաւ, լաւ,— ասաց նախկին բանտապետը,— դու կաց այդ խելփին:

էջ 108

Ճ

«Ուրեմն մեզ բաց կը թողնեն»...

«Մովը ինկողը օձին կը փաթթուի» կ'ըսեն:

«Խորհրդաւ որ տան» մէջ «բաց թողնուելու» յոյսեր փայփայողները այն համոզումը ունէին հաւանաբար, որ գիրենք հոն թիումած օձերը բացառաբար մէկ խումբ են ու զանոնք «նստեցնողները»՝ արդարութեան առաքեալներ, եւ չէին կրնար անդրադառնալ, որ անոնք, այդ Միկոյեան-Մալինկով կոչուած նստեցնողները ճամբայ հանուած էին հին նստողներուն փայ նորեր գումարելու պաշտօնով միայն «Գեպէ՛ու ն», հասկնալի է անշուշտ, Լաւրենտի Բերիայի հարստանեան թիւ մէկ գործակալ Խաչիկ Մուդրուսին էր եւ իր «բանդան», որուն գլուխը կը գտնուէր կուսակցական նուիրապետութեան մէջ Խանջեանին յաջորդած Անօ Ամատունին: Գեպէ՛ուի կազմին բանտարկութեան ի լուր բոլոր բանտարկեալները տողորում էին Մահարիին դրսևտրած վերոյիջեալ միամիտ լաւատեսութեամբ:

digitised by A.R.A.R.@



Խմբագրութեան արամադրութեան տակ գանդ-  
 ան թուղթերուն մէջ գուր անցան Անօ Ամատունի  
 ծախն կենսագրական չոր տեղեկութիւններ փոխ-  
 տելու մեր ճիգերը «Հայկական Համայնագիտա-  
 րան»ի Ամատունիներու շարքին նոյնիսկ անոր  
 անունը չէ յիշատակուած: Ենթակա տեսութեան  
 մէջ ցրուած հատուկտոր տեղեկութիւնները ամփո-  
 փելով՝ ընթերցողը կրնայ պատկերացնել անոր  
 կեանքին վերջին երկու տարիները միայն: 1938  
 Յունիսի կէտերէն մինչեւ 1938 Յուլիս կրկարող,  
 յամենայնի որքերգական տարիներ, առաջինը ու-  
 թիշներու հաշուոյն, երկրորդը՝ իր...  
 Պ ԱՄՓ ԱՄԱՏՈՒՆԻ

**Վահրամ Ալազան կը պատմէ.**

«Ամատունի-Ակրայով-Մուղղուսի բանդային ձերբակալումից յետոյ ես  
 հաստատացած էի, որ մենք՝ բանտարկուած գրողներս, տուն կը վերադառնանք,  
 բայց, առ՞ո՞ղ, իմ հաստող խորտակուեց, այն տեղի չունեցաւ» («Փարուն»,  
 1989, թիւ 2, էջ 31):

Կարճ ժամանակ մը առաջ ամենագոր դարձած, դարձուած,  
 թերթերու խմբագրականներով ու առանձին անձերու բերնով  
 փառաբանուած Անօ Ամատունիին, ա՛ն՝ որուն «ամէնօրեայ եւ յա-  
 մառ աշխատանքի շնորհիւ լուսաւորութեան ֆրոնտն եւս մաք-  
 րուեց հակախղափոխական նացիոնալիստական տարրերից», ունե-  
 ցաւ տա վախճանը:

«1938 թ. Յուլիսի 28ին Մոսկուա քաղաքում սկսուեց ԽՍՀՄ Գերա-  
 գոյն դատարանի զինուորական կոլեգիայի դատական փակ նիստը, որը  
 տեւեց 20 րոպէ. Ամատունիին դատապարտուեց գնդակահարութեան, դա-  
 տավճիռն ի կատար ածուեց անմիջապէս» («Փարուն», 1991, թիւ 5, էջ  
 52):

Այս խումբին ձերբակալութիւնը, ապա բանտարկութիւնը,  
 հուսկ ապա գնդակահարութիւնը իրագործած է, ինչպէս անգամ մը  
 յիշուեցաւ, Մոսկուայէն եկած յատուկ յանձնախումբ մը, եւ յանձնա-  
 խումբի անդամներէն մէկը՝ Անատոսու Միկոյեան:

Յարմարուողական աննախանձէլի կարողութեամբ օժտուած  
 այս տաղիւնականը հայաստան արջուած քարդարարներուն մէջ  
 հանդիսացաւ ամէնէն եռանդուններէն մէկը, ա՛նգամ շերկնչկով  
 ստալինահաճ իր այդ հերոսութեան մասին պարբերաբար ուղղա-  
 փառ յարտարարութիւններ ընել գործածելով այն օրերու համայնա-  
 վար զինանոցին պատրաստի բառամթերքը:

«Ջախջախման» գործին մէջ իր մատուցած այդ ծառայութեան  
 համար, «խորհրդային Հայաստան» օրաթերթը գովառանակման յոյ-  
 ւածներ պշտայեց Միկոյեանին, որ «Հանճարեղ առաջնորդի ցու-

ցումներով՝ ջախջախել ու հողմացրիւ է արել հայ ժողովրդի ամենակատարի թշնամիներ՝ Ամատունու, Ակոսպովի, Մուղղուսու, Գուլոյեանի եւ միւսների հակայեղափոխական վեհամակը: Թողակցութիւն մը կ'ըսէ տակաւին, որ Անաստաս Միկոյեան նաեւ մը գրած է Երեւան, զգուշացնելով «կիւնտի» նախկին ղեկավարները, անոնց ընդունած սխալ գիծի համար: «Եւ այժմ, — կ'ըսէ նաեւ կը — երբ այդ թունաւոր իծերի գլուխը ջախջախուած է եւ հայ կիսոն անցել է ստուգուած բոլշեւիկների ձեռքը, սկսուել է ստեղծագործական վերելք, որ ընթանում է ռեալիստական ուղիով»:

Այսքանը կը բաւէ, կը կարծենք, ջախջախման գործին մէջ Միկոյեանի ըրածներուն նմանի գաղափար մը կազմելու համար: Կ'արժէ նաեւ ուշադրութեան յանձնել նոյն «ասպարէզին» կապակցութեամբ իր շրջաններէն նմոյշ մը, հայրենի քննադատ Դաւիթ Գաւաթեանի վերադրութեամբ:

«Բանտում Չարենցի վիճակը է՛լ աւելի էր ծանրանում 1937 թ. Հոկտեմբերի 25-ից յետոյ, ամենայն հաւանականութեամբ Նոյեմբերի սկզբներին, երբ ձերբակալում են կնոջը: Հոկտեմբերի 25ը նշանակէտ է, որովհետեւ այդ օրը Չարենցին ազատելու յոյսով նրա կինը նամակ է լղում ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Միկոյեանին: Յոյսն այն էր, որ տապալուել էր Ամատունու վարչակարգը, իսկ Մուղղուսին եւ նրա համհարզները ընդամենը մի քանի օր յետոյ «լատուկ կարգով» պիտի գնդակահարուէին: Բայց Չարենցին ազատելու փոխարէն կնոջն էլ են ձերբակալում» («Գրական թերթ», 1990, թիւ 42):

Անաստաս Միկոյեանին փրկութեան յոյսով դիմելու միասնութիւն մը ու նեցած էր նաեւ Չարենցի՝ իր ապրած առաջին դժոխքի օրերուն «Գրք ճանապարհի» ի տարագրութեան ողբականին առիթով շնոր տարի առաջ, Մտալինի ցուցմու նքներով վերաբերում ճշդող ու քայլեր առնող «Ժողկոմխորհի նախագահի տեղակալը» այդ բողոքովին ազարդիւն անձին, նոյնի՝ սկ Չարենցը:

Անկախ Չարենցի կնոջ ձերբակալութեան մէջ Անաստաս Միկոյեանի ու նեցած հաւանական մեղսակցութենէն, պէտք է ընդգծել, որ այդ արարքը եզակի արարք մը չէր, նոյն հարուածը կրեցին նաեւ ձերբակալուած միւս գրողներէն շատերուն կիները, ընդ որս է՝

#### ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԿԻՆԸ

«Ակսել Բակունցի գնդակահարութենէն ուղիղ երեք ամիս ետք կրկին կը խուզարկուի անոր տունը եւ «գործը» աւարտելէ ետք, խուզարկուները կը ձերբակալեն գրագէտին կինը, որ կը դատապարտուի 8 տարուան աքսորի («Գրական թերթ» 1990, թիւ 42):

ԴԱԻԻԹ ԳԱՍՊԱՐԵԱՆ



**ԹՈՒՌՈՎԵՆՑԻ ԿԻՆՈ**

«1937 թ. Դեկտեմբերի 30ին երեսուներկուամեայ Լուսիկին ձերբակալեցին՝ Թոթովենցի կինը փնելու մեղադրանքով, և նրանց մահուկ որդին եղաւ անտեր-անպաշտպան՝ մինչեւ Յունիսին մայրն ազատ արձակուեց («Թոթովենց», 1994, էջ 137):

ՆՈՐԱՅՐ ԱՂԱԼԵԱՆ

**ՎԱՀՐԱՄ ԱԼԱԶԱՆԻ ԿԻՆՈ**

—«Լաւ, համաձայն եմ, տուէք ստորագրեմ, միայն թէ Մարոյի տանջանքները չտեսնեմ: Խոստանո՞ւմ էք...

«—Խոստանում եմ, ազնիւ խօսք եմ տալիս,— ասաց Մուղղոսին:

«Մուղղոսու ազնիւ խօսքից յետոյ էր, որ Մարոյին իր բնակարանից դուրս Քին շարտել, և տարին չըացած՝ բանտարկեցին» («Փարուն», 1989, թիւ 2, էջ 24):

ՎԱՀՐԱՄ ԱԼԱԶԱՆ

Հոտ համայնաւոր 20 և 22րդ համագումարներուն, ո՛չ միայն Մտալինի գոիները պիտի արդարացուէին, այլև իրենց արժանի պատիժներ կրէին դահիճները, բայց այդ որոշումները ի դերն հանեց ըրձաջման անսխառու նակ դարբին Լիոնիտ Բրեմները, որ *«ստեղծեց մի տեսակ դահճի ու զոհի ինչքան ստիպողական, նոյնքան... անբարոյական և արհեստական»* խաղա՛ղ համակեցութիւն»...

«Ատիկա,— կ'անցնէ նոյն ախտաճանաչման կատարող Գէորգ Էմին,— ինչքան էլ որ զարմանալի թուայ, ոչ միայն... չորսիսացրին 1937 թուականի բազում զոհերին ու նրանց իսկական պաշտպաններին, այլև... զարմանք, շփոթմունք, իսկ ապա նաեւ՝ հիասթափութիւն ու զայրոյթ պատճառեցին...

«Այո՞, այո՞, զարմանք, հիասթափութիւն և զայրոյթ,— որովհետև գիտէ՞ք, թէ ովքե՞ր էին շարենցի արդարացման ու գովքի խօսք ասողները նրան մատնողները, մեղադրողներն ու բանտարկողները, կամ նրա՛նք, ովքեր կարող էին, բայց նրան այդ ժամանակ չփրկեցին...» («Փարուն», 1989, թիւ 7, էջ 63):

Մտալինի մօտ ամէնէն աւելի վստահութիւն վայելուէ որով եւ՛ բանաւստեղծ մը տեղական դահիճներու և ճիրաններէ և փրկելու ուժի մը պատրանքը տուող այն օրերու հայաստանեան գործօնը Անաստաս Միկոյեանն էր, որ դոյզն ինչ փորձ չըրաւ փրկելու Չարենցը, բայց երբ ներկայացաւ Չարենցի փառքով փետրագարդուելու առիթը, նոյն պատեհապաշտը առաջինը ինք եղաւ նոր պատուէրը կատարելու ա-

բարքին մէջ, այնքան՝ որ նոյնիսկ հեռու հեռաւորները շրացան Չարենցին տրուած յարութեան ձրի շնորհքներով ու Չարենցին առիթով ստացուած նոյնքան դիւրին ծիրանիններով:

Երեւի թարդ բաներու ն հետ կան նոյնպէս ու նոյնքան անբարոնէի շատ պարզ բաներ, որոնցմէ մէկը քննադատ Դաւիթ Գաւաբարեանի վերը կազմած ուրուանկարին մէջ Չարենցի առնչութեամբ պարզուած Անաստաս Միկոյեանի աննախանձ ելի վարքն է:

Աղասի Խանջեանի դաւադրական սպանութենէն ետք, Հայաստանի վերնախաւին մէկ մասը անճիտած եւ միւս մասը նկուղներու մէջ կամ դուրսը ահուդողի մատնած Ստալին-Ֆերիայի հայաստանեան գործակալներէն Ամատունի-Մուրդուսի խումբին ոչնչացման, այլեւս փաստ է, որ Միկոյեան բերաւ իր ուղղակի մասնակցութիւնը, բայց, ընդգծենք անգամ մը եւս, որ որեւէ փոյթ չբար յօգուտ նախկին դահիճներուն դեռ որք ձգած դժբախտներուն, ի մասնաւորի բանտի մէջ իր հոգեվարքը ապրող Չարենցի նկատմամբ: Ընդհակառակն, ցուցաբերեց լուռ մեղսակցութիւն մը առ այդ իրեն աղերսագիր ներկայացնող հոգիին տրուած նոր հարուածին մէջ, բանաստեղծին երկու եւ հինգ տարեկան աղջնակներուն մօրը ձերբակալման դախիւ:

Եւ յետո՛ւ, յետո՛ւ, 17 տարի յետո՛ւ, եղաւ ճիշդ Գէորգ Էմինի նկարագրածին պէս, ինքը, պարաստական այդ նոյն ներքինին եղաւ առաջիններէն մէկը այն անձերէն, որոնք «արդարացման ու գովքի խօսք» բաին Չարենցի մասին, անոնք՝ որոնք «կարող էին, բայց նրան այդ ժամանակ չփրկեցին»:

Բուն դահիճներուն մեղսակից մարդոց պատմութիւնն է ասոիկա, ահա եւ անոնց բնութագիրը, Խաչիկ Դաշտենցի չափածոյ տողերով, Չարենցին նուիրուած բանաստեղծութեան արանքներուն.

Հաւատում եմ, Ռաւատում եմ, որ կը գայ մեծ,  
Քո յարութեան օրն արդար,  
Եւ դու նորից յայթանակով կը յառնես,  
Եւ ոսոխդ կ'ընկնի վար:

Որքան մարդիկ պիտի փութան ամպիոններ՝  
Առաջինը յուզուելով,  
Եւ աճիծեալ իրենց անցեալը օծեն  
Յիշատակիդ լոյսերով:

Անաստաս Միկոյեանի խմորէն մարդիկ շատ բուսան ու գործեցին բայնկոյս, ոմանք նոյնիսկ փորձեցին ըմբռնել ու արդարացնել անոնց «այնպէս կամ այնպէս» կամ ոչ մէկ բանի պէս կեցուածքները: Աւելի անբարոնէի, սակայն, ոման մեղապարտներու հանդէպ յայսկոյս պարզուած երոյթները եղան, կտակաւորներուն ն սեւ կողմերը

անգլիաճառողով ամօճելն անյարիր պայմաններու մէջ անոնց լուսապատկեր շտայլելու ներբողական զեղումները, որոնցմէ մէկը գրի առնուած է 1954ին Հայաստանի մէջ Միկոյեանի խօսած ընտրական ճառին մէջ Զարեանցին ընծայուած փրկչական ձայնին ի յուշ

«...Այդ ճառին մէջ էր որ Միկոյեան յիշեց, գուցէ ճառին սկիզբը, գուցէ վերջը, թերևս քաղաքական իր տեսութիւններուն լուսանցքին վրայ ու հայերէն խօսքով մը, բայց կարեւորը այդ չէ, այլ կարեւորը այն է, որ այսօրուան առիթովն էր որ Միկոյեան յիշեց -եղիշէ Զարեանցը:

«Ու Զարեանցի անունը եւ գործը՝ որ մինչ այդ կապանքի տակ էր, յանկարծ դուրս ցայտեց իր արգելարանէն, եւ մէկ օրէն միւսը որդողեց ամբողջ Հայաստանը երկու անգամ քանակինգ հազար հատորներով, արձաններով, Զարեանցական աղբիւրներով, Զարեանցանուն դպրոցներով:

«Հողը պատրաստ էր անշուշտ եւ պայթելու սահմանուած առողջ սերմը չէր կրնար դուրս չգալ յատակէն: Բայց իրողութիւնը այն է, որ անեյի քան տաանհինգ ձմեռներու եւ գարուններու շրջանի մը մէջ, Զարեանցը կը մնար թաղուած, եւ Միկոյեանի այդ ճառէն անմիջապէս ետքն էր որ եկաւ Զարեանցի ամառը... Ու երկրի մը մէջ, ուր բնութիւնն իսկ դատապարտուած է ենթարկուիլ ընկերային կարգապահութեան մը երկաթէ օրէնքին, մէկ հատիկ ցուցամատ մը երբեմն կրնայ հրաշքներ գործել, ինչպէս աներներ...»

«Միկոյեան երբ Հայաստան գալ, հոսող ջուրերը կանգ չեն առներ, բայց խափանուած աղբիւրներ կրնան վերստին կարկաշել եւ խոշտանգուած եւ թաղուած եւ չքացած բանաստեղծներ՝ կրնան դուրս գալ հողէն ու յարութիւն առնել...» («Նայիրի» շաբաթաթերթ, 1959, թիւ 43, էջ 5):

Եղիշէ Զարեանցին եւ մտքի միւս ներկայացուցիչներուն նկատմամբ Անաստաս Միկոյեանի երեսնական թուականներու կենսագրութեան անծանօթ մէկը միայն կրնար նման անվերապահ զեղումներ ունենալ ստալինեան այդ կատարածուին փրկչական դերին մասին:

Կամ իր գիտցածը չգիտնալ ձեւացնող իտաղարկու մը միայն:

Կամ հաշիւ ներու ենթակայ բնադրութիւնը

Կրկնելը, Անաստաս Միկոյեան 1937 Մեպտեմբերի կէսերուն եկաւ Հայաստան:

Եղիշէ Զարեանց դեռ բանտն էր այդ օրերուն ու ապրեցաւ մինչեւ 29 Նոյեմբեր 1937:

Վահան Թոթովեց դեռ չէր գնդակահարուած:

Իրեն անեյի ծանօթ Պօղոս Մակինցեանը՝ նոյնպէս

Տիկին Զապէլ Եսայեան դեռ շու նշ կ'առնէր անյարտ անկիւն մը

Իր ներկայութեան ու ցուցմունքներով ձերբակալուեցան դերասան Մկրտիչ Զանաւն ու ճարտարապետներ Միքայէլ Մազմանեանն ու Գէորգ Բոչարի:

Եւ այլն, եւ այլն:

Դուրսը դէմքեր կային, որ ուրեմն իր ներկայութեան բանտ թիմուեցան:

Ու իրմէ առաջ բանտ թխմուածներ կային, որոնց համար մատր մատին չարկատ ինք:

Ուշագրաւ է երկու տարի ետք տեղի ունեցած ընտրական իրադարձութեան մը առիթով արձանագրուած սա յետադարձ փաստը եւս: Այսպէս, 1939 Դեկտեմբերին, տեղական խորհուրդներու ընտրութեան առոնն, Երեւանի մէջ կ'առաջարկուի Ստալինի, Մորթոսի եւ Միկոյեանի թեկնածութիւնները, եւ այդ առիթով գովքը կը հիւսուի հայազգի ջարդարարին, ի մասնաւորի այն գործերու ն համար, որ՝

«Երկու տարի առաջ, այս նոյն օրերին, Միկոյեանը եղել է Հայաստան Ստալինի յանձնարարութեամբ «Ցալ ժողովուրդին օգնելու՝ իր թշնամիների բնաջնջման գործում»» («Խորհրդային Հայաստան», 3 Դեկտեմբեր 1939):

Կը պարզուի, որ Միկոյեանի, Մալենկովի եւ նուազ ծանօթ անուններով կազմուած մոսկովեան յանձնախումբը Հայաստան դրկլած էր ոչ թէ Անօ Ամատունիի եւ ատոր հետ գործած արիւնարբուներուն շրջայագերծած խաչակրութեան գոհերուն արդարութիւնը ներու համար, այլ անոնց կատարած հուճճքին վրայ նոր հուճճքեր գումարելու հարուածային առաքելութեամբ:

Իր արիւնտ գործերուն ու թափուելու դատաւարտուած արիւնը կատեցնել չուզող իր թուլականութեան համար էր հարկու, որ Ստալինին ուղղուած ուղերձ-տանաւորին մէջ՝ Հայաստանի երիտասարդ բանաստեղծները քառատողով մը պատուեցին նաեւ «Ստալինի զինակից լուսաստղը վեհ՝ Անաստասը ջինջ ու արթուն»:

Քո զինակից լուսաստղը վեհ՝ Անաստասը ջինջ ու արթուն,  
Ծխով լցրեց, մի բարկ ծխով, ամէն մի որջ, ամէն մի բուն,  
Ուր այն զագիր օձերը շար՝ ինչպէս խլուրդն հին հողի տակ,  
Կտրատել են քանի անգամ մեր արտերի ծովը սուտակ:

«ՆՐԱՆ ՆԵՐԱ ԲԵՐԻՆ»...

Մի օր քաղխորհրդի նախագահը քննութիւնից վերադարձաւ թաշկինակով բերանը բռնած: Նա բացատրեց, որ ատամնացաւը յանկարծ բռնեց: Զարմանալին այն էր, որ սպիտակ թաշկինակի վրայ երեւում էին արեան բիծեր: Երկու օրից յետոյ նոյն ատամնացաւով տառապողին քննիչի մօտ տարան, եւ նա վերադարձաւ քսանչորս ժամ յետոյ միայն: Մենք ասինք վերադարձաւ, բայց դա չափազանցութիւն է, ճիշտ կը լինէր եթէ ասէինք՝ բերին: Դուռը բացուեց սովորական աղմուկով, երկու պահակ նրան ներս բերին երկու թեւերից բռնած, դուռը փակեցին, իսկ նա ընկաւ դրան յետեւ ծանր պարկի նման:

էջ 108-109



«Բենիյի մօտ տարան»...  
 «Ճիշտ կը լինէր եթէ աստիք՝ բերին»...  
 «Ընկաւ ծանր պարկի նման»...

Սուտ թուացող այս բառերը՝ տարին, բերին, ինկաւ, եւ այլն, միայն «Մաղկած փշալարեր» փայակին մէջ չեն, որ հասած են իրենց առաւելագո՛յն ծաղկումին եւ միայն Մահարիի գրչին տակ չեն, որ տուացած են իրենց սեւ երանգները Ընդհանրական եղած է ու սահարկու խոշտանգումներու ադ երեւոյթը, որոնք մտափն Մահարիի կազմած պատկերները առ ելի շոշափելի ընծայելու համար դարձեալ կ'արժէ կարդալ նոյն մթնոլորտէն քաբուած քանի մը փշաբարդ սղ արձանագրութիւնները



**«ԵՏ ԲԵՐՈՒԻՅՑ»...**

Տանհնը իր գալու յաջորդ օրն իսկ վեր կանչուեց ու ետ եկաւ, ոչ, ետ բերուեց երեք շաբաթ յետոյ միայն: Յարջորդ օրը, նոյն վիճակում, ինչ որ նա, մեզ մօտ բերուեց մինչ այդ ուրիշ կամերայում եղած Կարօ Մելիք-Օհանջանեանը, երկուսի ոտքերն էլ ուռած՝ մի-մի գերան («Գրական թերթ», 1988, թիւ 34):

ՌԱՆԱՑԷԼ ԱԹԱՑԵԱՆ



ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ-ՕՇԱՆՋԱՆԵԱՆ

Հայագետ, ակադեմիկոս ու փրոֆեսոր Մեան է 1893ին, Մեդրիի շրջանի Կալեր գիւղը: Նախակրթութիւնը ստացած է Գանձակի մանչերու վարժարանը, երկրորդականը՝ «Էւզարեան» մեծարան, իսկ բարձրագոյնը՝ Գերմանիա: Հմտացած է գերմաներէնի մէջ, վարած է կրթական ու խմբագրական բազմաթիւ պաշտօններ: Հեղինակ՝ մեր պատմութեան ու գրականութեան վարկածային երկութեանը նուիրուած հարիւրաւոր ուսումնասիրութիւններու: Մեան է 1970ին, Երեւան:



### «ՊԱՏԳԱՐԱԿՈՎ ՏԱՐԱՆ»...

Մի անգամ ինձ 48 ժամ պատի տակ կանգնեցրին եւ ծեծեցին: Ծեծում էին քունցքով, լետոյ փայտերով, երկաթեայ ձողերով, մտրակներով եւ իրենց սապոգների կրունկներով: Խփում էին գլխուս, թիկունքիս, փորիս, ոտքերիս եւ սալտակում: Մի քանի անգամ ուշագնաց ընկայ յատակին, ուշքի բերին եւ նոյն տեմպով էլի սկսեցին ծեծել ու ջարդել: Սաստիկ շոգից ու ծարաւից քերանս խանձում էր, խնդրեցի մի քաժակ ջուր եւ ծխախոտ, մերժեցին: 48 ժամ կանգնելուց լետոյ ոտքերս ու ձեռքերս այնքան ուռեցին, որ քայլել չէի կարողանում: Նիկողոսեանի զանգից լետոյ, ներս եկան երկու քննիչներ եւ ինձ պատգարակով մեղախուցս տարան («Փարուն», 1989, թիւ 2, էջ 25):

ՎԱՀՐԱՄ ԱՆԱԶԱՆ



### «ԵՒ ՏԱՊԱԼԻՈՒՄ Է ԳԵՏԻՆ»...

«Էնկավէղէն Քաջազունուն մեղադրում է «լրտեսութեան» մէջ, պնդում, որ նա «գողացել է ինչ-որ նոր ծրագրեր» եւ փորձել է այն տրամադրել օտար ու թշնամի պետութիւնների՝ եւ այլ հրէշային ստեր... «Ռիպէլեզի ստիպուի «խոստովանել» իր արարքները, Քաջազունին ենթարկում է աներեւակայելի տանջանքների: Էնկավէղէն ստիպում է նրան օրեր շարունակ ուղքի վրայ կանգնած անընդհատ նայել 500 մոմանոց էլեկտրական լապտերին: Այդ բարբարոսութեան հետեւանքը լինում է այն, որ խեղճ ծերունին ամբողջովին կտրանում է, ոտները բորբոքում են եւ խարխլած մարմինը տապալում է գետին...» («Փարուն», 1990, թիւ 10, էջ 42):

Վ. ԼԱՍԱՐՕ



Ծնած է 1868ին, Ախալցխայի Մասնագիտութեամբ՝ ճարտարապետ: Հայոց Ազգային Խորհուրդի եւ Տրապիզոնի ու Պարսի թանակցութիւններու անդամ, Անդրկովկասեան Սէյմի պատգամաւոր, Հայաստանի Հանրապետութեան առաջին վարչապետ (1918 Յուլիս-1919 Օգոստոս): Հեղինակ՝ «Դաշնակցութիւնն անելիք չունի այլեւս» գործին: Գնդակահարուած է 1938ին, Երեւան:

Պ ՅՈՎ Հ Ա Ն Ն Է Ս Բ Ա Ջ Ա Ջ Ն ՈՒ Ն Ի



Ասորում չարչարանքներուն մասին եղած վերի արձանագրութիւնները անհատ առաջի կրթութիւն եւ դժուար թէ մարդ կարենայ մտածել, թէ նման արարքներ տեղի ունեցած են մեր ժամանակներում եւ

եւ տակաւին խնդիրը երեւոյթին մէկ երեսին կը վերաբերի, կիրարկուած դատականեան, որուն ենթարկուած դժբախտներուն թիւին մասին եղած հաստատումները բոլորովին աներեւակայելի կը դարձնեն այն զազանութիւնները, որոնցմով իշխանութիւն մը զինեց իր հպատակները իրենց նմաններուն դէմ:

**ԹԻՂՆ**

**Պերճ Ալթունցեան կը գրէ.**

«Հէնց Ստալինի կառուցած այն երկրում, որի բանտերում տեղաւորում էին 40 միլիոն քաղաքական բանտարկեալներ» («Տուլերը դեռ այնտեղ են», 1990, էջ 110):

**40 միլիոն քաղաքական բանտարկեալներ: 40 միլիոն, այսինքն՝ բնակչութեան մէկ վեցերորդը**

Այս 40 միլիոնի բախտին մէկ երեսին մասին տեղին է կարդալ լրացուցիչ վկայութիւն մը, շուտով 40 միլիոնին միացուած Ռաֆայէլ Աթայեանի ստորագրութեամբ, «Նորթ» ի լեզբուն.

«Եկաւ 1937ը, ամառնամուտ էր արդէն, մի կիրակի օր բախտ վիճակուեց մեզ Վիեննայի ռատիոկայանից լսել Ռիխարդ Վագների «Տանհաուզեր» օպերան սկզբից մինչեւ վերջ, առանց մթնոլորտային խանգարումների:

«Հազիւ էր լուել վեհաշունչ երաժշտութիւնը, երբ անցան արտակարգ լուրերի հաղորդման: Առաջինը՝ բառացի. «Երէկ, ցերեկուայ ժամը 12ից, Խորհրդային Միութեան բոլոր բանտերում մի ընդհանուր հրամանով սկսեցին ծեծել քաղաքական բանտարկեալներին» (1989, թիւ 12, էջ 48):

**Ծեծուողները՝ ծեծուող, ձեռնաձալ կամ ձեռնակապ նստած մարդ էր էին ծեծուողները Սոցիալիստական շինարարութեան ադմուկներով աշխարհը լեցնող այդ արնածարաւ բանտապետները այդքան ծեծո՞ղ ուրկէ՞ կրցան ճարել արդեօք նման իրադարձութիւններու դիմաց է, որ մարդիկ սովոր են կրկնել՝ մեկնաբանութիւնները աւելորդ են:**

Այս շարքը շատ երկար է, բաց անոր վերջ դնել, առաջ ըսենք, որ դիւրին է ըմբռնել վարձուած դատաններուն ու դատանութեան ենթարկուած «անմեղ մեղաւորներուն» փոխարաբերութիւնը, ըմբռնել իրարու անծանօթ երկու գործօններու օրէնքով անըմբռնելին, զազանութեան ծայրագոյն չափերու ու հասցում տրեւոյթները երան՝ իրարու դէմ յանդիման եկած ծանօթներուն *անծանօթութիւնը*, մէկ հարազատը միւսը չճանչնալու, մէկը միւսը բարոյապէս ու ֆիզիքապէս ոչնչացնելու դժոխային վերաբերումները, որոնք մաս կազմե-

ցին Լենին-Ստալինի կուսակցական փարթակին ու երևանումեակ մը ու աւելի ժամանակ կեանքը դժոխք դարձուցին աշխարհի մէկ վեցերորդ մասին փոսք:

«Ծանօթ-անծանօթ ներու» նման փոխարարներու թիւն մը ստեղծուած է նաեւ Մահարի որ հաւանաբար կը հաւելիսանայ իր ստեղծուածներու և սով նձ նստալարեր:

#### «ԻՆՉ ԷՔ ԱՆՈՒՄ, ՏՂԱՆԵՐ»...

«Երբ «Կասիտաչի առաջին թարգմանչին, ազնիւ սովետական դասախօսին քննիչները ծեծի են քաշել, դասախօսը փորձել է ուշքի բերել իր նախկին ուսանողներին, դիմելով նրանց զգաստացնող խօսքերով: «Ի՞նչ էք անում, տղաներ, ինչո՞ւ հետու չէք նայում, ախր, պատմութիւն կայ, պատասխանատուութիւն կայ»... Քննիչներից մէկը ծիախտաւ հանգցրել է՝ սեղմելով իր պրոֆեսորի ճակատին ու ստել:— Քանի մենք կանք, պատմութիւնը չի լինի, իսկ երբ պատմութիւնը լինի, մենք չենք լինի: —Ճիշտ գուշակութիւն:

էջ 116

Ճ

Գուրգէն Մահարիի նկարագրած «Քասի/թալ» ի առաջին թարգմանիչը բաւրախտ Թաղեւոս Ալիարեկեանն է, ներհու և բանասէր եւ հայտատանի այն օրերու պետական համալսարանի անուանի փրոֆեսորներէն մէկը, որու և բանուային ածօրեային ու գեղակա-



Ծնած է 1885ին, Պարսկաստանի Մակու քաղաքը: Մասնագիտութեամբ՝ տնտեսագէտ: Զբաղած է հայագիտութեամբ, թարգմանչական աշխատանքով եւ բառարանակազմութեամբ: Գասախօսած է Երեսանի պետական համալսարանին մէջ, եղած է «Կայծ» թերթի գլխաւոր խմբագիրը (1918-1919), եղած է խմբագիր նաեւ «Հայաստանի աշխատակար» թերթին (1919): Գեղակահարուած է 1937ին, Երևան:


ԹԱԳԵՒՈՍ ԱՎԳԱՆԵՆԿԵԱՆ



Յեղափոխական ու զինուորական Մնած է 1874ին Ուսումը ստացած է Ծուշիի թեմական դպրոցը եւ «Գէորգեան» մեմարանը: 27 տարեկանին կը դառնայ Հ.Յ. Դաշնակցութեան կարսի կեդրոնական Բիրոյի անդամ:

1912-13 թուականներուն կը լաճախէ Պոլկարիոյ արքայական ռազմական կաճառը եւ հայշուկապետ Քեռիի կամաւորական ջոկատին մէջ՝ իբրեւ հարիւրապետ՝ կը մասնակցի Պալքանեան պատերազմին: Ապա, Հայաստանի մէջ, 1915-18 թուականներու կռիւներուն:

Գնդակահարուած է 1937ին, Երեւան:



ՅԱԻՄԻՐ  
ԲԱՍԵՆՅԵԱՆ

րութեան նախօրեակին ապրած տառապանքները ու բուժարարած է նոյնպէս Արագան, բայց երեւի իրենց հանդիպումը եղած է տարբեր կամերայի մը մէջ. Մահարիի բանաւոր արհիւրները իմացած է փրոֆեսէօր Ափաղբեկեանի չարչարանքին մասին եւ ոչ թէ նոյն պայմաններուն մէջ անձնուայէս հանդիպած է անոր, այլապէս, եթէ Արագանի պէս դէմ-յանդիման եկած ըլլար անոր, տեսած պիտի ըլլար նաեւ փրոֆեսէօրէն քիչ մը առաջ հոն նետուած Խմբապետ Շաւարշը եւ, ուրբակի կամ անուղղակի կերպով, այլ անպայման քանի մը տողով կամ հատուածով «Մաղկած փշայարեր»ուն մէջ պիտի հիւրընկալէր Զարենցի 383 տող հաջողող համանուն պոեմին այդ նշանաւոր հերոսը:

Առիթը պատեն է թերեւս, որ ընթերցողը կարդայ Մահարիի կորմէ մտքէ չելող մթնոլորտի մը մէջ դրուած Թաղեւոս Ափաղբեկեանի կենսագրութեան վախճանական փուլին հետ՝ անոր բախտակից Խմբապետ Շաւարշի գաղափարական վերջին խոհերը, այս անգամ Վահրամ Արագանի գրչով:

«Յուլիսի կէսերին էր, խցի դուռը բացուեց եւ ներս մտաւ Թաղեւոս Ափաղբեկեանը, մի մեծ կտակոց գրկած, շինական թեք դրած: Նա, որ երկար տարիների տքնաշան աշխատանքով, գերմաներէն բնագրից հայերէն թարգմանեց Մարքսի «Կապիտալ»ը:

«Մտքապետ Շաւարշը նրան մօտենալով՝ ասաց.

«—Ա, Թաղեւոս, քե՛զ էլ բերեցին, շա՛տ լաւ արեցին, շատ ուրախ եմ, որ քեզ մեր կողքին եմ տեսնում: Մի քանի տաճկահայ երիտասարդներ էին մնացել, որոնք ոտուերէն չիմանալով «Կապիտալ»ը չէին կարող կարդալ: Նստեցիր, չարչարուեցիր, թարգմանեցիր, որ էդ անմեղ երիտասարդների մտքերն էլ պղտորես... Էս էլ քո վարձատրութիւնը: Դէ, քո Մարքսին եւ Էնգելսին կանչիր, որ գան քեզ ազատեն: Յիշո՛ւմ ես՝ մեր կառավարու-

թեան ժամանակ ինչքան մեզ քննադատեցիր, ոչ ոք չասեց, թէ աչքիդ վերելք ունք կայ, թիմս տեսնե՞՞ր՝ ըս մարքսիստները ո՞՞նց կը վերաբերունք քեզ... («Գարուն», 1980, թիւ 2, էջ 20):

Եւրմիլի տառապանքին ենթարկուած մեր ժողովուրդը տեսաւ, թէ Մարքսի ու Էնգելսի երկրպագուներու ն հանդէպ ինչ վերաբերում ցոյց տուին... մարքսիստները, ու ինչպէս վարուեցան եռանդաշատ երկրպագուներու ն շարքին գտնուող Թադէս Ափալրեկեանի հետ:

«Մեր կատարարութեան ժամանակ» որքա՞ն ուրիշներ, ձիջող Թադէսու Ափալրեկեանի պէս, «ինչքան մեզ քննադատեցին», արձակ ու շափածոյ հրավառութիւններով, առանց պահ մը անդրադառնալու, որ հարազատին դաւաճանելու արարքը երբեք փրկութիւն չէ բերած, որովհետեւ «օտարն, ա՛ր, միշտ է օտար»:

#### «ՆՇԱՆԱՒՈՐ ԳԵՐԱՍԱՆԸ»...

*Նշանաւոր դերասանը մի անկիւնում գրել էր. «Կատարուեց կամքը Արամազդի, ստորագրեցի յօգուտ երեք պետութիւնների լրտեսութեան մեղադրանքը. պետութիւնների անունը չեմ յիշում, բայց դա ի՞նչ կարեւոր է...»:*

էջ 115


*Քառասուն ութ ժամ տանջալից քննութիւնից յետոյ, ոտների վրայ կանգնելու անկարող, չորս պետութիւնների լրտեսութեան մէջ մեղադրուող՝ պետական թատրոնի մեծ դերասանն այսպէս է բացազանիւ՝ վերադառնալով կամերա եւ փլուելով անկողնուն. «Մի-ծաղկի ողբերգութիւն, թէ արիւնոտ կատակերգութիւն՝ այնուամենայնիւ ներկայացումը վերջացաւ»:*

էջ 118

Ճ

Վերի երկու պարբերութիւններէն առաջինին մէջ իբրեւ «նշանաւոր դերասան» «յօգուտ երեք պետութիւնների լրտեսութեան մեղադրանքը» ստորագրած, եւ երկրորդին մէջ իբրեւ «պետական թատրոնի մեծ դերասան» ներկայացուած ու «չորս պետութիւնների լրտեսութեան մէջ մեղադրուող» արուեստագէտը խայտնապէս միեւնոյն անձնաւորութիւնն է՝ Մկրտիչ Զանան, որ 1923ին միացաւ

Թատերագիր, թատերական գործիչ ու դերասան Մնած է 1892ին, Կ. Պոլիս Բեմական գործունեությունը սկսած է 1910ին, Պոլսոյ «Վարիսթ» թատրոնին մէջ: 1919ին կ'ընթաց Փարիզ եւ իրրեւ ազատ ունկնդիր կը հետեւի պետական երաժշտանոցի թատերական ճիւղին: Պոլիս վերադարձին՝ դերասանական մարզին մէջ կը ցուցաբերէ աշխուժ գործունեություն մը: 1923ին կը փոխադրուի Երեւան ու կ'անճնաւորէ շարք մը կարեւոր դերեր: Կը հնդիւնակէ «Շահաճի» թատերգությունը: 1937ին կը ձերբակալուի ու 1938ին կը կնքէ իր մահկանացուն՝ անյայտ ճակատագրով մը:



ՄԿՐՏԻՉ ԶԱԽԱՆ

Վահրամ Փափազեանի խումբին ու Պոլսէն մեկնեցաւ Հայաստան, իր տաղանդը հայրենիքին ի սպաս դնելու երազանքով:

Հայրենի մտաւորականութեան վրայ կիրարկուած արտաին-եան սպանդին օրօք Զանաւնի վիճակուած բախտին մասին մեր ունեցած տեղեկութիւնները կցկտոր են, ու նիւթ միայն անոր ձերբակալութեան վերաբերող «Հայրենիք» ամսագրի մէջ տրուած կարգ մը արձագանգներ մեր տրամադրութեան տակ, ու բանտային առօրեան ուրուագրող նոյնքան ժառ տեղեկութիւններ, որոնք երեսցան հայրենի «Նորք» ամսագրի էջերուն, Առաքայլ Աթայեանի ստորագրութեամբ:

Ելուած առաջին սորիւրէն կը հասկցուի, որ «հակադատափոխական վիժումածքներ իցկուել են նաեւ թատրոն» եւ «ղիւային ծրագիրներ» են հետապնդել: Այդ ծրագրերն ու նրանց հեղինակներին «մերկացրել է 1937 հոկտեմբեր 2ին գումարուած Հայաստանի դրամատիկական թատրոնների ակտիւի խորհրդակցութիւնը», ուր Զանաւնի հոչակուած է «սրիկաներից առաջինը»:

Նոյեմբեր 1937ին հաղորդուած այս լուրին կը յաջորդէ նաեւ դեկտեմբերեան լուր մը թէ՛

«Ժողովրդի թշնամիներից» մարտուել է նաեւ «կոմունիստ» թերթի «աղտոտուած ապարատը», որտեղ «տեղ են գտել ազգայնատական անհարազատ, հակադատափոխական-տրոցկիստական-նացիոնալիստական տարրեր: Դրանցից է «չայտնի առեւտրական Զանփոյատեանի տղայ Զանաւնը, որ աշխատանքից հեռացուել է միայն վերջերս: Սա մեղադրուում է այն բանի մէջ, որ «քծնում էր ժողովրդի թշնամի Խանջեանի եւ Ամատու նու առջեւ, կատարում նրանց կտուրք եւ թերթը Երևանում նացիոնալիստական տարրերի գովերգութեամբ» («Հայրենիք» ամսագիր, Դեկտեմբեր 1937, էջ 147):

**«Նորք»**ի մէջ ստորագրած Ռաֆայել Աթայեանի գրութեան Ձառանի վերաբերող մասերու և մէջ ուշագրաւ է մա'նաւանդ սա հատուածը

«Իսկ այժմ, միայն մի պահանջ էին ներկայացրել Ձանանին: Որքան որ դաժան, սպանիչ, նոյնքան էլ աներեւակալի, անհետեւ պահանջ-թորքական լրտեսի «պաշտօն» էին ուզում դնել վրան: Նոյն բանը փորձել էին եւ Վահան Թոթովենցի զինին: Երկուսն էլ կատաղաբար մերժել, հրաժարուել էին ի հարկէ: Կամերայից կամերա բերնէ բերան է անցնում Թոթովենցի ցասկոտ կանչը-

*«Յրանազոց լրտես՝ ուզենաք, կը լինեմ, ճապոնացոց՝ կը լինեմ, հապէշներէ լրտես ուզենաք՝ կը լինեմ, Թուրքական լրտես չեմ լինի, չեմ լինի, չեմ լինի...»:*

«Նոյն բանը կրկնում էր Ձանանը: Եւ վստահ ենք ամէնքս- ո՛չ մի ուժ չի կարող ստիպել Մեծ Եղեռնից մազապործ եղած ռեւէ հայ մտաւորականի համակերպուել այդպիսի հրէշաւոր պարտադրանքի...» (1989, թիւ 12, էջ 85):

Չեկիտ անհոգիներու և կոշտ թրքական լրտես դատնարու պահանջին դէմ ծառայող կամքը, որ արու շեշտով մը կը զարդարէ Վահան Թոթովենցի եւ Մկրտիչ Ձառանի կենտրոնացրութեանց ողբերգական էջերը, ունի տարբեր անհատականութիւններու եւս կապուած հատտատակամութեան որակ մը

Առ այդ, առանձնապէս պէտք է յիշել «խորհրդաւոր տան» նկուղներուն մէջ ամբողջ երկու տարի հարցաքննչական նուաւորութիւններու ենթարկուած մեծամուսն հարագէտ Հրաչեայ Աճառեանի պարագան:

Վաւտակաշատ պատմաբան եւ գրող Բագրատ Ուլուբաբեան կը գրէ.

«Հայաստանում լայնօրէն տարածուել էր մեծ լեզուաբան Հրաչեայ Աճառեանին «հարցաքննելու» պատմութիւնը: Բռնել էին իբրեւ արտասահմանեան լրտեսի: Ծեծով բերանից քաշել են զանազան խոստովանութիւններ- *«Գերմանիայի լրտես եմ եղել, Իտալիայի լրտես եմ եղել, Ճապոնիայի, Օզիպտոսի, Իսպանիայի»...* որքան երկրների անուններ կարող էր իմանալ բութ քննիչը, իսկ երբ սա յիշել է նաեւ թորքական եւ պահանջել, որ Աճառեանը խոստովանի, թէ Թուրքիայի լրտես է եղել, արդէն ուժասպառ ու կիսամեռ գիտնականը պատկել է դահճի առաջ, թէ՛ *«Մպանի՛ր, այդ մէկէ լրտես չէի կարող ու չեմ եղել»* («Պարուն», 1990, թիւ 7, էջ 42):

**«ԲԺԻՇԿ, ԲԺՇԿԵԱ՛ ԶԱՆՁՆ ՔՈ...»**

*...Օբր Դեուժինգրազը վերածուեց հիւանդանոցային պալատի, բոլորի համար պարզ դարձաւ, որ կիրառոււմ են զանգուածային, դաժան ծեծ ու բռնութիւն: Նոյն վիճակին արժանացաւ բոլորին խնամող եւ սրտապնդող բժիշկը: Նա ներս մտաւ տանջահար ու գունատ, թրջեց երկու թաշկինակ եւ սկսեց հերթով հովացնել այրող խորանները՝ ինքն իրեն մրմնջարով.*

*—Բժիշկ, բժշկեա՛ զանձն քո...  
Ներքին բանտը տնքում էր:*

էջ 110



Իր բանտախուցի դժբախտներուն շարքին, Գուրգէն Մահարի, դարձեալ ակնարկովի, կը յիշէ բժիշկ մը, վերի հատուածին մէջ առնըւած անձ նաւորութիւնը, որուն ինքնութիւնը դիւրին չէ կռահել: Արդեաց ըրող Արտաի Խանջեանի դիպումն թեան կապուած երկու բժիշկներէն մէկն է, եղբարքախոս քարտուղարին անձնական բժիշկ Գրիգոր Սաղեանը կամ այն օրերուն իբրեւ վիրաբոյժ հոշակ շահած Յարութիւն Միրզա-Աւագեանը:

Ըստ Մ. Մելքոնեան ստորագրող հայրենի յօդուածագիրին՝

«Հայաստանի այն ժամանակուայ երկու խոշոր բժիշկների՝ Գրիգոր Սաղեանին եւ Յարութիւն Միրզա-Աւագեանին կանչում են Թիֆլիս՝ ինքնասպանութիւնը հաստատելու...: Խանջեանի դիակը հետազօտելով, նրանք երկուսով յայտնում են. «Սա ինքնասպանութիւն չէ»: Ու հրաժարում են ակտը ստորագրել: «Հարկատր էր ստնուագն երկու մետրանոց ձեռք ունենալ որպէսզի, ձախիկ չլինելով հանդերձ, ինքն իրեն կարողանար գնդակահարել» («Գրական թերթ», 1989, թիւ 12):



Վիրաբոյժ ու փրոֆեսոր Ծնած է 1879ին, Բաքու: Աւարտած է Բաքուի գիմնազիան և Բարձրագոյն ուսման կը հետեւի Քիմի մէջ եւ 1908ին Կ'աւարտ տեղւոյն համալսարանի բժշկական բաժանմունքը: Քիմի բաղաբային հիւանդանոցին մէջ աշխատած 6 տարիներու ընթացքին կը դառնայ բարձրորակ վիրաբոյժ: 1924ին կը հրաժրուի Երևանի համալսարանի բժշկութեան բաժանմունքը, որ եւ կը շարունակէ իր աշխատանքը: 1936ին կը ձերբակալուի ու կը մեռնի բանտին մէջ, 1938ին:

Ծ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՐԶԱ-ԱՎԱԳԵԱՆ

Նոյն յօդուածէն կ'իմացուի, որ բժիշկ Գրիգոր Մաղեանը Դեկտեմբեր 22ին «Նեոակայ կարգով դատապարտուում է պատժի առաւելագոյն չափի՝ զնդակահարութեան», իսկ «Միրզա-Աւագ-եանին, անկասկած, վիճակուելու էր Սաղեանի բախտը, եթէ չմահանար բանտային հիւանդանոցում»:

Առ ի տեղեկութիւն յիշեցնենք, որ երկու բժիշկներու ճակատագրին մասին գրեթէ Նոյն բառերով արձանագրութիւն մը ունի նաև Վաճիթամ Ալազան («Գարուն», 1989, թիւ 1, էջ 39):

**«ԼՈՒՑԿՈՒ ԱՅՐՈՒԱԾ ՔԹՈՎ»...**

*Յերեկները ոչինչ, մարդիկ նստում են կողք կողքի, իրար սեղմուած: Գիշերը ծանր է, մի կողքից միւս կողքին շրջուելը կապուած է տիեզերական դժուարութիւնների հետ:*

*Չնայած դրան, մարդը քարից ամուր է, կամերան ունի իր իսկական կամերային երգիչը, հեքիաթասացը, խեղկատակը կամերան զուարճանում է, դոմինո, նարդի, շախմատ է սարքում, խաղում է, բանաստեղծները լուցկու այրուած քիթով ծխախոտի թղթերի վրայ բանաստեղծութիւններ են գրում:*

էջ 113



«Լուցկու քթով» բանաստեղծութիւններ գրելու պարագան առապել կը թուի, բայց առապել չէ: Նման պայմաններու մէջ եւ անարեւելական խարաններով խոցուած «մարդոց կողմէ» գրուած բանաստեղծութիւններու մասին կան եւ ուրիշ հարորդումներ հոս ու հոն, սակայն Մահաբիի նկարագրած մթնոլորտին մէջ մնալու եւ իրեն բանտակից բանաստեղծներուն «ներշնչումներէն» մէկը ուշադրութեան յանձնելու համար, առաջին հերթին յիշենք Ալազանի քաջն ու «յօրինում»ը միաժամանակ—

«Մի գիշեր, այդ երեք տիպի միջատները միասին խանգարեցին իմ քունը, եւ ես անկողնում նստած մի երգիծական ոտանատր գրեցի նրանց մասին:

«Բայց ինչպէ՞ս, ո՛չ թուղթ էր մեզ թոյլատրում, ոչ էլ մատիտ: Ես ճարը գտայ: Լուցկիները վառուս, ապա հանգեցնում էի ու այդ անխաղած ծագրով, ծխախոտի թղթի վրայ գրում այն:

**ԻԳԻԼԻԱՆ ՆԵՐՔԻՆ ԲԱՆՏՈՒՄ**

Այցելում են բանաստեղծին Ամեն գիշեր ու իրիկուն Փերիները հրաշածին, Հմայագեղ, հեզաճկուն, Համբուրում են մարմին ու այր, Եւ խածնում են մարմին ու այր, Պարզելում են գրգիռ ու խայթ;	Արշաւոմ են բազմաժողով- Թեթեւ լուերն արագաբայ, Փայտոջիւները նազանի, Մերմակիրան, վսեմափայլ- Գէր ոջիւները հոլանի... ..... Քնիր, պոետ, նանի՞, նանի՞...
---	--



Ակսել Բակունցի բանտակից, այլ Բակունցին նուազ դժբախտ անձնատուրութիւն մը, ամբողջ 20 տարի արարի դառնութիւնները ճաշակած, 1956ին արդարացում ու 1974ին հոսիս դարձած Գարեգին Մանուկեան, իր կարգին ու նի «այրուած լուցկու ծայրով» գրուած յուշ մը «Նորք» ամսագրի մէջ, եղերաբախտ գրագէտ Ակսել Բակունցի ստիգով արձանագրուած:

Գարեգին Մանուկեան կը գրէ.

«Մէջը կուտակուած մտքերն ու պատկերները ցանկանում էր գրի առնել, բայց ո՛չ թուղթ կար, ոչ էլ թանաք: Որեւէ բան գրում էր պասիքոսի փոքրիկ թերթիկների վրայ՝ այրուած լուցկու ծայրով, որոնք հնարաւոր չէր պահպանել, քանի որ այրուած լուցկու փոշին թղթի վրայից ջնջում էր: Բակունցը որեւէ հարցում իրեն մեղաւոր չէր համարում» (1989, թիւ 9, էջ 146):



Ձնդաններու մէջ «լուցկու ծայրով» մտքեր ու տպաւորութիւններ արձանագրելու իրողութիւնը սովետական ճշուններու յատուկ երեւոյթ մը չի թուիր սակայն, այլ ու նի ուրիշ բռնակաշտութեանց ստեղծած բանտային բարքերու ն հետ հաւարակաց եզրեր: Թրքականէն ու թրքական միւսներէն օրինակներ կը պակսին մեզի այս պահուն, ու նիւնք սակայն հիթլերական փարչախու մքի բռնութեանց տակ ապրում առնում ան փորձ առութեան մը մէկ նմոյշը, որուն հանդիպեցանք դեռ վերջերս, Փարիզի հոշակաւոր «Մակագին Լիթերէր» ի այս տարուան յունիսեան համարին մէջ, ուր բանաստեղծ Ժան Բասուի կեանքի մէկ երեսին անդրադարձող յօդուածագիրը կը գրէր.

«1941 Դեկտեմբերին, Ժան Բասու Թուլուզի մէջ կը ձերբակալուի գերմանացիներու կողմէ եւ կ'ենթարկուի զաղտնի բանտարկութեան:

«1942 Փետրուարին ասեմ մը ազատ կ'արձակուի, բայց քանի մը ամիս ետք դարձեալ կը դատապարտուի ու կը բանտարկուի, քաշքշուելով զօրանոցէ զօրանոց, մինչեւ 1943: ...: 1941-1942ի ձմրան, Թուլուզի իր



մեկուսարանին մեջ, Քասու կը գրէ իր «22 հնչեակ՝ հիւսուած զաղտ-  
նօրէն» անուն գործը, աւելի ճիշտ կ'ըլլայ ըսել՝ կը պահէ իր յիշողութեան  
մէջ, մինչեւ որ առիթ կը ներկայանայ զանոնք արտագրել մատիտով կամ  
լուցկիի ծայրերով, քառակուսի թղթիկներու վրայ» («Մակագին Լիթերեր»,  
1995, թիւ 333, էջ 87):

**«ՊԵՏՏՂՐԱՏԻ ԶԱՂԹԱՆԴԱՄ ԴԻՐԵԿՏՈՐԸ»...**

*Մեզ յայտնի է, որ դիմացի կամերայում նստած է Պետրատի  
յաղթանդամ դիրեկտորը: Մի անգամ զուգարանի պատին մատիտով  
ես գրեցի. «Պետրատի դիրեկտորին. ի Հաչիւ հոնորարի խնդրում  
եմ ամարանոց մեկնելու կապակցութեամբ բաց թողնել 350 ու.  
կանխավճար»: Եւ ստորագրեցի: Երկրորդ օրը իմ գրութեան տակ  
շեղակի մակագրել էր. «Հաշուապահութեան, — բաց թողնել 300 ու.»  
եւ ստորագրել էր:*

էջ 115

Ճ

Պետրատի այն օրերու տնօրէնը, որ մտաւորական փաղան-  
գին հետ բանտ նետուած էր, կը կոչուէր Եղուստը Չոփուրեան: Այս  
անձնատիրութեան տնային, պետրատային ու բանտային կեան-  
քին առընչութեամբ ամփոփ տեղեկութիւն մը արձանագրած է նաև  
Ս. Մահառունի, Հայաստանի շարժանկարի վարիչ Դանիէլ Դզնունիի  
մասին գրուած տողերէն անմիջապէս ետք, «Հայրենիք» ամսագրի է-  
ջերուն:

«Սրա կողքին էր հայ պետական հրատարակչութեան վարիչ Եղ-  
ուստը Չոփուրեանը: Սա էլ սիրուն կնիկ ունէր՝ արագ բարձրանալու եւ ա-  
րագութեամբ էլ իջնելու համար...»

«Չոփուրեանի կնոջ առիթով, հարկաւ, պիտի յիշեմ Վարպետի խօս-  
քերը-

«—Եւ ի՞նչ է կինը...»

«Եւ այս սիրուն թողը դժոխք դարձրեց ամուսնու կեանքը: Բայց  
երբեմնի ոսմկավար-համազնավար Չոփուրեանն էլ, իր հերթին, դժոխքի  
վերածեց հայ պետական հրատարակչութիւնը: Իր օրօք հալածուեցին Չա-  
րենցն ու Բակունցը եւ շատ ուրիշներ» (1958, Յուլիս, էջ 44):

Դատնանք ու դարձեալ կարդանք «մատիտով եւ գրեցի» յայ-  
տարարութիւնը



Իրականությանն ու ճշգրտությանն հետամուտ ներկայ տեսության վրայ աչք մը նետող ընթերցողը պիտի նկատէ հարկաւ, որ «Մաղկած փշալարեք» վիպակի էջերուն հակասութիւնները բացառուած չեն, ինչպէս է, օրինակ, «լուցկու ծայրով» կամ մատիտով բաներ մը մտնողն պարագաները

«Մէջ թուղթ էր մեզ թոյլատրուած, ոչ էլ մատիտ»—կ'ըսէ Արազան

«Մէջ թուղթ կար, եւ ոչ էլ թանաք»,—կը յարէ Գարեգին Մանուկեան

«Թուղթ ու մատիտ չտեսայ ես այդ ութ տարիների ընթացքում»,—կը գրէ Մահարի իր ինքնակենսագրության մէջ

Առ ի չգոյ՛է մատիտի, Մահարի «լուցկու ծայրով» բանաստեղծութիւններ գրելը կու տայ բանաստեղծներուն (100), բայց երբ ինք ուրբիական խնդրագիրներ կը խմբագրէ, չես գիտեր ուրկէ՞ յանկարծ մատիտ մը կը յայտնուի ձեռքին ու մատիտ մը կը յայտնուի իր խնդրագիրին գրաւոր պատասխաններ տուող Պետիտի տնօրէնին մօտ:

Յիշեցնել պէտք է սակայն, որ գրականութիւնը ճշգրիտ գիտութիւն չէ ու երեւակայութիւնն ու քմայքը քիչ տարածութիւն չեն «գրադեցուցած» անոր մէջ...

**«ԻՆՉՊԷՍ ՅԱՅՏՆԻ Է»...**

*Մեր քսանեակն ունէր իր քարտուղարը, որը ոչ այլ ոք էր, եթէ ոչ Երեւանի քաղաքային կոմիտէի քարտուղարներից մէկը: Այն էլ պիտի ասել, որ կուսակցականները մեր քսանեակում կազմում էին մեծամասնութիւն, մի հանդամանք, որ չէր կարող թոյլ տալ քարտուղարին կազմակերպել նրանց եւ ղեկավարութիւնը վերցնել իր ձեռքը, քանի որ, ինչպէս յայտնի է, ղեկավարութիւնը վերցնելու համար ոչ թէ մեծամասնութիւն պէտք է լինի, այլ փոքրամասնութիւն:*

էջ 120



Մահարիի բանտային կամերային մէջ գտնուող քարտուղարը Վահան Թոթովեանցի կարապի երգին հանդիպած ու թոթովեանցեան ողբերգութիւնը իր բախտակիցներուն յայտնած անձ նաւորութեան պէս շատ ծանօթ անձ նաւորութիւն մը չի թուի ըլլալ: Կրնայ լլլալ, որ ակնարկը կը վերաբերի «Մաղկած փշալարեք» վիպակի հայատուանեանն իրատարականության էջերուն երեւցած գրագէտին կենսագրութեան մէջ յիշատակուած անձն է, «Երեւանի կոմիտէի քարտուղար

**Աբէլ Օրդուխանեանը»** (էջ 188), որուն հագիւ թէ ուրիշ տեղ հանդիպած ըլլայ Սփիւոքի ընթերցողը:

Ինչ կը վերաբերի Մահարիի բանտախուցին մէջ մեծամասնութիւն կազմող կուսակցականներուն, յայտնի բան է, որ այդ խորխորատին թէ այլ վիճերուն մէջ կուտակուածները բոլորն ալ համայնափարներ էին, եւ շարքային պարզ համայնափարներ չէին, այլ անուանի դէմքեր:— Ներսիկ Ստեփանեան, Արամայիս Երզնկեան, Մահակ Տէր-Գարրիշեան, Արսէն Եսայեան, Եւայլն, Եւայլն, թէ եւ իբրեւ դաշնակէրթակարուեցան ու սրածուեցան իբրեւ դաշնակ:

Գրագէտ Պերճ Ձէյթունցեան կը գրէ.

«Կոմունիզմի եւ ֆաշիզմի տարբերութիւնն այն է, որ վերջինս իր մարդաստեղծութեամբ եւ բոլոր այլանդակութիւններով հանդերձ, գոնէ հաստատիմ իրայիններին չէր ոչնչացնում, իսկ կոմունիստները ոչնչացնում էին ճախ եւ առաջ հեճց նոսրուած կոմունիստներին: Միշտ այն զազանների նման, որ լափում են իրենց ձագերին («Յուլեբը դեռ այնտեղ են», Երեւան, 1990, էջ 146):

Աւելի հետաքրքրական է «Մաղկած փշալարեր» վիպակէն մեջբերուած վերի հատուածին եզրափակիչ հաստատումը ի մասին փորձառնանութիւն կազմող ղեկավար ուժին, որ Մահարիի ապրած փորձառնութեանց ընդմէջէն դիտուած այնքան երկարատեւ եղաւ, եւ այնքան աղէտալի՝ սկսեալ Լենինի օրերէն...

#### «ԵՐԵՔ ԲԱՆԱՍՏԵՂՄՆԵՐ»...

*Մեր քանեակում կային երեք բանաստեղծներ: Առաջին Հայկազբից կարող էր թուալ, որ, չգիտես ինչու, թոյլ էր տրուած մեծ շոայլութիւն, որ երեքից երկուսը միանգամայն աւելորդ են, մանաւանդ, որ երեքից երկուսը ծնունդ են միեւնոյն քաղաքում:*

էջ 119-120

#### **ՎԱՀՐԱՄ ԱԼԱԶԱՆ**

Բանաստեղծ, արձակագիր, յուշագիր ու թարգմանիչ: Ծնած է 6 Մայիս 1903ին, Վան: Մեռած է 1968ին, Երեւան:

#### **ՎԱՂԱՐՔԱԿ ՆՈՐԵՆՑ**

Բանաստեղծ, յուշագիր ու թարգմանիչ: Ծնած է 13 Սեպտեմբեր 1903ին, Սաւեոյ Ծէճիկ գիւղը: Մեռած է 1973ին, Երեւան:

#### **ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ**

Բանաստեղծ, արձակագիր, յուշագիր ու թարգմանիչ: Ծնած է 1 Օգոստոս 1903ին, Վան: Մեռած է 1969ին, Երեւան:





Չհարցնենք, թե ինչ է «շռայլութեան», «աւերորդ» ի եւ «ծննդափայրի» շուրջ հիւստի աւած այս քննաւաճ բառերուն միտք բանին, այլ ասնենք փաստոր ինքնիր մէջ, այն՝ որ գնդակահարութենէ զերծ մնացած կային երեք բանաստեղծներ նոյն կտմերային մէջ եւ երեք բանաստեղծները ու նէին ծանօթ անուն մականունները։— Գուրգէն Մահարի, Վահրամ Ալազան եւ Վաղարշակ Նորենց, որոնց առաջին երկուքը աշխարհ եկած էին նոյն քաղաքին մէջ։— Վաւե Մանօթ է նոյնպէս, որ քսանեակներուն մէջ գտնուող երեք բանաստեղծները հոն թխմուած էին անաբեկչական խմբակի մը մաս կազմած ջրալու ամբաստանութեամբ։ Անոնք, մա՛նաւանդ փանեցիները, թաճախ անդրադարձած են Նալբանդեան փողոցին մէջ երկինքն ի վեր խոյսցող ու գետինն ի վար անդ նդացող «խորհրդաւոր տան» մէջ իրենց ապրած դաժան առօրեային ու նաեւ ժամանակ սպաննող զբաղումներուն, որոնց մէկ դրուագը եղած է մէկու ն գրական գործունէութեան 20 ամեակին վերաբերող «նօնակատարութիւնը», զոր գրագէտը առած է «Մահկած փշալարեր» վիպակի հիւստածրին մէջ, հետեւեալ տողերով։—

**«20 ԱՄԵՆԱԿԸ»**

Ստացուած է ահաւոր մի բան։ Այդ ամէնը մոռանալու համար նրանք որոշում են բանաստեղծներից մէկի գրական գործունէութեան 20 ամեակը սօսել։ Մեր կացարանում պետական միակ գոլքը յայտնի թիթեղէ ամանն է, որի հարթ կափարիչը փայլում է այսօր մաքրութիւնից։ Նրա վրայ տեղ է գրաւում յորեկեանական հանդէսի նախագահը, մեր միակ ժողկոմը։ Բանալով յորեկեանական հանդիսաւոր նիստը, նա զեկուցման համար խօսք է տալիս երկրորդ բանաստեղծին։ Յայտնի է, որ զեկուցողն իր ժամանակին մի քանի յօդուածներ է տպել յորեկեարի դէմ, այստեղ սակայն մոռացուած են բոլոր անձնական մանր կրքերն ու քինախնդրութիւնները։ Զեկուցողը բարձր է գնահատում յորեկեարի տեղն ու դերը ժամանակակից պոեզիայում, ակադեմիկ կերպով աչք փակելով բանաստեղծի գաղափարական սայթաքումների վրայ։

Այնուհետեւ ողջոյնի խօսքերով հանդէս են գալիս կուսակցութեան, կառավարութեան, նկարիչների, ճարտարապետների, գիտնականների, տեխնիկական ինտելիգենցիայի ներկայացուցիչները։ Պետական թատրոնի կողմից հանդէս է գալիս թատրոնի մեծ դերասանուհու օրինական ամուսինը։ Ուրիշ ելք չկայ։ Համերգային բաժինն անցնում է բարձր մակարդակով։ Տեղի են ունենում ցածր ձայնով

խմբերգեր, մեներգեր, իսկ երրորդ բանաստեղծը կարդում է յոթել-  
եարին նուիրուած մի սիրուն բանաստեղծութիւն:

Վերջում ի հարկէ բանկետ: Նստում ենք բոլորս շրջանածու,  
ամէն մէկի առաջ իր օրուայ ընթացքում խնայած հացը, իսկ մէջ-  
տեղը՝ Երեւանի անմահական հազարասողանի ջուրը: Օրուայ թա-  
մազան նոյն ինքը՝ հանդիսավար նախագահն է: Խումում ենք յոթել-  
եարի, ներկաների կենացը եւ նրանց յիշատակին, որոնք խիստ յար-  
գելի պատճառներով չկարողացան իրենց մասնակցութիւնը բերել  
այս մեծ եւ պատմական ու պատուական երեկոյին, խումում ենք,  
խումում մինչեւ վերջին կաթիլը:

Էջ 123-124

Ձ

Բանուային պայմաններու մէջ տօնուած այս յոբելեանը, ինչպէս  
ըսուեցաւ, հեռու է վիպային հանգամանքներէ, այլ ու նի իրական  
խորք մը, որուն ենթականերն ու դերակատարները միս ու ոսկորէ  
կազմուած անձնատրու թիւներն են: Թունենք մեզի ծանօթները-

Յոբելեարը ինքն է՝ Գուրգէն Մահարի:

Յոբելեանական հանդէսի նախագահ միակ ժողովմը՝ Արտօ Ե-  
ղիազարեան:

Երկրորդ բանաստեղծը՝ Վահրամ Արսեան:

Երրորդ բանաստեղծը՝ Վաղարշակ Նորենց:

Ճարտարապետները՝ Միրայէլ Մազմանեան եւ Գէորգ Բոչար:  
Եւ այլն:

Ստորեւ կը կարդանք երկրորդ բանաստեղծին զեկուցման  
պատմութիւնը, որուն հետ պիտի ուզէինք տալ յոբելեարին նուիրած  
երրորդ բանաստեղծին «սիրուն բանաստեղծութիւնը», որ սակայն  
անհնար եղաւ գտնել անոր հետքը մեզի ծանօթ ժողովածուներուն  
մէջ:



Քաղաքական գործիչ, պատմական գիտու-  
թիւններու տոքթօր եւ դասախօս: Ծնած է  
Զալալօղլու, 1899ին: Տեղւոյն ծխական  
դպրոցը ասարտելէ ետք, ուսումը շարունա-  
կած է Թիֆլիսի «Ներսիսեան» վարժարանը:  
Վարած է կուսակցական ու պետական  
շարք մը պաշտօններ ու դասաւանդածած  
է Երեւանի Տամալսարանին մէջ: Իր գրչին  
կը պատկանին շարք մը աշխատութիւններ  
ու գիտական յօդուածներ: Մեռած է Երեւան:

Պ ԱՐՏՕ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

**Բանտացին նոյն «ձեռնարկին» անդրադառնալով՝ Ալազան կը գրէ.**

«1938 թուին լրանում էր Գուրգէն Մահարու գրական գործունէութեան 20ամեակը: Մենք որոշեցինք այն նշել, ընտրեցինք յորելանձական յանձնաժողով՝ Արսո Եղիազարեանի նախագահութեամբ:

«Որոշուած օրուայ երեկոյեան յանձնաժողովի նախագահ Արսո Եղիազարեանը Մահարու 20ամեակին նուիրուած հանդիսատի երեկոյն յայտարարեց բացուած: Մօտ երկու ժամ տեւող զեկուցումով հանդէս եկայ եւ: Զեկուցման աւարտից յետոյ Գուրգէն Մահարին ինձ համբուրեց եւ ասաց.

«Ընդհանրապէս, Այօ ջան, կեանքումս իմ մասին այդքան հետաքրքիր զեկուցում չէի լսել:

«Յորելանձական հանդէսից յետոյ կազմակերպեցինք «բանկետ»: Այսպէս՝ իրաքանչիւրիս առաջ դրուած էր մի-մի բաժակ ջուր եւ մի կտոր շաքար քի սեւ հաց: Զրով խմում էինք յորելադի կեանքը, իսկ հացով վայելում էինք յորելանձական սեղանի մտաւոր խորտիկները:

«Ահա այսպէս տօնեցինք Գուրգէն Մահարու գրական գործունէութեան քսանամեակ» («Գարուն» 1989, թիւ 3, էջ 36):



Մեր գրականութեան պատմութեամբ հետաքրքիր անձերու ն համար շահեկանութենէ գուրկ պիտի չըլլար արձանագրել նաեւ, որ բանտացին պայմաններու մէջ իր գրական 20ամեակին առիթով մեծարուած բանաստեղծին Երայիայրիքը ոտանաւոր մըն է, որ ըստ Հայկ Խաչատրեանի կազմած «Գրական տեղեկատու»ին (Երևան, 1986), ըյս տեսած է Երևանի «Աշխատանք» թերթին մէջ, 1918ին, արեւմտահայերէն, եւ Չ. Արփունի ստորագրութեամբ:

Բանաստեղծութիւնը կ'արտագրենք «Գուրգէն Մահարի» անուն եւ Բ. Աղայեկեանի մենագրութեան էջերէն (Երևան, 1976, էջ 4):

Անուշ օրօրով, հեզուն ու նազուն,  
 Կը թափի ձիւնը մեր բաց երդիքէն,  
 Քոյն կ'երազէ մեր պատա կատուն,  
 Ու թոնիրին մէջ պուտուկներ կ'երգէր...  
 Ձեթի ճրագը սան մէջքին կապած  
 Սեւուկ կատուին պէս խոր կը քաշէ քուն,  
 Մի՞նչ կ'իջնայ ձիւնը մեր երդիքէն բաց  
 Թոնիրը տաքուկ, տաքուկ մեր տանտուն:  
 —Չըիկ, չըիկ կը ծեծեն մեր դուռը սոս,  
 —Հօ՛ւ, հօ՛ւ, քեռիս է բաշքուղով ծածկուած,  
 Մի՞նչ պատա կատուն քոյն կը խորթայ,  
 Ու կ'իջնէ ձիւնը մեր երդիքէն բաց...  
 Գ. ԱՐՓՈՒՆԻ

**«ՊԵՏՈՒԹԵԱՆԸ ՊԱՐՏՔ ԶՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ»**

Մեր համայնքում կային պետական աչքի ընկնող գործիչներ, նաև մի ակնառու գիտնական, որը կը լինէր մօտ վախճուկ տարեկան. նա դատապարտուած էր քսանհինգ տարուայ բանտարկութեան եւ չափազանց լաւ էր զգում իրեն: Նախքան վճիռ ստանալը նա այն սխալ կարծիքն ունէր, որ ինքը երկու-երեք տարուայ կեանք ունի: Քսանհինգ տարուայ դատավճիռ ստանալուց յետոյ մարդը վերածնունդ: Անկասկած պետութիւնը մի բան գիտէ, որ նրան քսանհինգ տարի է տուել. այդ նշանակում է, որ նա պարտաւոր է այդքան էլ ապրել՝ պետութեանը պարտք չմնալու համար:

էջ 121

Ճ

Մեւ երգիծանքի շրջանակին մէջ առնուած մահարիսական վերի նշմարը «Մաղկած փշալարեր» գործին էջերու և արձանագրուած բազում դիտողութիւններու և պէս կրնար գրագէտի երեւակայութեան մէկ քմահաճ յօրինումը համարուիլ, եթէ գործ ու նեցած ըլլայինք համայնական մթնոլորտէն և դուրս կիրարկուող կամայականութեանց հետ: Կարմիր բռնակարութեան ասիմաններու և մէջ բնական դարձած երեւոյթ եղաւ սակայն անբնական վճիռ արձակելու արարքը, որու և դրսեւ որում ներքոյ ցանցատ շեղան նաեւ մեր երկիւնքին տակ: Կարդացէք Մահարիի նշմարը հաստատող քանի մը ուրիշ վկայութիւն եւս.

Ճ

Մեր խցում Բարսեղ անունով 104 տարեկան մի ծերունի կար, որին մենք Բարսեղ դայի էինք ասում: Նա քայլում էր ձեռնափայտի եւ մեր օգնութեամբ: Սրան էլ կանչեցին եւ յայտնեցին «եռեակի» որոշումը: Նա գըրասեցեակից վերադարձաւ, հայ գիւղացուն յատուկ հեզմանքով ասաց.

—Թախտդ պի՛նո մնայ, Ստալին, ումքս տասը տարով էլ աւելացրեց... Ես ասում էի՝ էսա էսօր-էգուց կը մեռնեմ, հիմա տասը տարուայ սրով տուին, ուզեմ-չուզեմ՝ պիտի սաղ մնամ, որ Ստալինի պարտքը տամ («Գրական թերթ», 1988, թիւ 43):

ՎԱՀՐԱՄ ԱՆԱԶԱՆ



Իվան Իվանովիչը այն ժամանակ 75 տարեկան կը լինէր, գուցէ եւ աւելի: Վերջին տարիներին նա Գլխատորֆի պետն էր, նրան բանտարկել էին 1937 թուին եւ դատապարտել 25 տարուայ ազատազրկման:

—Ահա ձեզ տրամաբանութիւն,—ասում էր Իվան Իվանովիչը,— 75 տարեկան ծերունուն դատապարտում են 25 տարով: Ուրեմն, իմ Բարիւրամեակը ես պիտի տօնեմ բանտում («Սովետական գրականութիւն», 1988, թիւ 6, էջ 6):

ՍՈՒՐԷՆ ՂԱԶԱՐԵԱՆ

**«ԵՐԿՈՒ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ»...**

...Նոյնը կարելի է ասել երկու ճարտարապետների մասին, որոնք, ճիշտ է, ստեղծագործական տարրեր անհատականութեամբ օժտուած մարդիկ էին, բայց կարող էր դիտուել, որ նրանցից մէկըն ու մէկը աւելորդ է, մանաւանդ, որ նրանց վերաբերմամբ նոյնպէս կիրառուած չէր հեռատես Նոյի ընտրական մտածուած սխտեմբը: Աւելորդ չէր լինի յիշատակել այն, որ այս երկու ճարտարապետներից մէկը խորհրդաւոր տան բարդ նախագծի հեղինակն էր:

էջ 120



Հայ մտադրականութեան երկրորդ Ապրիլ 24ին, ի միջի այլոց, բանտ նետուած երկու ճարտարապետներն մէկը, ինչպէս ատիթէ դատ յիշել քիչ մը առաջ, կը կոչուէր Միքայէլ Մազմանեան, եւ միւսը՝ Գէորգ Բոչայր: Ընթերցողին երեւակայութեան մէջ անայստան կազմուեցաւ նաեւ պատկերը «խորհրդաւոր տան», ազատութեան երգիչ Միքայէլ Նաքանդեանի արձանին դիմաց բարձրացած նորակառոյց «ներդարձողական տան»-ը, որուն «բարդ նախագծի հեղինակը» երեք բանաստեղծներուն բանտակից երկու ճարտարապետներն մէկն էր, վերջը յիշատակուած անուններէն առաջինը, Միքայէլ Մազմանեան: Ան մտքէն չէր կրնար անցընել հարկաւ, որ օր մը կրնայ իր ձեռնարած լաբիւրինթոսին մէջ ենթարկուիլ հոգեկան նրւստու թիւններու եւ ֆիզիքական տանջանքներու, ինչպէս մեծ ու մեծութեան որեւէ ատիճանի չիտաւած բանաստեղծներն ու միւսները չէին կրնար երեւակայել, որ ի ձայն փոռոյ եւ թմրկի իրենց փառա-

բանած կարգերու և առաջին գոները կը դառնան իրենք, կարմիր կարգերու և փրկչական թյակը կարգած այդ ուղբերգական անձերը...

Ի բարեբախտութիւն հայաստանի, նոյն կամերային մէջ «մութերուած» միւսներու և պէս կիսաբախտ մը ու նեցան նաեւ երկու ձարտարապետները, ինչոյն եցաւ իրենց «արեգնացեալ կացիւնը», յիսուեալան թուականներու կէտերու և արդարացուեցան ու իրենց մնացած ուժերու և շափով շուրջ մէկուկէս տասնամեակ ծառայեցին հայաստանին...

Կրկին վերադառնալով Մահարիի յիշատակած «խորհրդաւոր տան» պատմութեան, պիտի անդրադառնանք հարկաւ, որ անոր ձեւաւորումը միայն կը պատկանէր Միքայէլ Մազմանեանին եւ ոչ թէ Երեւանի պորտին վրայ նման կառուցի մը անհրաժեշտութիւնը զգալու եւ առ այդ նախագիծեր մշակելու նախաձեռնութիւնը:



ԳԷՈՐԳ ԳՈՉԱՐ

Ընկեր Քոչարը իր գեկուցման մէջ չծառայեց բոլշեակեան սուր ինքնաքննադատութիւնն ու քննադատութիւնը: Նա ինձանքով անցնում էր սուր հարցերի կողքից եւ անհրաժեշտ չհամարեց անկի շեշտակի ու հանգամանօրէն կանգ առնել հակայեղափոխական դաւաճան Խանջեանի քայքայիչ, վնասարարական աշխատանքի վրայ ճարտարապետութեան ասպարէզում, ինչպէս նաեւ լոնց նրա հետ ունեցած կապերի մասին (8 Յունիս 1937):

«Խորհրդային Հայաստան»



Մեր նոր կառուցուած բնակարանները եւ միւս շէնքերը, ինչպէս նշում են «Պրաւդա» եւ «Խորհրդային Հայաստան»ը, իրենց կառուցուածքով ու յարմարութիւններով իրօք շատ յաճախ չեն համապատասխանում ստալինեան դարաշրջանի կոլտորական կեանքին («Խորհրդային Հայաստան», 8 Յունիս 1937):



ՄԻՔԱՅԷԼ ՄԱԶՄԱՆԵԱՆ





Կուսակցական և պետական գործիչ Մանս է 1879ին, Հաղպատ Եւարտած է Թիֆլիսի «Ներսիսեան» վարժարանը, իսկ քարձրագոյն կրթութիւնը ստացած է Փրնէս Խըմբագրած է «Կաթ» և «Պայթար» թերթերը: Հանրային պատասխանատու պաշտօններ վարած է Վրաստանի և Հայաստանի մէջ Փեղակահարած է 1938ին, Երեւան:

Վ. Ա. ԲԱԼԱԿՅԱՆԻ ԵՐԶՆԿԵԱՆ

Արդ մասին իրազեկները կը յիշեն տարբեր անուններ, առանձնապէս՝ Երեսնական թուականներուն պետական ու կուսակցական տարբեր պաշտօններ վարած Արամայիս Երզնկեանը: Կայ Համայնաւար կուսակցութեան պաշտօնաթերթ «Խորհրդային Հայաստան» ի խմբագրական մէկ յարձակումը, որ հարուածային կամ ազգային շինարարութեան իրադարձութիւններու մէջ կը խառնէ նաեւ Արամայիս Երզնկեանի անունը, ճարտարապետներու համագումարին բացման օրը, 5 Յունիս 1937ին, մարտաշու նշ սա ոճով:

«Համագումարը մինչև վերջը կը մերկացնի ու շիկացած երկաթով կ'այրի նացիոնալական արտապայտութիւնները, որ տեղ էին գտնում մեր ճարտարապետութեան ասպարէզում՝ երկերեսանի դաւաճան Խանջեանի և նրա ստոր գործակիցների՝ Երզնկեանների և միւս սրիկաների հրահրումով ու հովանաորութեամբ»:

«Երկերեսանի դաւաճան Խանջեանի ստոր գործակից» Արամայիս Երզնկեանի շինարարական կենսագրութեան և իր շինութեանց մէկուն խորխորատներուն մէջ, ու իր գլխուն մերկացած «Խորհրդային իշխանութեան մերկացրած երկացրի տուր»ին մասին ու նինք «վերագրած» բանտարկեացի մը արձանագրած սա վերկայութիւնը:

«Երբ գետնայարկի աստիճաններով վար էի իջնում, պատահեցի նշանաւոր Արամայիս Երզնկեանին, որի աստղը փայլել էր միայն մինչև 1936 թ., և նա միշտ վարել ու վայելել էր նախարարի կամ փոխ-վարչապետի պաշտօններ»:

«Այս քէֆի սիրամար ածղահար լոռեցին ինքն էր շինել Նայթանդեան փողոցի Էնլավէդէի լաբիրինթոսը, որպէսզի մի օր էլ նրա բնակիչը դառնար, իջնէր դժոխքի աստիճաններով դէպի մթին որջերը, այլեւս յաիտեանս լաիտեանից վեր չբարձրանալու համար»:

«Այստեղ տեղին է յիշել ժողովրդական ինստուտն առածը. «Փոքր փորոզը ինքը փոքր կ'ընկնի»:

«Արամայիս Երզնկեանը իր մեծագոյն բաժինն ունի Հայաստանի պապէս կոչուած «նոր շինարարութեան» մէջ: Նրան կարելի է վերագրել ե՛ւ լաւ, ե՛ւ վատ հասկացողութեամբ՝ «Արամայիս քանդիչ» և «Արամայիս շինիչ» զոյգ մակամունները: Արագ նա քանդում էր հինը, բայց շատ դանդաղ

շինում էր նորը՝ երբեք չապրտելու համար: Միշտ սրա համար էլ հին Երեւանը արդէն գրեթէ աներուած է, պատմական յուշարձաններն էլ մէջը հաշուելով (Պօղոս-Պետրոս եւ Կաթողիկէ Տրդ դարի բազիլիք եկեղեցիները): Բայց նոր Երեւանը դեռ լրիւ շինուած, ասարտուած չէ: Միակ շէնքը, որ Արամայիսն ու իր ընկերները շինեցին ու ասարտեցին, դա Էնկավէդէի հսկայ շէնքն էր...

«Բայց մտածո՞ւմ էր արդեօք նա, որ այդ խոր փոսին մէջ ինքն էլ պիտի ընկնէր՝ այլեւս յափտեանս յափտեցնից...

.....

«Այն վարկեանին, երբ Երզնկեանին, որպէս բանտակցի հանդիպեցի Էնկավէդէի աստիճանների վրայ, իսկոյն յիշեցի մի երկու տարի առաջ նոյն շէնքի բացման շքեղ արարողութիւնը: Ինքն էր, որ առաջինը խօսեց ու ասաց.—

«Էնկավէդէն խորհրդային իշխանութեան մերկացրած երկայարի սուրն է: Նա ուժգնութեամբ իջնում է բոլոր թշնամիների գլխին»...

Հանդիսատէր տրամադրութեամբ այդ բացման ներկայ էին Աղասի Խանջեանը, Սահակ Տէր-Գաբրիէլեանը, չեկիստ Մուրդուսիւն եւ ուրիշ մեծ ու փոքր ողբացեալ համայնակար վարիչներ...: Բայց այդ հանդիսատէր բացումից հազիւ մի-երկու տարի յետոյ, Սահակ Տէր-Գաբրիէլեանին նոյն շէնքի վեցերորդ յարկի պատուհանից դուրս նետեցին. նոյն Արամայիս Երզնկեանին գետնայարկի մէջ խեղդամահ արին, իսկ Աղասի Խանջեանը նոյնիսկ այդ պատուին էլ չարժանացաւ, այլ Բերիայի արիւնտ ձեռքով Թիֆլիսում սպանուեց:

«Այս է մօտաորակէս Հայաստանի սրտի վրայ կառուցուած՝ նոր Պետրո-Պաւլովկայա ամրոց-տանջարանը, այն էլ՝ Նալբանդեանի անունը կրող փողոցի մէջ («Հայրենիք» ամսագիր, 1955, Օգոստոս, էջ 45-46):

**«ՄԻ ՆԾԱՆԱԽՈՐ ԻՆԺԵՆԵՐ»...**

*Ունէինք մենք մեր մէջ մի նշանաւոր ինժեներ, բայց նա իր ինժեներութեամբ չէր, որ դարձաւ մեր համայնքի սիրելին, ոչ էլ իր հանգիստ, բարեհամբոյր վարք ու բարքով: Նա օժտուած էր զարմանալի յիշողութեամբ: Օրը երկու անգամ, առաւօտեան եւ երեկոյեան, շաբաթներ շարունակ նա պատմում էր Տոլստոյի «Աննա Կարենինա»ն եւ «Պատերազմ եւ խաղաղութիւն»ը: Նա ոչ թէ պատմում էր այդ վէպերի բովանդակութիւնը, ոչ, նա առանց գրքի կարդում էր այդ վէպերը եւ չէր կարելի առանց գեղագիտական բարձր հաճոյքի լսել նրան:*



«Մաղկած փշալարեր» միպակին մէջ միայն այսքան տող նուիրւած է Մահարիի պատկերացումին մէջ նշանատր ինժեներին եւ այսքանը կը բաւէ հաւանաբար, որ ընթերցողը յիշողութեան մէջ առանձին համարումով մը պահէ քանի մը գիծ անկէ, որ ուշագրաւ է ոչ միայն Տոլստոյի գլուխ-գործոցները գոց տրված ու վերարտադրելու շնորհով օժտուած իր հեքիայով այլեւ՝ տոլստոյական իր առաքինութիւններով իր «հանգիստ, բարեհամբոյր փարք ու բարք»ին համար:

Ոչ որ կը փորձուի հարցնել, թէ այդքան արժանիքներ անձնատր րած անհատականութիւն մը ի՞նչ գործ ունէր «խորհրդատր տան» նկողներուն մէջ, բայց նոյն արժանիքներուն բերումով ընթերցողը պիտի ուզէր ճանչնալ անոր բուն ինքնութիւնը, որուն համար դարձեալ օգնութեան կը հասնի «Մաղկած փշալարեր» միպակի հեղինակին բանտակից Վահրամ Արագան եւ կը յայտնէ անոր մակաւնունը.

«Ինձեներ ջրանցքագէտ Ծիրմանգանեանը պատմեց մեր ջրանցքների մասին, սկսած Ծամիրամից մինչև մեր օրերը: Նոյն Ծիրմանգանեանը շատ լաւ գիտէր ռուս գրողներին, համարեա՛ր քերանցի գիտէր Լէւ Տոլստոյի եւ ամէն երեկոյի ոչ թէ պատմում, այլ կարծես կարդում էր նրա հատորները» («Գարուն», 1989, թիւ 3, էջ 36):

Յստօք, կարելի չեղաւ տեղ մը հանդիպիլ ճարտարապետ Ծիրմանգանեանի կենսագրական մանրամասնութիւններուն ու լուսանկարին...

**«ԺԱՄԱՆԱԿԻ ԼԱՒԱԳՈՅՆ ԳՐՈՂՆԵՐԻՑ ՄԷԿԸ»...**

*Մեր համայնքի անդամներից մէկը, որի ազգանունը մենք սովոր էինք կարդալ թերթերում, գրեթէ ամէն օր կառավարական որոշումների տակ, անհաւատալի մի բան պատմեց այդ օրերին ղատելուց յետոյ նրան խոթում են մի բանտասենեակ, ուր ոչ ոք չի լինում: Երբ ուժքի է դալիս «մինուտնի» դատի մղձաւանջից, սկսում է շրջել կամերայում: Կամերայի պատերին նկատում է մակաբուրձիւններ: Այնտեղ նա կարդում է ծանօթ ընկերների թողած վերջին տողերը: Այո, դա եղել է մահուան դատապարտուածների վերջին հանգրուանը: «Երեք բոպէ տեւող դատապարտութեամբ դատապարտուած եմ գնդակահարութեան. կեցցէ՛ հայ ժողովուրդը», — գրում է ժամանակի լաւագոյն գրողներից մէկը:*



Գրագէտ, թատերագիր, թարգմանիչ, ճրագրակազիր և մանկավարժ ԾՆած է 18 Յունիս 1893ին, Խարբերդի Մեզրէ քաղաքը՝ Նախնական կրթութիւնը ստացած է Խարբերդի հեղրոնական վարժարանը 1908ին կ'անցնի Երրոպա, ապա՝ Ամերիկա։ 1915ին կը վերադառնայ հովկաս եւ իջրե կամուր կը մեկնի ռազմաճակատ ու կը կռուի Վանի եւ Էրզրումի մէջ։ Պատերազմէն ետք կրկին կը մեկնի Ամերիկա, իսկ 1922ին կը վերադառնայ Հայաստան ու կը զբաղի մշակոյթով։

Կը գնդակահարուի 1938ին, Երեւան։

ՎԱՀԱՆ ԹՈՒՈՎԵՆՑ



Հոս, Մահարիի բերնին մէջ, համայնքը բանտակից դժբախտները բաղկացնող խումբն է, որուն կարկառուն անդամներէն մէկը եթէ անորոշ ձգուած է, անոր պատմածը սակայն յստակ է շատ, ու սքոռմու թեան հերարը՝ *«Կեանքը հին հոռմէական ճանապարհի վրայ»* նշանաւոր վիպակին տախանդաւոր հեղինակը՝ Վահան Թորոփեւնց, որ *«Երեւրոպէ տեսող դատաւաւ թեամբ...»*, եւ այլն։

*«Մաղկած փշալարեր»* վիպակի հիւսուածքին մէջ առնուած այս տեղեկութիւնը ընթերցողին ծանօթ է ուրիշ աղբիւրներէ եւս, մեզի՝ բանաստեղծ Վաղարշակ Նորեւնցի *«Յուշեր եւ արձագանգներ»* ատեն հատորէն (1968), ուր մէջբերուած է *«Այստեղի արաւ երազոյն չափէն»* զերծ մնացած *«դժբախտ բախտաւորներէն»* Արմենակ Թորմաջեանի մէկ հաբարդու մը Նորեւնցն է, խօսողը եւ խօսքը ուրբուած է Վահան Թորոփեւնցին։

«Ես, ինչպէս եւ մեր բախտակից շատ ընկերներ իմացանք քո ամենավերջին գլխաւոր խօսքը, միայն մի պարբերութիւն, որի մէջ դու դրել ես մի անասոր ողբերգութիւն, մի հերոսական հոգի եւ անխորտակելի մի լուստեսութիւն քո ժողովրդի ապագայի համար։ Քո այդ պարբերութիւնը սեփական աչքերով կարդացել է մեր ընկեր Արմենակ Թորմաջեանը (որ բարեբախտաբար ապրում է մինչեւ այսօր) եւ նոյն օրը՝ կարդալուց կէս ժամ լետոյ լայտնել է մեզ, քառասուն բախտակիցների, 1938 թուականի Յուլիսի 20ին։

«Ահա քո վերջին գրաւոր խօսքը. «Հինգ րոպէ դատաւարութեամբ դատաւարտուեցի մահուան. քացարձակապէս անմեղ եմ։ Կեցցէ՛ հայ ժողովուրդը» (էջ 213-214)։

Վերադառնալով հառուածին սկիւլը, պարտ է մեզի յիշեցնել, որ *«Մաղկած փշալարեր»* վիպակին մէջ խորհրդաւորութեան մէջ ձկամ անձնաւորութեան ընթերցողը կը հանդիպի ուղիղ երկր էջ անդին (126) նոյն խորհրդաւորութեամբ պարտուած ու դարձեալ նոյն

հանգամանքներով լրտո որուն՝ «առանց որի ստորագրութեան թերթում լոյս չէր տեսնում ոչ մի որոշում»:

Կրթութի, թէ նոյն կամերային մէջ նոյն լուրը լրատու այդ մասին իր յուշագրութեան մէջ Վատարշակ Նորենց յիշատակած Արմենակ Թորմաջեանն է Մահարիֆին եւ միւսներուն «անհաւատարի մի բան պատմած» անձ նաւորութիւնը Այդպէս կրթութի:

Ընթերցողը շնորհակալ կ'ըլլայ, եթէ մէկը այդ մասին աւելի հաւաստի տեղեկութիւն մը հաղորդէ իրեն...

**«ԱԿՆՈՑԱՒՈՐ ՕՉԻ ԼԵՁՈՒՈՎ»...**

*Ընդարձակ հրապարակը գտնուում է գինուորական հսկողութեան տակ: Այստեղ-այնտեղ երեւում են գինուած պահուորդներ՝ վարժեցրած շների հետ: Այս բոլորն, ի հարկէ արւում է մեր պահուութեան համար: Նրանք արգելի են ամէն երթեկեկ եւ փակել բոլոր ճանապարհները: Առանց այս հոգատար միջոցառումների ժողովուրդը կարող է յարձակուել... ո՛ւմ վրայ... Ի հարկէ իր թշնամիների, մե՛զ վրայ, մե՛զ վրայ: Նրանք մեզ բզիկ-բզիկ, ակնոցաւոր օձի լեզուով ասած՝ հողմացրիւ կ'անեն, հո՛ւմ-հո՛ւմ կ'ուտեն:*

էջ 128



Հարուածին մէջ նկարագրում անտրոշ դերակատարներուն՝ – գինուած պահուորդներուն, «վարժեցրած շներ»ուն եւ ժողովուրդ հաւարական անու նին մէջ կարելի է զատորոշել մէկը միայն, «Ակնոցաւոր օձը» – Լաւրենտի Բերիան, այն ալ ո՛չ իր ակնոցին շրջանակով կամ օձային դերին բերմամբ, այլ ի դէմս այն օրերուն իր գործածած մահասարսուռ բառերէն մէկուն: «Հողմացրիւ»: «Հողմացրիւ»ը «ակնոցաւոր օձ»ին մարտական յօրուածներէն մէկուն խորագիրին երկրորդ եզրն է, առաջինը՝ «ոչնչացներ», ամբողջութիւնը՝ «Պէտք է



Սոպետ կուսակցական եւ քաղաքական դէմք, ծնած է Վրաստան, 1899ին: Եղած է պետական պահուութեան եւ ներքին ճախարար: Ստալինի մահէն ետք, 1953ին շնորհագրկուեցաւ ու զնդակահարուեցաւ Լոյն տաբոյնց Գեկտեմբեր 23ին:

ԼԱՒՐԵՆՏԻ ԲԵՐԻԱ

*ոչնչացնել, հողմացրիւ անել սոցիալիզմի թշնամիներին» («Գրական թերթ», 1936, թիւ 19):*

Այսպէս չգրեց միայն ստալինեան չափանիշով արիւնուշուտ պղծութիւն, այլ գործնապէս ու անընդհատ հեձեց եւ անդադար հողմացրիւ ըրտ, բայց ոչ անպայման սոցիալիզմի թշնամիները, այլ մասնաւանդ սոցիալիզմի անուսով ելող ու մըրած ու գործած վաստակաւոր սոցիալիստները, եւ անոնց շարքին՝ Հայաստանը Հայաստան պահելու պարզագոյն ապրումներով տրոփող Հայաստանի զաւակները, ունանք ուղղակի իր ձեռքով միսները՝ իր վատասերած գործակալներուն մանգաղներով Հայ մտաւորականութեան կարկառուն ղեկները ու անոնց հետ միասին քաղաքական ու գիտութեամբ ու ժերոյ ոչնչացնելով չքաւարարուեցաւ «ակնուցաւոր օձ»ը, այլ արնածալաւ իր վարպետին օրինակով դիմեց խնայուած խլեակները նուաստացնելու աներեւակաղէի միջոցներու եւ հեշտացաւ իր գործած ոճիրներուն արդարութիւնը դրուատող ովսաննաներ արձակել տալով անոնց:

Անշուշտ, զինեալ պահակներն ու «վարժեցրած շները» հոն բերուած չէին բանտերու նկուղներուն մէջ տարի մը ու սուլի ժամանակ հարումաշ եղած բանտարկեալները ժողովուրդի ցասումէն պաշտպանելու համար: Ժողովուրդ տարրը հոս գործածուած է ոճարին սեւ երգիծանքը աւելի ընդգծելու համար, հակադրութեան օրէնքով բաց որոշ վերապահութեամբ մը կարելի է ըսել թէ «ակնուցաւոր օձ»ին եւ անակնոց օձապետին կիրարկած գլխատումներէն ետք մեր երկիրին տակ մնացած ժողովուրդը՝ ժողովուրդը հասկացողութեան սահմաններէն դուրս բերուած ու ամբոխի վերածուած բազմութիւն էր իր ջանքախիչ տոկոսով եւ հետեւաբար կրնար արդէն իբրեւ «Հայրենիքի դաւաճան ու ժողովուրդի թշնամի» խարանուած իր զաւակներուն վրայ յարձակիլ ու հում-հում ուտել բոլորը:

Քիչ առաջ յիշեցինք իբրեւ աջ-տրոցկիստական դաշնակցական ամբաստանուած ու յոգիներուն ղէմ արձակուած մահապճիռը Դաւոնանք եւ յիշենք նաեւ մահապճիռը ու նկնողրած ներկայներուն հակազդեցութիւնը, որ բնորոշ է նոյն օրերուն խլեակի վերածուած մեր ժողովուրդի տարբեր խաւերուն:

«Դատաւճոյի հրապարակումը դատարանի դահլիճում ներկայ գտնուող հարիրաւոր բաճուորների, կոլտնտեսականների, խորհրդային ինտելիգենցիայի ներկայացուցիչների կողմից դիմատրուտեց ցնծագին ծափահարութիւններով, ուռաներով, բացազանչութիւններով՝

«—Կեցցէ՛ խորհրդային արդարադատութիւնը,

«—Մա՛հ Փաշիստական շներին,

«—Ողջո՛յն խորհրդային դատարանի արդարացի դատաւճոյին» («Խորհրդային Հայաստան», 29 Դեկտեմբեր 1937):

Կան եւ ատնեցմէ առաջ դատուած կամ առանց դատի դատաւարտուածներուն համար «անուրբ պատիժ» պահանջող բանուորներ, մտաւորականներ:

«Անողոր պատժի ենթարկել եւ Հայաստանում յայտնաբերուած տրոցկիստական-դաշնակցական-նացիոնալիստական փոժուածքներին՝ Ստեփանեանին, Սիմոնեանին, Գալոյեանին, Եղիազարեանին եւ Միսնե-րին» («Խորհրդային Հայաստան», 2 Փետրուար 1937):

Նման պահանջներ դնող ու կեցցէ ու անկցի պռոռացող ժողո-վուրդը, այո՛, կրնար հում-հում ու տել Մահարին եւ միւսները որոնք յայտարարուած էին աջ-տրոցկիստական, դաշնակցական, բաւոյիտ, եւ այլեւ

«Ակնոցաւոր օձ»ին ստեղծած մթնոլորտին մէջ այս էր ժողո-վուրդը եւ բնաւ զարմանալի չէ խղեակներու նոյն բազմութեան ար-ձակած երախտագէտ զեղումներն ու ողջոյնները «ակնոցաւոր» նոյն օձին.

«Երբ հնչում է ընկեր Բերիայի անունը, դաճիճում ոգեւորութեան ու ծափերի փոթորիկ է բարձրանում: Երեւանի գործարանների ստախանովա-կանները ողջոյնի բացազանչութիւններ են անում Անդրկովկասի թղշեիկ-ների մարտական դեկաւարին» («Խորհրդային Հայաստան», 20 Յուն-ւար 1937):

**Ողջոյնի ուրիշ նմոյշ մը.**

«Թանկագին Լարենտի Պալուվիշ, անգնաժատելի է ձեր օգնութիւնը հայ ժողովրդին՝ նրա հրճուալից եւ երջանիկ կեանքի ստեղծման գործում: Մենք՝ Երեւանի պոլիտեխնիկական Ինստիտուտի պրոֆեսորներս, դասա-խօսներս, ուսանողներս, ինչպէս եւ Խորհրդային Հայաստանի բոլոր աշ-խատարները, երբեք չեն սոռանայ ձեր հոգատարութիւնը մեր մասին եւ մեզ ցոյց տուած օգնութիւնը՝ հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներին մերկա-ցընելու եւ արմատախիլ անելու գործում» («Խորհրդային Հայաստան», 11 Մայիս 1938):

**«ԲԱՆԱՍՏԵՂՄԻ ԱՍԱՄԻ ՊԷՍ»...**

*Հագնուելուց յետոյ, ես ինձ իմ շորերով զգացի թեթեւ, բա-նաստեղծի ասածի պէս շուսամփոփի պէս թափանցիկ, իսկ երբ դէն նետեցի բանտային ահաւոր ոտնամանները ու Հագայ իմ տնա-յին կօշիկները, մի ուրիշ բանաստեղծի ասածի պէս՝ կարծես արեւ իջաւ իմ ուսերին...*

էջ 151

Ճ

Ուրու անկարուած բանաստեղծներէն առաջինը շատ ծանօթ է, Եղիշէ Չարենց, ծանօթ է նաեւ մատնուած անոր բանաստեղծութիւ-



Քանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ եւ ուսուցիչ: Ծնած է 18 Մարտ 1897ին Կարս Տեղւոյն ծխական դպրոցէն ետք, կը յաճախէր ուսական ուսական վարժարանը: 1915ին կը զինուորագրուի ճայկական եօթներորդ քանակին եւ կը հասնի ժիւն: Վաճէ 1916ին կը մեկնի Մոսկուա եւ կը հետեւի Ժանեստեղծի անուան գրական համալսարանը: 1922ին կրկին կը մեկնի Մոսկուա եւ կը հետեւի Բրիտոյի հիմնադրած գրական հիմնարկին: 21 Նոյեմբեր 1924ին կը մեկնի Եւրոպա, որ կը մնայ ութ ամիս Վերադարձին կը վարէ խմբագրական եւ հրատարակչական պաշտօններ: Կը ձեռքաւորուի ու կը մեկնի քանտին մէջ, 29 Նոյեմբեր 1937ին, Երևան:

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՆԵ



Եր, որ «Միածան» հաստորին երրորդ չափածոն է եւ ունի Խոյն խորագիրը «Միածան»: Կ'արժէ կրկին ու կրկին անգամ կարդալ քսանէն վար տարիքի մը գրուած այդ գոհարը.

Լուսամիտիի՛ պէս աղջիկ՝ աստուածամօր աչքերով,  
Թոքախտաւոր, թափանցիկ. մարմնի պէս երագի,  
Կապոյտ աղջիկ, ակաթի ու կաթի պէս հոգեթով,  
Լուսամիտիի՛ պէս աղջիկ...

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ շմեռնի իմ հոգին,  
Որ չմարի իմ հոգին քո ակաթէ աչքերում.  
Ես ինչ անեմ, որ մնայ ծիածանը երեքզոյն,  
Որ չմարի, չմարի՛ իմ հոգու հետուն...

Լուսամիտիի՛ պէս աղջիկ, աստուածամօր աչքերով,  
Թոքախտաւոր, թափանցիկ. մարմնի պէս երագի,  
Կապոյտ աղջիկ, ակաթի ու կաթի պէս հոգեթով,  
Լուսամիտիի՛ պէս աղջիկ...

Եւ «մի ուրիշ բանաստեղծի ասածի պէս» ըսածին աղբիւրը անյայտ մնաց մեզի:

#### «ԴԷՊԻԱՂԲԻԻՐԸ ԼՈՅՍԻ»...

Իսկ հիմա գնում ենք, ու փառք Աստուծոյ, որ գնում ենք, ո՛ւր, այդ կարեւոր է, կարեւորն այն է, որ գնում ենք. «Դէպի աղբիւրը լոյսի».- կ'ասէր բանաստեղծը. Մեզ համար հիմա, եթէ



Ֆանաստեղծ, թարգմանիչ, ուսուցիչ ԾՆած է 1884ին, Մերաստիոյ մօտ՝ Բրզնիկ գիւղը: Գիտի դպրոցին մէջ գրել-կարգաւ սորվել ետք, կը դրկուի Պոլիս, ուր կը յաճախէ Մխիթարեան վարժարանը: 1902ին կ'ընդունուի Վեներիկի «Մուրատ Ռափայէլեան» դպրոցը, որուն ընթացքը ասարակէ ետք, 1905ին կը յաջողի անցնի Պելճիքա եւ ժողով կան ջաղացի ծամպարանը: Կ'աւարտէ համալսարանի բնկերային ճիւղը ու կը հետանայ Պելճիքայէն: 1909էն սիւնն 1915 իր հայրենի գիւղին, ապա Պոլսոյ մէջ կը գրադի ուսուցչութեամբ: Կը նահատակուի 1915ին:



ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

անկեղծ խօսենք, լոյսի աղբիւրն այնքան կարեւոր չէ, որքան ջրի աղբիւրը...

Գնում ենք:

էջ 156

Ակնարկութիւնը կը վերաբերի Դանիէլ Վարուժանի հանրածանօթ «Լոյսը» բանաստեղծութեան, որու ն հինգ հատուածներէն յարաբանչիւրը կ'աւարտի «Մաղկած փշալարեր» վիպակին մէջ յիշատակուած երթով

«Ու ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին»...

\*  
\* \*

Կանխող էջերու ն վրայ, ի հարկէ մեր հասողութեան սահմաններու ն մէջ, բառի, պատկերի ու կենսագրական գիծերու վերածուեցան այն բոլոր տուեալները, զորս կը թելադրէր «Մաղկած փշալարեր» վիպակը

Յաւակնութիւն պիտի լլլար ըսել, որ սպառեցինք նիւթը կամ հարիւր տոկոսով ճիշդ են մեր կրահումները

Թերակատարութեան այդ հասանկանութենէն մեկնելով՝ պիտի ըսենք, որ խմբագրութիւնս շնորհակալութեամբ տեղ պիտի տայ լրացուցիչ մանրամասնութիւններու, հայրենի թէ Սփիւոքի ո'ր աղբիւրէն ալ հասնին անոնք մեզի

# ԱՆՇԵՏԱՑԱՑ ԴԵՄԵՐ

# ՀԱՍՕ ՍԱՇԵԱՆ



Բանաստեղծ եւ թարգմանիչ Համօ Սաֆեան (թոն անունով՝ Հմայեակ Գրիգորեան) ծնած է 14 Ապրիլ 1914ին, Լոր գիւղը (այժմ՝ Սիսիանի շրջան)։ 1927ին կը փոխադրուի Բաքու, ուր կը ստանայ իր միջնակարգ ուսումը։ 1939ին կ'աւարտէ Բաքուի մանկավարժական Ռիմնարկը։ 1939-41 կը պաշտօնավարէ Բաքուի «Յուր'ըրգային գրող» ամսագրին մէջ՝ իրեն գրական աշխատող։ 1941-45 կը ծառայէ Խորհրդային

բանակին մէջ։ 1941-51 մաս կը կազմէ Բաքուի «Կոմունիստ» հապերէն թերթի խմբագրութեան՝ իրեն գրական աշխատող։ 1951ին կը հաստատուի Երեւան եւ մինչեւ 1954 կը պաշտօնավարէ «Աւանգարդ» օրաթերթին մէջ՝ իրեն բաժնի վարիչ, իսկ 1954-86՝ նոյն պաշտօնով «Տղեր» երգիծական հանդէսին մէջ։ 1965-87 կը վարէ «Գրական թերթ»ի գլխաւոր խմբագրի պաշտօնը։ 1987ին կը վարէ ՀՍՍՀ Միներտորների Խորհուրդի առընթեր պետական մրցանակներու յանձնաժողովի քարտուղարութիւնը։

Համօ Սաֆեանի գլխաւոր գործերն են՝ «Նայիրեան դարբ բարդի», «Հայաստանը երգերի մէջ», «Մալլամուտից առաջ», «Քարափներէ երգը», «Սեղամ, բացուիր», «Իրիկնահաց», «Տոնի կանչը», «Դաղձի ծաղիկ», եւ այլն։

1975ին, «Սեղամ, բացուիր» ծղրվածուին համար կ'արժանանայ ՀՍՍՀ պետական մրցանակին։ Պարգևատրուած է նաեւ այլ շքանշաններով։

Համօ Սաֆեանի քնորոշ բանաստեղծութիւնները թարգմանուած են աշխարհի բազմաթիւ լեզուներու։

Մեռած է 19 Հոկտեմբեր 1993ին, Երեւան։

\*  
\*  
\*

*Վաստակ են շուրջը նորից,  
Բեզ նորից օրով հոտուտակ,  
Մեղքեր են փնտուտակ քո մէջ  
Եւ անոնք հողիդ յօշոտուտակ։*

*Կուչ տալ են յանդուտակ քեզ,  
Ունեւտակ են անվերջ յփոտուտակ...  
Բայց մէկ է, կուչ չես զնայ,  
Կը մնաս նրանց կողորդուտակ։*

\*

\*\*

Ա՛խ, իմ խոնարհ, խելօք,  
Ոնեացնոր աշխարհ,  
Միշտ երեխայ, միշտ ծեր,  
Միշտ հին ու նոր աշխարհ:

Հանճարներ ես ծնում  
Եւ մտում ես էլի  
Ապաշնորհների  
Մենաշնորհ՝ աշխարհ:

\*

\*\*

Յաւում է սիրոս անգորութիւնից,  
Եւ անգործների հօրութիւնից,  
Անկարողների յոթ կարեւարաց,  
Եւ անգործների գործելուց անվերջ:  
Էլ չէք տանում դուք  
Նեարդեր իմ յոգնած,  
Էլ չէք տանում դուք  
Ոչ կարտոնների մէջ ու մատախուղ,  
Ոչ փառքի փոշի,  
Ոչ խօսքերի ձուխ:  
Եւ ծերանում էք զուք էլ ինձ նման,  
Երգելու իմ թեթեւ,  
Ոնաքեր սրտաբուխ:

\*

\*\*

Ու եղաւ սօրի հրավառութիւն,  
Ու խաբէութեան հարսանիք եղաւ...  
Ու կեանքս եղաւ անվերջ դառնութիւն,  
Եւ արուեստիս սունն անասնիք եղաւ:  
  
Սուրբս լիրք եղաւ, աստուածս՝ մռայլ,  
Հրճուանքս՝ շինծու, տքնանքս՝ ձրի...

Ա՛խ, իմ ժողովուրդ, Քո այնքան լուսլլ  
Տուածից քեզ ի՛նչ վերադարձրի:  
Էլ յոգնած հողիս ինչպէ՞ս դիմանայ...  
Կանցնեն տարիներ, եւ ո՞վ կ'իմանայ,  
Թէ քանի «Պատրանք» քանի «Փարվանա»,  
«Ասպետական» ու «Բինդետ» կորցրի...

Գո երկնքի տակ հապարաչքանի  
Ինձ մի խոստանայ յիտմահու փառքեր,  
Եթէ ներես ու զտնես արժանի,  
Իրաւունք սուր ինձ քո հողում պատկել:

\*

\*\*

### ԵՒ Ի՞ՆՉ ՄՆԱՑ ՄԵՉ

Բախտից շիտանք, զժբախտաւար են,  
Անկախ, ինքնիշխան զժբախտաւայր են,  
Աւարաւայր են ու զաղթաւայր են  
Մեր աստաններն ու արուարձանները:


Արաւում չլքած լուս ընկաններ են,  
Թաղէ թաղ ընկած մտապկաններ են,  
Աղէտեալներ են ու վարձկաններ են,  
Ուրուականներ են թիւրհազարները:

Եկան... Տիրացան ու աւերեցին,  
Իրենց մեղքերը մեզ շեղեցին,  
Մեծահոգաբար մեզ նախնեցին  
Ձեխ, զրուարար այս բազարները:

Եւ ի՛նչ մասց մեզ... մրտած մեղքութիւն,  
Շապկիլը հանած օձի մերկութիւն...  
Թող կեցցէն այս նոր նորին մեծութիւն  
Վերջին պարոնայք Գաջնադարները:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

# ԱՐՏԱՇԻՍ ՅՈՒՆԱՆԵԱՆ



Ա. Յունանեան մեծ համբաւ կը շահի 1960ական թուականներուն, երբ արուեստաբաններ բարձր կը գնահատեն եւ անոր գեղանկարչական արժէքը: Իր գործերը կը սկսին ցուցադրուիլ ո՛չ միայն ճախկին Խորհրդային Միութեան տարածքին, այլեւ՝ աշխարհի զանազան երկիրներու մէջ, ինչպէս՝ Լեհաստան, Չեխոսլովաքիա, Լիթուանիա, Էսթոնիա, Իտալիա, Փորթուգալ, Ճափոն, Մ. Նահանգներ, Գանատա, Չիլի, Լիբանան, եւ այլն:

Գեղանկարչականին զուգահեռ՝ ան կը զբաղի բանահասարթեամբ եւ գրականութեամբ: Իր աւագ որդիին՝ ջութակահար Գէորգ Յունանեանի հետ կը շրջի Հայաստանի զիւղերը եւ կը հաւաքէ ազգագրական նշանակութիւն ունեցող երգեր: Հայկական ժողովրդական, հոգեւոր եւ ազգագրական երգերու մեկնարանի հանգամանքը շտաով կը միանայ Ա. Յունանեանի անուան:

Գեղանկարիչ, բանահասար եւ բանաստեղծ Արտաշէս Յունանեան ծնած է 1922ից, Սպիտակի շրջանի Ծաղկաշէն գիւղը: Ջիմուրական ծառայութեան շրջանին, հանգիստի ժամերուն կը սկսի երփնագրել գեղանկարներ, որոնք կը գրաւեն իր պատասխանատուներուն ուշադրութիւնը:

Պատերազմէն ետք կը յաճախէ Երեւանի «Փանոս Թեղլեմէզեան»ի անուան գեղարուեստական ուսումնարանը, զոր կ'աւարտէ 1950ին, ապա՝ 1958ին, Երեւանի Գեղարուեստ-թատերական Բարձրագոյն Հիմնարկը:

1961ին, կը սկսի պաշտօնավարել Երեւանի Մանկավարժական Բարձրագոյն Հիմնարկին մէջ՝ իրեն գեղանկարչութեան աւագ դասախօս: 1980ական տարիներուն, կը հաստատուի իր ծննդավայրը՝ Սպիտակ, ուր կը հիմնէ կերպարուեստի ուսումնարանը՝ «Երախտ համարելով երեխաներին նկարչութիւն սովորեցնելը»: 1988ի Դեկտեմբերի երկրաշարժը ծանր անդրադարձ կ'ունենայ Ա. Յունանեանի հոգեկան աշխարհին վրայ եւ ան կը դադրի ստեղծագործելէ:

Ա. Յունանեան կը նկարագրուի մէկէ անկէ արժէքաւոր երկեր, ինչպէս՝ Տայթէ Ալիկէրիի «Աստուածային կատակերգութիւն»ը, Գրիգոր Նարեկացիի «Մատան որբերգութեան»ը, Եղիշէի «Էջան Վարդանայ եւ հայոց պատերազմին»ը, Լեւոն Ծանթի «Հին աստուածներ»ը եւ Աւետիք Դասնակեանի «Ապու յար Մահարի» արձակը:

Գր. Նարեկացիի հանդէպ բացառիկ սերու պաշտամունք ունեցող Յունանեան, իր կարգին, 1970-1984 տարիներուն թողոթից կը լացճնէ Մատանի ուղղակի եւ անուղղակի ազդեցութեան տակ ձեւատրուած իր *խոստովանանքները*, որոնք լոյս կը տեսնեն 1994ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Անթիփասի տպարանէն՝ «Պահպանակ» խորագրով:

Ա. Յունանեան կը մահանայ 19 Հոկտեմբեր 1994ից, Լոս Անճելըսի Կէնտլէյ շրջանը:



# ՌՈՒԲԵՆ ԶԱՐԵԱՆ



վարէ ՀՍՍՀ Գիտութիւններու Ակադեմիային մէջ, ուր կը ստանձնէ զանազան պատասխանատուութիւններ: 1948էն սկսեալ Քայ թատրոնի պատմութիւն կը դասաւանդէ Երևանի գիղարուեստաթատերական ինստիտուտին մէջ, իսկ 1968ին, երբ կը Յիմնադրուի ՀՍՍՀ Գ.Ա. արուեստի ինստիտուտը՝ կը ճշմանկուի այս հաստատութեան տնօրէնը:

*«Արտիստի ճնախաշարից» եւ նրա պատմութիւնը»* ատարածադր պաշտպանելէ ետք, 1940ին կը ստանայ բանասիրական գիտութիւններու թեկնածուի աստիճան, իսկ 1962ին՝ արուեստագիտութեան դոկտորի աստիճան՝ իր *«Աղջակեան»* խորագրեալ աշխատասիրութեան համար: 1966ին, երբ կը հիմնուի Եւրասիացիներու հայկական կեդրոնը, Ռուբեն Զարեան կը ճշմանկուի անոր տնօրէնը:

Թատերագէտ ու շքափիրագէտ Ռուբեն Զարեան հրատարակած է շուրջ 26 անուն մասնագիտական հատորներ, որոնց գլխաւորները կը համարուին *«Թատերական դիմատուկները»*, *«Վիրանոյց»*, *«Աղջակեան»*, *«Շէքսպիրը եւ Հայերը»*, *«Յուշապատում»* (3 հատոր), *«Մայրամուտից առաջ»*, եւ այլն:

Ռուբեն Զարեանի գործերէն ոմանք թարգմանուած են ռուսերէնի, անգլերէնի, ֆրանսերէնի եւ իտալերէնի:

Մեռած է 1994ին, Երևան:

Գրականագէտ, թատերագէտ, արուեստի վաստակատու գործիչ եւ ակադեմիկոս Ռուբեն Զարեան ծնած է 1 Սեպտեմբեր 1908ին, Էքեմնական (այժմ Կումայրի):

Մանկութիւնն ու պատանութիւնը կ'անցընէ Թիֆլիսի մէջ, ուր կը ստանայ նախնական եւ միջնակարգ կրթութիւնը: 1936ին կ'աւարտէ Երևանի համալսարանի բանասիրութեան բաժանմունքը: 1938-47 տարիներուն կ'աշխատի Հայպետհրատի մէջ՝ իրեն գեղարուեստական գրականութեան խմբագրութեան վարիչ եւ միաժամանակ կը վարէ *«Մովսէսական գրականութիւն եւ արուեստ»* ամսագիրի խմբագրի պաշտօնը՝ 1941-43ին: Այնուհետեւ կը պաշտօնա-

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

*Վրայ հասաւ 1937 թուականն իր մռայլ դէպքերով: Եարբից հանուեցին գրական նշանակալի դէմքեր: Այս լուրերն առանք ու ցնցուեցինք, ասես արիւնը կանգ առաւ մեր երակներում: Հաւաքուած էինք ու մինչեւ ուշ գիշեր խօսում, միտք մտքի տալիս: Ալազանը ժողովրդի թշնամի, Բակր՝ լայր, Նորեմբը, Թոթովե՛նցը, Մկրտիչ Արմէ՛նը, Զանա՛նը, Մահարի՛ն, վերջապէս՝ Զարե՛նցը: Հաւատարու բան չէ: Մեր կեանքի հետ կապուած, մեր կեանքը*

պատկերող ու գույներգող մարդիկ: Թերեւս գործել են քողարկուած, գաղտնի եւ ոչինչ չենք իմացել: Գուցէ ընդլատակեայ գործունէութիւն են ունեցել: Սա ու ինձ նման շատ շատերը մնացել էինք շուարած եւ ապրում էինք չփոթ զգացումներով: Մի կողմից՝ այնքան միամիտ էինք, որ մեզ իրաւունք չէին տալիս կասկածելու երկրի քաղաքական ապահովութիւնը վերահսկող մարմինների գործունէութեան վրայ, միւս կողմից՝ քննողական մի ծայն այլ բան էր ասում: Չէինք հասկանում եւ հակուած էինք նրանց անմեղ կարծելու, որովհետեւ սիրում էինք նրանց, գնահատում էինք, վերջապէս՝ անձնական մտերմութիւն ունէինք հետները: Բայց ո՞վ կը յանդգնէր ծայն հանել, ասել, թէ իսկապէս այս ի՞նչ է կատարւում: Ամէնքը երկիրդի մէջ էին, եւ ոչ ոք ոչ ոքի համար երաշխաւոր չէր: Ահի ու կասկածանքի ժամանակներ էին: Բնութիւնը նոյնն էր՝ գիշերը գիշեր էր, ցերեկը՝ ցերեկ, իսկ մարդիկ զրկուած էին քնից, աչք ու ականջ էին պահում իմանալու, թէ այս գիշեր ում են տարել: Ուր էլ գնում էիր՝ հրատարակչութիւն, համալսարան, գրողների տուն, ուսումնարան, արտափելի լուրեր էիր անում: Հրդիդ տակնուվրայ էր լինում: Չկային իմ շատ ուսուցիչները, չկար իմ աւագ ընկերներից բուական թուով մարդ: Չկար տուն, ուր դժբախտութիւն չլինէր: Իսկ նրանք, որոնց դուռը չէր բախել դժբախտութիւնը գիշերով, ապրում էին վախը սրտերում, չիմանալով, թէ ինչով է աւարտուելու օրը, առաւօտեան աչքը տա՞նն են բացելու, թէ...

Մարդիկ ապրում էին բզկտուած հողով: Եթէ մէկնումէկը, որ անփորձանք էր անցել 1937 թուականը, ասի, թէ ինքը մոռացել է պատահածը, դա մի մղձաւանջ էր, եկաւ ու անցաւ, չըհաւատաք, բացէք նրա սիրտը եւ ծխացող վէրքերի կը հանդիպէք:

(Հատուած)

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԵԱՆ

# ՄԸԵՐԱԿՐՏՉԵԱՆ



Թատրոնի և շարժապատկերի դերասան և բեմադրիչ: Ծնած է 4 Ցուլիս 1830ին, Լեհիսական (այժմ՝ Կումայրի):

Նախնական կրթությունը ծննդավայրին մեջ ստանալէ ետք, 1846ին կ'աւարտէ ծննդավայրի Գլարչական ուսումնարանը, ապա նոյն տարին մաս կը կազմէ Լիեճինականի Մուսեանի անուան թատրոնին և իր թատերական ուսուցիչ կը ստանայ դրամատիկական դպրոցին մէջ:

1853ին կը մեկնի Երեւան և կը յաճախէ Գեղարուեստա-թատերական Բարձրագոյն

Հիմնարկի դերասանութեան բաժանմունքը, զոր կ'աւարտէ 1853ին:

1853ին մաս կը կազմէ Երեւանի Սուս-դուկեանի անուան թատրոնին, ապա մուտք կը գործէ շարժապատկերի և պատկերափիւտի աշխարհէն ներս, ուր եւս կ'արձանագարէ մեծ յաջողութիւններ: Նախկին Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, Միկո Մկրտչեան կը միանէ իր թատերախումբը և Քանդեւ կու գայ թէ՛ իրեն գլխաւոր դերասան և թէ իր բեմադրիչ՝ Քաչրեւի և սփիւղեան զանազան բեմերու վրայ:

Մէկէ աւելի շքանշաններու և տիտղոսներու արժանացած Մ. Մկրտչեանի մարմնատրած յաազոյն դերերն են՝ Գփիդն (Ժ. Յարութիւնեանի «Մրտի արաս»), Եզովոս (Գ. Ֆիգէլլոդոյի «Աղուէսն ու խաղողը»), Պաղտասար (Յ. Պարոնեանի «Պաղտասար աղբար»), Ղազար (Ժ. Յարութիւնեանի «Ղազարը գնում է պատերազմ»), Իսայի (Գ. Սուհուկեանի «Ճաթարալա»), Սիրանօ (Հսմոն Ռոստանի «Սիրանօ տը Գերժրբագ»), իսկ մեծ պատատի վրայ՝ Գփիդն («Օ՛՛՛-ՑՑ»), Սիմոն («Տէրն ու ծառան»), Արմէն («Ջիւլետտն ու փիլը»), Թոքէն («Միմիօ»), Բորիս Իվանովիչ («Մեայիւթիւն ու Նայնութեանց»), Նուբար («Նահապետը»), եւ այլն:

Մեռած է 1904ին, Երեւան:

## ԱՍԵԼԻՔ ՈՒՆԵՄ

*Մի նեղ շրջանակ դրամատուրգներ ունէինք, Հաստիքաւոր գրում էին, գրում էին... Յանկարծ այդ շրջանակը պատուեց, թատրոն մտաւ մասնագիտութեամբ բծիշկ, կոչումով արուեստագէտ-թատերագիր Ժորա Յարութիւնեանը՝ թելի տակ դրած «Սրտի արտ» թատերգութիւնը՝ կեանքով, ճշմարտութեամբ լիցուն, թարմ, սրամիտ, փայլուն... Աճէմեանն, սոսես, հէնց դրան էր սպասում...»*



էն ինչ էր, ինչ էր... Մ՛հերն ու Թաղեւոս Սարեանը դուրս էին գալիս բեմ... Յղկուած, մշակուած տեսարաններ ու հետն էլ միշտ պատրաստ անսպասելի իմպրովիզացիայի, դրա իրաւունքը ձեռք բերած... Զէ, չեմ տեսել, չեմ պատկերացնում աշխարհի ոչ մի թատրոնում արուեստի յորդացող աշխարհի լաւայ, աշխարհի հրճուանք, աշխարհի ծափ, աշխարհի երջանիկ հանդիսատես...  
Մ՛հերը յայտնում էր, դահլիճը գղղրդում էր ծափերի որոտից... Մի ծով հմայք էր գալիս, ու սկսուելու էր խրախճանքը: Խենթանում էր դահլիճը՝ մենք՝ նրա խաղընկերները, որ մասնակցում էինք այդ ներկայացմանը, մեր տեսարանն աւարտում էինք ու կախում կուլիսներից, որ ոչ մի նոր երանգ, ոչ մի նոր գոյն բաց չթողնենք: Կլանում էինք նրա խաղով, հմայում, հաղորդում...  
Ուղում էր Մ՛հերը, խաղացնում էր հանդիսատեսին իր հետ, ստիպում, որ ստեղծագործի հաւասար, մասնակցի ճշմարտութեան արարմանը:

Սոցիալիզմի բանաձեւով ասած այդ բացասական կերպարը՝ Գվիլոնը, տաղանդաւոր կատարմամբ դառնում էր բեմում ամենատաղանդաւոր մարդը, ամենասիրելին: Հնարամիտ, հեզնական, ճշմարիտ բան ասելիս՝ զգոյշ, կարծրացած օրէնքները հմտօրէն շրջանցող, իմաստուն մի մարդ, որ զիտի, տեսնում եւ հասկանում է շատ աւելի, քան շրջապատի գրական բարոյաբանները: Պարզունակ մարդու դիմակը վրան՝ աջ ու ձախ ծաղրում էր այս իրաւակարգը, նրա սուտը, կեղծը, անմարդկայինը:

Սա քո դերերը վերլուծողը չեմ, Ֆրոնզ, դա իմ ինչ խելքի բանն է, մանաւանդ խօսքը ընդունակ չէ արտայայտելու դերասանի արածը, բայց եթէ տեսել եմ զարմանալի դերակատարում, իսկական, խորը, կատարելութեան հասնող դերասանի արուեստ՝ մէկը քոնն է եղել, քո արածը

...Ի՛նչ ինչ, դերասանի ճակատագիր է, արածն անէանում է, եւ վաղուայ սերունդը իր դերասանն է ծնում... Բայց մենք ինչպէս կը ծնուէինք առանց նրանց, սրանք ինչպէս կը ծնուեն առանց մեզ...  
Մի գուցէ գու էլ քո բաժին յանցանքն ունես... Դու քո տանը չես... Այսօր Մայր թատրոնում նոր ձայներ են հնչում՝ օտար ու չազական մեր բեմին, անիմացութեան մէջ խարխալում են շնորհալի այդ երիտասարդները, որովհետեւ բնական փոխանցումը չկայացաւ, «վարակը» տեղի չունեցաւ, չտեսան, չփոխեցին, չլսեցին քեզ...  
(Հատում)

ՍՕՍ ՍԱՐԳՍԵԱՆ

# ՄԷՅՐԱՆ ԽԱԹԼԱՄԱՋԵԱՆ



Գեղանկարիչ Մէյրան Խաթլամաջեան ծնած է 1937ին, Տոնի Ռոստով: 1959ին, ծննդավայրին գեղարուեստական ճիմնարկը աւարտելէ ետք, կը մեկնի Երեւան եւ կը սկսի յաճախել տեղւոյն Գեղարուեստա-թատերական Բարձրագոյն Հիմնարկը, զոր կ'աւարտէ 1964ին:

Մէյրան Խաթլամաջեան, առաջին իսկ օրէն, մեծ Ռետաքրքրութիւն կը ցուցաբերէ իր մանրանկարչութեան եւ իր քանդակութեան ճանաչման, եւ մեծ սէր՝ Մարտիրոս Սարեանի եւ Արշիլ Կորքիի (Ոստանիկ Ադոյեան) ինքնուրոյն արուեստներուն նկատմամբ: Այդ Ռետաքրքրութեան ու Ռամարումներուն քարերար մթնոլորտին մէջ կը կազմաորէ երիտասարդ գեղանկարիչը:

1970ական թուականներէն սկսեալ, Ս. Խաթլամաջեանի գործերը կը սկսին ցուցադրուիլ ո՛չ միայն ճախկին Խորհրդային Միութեան տարածքին, այլեւ՝ անոր սահմանն ընդ դուրս, եւրոպական բազմաթիւ ոտանձններու մէջ, արժանանալով ջերմ ընդունելութեան:

Վերջին տարիներուն, Մէյրան Խաթլամաջեան յատուկ սէր ու գոյրգոյրանք կը տածէր Արցախի տարածքին նահատակած մեր ազատամարտիկներուն ճանաչման՝ ստեղծագործելով անոնցմէ շատերուն դիմանկարները:

Մեռած է 10 Սեպտեմբեր 1994ին, Երեւան:

## ՄԷՅՐԱՆ ԽԱԹԼԱՄԱՋԵԱՆԻ ԱՐՈՒԵՍՏԸ

*Եթէ այսօր արդէի հայ գեղանկարչութիւնը բարի համբաւ ունի մեր հանրապետութեան տահմաններից դուրս, արտասահմանում նոյնպէս, մի պատճառն էլ բազմազանութիւնն է: Շատ անհատականութիւններ կան եւ ոչ մէկը միայն նման չէ: Կայ մի սերունդ, որի ներկայացուցիչների հասակը քառասունից հասնում է յիսունի կամ հազիւ անց է յիսունից եւ այդ սերունդն ունի իր աշխարհը, իր վարպետութիւնը, իր կողմնակիցներն ու հակառակորդները:*

*Այդ սերունդից է Մէյրան Խաթլամաջեանը: Երիտասարդ տարիքում նոր նախնիներից փոխադրուեց Երեւան, առաջին անգամ*

տեսաւ Հայաստան աշխարհը, որ նրա երեւակայութեան մէջ էր Սարեանի կտաւներէց: Զգաց ու մտածեց, նկարեց բոլորովին այլ կերպ իր տեսածն ու զգացածը, իր ապրածն ու վերապրածը, աչրըն ու կարօտը, երազանքն ու ձգտումը, քան նկարել էին մինչեւ այդ, քան նկարում են հիմա:

Սէյրան Ռաթլամաջեանը իր աշխարհն ունի, իր մօտեցումն ու մտածելակերպը: Եւ իր որակը: Նրա նկարներին նայելիս քեզ համակում է պայծառ տրամադրութիւն: Եւ դու քեզ լաւ ես զգում նրա լուսաւոր աշխարհում:

Վառ երեւակայութիւնն ու գունային խոր զգացողութիւնը նկարչին թոյլ են տալիս չկրկնուել, ստեղծել գունային տարբեր խաղեր, զանազան ձեւաստեղծումներ: Թւում է, թէ ընկել ես հեքիաթային աշխարհ, որի վրայ իջել է տօնական մի բարութիւն, եւ քեզ զգում ես ազնուացած ու վեհացած: Կարծես ինքզ էլ ստեղծուած լինես այդ գունային խաղերից ու մէկը միւսից զանազան, բայց գեղեցիկ ձեւաստեղծումներից, ու համարելով մարդու աշխարհ գալը մեծագոյն պարզեւ, տողորում ես չքնաղ կեանքն աւելի չքնաղ ու կատարեալ դարձնելու ցանկութեամբ: Մօտեցէք նրա դիմանկարներին եւ կը տեսնէք մարդուն լուսաւոր հեքիաթի մէջ, մարդն էլ՝ բանական արարած, ասես մի ծառ ու ծաղիկ լինի, անբաժանելի բնութիւն կոչուած աշխարհից: Փնտռումներ են դրանք, որոնք յանգեցին մի օր կատարեալ կտաւի, որ նկարչը կոչել է «Ազատ յորինուածք» աչք ու սիրտ շոյող նկար, միտքդ դէպի երեւակայական աշխարհներ մղող նկար, որ փափաքում ես քո տան պատից կախուած տեսնել:

Գեղանկարչներով հարուստ ու բազմազան հայրենի հողն ըստ իր նկարչական աւանդապաշտ պատկերացումների՝ թերեւս չէր ենթադրում մի այսպիսի նկարչի ծնունդ, բայց Ռաթլամաջեանի աշխարհ գալով, հաստատուեց նրա կենսունակութիւնը: Ու չգիտեմ թէ ինչու, մի պահ մտքովս անցնում է, որ եթէ մեր միջնադարեան մանրանկարիչներն այսօր ապրէին ու նկարէին, նրանցից մէկն անպայման կը նկարէր հէնց այդպէս: Ռաթլամաջեանի աշխարհ գալով յատկուեց մի շեղած գոյն, գումարուեց ձեւերի շնախաստեռուած բազմազանութիւն եւ հիմա նկարչութեան սիրահարների պատկերացումից դուրս է արդի հայ գունանկարչութիւնն առանց այն տաքուկ շերտութեան, առանց այն լուսաւորութեան, որ իրենց հետ բերում են Սէյրան Ռաթլամաջեանի կտաւները:

ՌՈՒԲԵՆ ԶԱՌԵԱՆ

# ՎԱԼՏԵՐ ԱՐԱՄԵԱՆ



Արձարագիր եւ թարգմանիչ Վալտեր Արամեան ծնած է 15 Յուլիս 1909ին, Վաղարշապատ (այժմ՝ Էջմիածին) քաղաքը: 1932ին կ'աւարտէ Երեւանի Ռամպալանցի լեզուագիտական ֆաքիւլտէն եւ պ-

նուենտե կը պաշտօնավարէ Երեւանի Մատենադարանին մէջ:

1950ական թուականներու առաջին տարիներուն Ռայ գրականութեան անդատուներն ենք գործած Վալտեր Արամեան Ռիմսկանցին մէջ կը ստորագրէ պատմութեան ու վիպակներ, գրու կ'ամփոփէ անկի քան տասը Ռատորներու մէջ: Նաեւ կը ստորագրէ մանկական պատմութեան, իսկ ռուսերէնէ Ռայերէնի կը փոխադրէ ռուս, չեխ, չին եւ այլազգի արձակագիրներու եւ մանկագիրներու տասը Ռատորներ:

Վալտեր Արամեանի գլխաւոր գործերն են՝ «Ռուսա, որդի Արգիշտի», «Ընկած ծառք», «Միթէ բոլորը հող դարձան», «Արահետներ», «Վերադարձ» եւ «Զարմա-նայի տարիներ» անուն Ռատորները: Հեղինակին «Տալալի օրէնքը» եւ «Ռուսա, որդի Արգիշտի» գործերը թարգմանուած են ռուսերէնի եւ լոյս տեսած՝ արաբերէն Ռատորներով:

Մեռած է Դեկտեմբեր 1994ին, Երեւան:

## ՎԱԼՏԵՐ ԱՐԱՄԵԱՆ

Գնում են աւագագոյն գրողների վերջին մոհիկանները: Կաթում մայր հողին տերերների նման եւ հարստացում ու սրբացընում են հայրենի հերկը: Անմահութեան քաճին են դառնում, թէ՞ մահուան, զնայուց յետոյ կ'երեւայ, թէ ինչ սերմ է ընկել հերկը եւ, եթէ կենսունակ է, ապա ծրարձակումը կը դառնայ անմահութեան ամենավառ նախանշանը: Ես չգիտեմ, ինչո՞ւ այս դէպքում, երբ իր երկրային կեանքն աւարտեց Վալտեր Արամեանը, ինձ բռնեցի այն մտքին, որ նա անմահութեան ճամբորդ է, որովհետեւ ոչ մի գիրք նա չի գրել այն միտումով, թէ գեղեցիկ ու գայթակղիչ է գրողի մասնագիտութիւնը եւ անմահութիւնը՝ ճանապարհային պարտադիր հանգրուան, ուր պիտի իջեանի ինքը, որովհետեւ գրող է: Ո՛չ Վալտեր Արամեանը գրիչ վերցրեց, որովհետեւ գրիչը նրա համար պարտադրանք էր ի վերուստ, սկսեց գրել, որովհետեւ չէր կարող չգրել, ասելիք ունէր եւ չէր կարող չասել: Նա կեանքի մի անողորմ, մի ահաւոր ճամբայ էր անցել, ճամբայ, ուր ստուգուած է անցեալի մարտութիւնը, նրա կորովը, իսկ երբ արդէն խոլոխութիւնը անցել է՝ նրա իրաւունքը իր կեան-

քին մասնակից դարձնելու ուրիշներին, մարդկանց, քանզի մեծ է կեանքի արժեքը եւ ուսանելի ո՛չ միայն հասարակ մահկանացուներին, այլեւ՝ ղեկավարներին, որոնք իրաւապօր են տնօրինելու ճակատագրեր եւ բախտ պարգևելու ըստ ցանկութեան: Վալտեր Արամեանը սիրիւրեան գաղութներէից դարձաւ Հայաստան եւ անմիջապէս մտաւ գրականութեան այն տեղամասը, ուր ստալինիզմի գրեւորն էին, եկան «մաքրագործուած» անմեղ մեղաւորները, սակայն նրանց չթոյլատրուեց մեռնոց նետել «մեղաւոր անմեղներին», քանզի չէին փոխուել իրաւատէրերը եւ այդ անմեղներին կոմենտիկական բարեփոխութիւններով կեանք վերադարձնելը ոչ այլ ինչ էր, քան ծակ մաղերով ջուր կրելը: Այս մեր բարի, մեր արդար Վալտերը, որը երկու տասնամեակ սիրիւրեան հետուներում անուել էր ցրտով, քիչ էր մնում, որ ինքն էլ հաւատար, թէ նպատակ է ունեցել Բերիային տեղորի ենթարկել, որովհետեւ 20 տարի այդ մեղքը չարակած տարել է ճամբարից-ճամբար, ինչպէս իր մարմնին կարկատած պալար, ինչպէս հոգու ցաւոտ կարկատան: Նա վերադարձաւ եւ սկսեց գրել ո՛չ միայն սիրիւրեան ցրտի եւ անլուր տառապանքների մասին, այլեւ՝ Սիրիւրի գեղեցկութեան, նրա մարդկանց գեղեցիկ հոգու, նրա ծաղիկների եւ նաեւ ջերմութեան մասին: Թէեւ գողացել էին նրա քսան տարին, նա չանիծեց աշխարհը, նրա հայեացքի ուղղութիւնը չփոխուեց, նա մնաց իր Աստծոյ հետ, որ բարի էր, առաքինի, իր աշխարհի հետ, որ լուսատու էր ու ջերմ, երբեք չպղծելով իր շուրթերը անէծքով: Հիւմա այլեւա չի գրի, գրածը բաւական է, որ միշտ մեզ հետ լինի ինքը: Այլեւա չի տառապի, քանզի նա սիրով խեղդել էր տառապանքը վաղուց եւ այն թողել միայն իր հոգում: Ինձ համար դժուար է նոյնիսկ նրան դիմելը, ես նրան սերնդակիցը չէի, այլ նրա եղբօր՝ Ռաֆայէլի: Ընկերներ չէինք Վալտեր Արամեանի հետ, այլ մտերիմներ, մեզ մտերմացնում էին ո՛չ միայն սէրն առ հայրենիքը, այլեւ՝ հոգու եւ մարմնի այն վէրքերը, որ ստացել էինք «Նորհրդային հայրենիքից»: Եթէ ստենք, որ նա լաւ մարդ էր՝ նշանակում է ոչինչ չասել: Ասել շնորհագարդ գրող, նոյնպէս թերի կը լինի նա մարդ էր եւ գրող: Նրան սիրում եւ յարգում էինք բոլորս: Նրա սէրը պարտազրոյղ չէր, բայց պատկառանքը կարծես պարտազրոյղ էր: Նրա վաստակը, տեսածն ու ապրածը, բարութիւնն ու մաքրութիւնը պատկառանք էին ներշնչում ե՛ւ նրա մտերիմներին, ե՛ւ ընկերներին, ե՛ւ բազմահազար ընթերցողներին: Ես չեմ ցանկանում մխիթարութեան խօսքեր շտախել նրա ընտանիքին, քանզի նրանք պէտք է իրենց մխիթարուած զգան, քանի որ Վալտեր Արամեանը գնում է անմահութիւն եւ, որ կարեւորն է, ապրեց երկար ու երկար՝ յուրախութիւն հարազատների ու մտերիմների: Եւ յղձողը միայն ինքը եղաւ, քանզի մեծ կեանքը պատճառել է նրան մեծ տառապանք, որի գինը միայն ինքը գիտէր:

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍԵԱՆ

# ՎԱԼՏԵՐ ԱՐԱՄԵԱՆ



Նույնտես կը պաշտօնակարէ Երեսնի Մատենադարանին մէջ:

1950ական թուականներու առաջին տարիներուն Քայ գրականութեան անդաւտանէն ներս մուտք գործած Վալտեր Արամեան Քիմնակահին մէջ կը ստորագրէ պատմութիւններ ու վիպակներ, գրքս կ'ամփոփէ անկի քան տասը Քատորներու մէջ: Նաեւ կը ստորագրէ մանկական պատմածրներ, իսկ ռուսերէնէ Քայերէնի կը փոխադրէ ռուս, չեխ, չին եւ այլազգի արձակագիրներու եւ մանկագիրներու տասը Քատորներ:

Վալտեր Արամեանի գլխաւոր գործերն են՝ «Ռուսա, որդի Արգիշտի», «Ընկած ծառ», «Միթէ բոլորը հող դարձան», «Արաւետներ», «Վերադարձ» եւ «Ջարմանայի տարիներ» անուն Քատորները: Հետեւեալին «Տալալի օրէնքը» եւ «Ռուսա, որդի Արգիշտի» գործերը թարգմանուած են ռուսերէնի եւ լոյս տեսած՝ անանձին Քատորներով:

Մեռած է Դեկտեմբեր 1994ին, Երեսն:

Արձակագիր եւ թարգմանիչ Վալտեր Արամեան ծնած է 15 Յուլիս 1909ին, Վաղարշապատ (այժմ՝ Էջմիածին) քաղաքը: 1932ին կ'աւարտէ Երեսնի Քամարաբանի լեզուագիտական ֆաքիւլթէն եւ այ-

## ՎԱԼՏԵՐ ԱՐԱՄԵԱՆ

Գնում են աւագագոյն գրողների վերջին մոհիկանները: Կաթում մայր հողին տերեւների նման եւ հարստացնում ու սրբացնում են հայրենի հերկը: Անմահութեան բաժին են դառնում, թէ՞ մահուան, զնալուց յետոյ կ'երեսայ, թէ ինչ սերմ է ընկել հերկը եւ, եթէ կենսունակ է, ապա ծլարձակումը կը դառնայ անմահութեան ամենավառ նախանշանը: Ես չգիտեմ, ինչո՞ւ այս դէպքում, երբ իր երկրային կեանքն աւարտեց Վալտեր Արամեանը, ինձ բռնեցի այն մտքին, որ նա անմահութեան ճամբորդ է, որովհետեւ ոչ մի գիրք նա չի գրել այն միտումով, թէ գեղեցիկ ու գայթակղիչ է գրողի մասնագիտութիւնը եւ անմահութիւնը՝ ճանապարհային պարտադիր հանգրուան, ուր պիտի իջեանի ինքը՝ որովհետեւ գրող է: Ո՛չ, Վալտեր Արամեանը գրիչ վերցրեց, որովհետեւ գրիչը նրա համար պարտադրանք էր ի վերուստ, սկսեց գրել, որովհետեւ չէր կարող չգրել, ասելիք ունէր եւ չէր կարող չասել: Նա կեանքի մի անողորմ, մի ահաւոր ճամբայ էր անցել: Ճամբայ, ուր ստուգում է անցեալի մաքրութիւնը, նրա կրթովը՝ իսկ երբ արդէն խոշորութիւնը անցել է՝ նրա իրաւունքը իր կեանք-

քին մասնակից դարձնելու ուրիշներին, մարդկանց, քանզի մեծ է կեանքի արժեքը եւ ուսանելի ո՛չ միայն հասարակ մահկանացուներին, այլեւ՝ ղեկավարներին, որոնք իրաւագոր են տնօրինելու ճակատագրեր եւ բախտ պարգեւելու ըստ ցանկութեան: Վալտեր Արամեանը սիրիւրեան գաղութներէից դարձաւ Հայաստան եւ անմիջապէս մտաւ գրականութեան այն տեղամասը, ուր ստալինիզմի դժուարին էին, եկան «մաքրագործուած» անմեղ մեղաւորները, սակայն նրանց չթոյլատրուեց ձեռնոց նետել «մեղաւոր անմեղներին», քանզի չէին փոխուել իրաւատէրերը եւ այդ անմեղներին կոմկուկական բարեփոխութիւններով կեանք վերադարձնելը ոչ այլ ինչ էր, քան ծակ մաղերով ջուր կրելը: Այս մեր բարի, մեր արդար Վալտերը, որը երկու տասնամեակ սիրիւրեան հետուներում մտուել էր ցրտով, քիչ էր մնում, որ ինքն էլ հաւատար, թէ նպատակ է ունեցել Բերիային տեղորի ենթարկել, որովհետեւ 20 տարի այդ մեղքը շարակած տարել է ճամբարից-ճամբար, ինչպէս իր մարմնին կարկատած պալար, ինչպէս հողու ցաւոտ կարկատան: Նա վերադարձաւ եւ սկսեց գրել ո՛չ միայն սիրիւրեան ցրտի եւ անլուր տառապանքների մասին, այլեւ՝ Սիբիրի գեղեցկութեան, նրա մարդկանց գեղեցիկ հողու, նրա ծաղիկների եւ նաեւ ջերմութեան մասին: Թէեւ գողացել էին նրա քան տարին, նա յանիծեց աշխարհը, նրա հայտնաքի ուղղութիւնը չփոխուեց, նա մնաց իր Աստուծոյ հետ, որ բարի էր, առաքինի, իր աշխարհի հետ, որ լուսաւոր էր ու ջերմ, երբեք չպղծելով իր շուրթերը անէծքով: Հիմա այլեւս չի գրի, գրածը բաւական է, որ միշտ մեզ հետ լինի ինքը: Այլեւս չի տառապի, քանզի նա սիրով խեղդել էր տառապանքը վաղուց եւ այն թողել միայն իր հողում: Ինձ համար զժուար է նոյնիսկ նրան զիմելը, ես նրան սերնդակիցը չէի, այլ նրա եղբոր՝ Ռաֆայէլի: Ընկերներ չէինք Վալտեր Արամեանի հետ, այլ մտերիմներ, մեզ մտերմացնում էին ո՛չ միայն սէրն առ հայրենիքը, այլեւ՝ հողու եւ մարմնի այն վէրքերը, որ ստացել էինք «նորհրդային հայրենիքից»: Եթէ ասենք, որ նա լաւ մարդ էր՝ նշանակում է ոչինչ չասել: Ասել շնորհագարող գրող, նոյնպէս թերի կը լինի նա մարդ էր եւ գրող: Նրան սիրում եւ յարգում էինք բոլորս: Նրա սէրը պարտադրող չէր, բայց պատկառանքը կարծես պարտադրող էր: Նրա վաստակը, տեսածն ու ապրածը, բարութիւնն ու մաքրութիւնը պատկառանք էին ներշնչում եւ նրա մտերիմներին, եւ ընկերներին, եւ բազմահազար ընթերցողներին: Ես չեմ ցանկանում մխիթարութեան խօսքեր շտալինը նրա ընտանիքին, քանզի նրանք պէտք է իրենց մխիթարուած զգան, քանի որ Վալտեր Արամեանը գնում է անմահութիւն եւ, որ կարեւորն է, ապրեց երկար ու երկար՝ յուրախութիւն հարազատների ու մտերիմների: Եւ յոգնողը միայն ինքը եղաւ, քանզի մեծ կեանքը պատճառել է նրան մեծ տառապանք, որի գինը միայն ինքը գիտէր:

ՍԿՐՏԻԶ ՍԱՐԳՍԵԱՆ

# ԱՆԱՀԻՏ ՍԵԿՈՅԵԱՆ



Արձակագիր Անահիտ Սեկյեան ծնած է 1922ին, Երևան: 1940ին աւարտած է Զերծհանկի անուան միջնակարգ վարժարանը,

իսկ 1946ին՝ Գաբրիէլ Սուճղուկեանի անուան տրամադիկական թատրոնի պրիստիոն: Մինչեւ 1949ը նոյն թատրոնին մէջ աշխատած է իրեն դերասանուհի: 1950-52ին աշխատած է «Պիտներ կանչ» թերթի խմբագրութեան մէջ:

Անահիտ Սեկյեանի առաջին նորավէպը լոյս տեսած է 1948ին, «Մովսէսական գրականութիւն եւ արուեստ» ամսագիրին մէջ:

Գլխաւոր գործերն են «Նովէլներ», «Ոսկէ վագերի մէջ», «Գարունը ձեան տակ», «Եթէ Որոտանը խօսէր», «Հիւսիսային պողոտայ», եւ այլն:

Ռուսերէն լոյս տեսած են Սեկյեանի «Ոսկէ վագերի մէջ», «Գարունը ձեան տակ» եւ «Եթէ Որոտանը խօսէր» հատորներ:

Մեռած է Դեկտեմբեր 1995ին, Երևան:

# ԱՆԱՀԻՏ ՍԵԿՈՅԵԱՆ

*Կան գրողներ, որոնք գրական համբաւ են ձեռք բերում հեշտ ու թեթեւ, եւ որքան են այդ համբաւին արժանի՝ Աստուած թող դատի: Իսկ արժանաւորներից շատերը այդպէս էլ մնում են ստուերում: Անահիտ Սեկյեանը վերջիններից էր: Նա, թերեւս, ամէնից քիչ էր մտահոգւում գրանով՝ ամբողջովին նուիրուած էր գործին, տարուած միայն նրանով, թէ ինչ է ուզում ասել ընթերցողին, տարուած իր հերոսների ճակատագրով:*

*Իրենքուրզն ասում էր, թէ կեանքը չեն ուսումնասիրում, պարզապէս ապրում են: Անահիտը գործուղում էր վերցնում մեկնում գիւղ՝ ուսումնասիրելու գիւղական կեանքը: Բայց կարճ ժամանակում մոռանում էր, թէ ինչի համար է եկել, ապրում էր գիւղացիների հետ այն կեանքով, որով ապրում էին իր շրջապատում: Այդպէս էր, «Ոսկէ վագերի մէջ» վէպը գրելիս գիւղից դուրս չէր, գիւղացու հետ դաշտ էր գնում, նրա հետ՝ վերադառնում: Ապրում էր գիւղացու տանը, կտրում նրա կերած հացը:*



Այստեղից էլ այնքան տիպական, այնքան հիթեղ հերոսները եւ վպուժ բարձրացրած կենսական հիմնահարցերը:

Շա բախտ եմ ունեցել Անահիտի հետ զնայու հանդիպումների: Վայն եկել էր այն գրողին, որը պէտք է նրանից յետոյ հանդէս գար: Կորած էր, այլեւս նրան չէին լսում: Ինչպէ՛ս էր խօսում, ինչպէ՛ս էր հանդիսատեսին հաւաքում, կապում իր հետ: Ինչպէ՛ս էր պահում դահլիճը: Ուզենար Իրակլի Անգրոնիկովի նման կարող էր իր խաղացանկն ունենալ եւ հիւրախաղերի գնալ:

Մի անգամ, երբ ես պատրաստում էի Մոսկուա զնալ, ինդրեց, որ հետաքրքրուեմ իր «Հիւսիսիայի Կոդոստայ» վիպակով: «Սովետակի պիսատել» հրատարակչութեան խորհրդի անդամ էի, նման հարցով շատեր էին դիմել: Մի գիրքը մերժել էին, միւսը պէտք էր մշակուէր, երրորդը՝ թեմայով չէր հետաքրքրում հրատարակչութիւնը: Անահիտի գրքի մասին գլխատր խմբագիրն ասաց՝ «Ի՛հ, այստեղ մենք խնդիր չունենք, գիրքը լաւ գիրք է եւ պիտէ նստած է պլանում»:

Ճիշտն ասաց, ես դեռ վէպը չէի կարդացել եւ միայն դրանից յետոյ կարդացի: Պէտք է ասեմ, որ քիչ գեղեցիկ պահեր չապրեցի գիրքը կարդալով:

Այսպիսին էր Անահիտը, եւ դա է պատճառը, որ նրա անժամանակ մահը այդքան ցաւ պատճառեց մեզ:

ՍԱՂԱԹԵԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

# ՄԱՆՈՒԿ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ



Որ, իսկ 1976-79 տարիներում՝ Հայաստանի պատկերասփիռի և ձայնասփիռի պետական կոմիտեի գրականության և արուեստի միջոցառումներին գլխավոր խմբագրի պատասխանատուները: Այսպիսով մինչև իր մահը մաս կը կազմէ եղև կոմիտեի՝ իրրե գրական մեկնարան:

1975ին «Հայֆիլմ»-ը Մ. Մնացական-եանի թեմագրութեանը կը նկարահանէ «Յաջմերուկ» ժապատէնը, որ 1978ին՝ Մանգեյմի փառատօնին կ'արժանանայ «Տակէ կինո-դուկատ» մրցանակին: 1982ին կը նկարահանուի Մ. Մնացականեանի «Երջանկութեան մեխանիկան» գեղարուեստական ժապատէնը, իսկ այնուհետև Երեանի մասին անոր մէկ պատմութեանը թիւանքը պատրաստուած «Կիսակայսրանու» գեղարուեստական ժապատէնը (1984) և «Նահանջ տարի» թատերախաղը (1985):

Ծարձակատեղիի գեղարուեստական 7 ժապատէններու, թեմագրութիւններու և բազմաթիւ թատերախաղերու ճիշդակ Մ. Մնացականեան հրատարակած է պատմութեանը և միակներու 15 ժողովածուներ, որոնց գլխավորներն են՝ «Երկուշաբթի»-ից «Երկուշաբթի», «Նահանջ տարի», «Հեռախօսի կանչը» և «Նուաւորի կանչը»: Մեռած է 1985ին, Երեան:

Արձակագիր, թատերագիր և բեմագիր Մանուկ Մնացականեան ծնած է 29 Յունիս 1934ին, Երեան:

1956ին, Երեանի արհեստագիտութեան ինժեների էլեկտրագիտութեան բաժանմունքը աւարտելէ ետք, մինչև 1957 կ'աշխատի մէկէ անկէ գործարաններու և գիտահետազոտական ինժեներներու մէջ: 1967-76 տարիներում, Մ. Մնացականեան կը վարէ խորհրդարանի գիտական հետազոտութիւններու կեդրոնական տարրալուծարանի գլխավոր պատասխանատուի պաշտոնը:

## ԵՐԲ ԶԱՓԱՆԻՇԸ ԶՈՂԱԲԵՐՈՒԹԻՒՆՆ Է

Անարկում Մ. Մնացականեանը պատմական էջերու բաներ չի անում, իր բախտագուշակութիւնը չի առաջարկում աշխարհի փակ դռների առաջ իրենց զէնքին ապաւինած արցախցիներին, չի փիլիսոփայում, գրողի կեցուածք չի բռնում: Անշարք ինքն է, որ ջանում է ակնարկի՝ հնարաւորին չափ ապագեղարուեստականացուած մթնոլորտում անաղարտ ներկայացնել իր բարձր, առաջինի, իր հեզ ու անկտորում հերոսներին: Խօսում է, պատմում է, յուզում է՝ ասես սրբի դուռ է եկել: Պատերազմական Արցախը դաժան իրողութիւն է, եւ ինքը թփրտում է տաք գրգիռների մէջ:

«Լուսաւորչի կամբեղը» պատմութեամբ մինուճար նկարչի որդին ծնողներին խղճանալով խաբում է, թէ ինստիտուտից է տեղադրուել են ուղարկում Շուշի, գնում է կռուելու: Նկարչի ուր լինելուն տեղեակ լրագրող հայրը կնոջը խղճալով, խաբում է, թէ գործուղման է մեկնում Ղափան, ուղեւորում է Արցախ՝ որդուն գտնելու: Նկարչի մայրը ամուսնուն խղճալով՝ խաբում է ու անտեղեակ ձեւանում՝ ուսնելիքի պաշար կապելով որդու համար... Վտանգուած, փորձութեան մէջ յայտնուած հայրենիքը փորձութեան է ենթարկում անհաստեղծութիւն՝ շրջանցելով սեռ ու տարիք, սոցիալական ծագում ու դաստիարակութիւն: Հայրենասիրութիւնն ալիւս պայմանականութիւն չի ընդունում, բարոյականութեան միակ չափանիշն ալիւս կեանքի զոհարբութիւնն է: Եւ բարոյական նկարագիրն այս ընտանիքի անգամների այնքան անխառն-միասնական է, որ ասես մի մօր գաւակները ու մի մօր փէշի տակ մեծացած լինեն... Իսկ երբ հայրը գտնում է որդուն, վերջինիս թախանձանքով խաբում է հրամանատարին, թէ ինքը նկարչի հօր ընկերն է, հրամանատարն էլ խաբելով միամիտ է ձեւանում, թէ հաւատում է լրագրողի խօսքերին... Բարոյականութեան շղթան ձգւում է, արիւնակցութիւնը իրար է կապում նոյն հայրենիքի գաւակներին, եւ հաւատաւորների այս երթը բացում է սեփական ժողովրդի յարատեւութեան գաղտնիքը:

Մ. Մնացականեանի այս ժողովածուն կենսական նիւթի, ասելիքի եւ տրամադրութեան մի ամբողջական արտայայտութիւն է, իր տեսակի մէջ եզակի, եթէ նկատի ունենաք շարունակուող պատերազմն ու մեր արձակի դժուար արձագանգն այդ՝ դեռ եւս խմորուող կենսական նիւթին: Գուցէ նիւթը սառչէր, հայեացքի համար տարածութիւն բացուէր, եւ արձակագիրը նոր խօսք ու երանգ հարդրէր իր պատումներին: Գուցէ, բայց այդ դէպքում էլ չէր լինի այն տաք անմիջականութիւնը, որ այս գրքի հմայքն է, արիւնաքամուող հայրենիքի ցաւից ծնուած այն բարձր ու սարսուռ զգացմունքների դողէրոցը, որ գրքի էջերից փոխանցւում է ընթերցողին:

Այսքանը, բայց խօսքի աւարտը սա չի լինելու: Ասացուածքը վկայում է, թէ անզլիացին տանու է տալիս իր բոլոր ճակատամարտերը, վերջինից բացի: Ասել կ'ուզի՝ վերջնական աւարի տէրն է, տնօրինում է իր ճակատագիրը: Մերը ուրիշ է, մեր պատմութիւնը պարտութիւնների շղթայ է, մեր հերոսները պարտուած բանակի քաջեր են: Եւ ասացուածքը հայերիս համար հակառակն էր պնդելու: Հայր յաղթում է իր բոլոր ճակատամարտերը, վերջինից բացի: Գարձեա՞լ նոյնն է կրկնուելու, հին ջուրն է ու հին ջրաղացը...  
Հայաստանցին յոյսով է, իսկ զարաբացին համոզուած, որ բախտի անիւր շրջուէլ է, որ գտնէ այս անգամ նոյնը չի կրկնուելի:

(Հատումս) ՖԵԼԻՔՍ ՄԵԼՈՅԵԱՆ

# ՎԻԿՏՈՐ ԲԱԼԱՅԵԱՆ



Արձակագիր և լրագրող Վիկտոր Բալայեան ծնած է 18 Յուլիս 1931ին, Ստեփանաւան: 1954ին կ'աւարտէ Երեւանի Քամալսարանի քանասիրութեան քաժանմունքը: Համալսարանը աւարտելէ ետք կը նուիրուի մամուլ ապագրեցիկ և մինչեւ 1968 կը պաշտօնավարէ «Գիտներ կանչ» և «Աւան-

գարդ» թերթերուն մէջ: Այնուհետեւ կը գործէ «Հայաստան» և «Մովհետական գրող» հրատարակչատուններուն մէջ՝ իրեն զիտար խմբագիր և տնօրէն: Ապա, պատասխանատու պաշտօններ կը ստանձնէ հայկական պատկերասփիւռի և «Հայֆիլմ» հաստատութեանց մէջ:

Քսանէ անելի գրքոյկներ և հատորներ հրատարակած Վիկտոր Բալայեան ստորագրած է Թատերախաղեր, պատմուածքներ, վիպակներ: Ան հաւել գրադան է թարգմանական զրականութեամբ և հայերէնի վերածած ռուս ժամանակակից գրողներու արձակ գործեր, իսկ իր «Քանդուած նկուղի գաղտնիքը» և «Մտուեր եւ լոյս» հատորները թարգմանուած են ռուսերէն և լատիներէն:

Վիկտոր Բալայեանի գլխատոր գործերն են «Հոյս եւ ստուեր», «Մեղմեցի սիրտը», «Անցեալը ճորճմն ժեռուով է մեզ հետ», «Մեղազրեալի վերջին խօսքը», «Որոգայթ» և «Հաւատ»:

Մեռած է 3 Փետրուար 1995ին, Ստեփանաւան:

## ՀԱՒԱՏՔ ԵՒ ԿԱՐԵԿՑԱՆՔ

*Ես իմ ուսանողական օրերի ընկերոջ ամենահին ընթերցողներից եմ: Սկսած «Աւանգարդում» տպագրուած նրա առաջին անարկներէից, «Մէկ ամիս միլիցիոների համագրաստով» վերնագրով գրեթէ մարտական ռեպորտաժներից, «Մշուշը ցրում է» արկածային-դետեկտիւ վիպակից... մինչեւ այսօր ընթերցողի սեղանին դրուած նոր գիրքը՝ «Որոգայթները»:*

*Եթէ հնարատր լինէր մի նախադասութեամբ արտայայտել Վիկտոր Բալայեանի ստեղծագործութեան էութիւնը, ես կը գըրէի՝ «Նորին հաւատ մարդու նկատմամբ: Եւ կ'աւելացնէի՝ ահա թէ ինչու է ընթերցողը հաճոյքով կարդում նրան: Այո, ընթեր-*

ցողը Վ. Բալայեանին հանդիմով է կարդում, որովհետեւ նա հիւսնայի գիտի կեանքն ու մարդկանց եւ անքող մի ջերմութեամբ է համակուած կեանքում պատահաբար շեղուածների, ձախողածների, յուսահատուածների նկատմամբ:

Նրան համար զուտ գետեկտիւ գոյութիւն չունի: Եւ այնտեղ, որտեղ թւում է, թէ լիովին հնարաւորութիւն է ստացել աւելի ու աւելի խճճելու հանգոյցները, աւելացնելու կրակոցների ու գոհերի թիւը, հեղինակը գերադասում է զնալ հոգեբանական վերլուծութեան ճանապարհով:

Երբեմն նոյնիսկ զարմանալի է թւում, որ նա գրեթէ չի խորանում, չի ուզում խորանալ իսկական յանցագործի, մարդասպանի ու բանդիտի հոգեբանութեան մէջ: Բայց հէնց այդպէս էլ կայ: Ինչպէս ընդունուած է ասել՝ աւարտուած յանցագործը նրան չի հետաքրքրում: Նրան հետաքրքրում են այն մարդիկ, ովքեր պատահաբար են յայտնուել բարոյականութեան սահմանագծից այն կողմ, ովքեր ոչ իրենց կամքով են բռնել յանցագործութեան ուղին եւ վերադարձի արահետներ են փնտրում:

Վ. Բալայեանը մանրակրկիտ ուսումնասիրում է իր հերոսների անցած ճանապարհը եւ աշխատում է գտնել այն տեղը, որտեղ նրանք սայթաքել են՝ ոչ միայն կոնկրետ տուեալ կենսագրութիւնը ճշտելու համար, այլ նաեւ որպէսզի զգուշացնի մարդկանց, այդ նոյն ճանապարհով անցողներին:

...Նրա ըլլոր արկածային վիպակների ու պատմուածքների հերոսը միլիցիայի փոխգնդապետ, ազնիւ, անաչառ, տաղանդաւոր հետախոյզ Գրիշա Դանիէլեանը աւելի շատ զբաղուած է հէնց հաւատը կորցրած նման մարդկանց ստտար կանգնելով, կոտելով չոր ու չար հոգիների դէմ, նրանց դէմ, ովքեր մարդուց խլում են եւ ոտնահարում ամենաթականգինն ու ամենակարեւորը՝ արժանապատուութիւնը:

Այդպիսին է միլիցիայի փոխ-գնդապետ Դանիէլեանը: Այդպէս է մտածում գրական այդ հաւաստի ու հետաքրքիր կերպարի ստեղծող Վիկտոր Բալայեանը: Զի կարելի անհոգ ու անտարբեր անցնել մարդկային վշտերի ու ճակատագրերի կողքով:

Գուցէ նրանք քո կարիքն ունեն: Գուցէ զու նչ որ չափով կարող ես օգնել նրանց: Անտարբեր մի անցիր:

Ահա թէ ինչի մասին է այսօր գրում Վիկտոր Բալայեանը:

(«Գրքերի աշխարհ», 19-8-1984) ԱՐՏԱԾԷՍ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ

# ՈԱՖԱՅԷԼ ԻՇԽԱՆԵԱՆ



Գրականագետ, լեզուաբան, մատենագետ, բանասիրական գիտությունների տոջորու և փրոֆեսոր Ռաֆայել Իշխանեան ծընած է 9 Մարտ 1922ին, Ծրեան: Ծրեանի կրուպակայի անուան միջնակարգ դպրոցը աարտիզ էտք, 1939ին կ'ընդունուր պետա-

կան Ռամպարաճի բանասիրական ֆաջիլտետի Ռագոց լեզուի և գրականութեան բաժինը: Դեռ ուանող՝ կը գորակրչուր եւ կը մասնակցի Հայրենական պատերազմին: 1948ին կը շարունակէ կիսատ ձգած ուսումը եւ կ'աարտէ Ռամպարանական դասընթացը 1949ին:

Ռաֆայել Իշխանեան կը վարէ մտաորական ու դասախոսական զանազան պաշտոններ ու յու կ'ընծայէ Ռագոց լեզուի, գրականութեան, Ռայ ժողովուրդի ծագման ու աուանին գրողներու ու մշակութային գործիչներու մասին բազմաթիւ ուսումնասիրութիւններ:

Լոյս ընծայած է շուրջ երեսուն Ռատոր՝ «Ակնել Բակունց. կենսագրութիւն եւ մատենագիտութիւն», «Բակունցի լեզական արուեստը», «Հայ Շատիպ գրքը», «Տէրեանի լեզուական արուեստը», «Արեւելահայ բանաստեղծութեան լեզուի պատմութիւն», եւայլն:

Մեռած է 1985ին, Ծրեան:

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ԵՒ

### ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գրական երկի լեզուն ինքը ստեղծագործութիւն է: Երբ հեղինակը գրում է, նա ստեղծագործում է ո՛չ միայն գրական հերոսներ, գործողութիւններ, դիպաշար, այլեւ՝ ամէնից առաջ լեզու, երկի գեղարուեստական լեզուն: Ուրեմն, այդ լեզուն պիտի լինի հեղինակի մայրենին, հեղինակը պէտք է ամբողջ էութեամբ զգայ այդ լեզուի ոգին, ներքին ու արտաքին ելիւէջումները, իմանայ նրա «ծակուծուկը», «խաղացնի» այդ լեզուն իր ձեռքերում, մանաւանդ այդ լեզուն պիտի լինի նրա ամենահարազատը, նրա էութիւնը, միս ու արիւնը, միտքն ու արտայայտուելու միակ աուաջին միջոցը: Եւ դա ձեւաւորում է ծննդեան օրից, մինչեւ 10-12 տարեկան հասակը, տանը, մանկապարտէզում, մանաւանդ՝ դպրոցում: Նոյնը եւ գրականութեան ընկալմանն է վերաբերում: Մի լեզուով սեղծող գրականութիւնը հարազատ միս ու արիւն է այն ընթերցողի համար, ում մայրենի լեզուով է այդ գրականութիւնն ստեղծուում:

Մանկավարժական բազմաթիւ փորձերից յայտնի է, որ եթէ անհատի մայրենի լեզուն չի նոյնանում այս կամ այն գրականութեան ստեղծման լեզուին, ապա սուեալ անհատի համար առաջնայինը, ամենահարազատը չէ այդ գրականութիւնը: Ընկեր-Ապր անուան մանկական գրադարանում հարցում են արել տարբեր կրթութիւն ստացող հայազգի երեխաների, թէ որո՞նք են նրանց սիրելի գրողները: Հայկական կրթութիւն ստացող երեխաների ու պատանիների պատասխաններում ամէնից աւելի կարողում ենք Մայիս-Նովայի, Բաֆֆու, Քումանեանի, Մուրացանի, Դուրեանի, Պարոնեանի, Իսահակեանի, Տէրեանի, Մեծարեանի, Վարժապետի եւ այլ հայ հեղինակների անուններ, մասամբ, ի հարկէ, նաեւ այլազգի գրողների անուններ: Իսկ հայկական կրթութիւն չստացող երեխաների ու պատանիների պատասխաններում հայ գրողների անուններ որպէս օրէնք չկան, հարուստի, մէկ-երկու երեխայի պատասխանում տրուած է ունէ հայ գրողի անուն (այն էլ՝ լրացուցիչ յատուկ հարցից յետոյ. «Իսկ ի՞նչ հայ գրող էք սիրում»): Պարզ է, եթէ երեխայի, նաեւ մեծահասակի ձեւաւորումը կամ ձեւաւորուած մայրենի լեզուն հայերէնը չէ, ապա հայ գրականութիւնն էլ նրա համար առաջինը եւ ամենահարազատը չէ: Եթէ ունէ լեզու անհատի համար երկրորդն է կամ երկրորդային, ապա այդ լեզուով ստեղծագործող գրականութիւնն էլ է նրա համար երկրորդային: Էլ չեմ խօսում այն դէպքերի մասին, երբ անհատը բոլորովին չգիտէ իր ազգային լեզուն: Յիշենք նաեւ, որ երբ որեւէ մէկն իր ազգային գրականութիւնը թարգմանաբար է ընթերցում, չի ստանում այդ գրականութեան ոգու իսկական խոր ճաշակ, այդ գրականութեան նկատմամբ ջերմ հարազատութեան զգացումը չի առաջանում նրա մէջ: Վերջերս մի բարեհոգի տիկին (հայուհի), որ վատ գիտէր գրաւոր հայերէնը, որոշեց հայ գրականութիւնը կարդալ թարգմանաբար եւ մէկ տարում կարգաց ինչ որ կար ու անկեղծօրն ասաց. «Իմ սրտին դիպչող բան եւ առհասարակ նշանակալից բան գրեթէ չգտայ»: Նա, ի հարկէ, չգիտէր, որ հայ գրականութիւնը, Տէրեանի խօսքով ասած, հայոց արիւնն է, այսինքն՝ հայերէն լեզուամտածողութիւնը, որ չունէր այդ բարեհոգի տիկինը: Ի դէպ, կայ նաեւ մի անհասկանալի իրողութիւն. երբեմն այլազգիները կարողանում են աւելի շատ խորանալ հայ գրականութեան ընդթի մէջ, քան հայերէնն իբրեւ ոչ մայրենի լեզու իմացող հայազգիները:

Եւ այսպէս՝ լեզուն: Մի ժողովրդի, իրօք, ազգային գրականութիւն ստեղծում են միայն այն անհատները, որոնց մայրենին այդ գրականութեան կերտման լեզուն է եւ մի ժողովրդի ազգային գրականութեան խորքային ընկալում, նրա նկատմամբ առաջին հարազատութեան զգացում կարող են ունենալ այն ընթերցող-անհատները, դարձեալ, որոնց մայրենի լեզուն նոյնանում է այդ գրականութեան ստեղծագործման լեզուին:

(Հատուած)

ԻՆՏԱՅԷԼ ԻՇՈՒԱՆՆԱՆ

## ԼՈՅՍ ՏԵՍԱՆ



## ԻՇԽԱՆՆԵՐ

(Հեղինակ՝ Վահե Թաշճեան)

Հայաստանի Հ.Յ.Դ. «Վարանգեան» Հրատարակչականի վերջին արտադրութիւններէն մէկը Հանդիսացաւ Վահե Թաշճեանի «Իշխանը» խորագրեալ մենագրութիւնը, որուն պահեստը, հրատարակատան արժէքաւոր մնացեալ հատորներու ծրարներուն հետ զոհ զնաց Երեւանի Ծանօթ Բռնագրաւումներուն: Բարեբախտաբար այդ դէպքէն առաջ Հրատարակատունէն դուրս բերուած էին սահմանափակ թիւով օրինակներ, որոնց շնորհիւ Արտերկրի մամուլ շրջանակները Ծանօթացան այս արժէքաւոր հրատարակութեան:

\*  
\* \*

250 էջերէ կազմուած Վահե Թաշճեանի «Իշխանը» գործին առաջին էջին վրայ կը կարդանք «Վարդան Բախշեանի եւ Կարօ Գափլանեանի յիշատակներուն» հեղինակային ձօնը, ապա՝ աշխատասիրութեան էութիւնն ու մենագրական աշխատանքին նախաձեռնելու գրգապատճառները պարզարանող «Յառաջաբանը»



(13 էջ), որուն կը յաջորդեն հատորը կազմող չորս գլուխները՝ «Արցախէն Վան» (էջ 14-45), «Երկիրը, ժողովուրդը, անցեալը» (48-84), «Լեռնապարի Իշխանը» (86-186), «Մարտավարն ու ռազմավարը» (186-218) եւ հուսկ՝ «Յաւելուած» խորագրեալ եզրափակիչ բաժինը (218-241) եւ «Անձնանուններու ցանկ»ն ու հատորին բովանդակութիւնը (242-250):

«Յատաշարան»ի առաջին բաժինով Վ. Թաշճեան կ'անդրադառնայ հայկական յեղափոխութեան եւ ֆետայական շարժման պատմական անհրաժեշտութեան, հետապնդած նպատակներուն, «գաղափարական մարտիկի ամբողջական տիպարը» խօսքով եւ գործով մարմնաւորած նուիրեալներու փաղանգին հոյակերտած հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ բացառիկ անհատներու խաղացած դերին, անոնց արժէքին եւ ներշնչման անըստ ազդիւր բլլալու իրողութեան՝ հայ ազատագրական պայքարի աւանդը շարունակող այսօրուան մեր ազատամարտիկներուն համար:

Ապա, նշելէ ետք, որ պատմութիւն կերտած այդ եզակի դէմքերէն բախտաւորները միայն ներկայացուած են իրենց ամբողջական դիմագիծով, իսկ ուրիշներու գործունէութիւնն ու կենսագրութիւնը ըստ արժանւոյն չեն գնահատուած, կը կեդրոնանայ այս վերջիններէն նկատուող Իշխանի վրայ եւ կ'ընդգծէ անոր կեանքին, գործին եւ գործելակերպին ինքնուրոյն կողմերը: Եարունկելով Իշխանի հարուստ գործունէութեան հիմնական գիծերուն թոււմը, Վ. Թաշճեան կը կարկառէ այս մեծանուն յեղափոխականին ամբողջական կերպարը եւ կ'ընդգծէ անոր փոխանցած պատգամը յետնորդ սերունդներուն:


Հատորին առաջին գլուխով՝ «Արցախէն Վան» (էջ 14-45), Բուրճէն Տէր-Մինասեանի, Արամ Մանուկեանի, Իշխանի նամակներուն, անոր հարազատներուն բանաւոր վկայութիւններուն եւ հայ մամուլէն քաղուած նիւթերու հարուստ պաշարի մը վրայ հիմնուած՝ Վ. Թաշճեան մանրամասն գիծերով եւ անհրաժեշտ ընդգծումներով կը պատկերէ Իշխանի մանկութեան ու պատանութեան տարիները, յատկապէս «Կարսի հնոց»ին եւ «Նեւրուզ-Խան»ի գինեալ խումբին մէջ անոր ապրած փորձառութիւնները՝ իբրեւ Իշխանի յեղափոխական դիմագիծի բիւրեղացման հանգրուան:

«Երկիրը, ժողովուրդը, անցեալը» խորագրեալ երկրորդ գլուխով Վ. Թաշճեան կը կեդրոնանայ Իշխանի նոյն բծանխնդիր մօտեցումով գործունէութեան թատերաբեմ հանդիսացած Վասպուրականի վրայ ու սեղմ բնութագրումներով կը պատկերէ ժողովուրդը՝ իր բարքերով, պատմական անցեալով ու շրջանի յեղափոխականացման մէջ դերակատար հանդիսացած յեղափոխական դէմքերով: Հոս եւս հեղինակը կ'օգտագործէ աղբիւրներու

հարուստ մթերք մը, Ա. գլուխին առիթով իր էջերուն առարկայական ճշգրտութիւն փոխանցած սկզբնաղբիւրներուն վրայ կ'աւելնան ուղեգրական եւ ազգագրական այլազան նիւթեր:

Հատորին կեդրոնական բաժինը կը հանդիսանայ Գ. գլուխը՝ «Լեռնապարի Իշխան» (էջ 85-185), որ կը ներկայացնէ հերոսին ամբողջական գործունէութիւնը՝ 1903էն մինչեւ իր դաւադրական սպանութիւնը, 3 Ապրիլ 1915: Իշխանի գործունէութիւնը ներկայացնող այս բաժինը կ'ամբողջանայ, երբ «Մարտավարն ու ռազմավարը» եզրափակիչ գլուխով (էջ 186-218) սպառիչ ձեւով մը կը ներկայացուի անոր յեղափոխական, մշակութային եւ կրթական գործունէութեան բոլոր երեսները:

Վաչէ Թաշճեանի «Իշխանը» խորագրեալ աշխատասիրութիւնը կը փակուի «Յաւելուած» բաժինով, որ կ'ամփոփէ մեծանուն յեղափոխականին կարգ մը նամակները, օրագրական պատասիկները, անոր ամուսնութեան անգրագարձող թղթակցութիւն մը, Ա. Ս. ստորագրութիւնը կրող «Սաղմունք» խորագրեալ արձակ գրութիւնը եւ հինգ լուսանկարներու պատճէններ:



## ԲՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԸ

(«Էդիսակ» Հայկ Նազգաշեան)

Սփիոքաբայ արձակագիր Հայկ Նազգաշեանի եօթներորդ հատորը լոյս տեսաւ 1994ին, Պէյրութի «Սիփան» հրատարակչատուներէ, «Բնութեան կանչը» խորագրով:

Շուրջ տասնամեակ մը առաջ, ութսունական թուականներու առաջին տարիներուն ստորագրուած 9 պատմուածքներուն նորագոյնը՝ «Ճաշկերոյթի տեսարաններ» խորագրեալ գրութիւնը թուրքից յանձնուած է 1986ին, Պէյրութ, իսկ ամենակրտսէր պատմուածքը՝ «Հայ բժիշկը»՝ 1957ին, Ատիս Ապապայի մէջ:

144 էջերէ կազմուած այս հատորը, որ ի մի կը խմբէ տարբեր ժա-  
նազի 8 պատմուածքներ, կը բացուի հրատարակիչ Ա. Ա. Ի (Արամ Անիթը-  
ճեան) ստորագրութիւնը կրող «Փոխան յառաջարակի» խորագրեալ նա-  
րածականով մը, որ Հագկ Նագգաշեանի համառօտ կենսագրականին բնո-  
ւէշէն՝ ընթերցողին կը ներկայացնէ Վախթանգ Անանեանի աղիով սրտա-  
դական-արկածախնդրական գրականութիւն մշակած արձակագիրին գրա-  
կան գործունէութիւնն ու անոր հատորներուն հիմնական յատկանիշները:


Յագտնելէ ետք, թէ Հագկ Նագգաշեանի հատորները գրականացումն են հեղինակին երկարամեալ փորձառութեան, «վիպականացումը՝ իր մտա-  
ծումներուն եւ արարումներուն, մասնակցութեամբ հայ թէ օտար իր անմի-  
ջական շրջանակին», Արամ Անիթըճեան կանգ կ'առնէ արիւիկեան կոչս անտառներու տարաշխարհիկ երանգները, խորհուրդներն ու հետաքրքրա-  
շարժ դէպքերը վիպերգակ շունչով մը բացայայտած Հագկ Նագգաշեանի  
գրական յատկանիշներուն վրայ, եւ առ այդ կ'ընդգծէ. *«Անբռնապրօս ոճ  
մըն է իբր պարզ ու հազարդական պատմելածեալ մը ան կ'ար-  
ձագանդէ մարդկային հարուստ արարմներու եւ կը պայթնջնէ  
կենդը հարստիս հանդուցութեամբ»:*

Փաստօրէն, Հագկ Նագգաշեանի եօթներորդ հատորին առանցքը  
նաեւ որսորդական անակնկալներու, արկածախնդրութեան, բնութեան եւ  
զագն շնչաւորող կենդանական աշխարհի գլխաւոր տարրերէն կը կազմուի:  
Արիւիկեան կոչս անտառներու գրաւիչ համայնապատկերին վրայ, որսորդ-  
ներու եւ իրենց զոհերուն հանդիպումները արձակագիրը կը ներկայացնէ  
պարզ ոճով մը, հաստատրիմ մնալով Վախթանգ Անանեանի որսորդական  
պատմուածքներու ասանդին:

Կենդանիներու բնագոյպին անդրադաձնելը, որսորդներուն հոգեբա-  
նական վիճակները, կարգ մը պահերուն եւ կենդանի տիպարներուն փո-  
խաբերական լուծումները (ինչպէս է պարագան «Տօրք» պատմուածքի  
հերոս Շոյնանուն գալլաշունին եւ «Միբացած ձի» խորագրեալ կտորին  
բորենիներէ պաշարուած խեղճ ձիուն կենաց-մահու կոխին) եթէ ընթեր-  
ցողին կը յուշեն միութեան Ջարդարեանի գրականութիւնը, «Երգումը» եւ  
«Ռամոն» խորագրեալ պատմուածքները դուրս կու գան որսորդական  
պատմուածքներու մթնոլորտէն եւ կը կեդրոնանան մարդկային ապառոյշ  
ընկերութեան զոհերուն վրայ: Առաջինին մէջ բախտախաղի մոլութենէն  
վարակուած հերոսը՝ Վարուժը կ'ապրի իր անողջական քայքայումը, մինչ  
«Ռամոն» պատմուածքի Վոսմը կը հանդիսադրէ հիմնովին հակադիր  
նկարագիր մը, երբ ընդատաշելով իր ցեղի հարազատ ձայնին՝ կը քէ իր  
խառնածին սիրուհին եւ իր կեանքը կը կապէ անծանօթ հայուհիի մը:

Հատորի խմբագիրին՝ Ա.Ա.Ի սեղմ յառաջաբանին կը յաջորդէ հեղի-  
նակին մէկ էջնոց «Ներածական»ը: Ապա իրարու կը յաջորդեն «Բնու-  
թեան կանչը», «Հետախուզութիւն», «Անտառի հեռախօսութիւն»,  
«Ճաշկերոյթի տեսարաններ», «Ռամոն», «Տօրքը», «Երգումը»,  
«Հայ բժիշկը» եւ «Ալեհեր տղաքը» անուն պատմուածքները, որոնց  
դէպքերը տեղի կ'ունենան Եթովպիոյ մէջ եւ արիւիկեցի, եւրոպացի, ա-

մերիկացի եւ հայ տիպարներուն ներքին աշխարհի վերիվայրումները կը դիտուին «զազաններու հոգիին մէջ իսկ... մարդկայնացած զգացումներ» փնտրող սփիւռքահայ գրագէտի ակնոցով:



## ԽՈՂԵՐ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԱՐՈՒՆԱՍԻ ՄԱՍԻՆ

(Հեղինակ՝ Յարութիւն Թորոսեան)

Լիբանանահայ գեղանկարիչ եւ տեղոյս բազմաթիւ ակադեմեաներուն եւ հայագիտական կենտրոններուն մէջ գծագրութիւն, նկարչութիւն եւ արւեստի պատմութիւն աւանդած Յարութիւն Թորոսեան, վերջերս, հրատարակեց 93 էջերէ կազմուած «*ԽոՂեր արուեստի եւ կեանքի մասին*» անուն գրքոյկը:

1995ին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի տպարանէն լոյս տեսած «*ԽոՂեր*»ը տասը տարիներու վրայ արձանագրած Թորոսեանի օրագիրներէն անջատուած ծաղկաքաղ մըն է, որ ի մի կը խմբէ լիբանանեան պատերազմի դառն փորձառութիւնը ապրած հօր, հայ մարդու եւ արուեստագէտի ապրումներն ու խորհրդածութիւնները:

Գ. Ծախիւնեան կարճ ներածականով մը կ'անդրադառնայ «*ԽոՂեր*»ու հեղինակին ապրած հոգեվիճակներուն ու ոճական յատկութիւններուն, ապա, եզրակացնելով՝ ան դիտել կու տայ, որ «*ԽոՂեր*»ը *Հարազատ վկայութիւն մըն է արուեստագէտի միացող հոգիի մը եւ արուեստի խորհրդաւոր աշխարհին միաժամանակ*:

10 Դեկտեմբեր 1980–26 Ապրիլ 1993 ժամանակներուն թուրջին յանձնուած օրագրութիւնները մեծապէս կը նպաստեն, որ ընթերցողը մօտէն ճանչնայ Յարութիւն Թորոսեան արուեստագէտն ու հայրը:

«*ԽոՂեր կեանքի եւ արուեստի մասին*» խորագրեալ գրքոյկին շօշափած հարցերը, բնութեան ու մարդկային ստերմութիւններուն անդրադարձող խոհերը, հայրենասիրութիւնը, զակիճ հասցէագրուած բաղձանքները, մանկութեան յուշերը, կերպարուեստի գլոխ-գործոցներուն առիթով արձանագրուած մտածումներն ու յուզումները յաւելեալ լոյսեր կը սփռեն քառասուն տարի շարունակ արուեստի մարզին մէջ վաստակած Յարութիւն Թորոսեանի իրագործումներուն ու ձգտումներուն վրայ...

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

### ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

—բանաստեղծություններ—

Մարուշ, Հալեպ, 1995, 62 էջ, հրատարակչատուն՝ «Կիլիկիա»:



### ՆԱԽԱՍՏԵՂԾ ՁԱՅՆԵՐ

—բանաստեղծություններ—

Սիրվարդ, Զարեան, Մոնրեպ, 1995, 95 էջ:



### ԻՄ ՄԻՆԱՍԸ

—յուշեր—

Եակով Զարքարեան, Պէյրուք, 1995, 128 էջ,  
հրատարակչատուն «Ծիրակ»:



### ԶԱԽԱԿԻ ՄԸ ՀԱՄԱՐ

—պատմածրներ—

Արմէն Դարեան, Պէյրուք, 1995, 495 էջ, Հայ տիպ  
Քոմփիլերաֆ-թեքնոլոգիա:



### ՔԵՍԱՊ (Ա. հատոր)

—ուսումնասիրություն—

Յակոբ Չոլաքեան, Հալեպ, 1995, 570 էջ, տպարան «Արեւելք»:



### ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆ

—իմաստասիրություն—

Պուտոսա, թարգմ. Արմէն Կոկիկեան, Պէյրուք, 1995, 97 էջ,  
մատենաշար «Հայոգի»:



### ԼԱՕ ՑՈՒ-ԹԱՕ ԹԷ ԶԻՆԿ

—իմաստասիրություն—

Թարգմանություն եւ պատրաստություն՝ Արմէն Կոկիկեան, Պէյրուք,  
1995, 247 էջ, մատենաշար «Հայոգի»:

**ԼԻՔԱՆԱՆ**

Հատավաճառ  
Տարեկան բաժնեգիրք

10.000 Լ.Ո.  
40.000 Լ.Ո.

**ՍՈՒՐԻԱ**

Հատավաճառ (զոյց թիւ)

100 Ս.Ո

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆ**

Տարեկան բաժնեգիրք

40 Ամերիկեան տոյար

**باكين**  
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية  
المدير المسؤول  
السيد ارتين كارنيك قزانيان

•

**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire  
Dr. A. KAZANCIAN

•

**Բ Ա Գ Ի Ն**  
ԱՄԱՍԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր  
ԳՕՂՈՍ ԱՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամ  
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցե՝  
Centre Culturel SHAGHZOYAN  
Bourdj Hammoud — Liban